ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶՈՆ ԵՎ ԼԻԶԱ

ԲԻՎԵՐ

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Թանկագի՛ն ընկեր,

Մենք այնքան ուրախ ենք, որ այս գիրքը ձեր ձեռքում է: Դուք երկնքի ուրախությունն ու բերկրանքն եք: Աստված փափագում է ճանաչել ձեզ և ճանաչվել ձեր կողմից: Իր հետ ավելի մտերմանալուն զուգընթաց, Աստված հրավիրում է ձեզ համագործակցության՝ ձեզ շրջապատող մարդկանց հայտնելու այն, ինչ կա Իր սրտում: Ինչպես Պողոս առաքյալը գրեց կորնթացիներին՝ մենք Քրիստոսի դեսպաններն ենք՝ այն ավետաբերները և ներկայացուցիչները, որոնց միջոցով Նա խոսում է այս աշխարհին:

Ամուսնությունը ամենատպավորիչ ձևերից մեկն է, որով մենք հայտնում ենք Աստծո բնությունը: Այն պատկերում է սուրբ հարաբերությունները Քրիստոսի և Նրա Հարսնացուի՝ Եկեղեցու միջև: Ամեն միություն (ներառյալ այնպիսիք, որոնցում կան դժվարություններ, ցավ կամ սխալներ) կարող է տալ սեր, ուրախություն և խաղաղություն շատերի օգտի համար:

Տերը խոսեց մեր սրտերին՝ դրդելով փոխանցել այս ուղերձը ձեզ և ձեր ծառայակից հոգևոր ավագներին ամբողջ աշխարհում: Այս ուսմունքը բոլոր ամուսնական կարգավիճակներում և եղանակներում եղող մարդկանց համար է: Խնդրում ենք, ընդունե՛ք այն մեր սիրո և աջակցության հետ, և փոխանցե՛ք այն նրանց, ում ճանաչում եք: Մենք հավատում ենք, որ այս ուղերձը կօգնի թե՛ ձեզ, թե՛ ձեր խմբակների անդամներին՝ կազմել ձեր երազանքների եզակի և Աստծուց օրհնված պատմությունը:

Մեր ամուսնությունն ունեցել է նեղություններ և դժվարություններ, սակայն մենք տեսել ենք Աստծո հավատարմությունը: Նա օգտագործել է ամուսնությունը ամեն բնագավառում՝ մեր կյանքն ընդլայնելու համար, և Նա ցանկանում է անել նույնը ձե՛զ համար: Մենք աղոթում ենք, որ կարդալով այս գիրքը՝ դուք խրախուսվեք և ստանաք այն, ինչ անհրաժեշտ է՝ ձեր գեղեցիկ պատմությունը գրելու համար:

Քրիստոսում ձեր՝

Ջոն և Լիզա Բիվեր



JohnBevere@ymail.com
LisaBevere@ymail.com

Messenger International
MessengerInternational.org

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶՈՆ ԵՎ ԼԻԶԱ
ԲԻՎԵՐ

Story of Marriage by John & Lisa Bevere, Armenian
© 2015 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Story of Marriage
Additional resources in Armenian by John & Lisa Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the authors: JohnBevere@ymail.com, LisaBevere@ymail.com

«Պատմություն ամուսնության մասին», Ջոն և Լիզա Բիվեր, հայերենով
© 2015 Մեսինջեր Ինտերնեյշնլ
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով «Story of Marriage» վերնագրով
Ջոն և Լիզա Բիվերի այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակների հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com, LisaBevere@ymail.com

Երախտիքի խոսքեր

Մեր երեխաներին, նրանց կանանց և մեր թոռնիկներին՝ շատ առումներով, մեր ամուսնության պատմությունը գրվել է ձեր շնորհիվ: Մենք ուրախ ենք՝ տեսնելով յուրաքանչյուրիդ առաջընթացը կյանքում և ձեր սերը մեկդ մյուսի հանդեպ:

Խիզախ Էդիսո՛ն, միայն հավիտենությունը ճշգրտորեն կորոշի քո ներդրման չափն այս գործի մեջ: Ասելը, որ մենք չէինք կարող պատրաստել այս գիրքն առանց քեզ, նշանակում է՝ չասել ամբողջ ճշմարտությունը: Շնորհակալություն, որ պահպանել ես մեր ասելիքը և միավորել ես մեր խոսքերը սուրբգրային իմաստության հետ՝ ստեղծելով այն, ինչը կհպվի մարդկանց կյանքերին:

Գեղեցիկ, իմաստուն Ջեյլին, շնորհիվ քո անմիջական վերաբերմունքի և գերազանց աշխատասիրության՝ դու հրաշալիորեն շարադրեցիր այս գիրքը: Թող որ այն ամենը, ինչ ցանել ես այս դաշտում, իրականանա քո կյանքում:

Վինսենտին և Էլիսոնին՝ շնորհակալություն այն ամենի համար, ինչ դուք արեցիք՝ օգնելով մեզ ստեղծել այս գրքի ամենօրյա ընթերցանության նյութերը: Ձեր աշխատանքը հարստացրեց և ընդլայնեց այս գիրքը:

«Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի աշխատակազմին և գործընկերներին՝ շնորհակալություն, որ մեզ հետ եք: Հազիվ թե կարողանայինք խնդրել Աստծուց ավելի հավատարիմ և նվիրված ընկերների, ովքեր կլինեին մեզ հետ՝ Հիսուս Քրիստոսի փառավոր Ավետարանն աշխարհի բազմաթիվ ազգերին հասցնելու համար:

Ամենից առավել՝ շնորհակալություն Քե՛զ, Հա՛յր Աստված, Քո անսպառ սիրո համար, և Քե՛զ, Հիսուս՝ մեր Թագավոր, Քո թանկ կյանքը տալու համար, և Քե՛զ, Սուրբ Հոգի՝ Քո զարմանալի զորության, միութարության, ուսուցման և մտերիմ շփման համար: Շնորհակալություն, որ երբեք չես թողնում և չես լքում մեզ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս ինտերակտիվ գրքի մասին 7

Ներածություն 9

1. Սկզբնական ծրագիրը 11

2. Տեսե՛ք վերջը՝ սկզբից 51

3. Մաքրե՛ք տախտակամածը 93

4. Ոտքի՛ ելեք և կառուցե՛ք 139

5. Մտերմություն 179

6. Կրկի՛ն սկսեք 223

Հավելված. Ինչպես փրկություն ստանալ 259

Նշումներ 261

Սիրելինե՛րս.

Ցանկացած պատճառ ունեմ հավատալու, որ Աստված սիրում է ձեզ՝ ձեր մարդկային կարողությունից վեր: Մեր անկեղծ աղոթքն է, որ դուք արտացոլեք սիրո մասին Նրա կոչը ձեր կյանքի ամեն բնագավառում, ամուսնության մեջ և ընտանիքում: «Պատմություն ամուսնության մասին» գիրքը գրվել է այն պատճառով, որ մենք հավատում ենք, որ ամուսնու և կնոջ միջև գոյություն ունեցող սերը սուրբ է: Որքան հրաշալի և խորհրդավոր կարող է լինել ամուսնությունը: Աստվածաշնչում ասվում է, որ կա նույնիսկ ավելի մեծ սեր: Հովհաննեսի 15.12,13-ում Հիսուսը պատվիրում է, որ սիրենք միմյանց: Սիրե՛ք մեկդ մյուսին այնպես, ինչպես Ես ձեզ սիրեցի: Չկա ավելի մեծ սեր, քան, որ կյանքդ նվիրում ես ընկերներիդ: Կար մի ընկեր, ով խորապես սիրում էր ձեզ. Էդուարդ Պետրոսյան: Դժբախտաբար ես երբեք Էդուարդին չեմ հանդիպել այս կյանքում: Նրան գիտեի միայն որպես եղբայր, ամուսին, հայր և հայ ժողովրդի ընկեր, ով ապրում էր բուռն ցանկությամբ՝ տեսնելու, որ մարդիկ հասել են Հիսուս Քրիստոսի Ավետարանի ճշմարտությանը: Նա նահատակվեց, որ մենք սիրենք և ապրենք հաղթական կյանքով՝ Աստծո կատարած զոհաբերությանն արժանի կյանքով: Այս ուղերձներն ազգերի մեջ տարածելու համար պետք է թանկ գին վճարել, և ես կարծում եմ, որ ճիշտ կլինի, որ այս թարգմանությունը նվիրված լինի Էդուարդի հիշատակին և նրա գեղեցիկ ընտանիքին: Թող որ նրա ժառանգությունն ամի զորությունից՝ զորություն, և փառքից՝ փառք:

Մեծ սիրով՝
Լիզա, Ջոն և «Messenger International» թիմ

Այս ինտերակտիվ գրքի մասին

Դուք կարող եք ընթերցել այս գիրքը սկզբից մինչև վերջ՝ ինչպես ցանկացած գիրք: Այնուամենայնիվ, մենք խրախուսում ենք ձեզ՝ օգտագործել հավելյալ ինտերակտիվ մասերը՝ գիրքն ավելի խորապես ընկալելու համար:

Այս գրքի յուրաքանչյուր գլուխ բաժանված է հինգ ամենօրյա ընթերցանության բաժինների, իսկ յուրաքանչյուր բաժին գլխի վերջում ունի համապատասխան սերտողության նյութ: Դուք կարող եք ընթերցել մեկական բաժին՝ սերտողության նյութի հետ, մեկ օրվա ընթացքում, կամ ուսումնասիրել ներկայացված մասերն՝ ըստ ձեր նախընտրության: Մենք առաջարկում ենք, որ խմբային ուսուցման մասնակիցները մեկ շաբաթվա ընթացքում ավարտեն մեկ գլխում զետեղված ընթերցանության բաժինները և սերտողության նյութերը:

Եթե դուք ընթերցում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու» շարքի «Պատմություն ամուսնության մասին» դասընթացի շրջանակներում, մենք առաջարկում ենք ձեզ՝ դիտել կամ ունկնդրել յուրաքանչյուր շաբաթվա ուսումնական նյութը և պատասխանել քննարկման հարցերին խմբակում: Այնուհետև ընթերցեք համապատասխան գլուխը գրքից, ինչպես նաև սերտողության նյութերը: Այս գրքի յուրաքանչյուր գլուխ ունի մեկ ուսումնական նյութ: Քննարկման հարցերն ամեն գլխի համար զետեղված են ամենօրյա սերտողության նյութերից հետո:

Այս ամենը ձե՛զ համար է:

Ներածություն

Միգուցե հարցնեք. «Արժե՞ր արդյոք գրել ևս մեկ գիրք ամուսնության մասին»: Սա առաջին հարցն էր, որը տվեցինք մեզ:

Գոյություն ունի երեք պատճառ այս գիրքը գրելու համար: Առաջինը՝ մենք զգացինք Աստծո առաջնորդությունը: Բացի այդ՝ մեր երեխաները և աշխատակիցները խնդրեցին մեզ՝ գրել այս մասին: Եվ, ի վերջո, ձեզնից շատերը նույնպես խնդրել էին այսպիսի գիրք գրել:

Մենք գիտեինք, որ գոյություն ունեն բազմաթիվ հրաշալի գրքեր ամուսնության մասին, դրանցից շատերն օգնել են նաև մեզ: Այնուամենայնիվ, ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց մի «բացթողում»: Մենք հայտնաբերեցինք, որ այդ գրքերի մեծ մասը գրվել է գլխավորապես ամուսիններից մեկի կողմից: Հրաշալի ամուսնությունը՝ հրաշալի համագործակցության արդյունք է: Այնպես որ, մենք հավատում ենք՝ այն, ինչի մասին մենք միասին կիսվում ենք այս թեմայով, մեծ արժեք ունի:

Մենք նույնպես գիտենք, որ պատմությունները տարբեր են՝ ինչպես և մերը: Պետք է ասեմ, որ երկուսս էլ *ուժեղ կամք ունեցող* մարդիկ ենք: Ես և Լիզան ավելի քան երեք տասնամյակ է՝ ամուսնացած ենք, և այդ ընթացքում բախվել ենք եզակի դժվարությունների: Մենք հասկացել ենք հետևյալը. քանի որ մեր փորձառությունը եզակի է, մեր տեսակետը նույնպես եզակի է լինելու:

Ավելին՝ մենք ցանկանում էինք խրախուսել տղամարդկանց և կանանց՝ ցույց տալով, որ ամուսնությունը կաղապար չէ, որը սահմանափակում է նրանց: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուրն ստեղծագործական թույլտվություն ունի կառուցելու իր ամուսնությունը՝ լավագույնս համապատասխանեցնելով այն իր կարիքներին և աստվածային կոչմանը: Մենք հուսով ենք, որ այս գիրքը կօգնի ձեզ՝ հայտնաբերել և գրել ձեր եզակի պատմությունը:

Ո՞ւմ համար է գրված այս գիրքը

Այս գիրքը նրանց համար է, ովքեր պատրաստվում են ամուսնանալ, ովքեր արդեն ամուսնացած են կամ ցանկանում են իմանալ ավելին ամուսնության մասին:

Քանի որ մեր օրերում ամուսնալուծությունները և ամուսնական կյանքի աղավաղումները չափազանց շատ են, շատերն ընդհանրապես վախենում են սկսել իրենց պատմությունը: Այն, ինչ դուք տեսել եք, չպետք է որոշի ձեր ապագան:

Կան մարդիկ, ովքեր, թվում է, չեն կարողանում առաջ անցնել իրենց պատմության այն գլխից, որը նրանց դուր չի գալիս. մենք չենք ցանկանում, որ դուք փակեք ձեր ամուսնության գիրքը: Մենք ցանկանում ենք օգնել ձեզ, որ շրջեք էջը:

Կան նույնպես շատ ամուսիններ, ովքեր լավ ընկերներ էին և հավատում էին, որ իրենց սիրային պատմությունը երբեք չէր ավարտվելու: Այնուամենայնիվ, նրանք հայտնաբերեցին, որ իրենց պատմության հրաշալի էջերն անսպասելիորեն պոկվել են ամուսնալուծության կամ կողակցի կորստի պատճառով: Ձեր պատմությունն ավարտված չէ:

Այս գիրքն սպառիչ ձեռնարկ չէ, որը մանրամասնորեն քննարկում է ամուսնությունը: Այս թեմայով կարելի է բազմաթիվ հատորներ գրել, և բացի այդ՝ մենք չունենք բոլոր պատասխանները: Այնուամենայնիվ, որոշեցինք գրել մեր պատմությունը՝ ընդգրկելով մեր կյանքի ամենակոտրված պահերը, քանի որ գիտենք, թե ինչ ճանապարհ ենք անցել, և հավատում ենք, որ մեր անցած ճանապարհը կօգնի ուրիշներին:

Եվ, ի վերջո, Հիսուսը դեռ կարծում է, որ ամուսնությունը այն պատմությունն է, որն արժե պատմել: Ամուսնության միջոցով Նա ցույց է տալիս, թե ինչպես է Նա սիրում մեզ: Մենք աղոթում ենք, որ այս գրքի էջերն արթնացնեն հավատք, հույս և սեր թե՛ ամուրիների, թե՛ ամուսնացած մարդկանց, թե՛ երիտասարդների, թե՛ տարեց մարդկանց սրտերում: Մենք կոչ ենք անում ձեզ՝ կրկին երազել:

ՄԵԿ

Սկզբնական ծրագիրը

«Տեր Աստված աճեցրեց ամեն տեսակի ծառեր երկրից՝ ծառեր, որոնք գեղեցիկ էին և համեղ պտուղ էին տալիս: Այդ պարտեզի մեջտեղում Նա տնկեց Կյանքի ծառը և Բարու ու չարի գիտության ծառը:

— Ծննդոց 2.9, NLT

Օր 1

Լինում է, չի լինում՝ մի պարտեզ, որը տնկված էր երկու ծառերի շուրջ: Միգուցե արդեն գիտեք, որ այդ պարտեզը սովորական չէր: Այն զերծ էր դժվարություններից և քայքայումից: Եդեմի պարտեզով հոսում էին գետեր՝ ապահովելով մաքուր, բյուրեղաթափանց ջուր նրանց համար, ովքեր բնակվում էին այդտեղ:

Մենք կարող ենք միայն պատկերացնել այն ծառերի հոյակապ գեղեցկությունը, որոնք աճում էին նման պայմաններում: Ամեն մի ծառ կյանքի անթերի խորհրդանիշ էր՝ տնկված բերրի հողում, թարմացվող ջրվեժների ջրերով և սնուցվող պայծառ, բայց չափավոր արևի լույսով: Պարտեզում կային շատ ծառեր, բայց Աստծո Խոսքը հիշատակում է միայն երկուսը՝ Կյանքի ծառը և Բարու ու չարի գիտության ծառը: Այս ծառերից երկուսն էլ վայելում էին միևնույն անթերի և անապական պայմանները՝ լինելով այնպիսի վիճակում, որն այս անկում ապրած երկիրը երբեք չի կարող վերարտադրել: Այնուամենայնիվ, ծառերից մեկը սերում էր կյանք, իսկ մյուսը՝ մահ:

Հավանաբար, նախկինում դուք լսել եք այս պատմությունը, քանի որ ամեն պատմություն ամուսնության մասին առաջացել է Եդեմի այս երկու ծառերից: Մեր ամուսնությունները կարելի է շատ առումներով նմանեցնել կյանքի ծառերի: Ամուսնություններն աճում են տարբեր կերպով և տարբեր եղանակներում, և առավելագույնս արդյունավետ են, երբ խարսխված են հասուն արմատներով: Ամուսնություններն ունենում են թե՛ պտղաբեր, թե՛ անպտուղ տարիներ, ինչպես և բացառիկ աճի և դանդաղ աճի տարիներ: Ամեն մի ամուսնություն կրում է իր հարազատ կլիմայի, տարբեր եղանակների և խիստ փոթորիկների ազդեցությունները. բայց չնայած դրան՝ ամուսնությունն ապաստան է տրամադրում կյանքի փոփոխական քամիներից:

Այս գրքի կազմի վրայի պատկերը ներկայացնում է ծառի կյանքը: Այն օղակաշերտերը, որոնք տեսնում ենք, այդ ծառի կյանքի պատմությունն են՝ իր անցած ճանապարհի «մատնահետքը»:

Դպրոցում մեզնից շատերը սովորել են ծառագիտության հիմունքները և կարող են մոտավորապես որոշել ծառի տարիքը՝ հաշվելով ծառաբնի օղակաշերտերը: Թեև երկուսս էլ կարող ենք հմտորեն հաշվել որևէ ծառի օղակաշերտերը, մենք շատ հեռու ենք ծառագիտությունից (թեև սիրում ենք գեղեցիկ ծառեր): Ծառի հստակ տարիքի հետ մեկտեղ, ծառագետները կարող են հաղորդել մեզ դրա կյանքի մանրամասները՝ պարզապես նայելով ծառաբնի կտրվածքին: Վարժված աչքի համար ամեն օղակաշերտը մի պատմություն է: Օղակաշերտերի ձևը ցույց է տալիս՝ արդյոք ծառը կրել է մե՞ղմ, թե՞ խիստ ձմեռ, պատմում է երաշտի կամ առատ անձրևների մասին: Մանրամասն ուսումնասիրությունը կարող է հայտնաբերել վնասվածքներ կամ հիվանդությունների հարձակումներ: Ամեն օղակաշերտը՝ բոլորած տարի է՝ շրջանաձև իր տեսքով, և եզակի իր բնույթով:

Ամուսնության ամեն տարին կարելի է նմանեցնել ծառի օղակաշերտի՝ շրջանաձև իր տեսքով և եզակի իր բնույթով: Տարեդարձերը մատնանշում են անցած տարվա ավարտը և գալիք տարվա սկիզբը: Ամենամյա տարեթիվը հստակորեն նշված է, բայց ամիսները, շաբաթները և օրերը, որոնք լրացնում են օրացուցային տարին, ուրախության, ցավի, աշխատանքի և նույնիսկ անակնկալների ամբողջություն են:

Ձեր պատմությունը

Սկսելով այս ընթացքը մեզ հետ՝ հիշե՛ք, որ ձեր պատմությունը (կամ ապագա պատմությունը) միմիայն *ձերն է:* Ամեն կյանք և ամուսնություն՝ ուրախությունների, հաղթանակների և դժվարությունների ամբողջություն է: Չափազանց երկար ժամանակ է՝ Եկեղեցու մեծ մասը բավական էր համարում առաջարկել ընդհանուր դեղատոմսեր այն խնդիրներին, որոնք տկարացնում էին մեր ամուսնությունները: Մենք լսում էինք. «Կանա՛յք, հնազանդվե՛ք: Ամուսիններ՛ր, սիրե՛ք»: Թեև այս հորդորները ճշմարիտ և արժեքավոր են, անկեղծ ասած՝ չկա ամուսնություն կառուցելու ձեռնարկ, որը համապատասխանում է բոլորին, որովհետև ամեն ամուսնություն ունի իր եզակի «մատնահետքը»:

Դիտարկենք այս հարցը հետևյալ կերպով: Բոլոր տների գծագրերում ընդհանուր են հիմքը, հենարանային պատերը և տանիքը, բայց ճարտարապետը ստեղծագործական ազատություն ունի՝ փոփոխելու համար տան նախագիծը՝ համաձայն բնակիչների հատուկ կարիքների և ցանկությունների: Նույնը վերաբերում է մեր ամուսնություններին: Մենք ստեղծագործական թույլտվություն ենք ստացել՝ նախագծելու մեր ամուսնությունն այնպես, որ այն լավագույնս համապատասխանի մեզ: Ամեն ընտանիք պետք է տարբեր լինի և ազատորեն փոփոխվի՝ համաձայն կյանքի եղանակների: Մեր ամուսնության մեջ, օրինակ, մենք անցում ենք կատարում դեպի այն ժամանակը, երբ ծնող լինելն այլևս մեր գլխավոր դերը չէ ընտանիքում: Սա նշանակում է, որ շուտով կարիք չի լինի այնքան մահճակալներ ունենալ տանը, որքան նախկինում: Նման փոփոխությունը մեր ամուսնությունների մեջ այնքան բնական է, որքան տարվա եղանակների փոփոխությունը: Այս ամենը սովորական է:

Կան տիեզերական, հավիտենական ճշմարտություններ և արժեքներ, որոնք կբարձրացնեն ձեր ամուսնությունը՝ օգնելով ձեզ՝ իրականացնել այն ամենը, ինչի համար Աստված կանչել է ձեզ: Աստված ցանկանում է, որ ամեն ամուսնություն կառուցվի սիրով, հարգանքով, ուրախությամբ, հնազանդությամբ, միմյանց մատակարարելով, հավատարմությամբ, հոգատարությամբ, մտերմությամբ և ժառանգությամբ. ահա ընդամենը մի քանի հատկանիշ, բայց կա շատ ավելին: Այնուամենայնիվ, այս շինարարական նյութերը

կարտահայտվեն ձեր կյանքում՝ արտացոլելով ձեր եզակի անհատականությունները և այն եղանակը, որում ձեր ամուսնությունն է: Աստված ուրվագծում է ընդհանուր սկզբունքները, բայց ինքնարտահայտման հնարավորություն է տալիս ձեզ մասնավոր հարցերում:

Աստված սիրում է բազմազանություն. մեկ հայացքն արարչագործությանը՝ կհաստատի այս պնդումը: Մենք ցանկանում ենք պարզ ասել հենց սկզբից՝ մենք չենք հավատում, որ բոլոր զույգերը պետք է համապատասխանեն որևէ ընդհանուր ամուսնական կաղապարի: Մեր օրերում ավելի հաճախ է պատահում, որ ամուսիններն աշխատում են տնից (երկրից) դուրս (2012 թվականի տվյալներով, աշխատանքային տարիքի կանանց մոտավորապես 60 տոկոսը Միացյալ Նահանգներում ակտիվ զբաղվածություն ունի[1]), և կինը կարող է վաստակել ավելի շատ, քան ամուսինը: Այն, որ կինը կարող է գումար վաստակել, չի նշանակում, որ նա հնազանդ չէ, կամ՝ որ ամուսինը նրա գլուխը չէ, այլ՝ որ երկուսն էլ ունեն իրենց ավանդն ընտանեկան եկամուտների մեջ: Սա նշանակում է, որ նրանց ամուսնությունն, ամենայն հավանականությամբ, տարբերվելու է նրանց պապերի և տատերի ամուսնություններից:

Մեր ամուսնությունն այդպիսին է: Երկուսս էլ աշխատում ենք, և երկուսս էլ առաջնորդներ ենք մեր ամուսնությունից դուրս: Երբեմն մենք աշխատում ենք միասին (ինչպես այս գրքի դեպքում), իսկ երբեմն՝ առանձին, բայց մեր ամուսնության նպատակը և դրա ներքո գտնվող արժեքներն անսասան են: Ամուսնու և կնոջ դերերը չեն տատանվում՝ կախված այն բանից, թե որքան ենք վաստակում:

Առաջին պարտեզում Աստված և՛ Ադամին, և՛ Եվային պատվիրեց պտղաբեր լինել և շատանալ: Նա չասաց, որ Եվան պետք է մնա տանը և զբաղվի Ադամի «շատացմամբ»: Առակաց 31-րդ գլխում նկարագրված առաքինի կինը ընտանիքի անզուգական կառավարիչ էր, ինչպես նաև՝ ակնառու գործարար: Եթե այս տարբերակը համապատասխանում է ձեր ամուսնությանը, այսպե՛ս էլ վարվեք: Կամ, միգուցե, ձեզնից մեկը ցանկանում է մշտապես տանը լինել, անկախ այն բանից՝ երեխաներ ունե՞ք, թե՞ ոչ: Այս մոտեցումներից ոչ մեկը սխալ չէ:

Սկզբում բնական է թվում ենթադրելը, որ այն, ինչ հաջողությամբ գործել է այլ մարդկանց համար, կգործի նաև ձեզ համար: Այնուամենայնիվ, մենք ապրում ենք եզակի ժամանակաշրջանում, երբ

ամենուր յուրօրինակ դժվարություններ կան: Մենք ցանկանում ենք, որ ձեր ամուսնությունն ամուր լինի, ինչը նշանակում է, որ դուք պետք է ազատություն ունենաք՝ կառուցելու համար ձեր երազանքների ամուսնությունը, ոչ թե այլ մարդկանց երազանքների ամուսնությունը:

Մենք խրախուսում ենք ձեզ, որ օգտագործեք այս պահը և խնդրեք Աստծո Հոգուն, Ով ճշմարտության Հոգին է, հայտնել ձեզ, թե ինչպես Նրա հավիտենական ճշմարտությունները կարող են վերափոխել ձեր ամուսնությունը՝ դարձնելով այն հատուկ միություն, որը Նա ծրագրել է հենց ձեզ համար աշխարհի ստեղծագործությունից առաջ:

Օր 2

Երբ ձեր պատմությունը հանդիպում է դժվարությունների

Նույնիսկ եթե երկար տարիներ է՝ միասին եք, դուք դեռ լիովին չգիտեք ձեր պատմությունը: Հիսուն տարի տևող ամուսնությունը կարող է բաղկացած լինել կա՛մ դժվարություններով լի հիսուն տարուց, կա՛մ երանությամբ լի հիսուն տարուց, թեև ավելի հաճախ ամուսնությունը տարբեր և փոփոխվող եղանակների հաջորդականություն է:

Երբ նայում ենք այս գրքի կազմի ծառի պատկերին, ակնհայտ է, որ ամեն մի օղակաշերտ մեծացնում է ծառի տրամագիծը: Անկախ այն բանից, այդ օղակաշերտը ներկայացնում է դժվարությա՞ն, թե՞ առատության տարի՝ այն ավելի լայն և իմաստալից է դարձնում ամբողջ ընթացքը: Արդյո՞ք Ջոն Բունյանի *«Ուխտագնացի ճանապարհորդությունը»* գիրքը, որն արդեն երեք դար է՝ տպագրության մեջ է, մնայուն գլուխգործոց կլիներ, եթե Քրիստոնյան (պատմվածքի գլխավոր հերոսը) ժամաներ Երկնային քաղաք՝ առանց անցնելու Վհատության ճահճով կամ առանց հաղթելու Հուսահատություն անունով հսկային: Առանց ուրախությունների և դժվարությունների բարդ միախառնման՝ նրա պատ-

մությունը հագեցած չէր լինի իրադարձություններով, և ծանձրալի կլիներ: Քրիստոնյայի պատմությունն արժե կարդալ հենց այն դժվարությունների պատճառով, որոնք նա կրում է և հաղթահարում է: Դժվարությունները մեր ամուսնության մեջ կարող են նույնչափ ոգեշնչող և իմաստալից դարձնել մեր պատմությունը:

Մի՛ անարգեք հուսահատության պահերը: Օգտագործե՛ք դրանք, որպեսզի մոտենաք Աստծո շնորհքին և հայտնաբերեք Աստծո զորությունը, որը կարիամարհի ձեր զգացմունքային և հոգևոր սահմանափակումները: Ավելի քան երեք տասնամյակ ամուսնացած լինելով՝ մենք հայտնաբերեցինք հետևյալը. այն պահերը, որոնք ամենից խավար էին թվում, հետագայում դառնում էին փարոսներ, որոնք լուսավորում էին մեր ճանապարհը: Դրանք ստիպում էին մեզ՝ բարձրանալ և հաստատ դիրք զբաղեցնել: Ձեր ներկա պայքարները կարող են դառնալ ամենավառ պահերը ձեր պատմության մեջ:

Ամուսնության հոգին

Մինչ ամուսնության պատմությանն անցնելը, խոսենք ամուսնության նպատակի մասին: Ամուսնությունը, անկասկած, հրաշալի է, բայց երբեմն ցավոտ գործընթաց է: Գրեթե բոլորս կարող ենք շատ ավելի համբերատար կրել ցավը, եթե հասկանանք դրա նպատակը: Օրինակ՝ մի քանի ժամ կարող եք դիմանալ ատամնաբույժի աթոռին նստած, եթե գիտեք, որ բուժումը կհասնի իր նպատակին՝ վերացնելով անդադար տանջող ատամնացավը: Հավանաբար, ձեր ամուսնության ընթացքում եղել են օրեր, որոնք ավելի նման էին ատամնաբույժի աթոռին նստելուն, քան լողափում զբոսնելուն (և եթե դեռ չեն եղել, ապա կլինեն): Այդ ցավոտ պահերին շատ կարևոր է իմանալ ձեր նպատակը:

Այսօր ամուսնության նպատակը հարցականի տակ է: Քանի որ շատերը չեն հասկանում իրենց միության նպատակը, նրանք արագորեն դուրս են ցատկում նավից, երբ անհանգիստ ջրերի հարվածներ են զգում: Մյուսները վիճում են՝ ասելով, որ ամուսնական հաստատությունը խարխլված է, և որ այն պետք է վերաիմաստավորվի կամ լուծարվի: Մի քանիսը նույնիսկ առաջարկում են, որ ամուսնական պայմանագրերը պետք է սահմանափակվեն որոշակի

ժամանակով, քանի որ թվում է՝ մեզնից անկարելի է մշտական նվիրում ակնկալել: Այս մարդիկ բերում են հետևյալ փաստարկը. անիրատեսական է որոշումներ կայացնել այն մասին, թե ինչպես ենք մենք մտածելու քսան տարի անց, եթե հազիվ ենք վերահսկում այն, թե ինչպես ենք մտածելու վաղը:

Իր հայտնի «Միսսիս Ջեքսոն» երգում, «ԱութՔաստ» կոչվող հիփ-հոփ երաժշտական խումբն արտահայտեց մի տարածված կարծիք.

Իմ և քո աղջկա միջև
Հատուկ բան է կատարվում:
Դու ասում ես, որ սա երեխայական սեր է,
Մենք ասում ենք, որ այն հասուն է:
Ես հուսով եմ, որ մենք մեզ այսպես կզգանք ընդմիշտ:
Կարող ես հաճելի զբոսախնջույք ծրագրել,
Բայց չես կարող կանխատեսել եղանակը:

«Միսսիս Ջեքսոն» երգում երիտասարդ տղան ներողություն է խնդրում մի երիտասարդ աղջկա մորից. այդ աղջիկը հղիացել է նրանից, բայց տղան այլևս սեր չի զգում նրա հանդեպ: Ցավոք, այս երգն արտահայտում է լայնորեն տարածված կարծիքներից մեկը սիրո և ամուսնության մասին. «ես պետք է լավ զգամ *ինձ* սիրո և ամուսնության մեջ»: Այս տեսակետը հիմնված է այն համոզմունքի վրա, որ մեր զգացմունքներն են թելադրում մեզ, թե ինչն է ճիշտ կամ սխալ, և որ մենք անկարող ենք վերահսկել դրանք: Եթե ես չեմ զգում, որ երջանիկ եմ, ուրեմն ակնհայտ է, որ ես պետք է փոխեմ ինչ-որ բան: Ի վերջո, ես չեմ կարող վերահսկել իմ զգացմունքները, ինչպես որ չեմ կարող վերահսկել տարվա եղանակները: Կամ՝ «ԱութՔաստ»-ի ձևակերպմամբ՝ դուք կարող եք հաճելի զբոսախնջույք ծրագրել, բայց չեք կարող կանխատեսել եղանակը:

Կան մարդիկ, ովքեր ցանկանում են հարմարեցնել ամուսնության սահմանումը մեր ժամանակներին: Նրանք հարցնում են. «Ինչո՞ւ մենք չենք կարող ավելի ճկուն լինել: Եթե այս հաստատությունը ցանկանում է գոյատևել, այն պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով միությունները միայն տղամարդկանց և միայն կանանց միջև»: Որոշ հանրահայտ մարդիկ նույնիսկ հրաժարվում են ամուսնանալ, քանի դեռ ամուսնությունը չի վերաիմաստավորվել (իրականում՝ ամեն ամուս-

նություն պետք է մշտապես զարգանա և փոփոխվի, բայց ամուսնության սահմանումը և մասնակիցները փոփոխման ենթակա չեն):

Ուրեմն, ո՞ւմ լսենք: Ո՞վ իրավունք ունի սահմանելու կամ վերասահմանելու ամուսնությունը: Ո՞վ է լիազորված ասելու մեզ, թե ինչպիսի ազդեցություն պետք է ունենա ամուսնությունը մեր կյանքերում:

Մենք հավատում ենք, որ Աստված՝ միակն է, Ով ունի այս իրավունքը: Նրա Խոսքը հռչակում է.

> «Աստված է ստեղծել ամուսնությունը, ոչ թե դուք: Նրա Հոգին բնակվում է ամուսնության նույնիսկ ամենափոքր մանրուքներում: …Այնպես որ, պահպանե՛ք ամուսնության հոգին, որը ձեզանում է» (Մաղաքիա 2.15, MSG):

Այս խոսքը նույնիսկ կասկածի նշույլ չի թողնում. «Աստված է ստեղծել ամուսնությունը, ոչ թե դուք»: Նա ոչ միայն ստեղծել է ամուսնությունը, այլև անձամբ ներգրավված է երկու անհատներին մեկ դարձնելու մեջ: Ամեն ամուսնություն բաղկացած է բազմաթիվ մասնիկներից: Որոշ ամուսնություններ պարզ են, իսկ որոշները՝ խիստ բաղադրյալ. այնուամենայնիվ, Աստված՝ Իր Հոգով, կյանք է տալիս նույնիսկ ամուսնության աննշան մանրուքներին:

Ուշադրություն դարձրեք, որ Մաղաքիա 2.15-ում գրված է. «[Աստծո] Հոգին բնակվում է ամուսնության նույնիսկ ամենափոքր մանրուքներում»: Այլ կերպ ասած՝ Աստված թույլ է տալիս, որ մենք ստեղծարար լինենք ամուսնության մեջ, բայց Նա պահպանում է Արարչի բոլոր իրավունքներն առ այն, թե ինչ է ամուսնությունը և ովքեր են ընդգրկված այս միության մեջ: Ամուսնությունը չի կարող վերստեղծվել առանց Նրա համաձայնության և մասնակցության, իսկ Նա հստակ դիրքորոշում ունի հիմքային հարցերի վերաբերյալ. «Ե՛ս եմ Տերը, և Ես չեմ փոխվում» (Մաղաքիա 3.6, NLT):

Վերադարձ դեպի Եդեմ

Վերադառնանք պարտեզ: Հիշո՞ւմ եք այն երկու ծառերը: Դրանցից մեկը՝ Բարու և չարի գիտության ծառը, միակն էր, որի պտուղն արգելված էր Ադամի և Եվայի համար: Աստված զգուշացրեց, որ եթե ուտեն այդ ծառի պտուղը, նրանք կմահանան: Բայց ինչ-որ բան

դրդեց նրանց՝ անտեսել Աստծո զգուշացումը և փորձել արգելված պտուղը:

> «Երբ կինը տեսավ, որ այդ ծառի պտուղը լավն էր ուտելու համար և հաճելի էր աչքին, և նույնպես *ցանկալի էր իմաստություն ստանալու համար*…» (Ծննդ. 3.6, NIV, շեղագիրն ավելացված է):

Իհարկե, այդ պարտեզում կային շատ ծառեր, որոնք լավն էին ուտելու համար և հաճելի էին աչքին: Բայց ծառը, որի պտուղը ուտելով՝ մարդը կարող էր բարձրանալ՝ հասնելով Աստծո կարգավիճակին, բոլորովին այլ էր: Եվան մտածեց, որ կար ավելին, քան այն, ինչ արդեն տրվել էր իրեն: Մեզ համար զարմանալի է, որ այս կինը ձգտեց մի բանի, ինչը նա չպետք է ունենար (հավասարությունն Աստծո հետ)՝ կորցնելով այն, ինչը նա կարող էր ունենալ (իմաստությունը):

Ադամը և Եվան ցանկացան լինել Աստծո նման, բայց՝ ոչ Նրա իշխանության ներքո: Նրանք ձգտեցին մի դիրքի, որն իրենցը չէր: Սա բոլորովին հակասում է այն ընտրությանը, որը կատարեց նրանց ժառանգներից մեկը.

> «[Հիսուսը] լինելով Աստված Իր բնությամբ՝ Աստծո հետ հավասարությունը չհամարեց այնպիսի բան, ինչին պետք է ձգտել…» (Փիլիպ. 2.6, NIV):

Ադամը և Եվան ստեղծվել էին Աստծո պատկերով, բայց ոչ՝ Նրան հավասար: Պատկերը լիարժեք կերպով չի ներկայացնում որևէ իրողություն, այլ ընդամենը դրա արտացոլանքն է: Ստանալով Աստծուն հավասար լինելու կեղծ խոստումը՝ տղամարդը և կինը մտածեցին, որ ինչ-որ բան ձեռք կբերեն, այնինչ երկուսն էլ կորուստ ունեցան: Նրանք խաբեություն ընդունեցին՝ իմաստություն ստանալու փոխարեն[2]:

Այս խաբված և անհնազանդ զույգը վտարվեց պարտեզից: Նրանք այլևս չէին կարողանալու ուտել Կյանքի ծառի պտղից: Առանց դրա կենսատու պտղի՝ Ադամը և Եվան դատապարտված էին մահվան: Նրանք մահացան, և նրանց պարտեզն արդեն վաղուց է՝ չկա: Այնուամենայնիվ, ինչ-որ իմաստով նրանց կյանքը շարունակվում է, քանի որ մենք նրանց զավակներն ենք: Տղամարդիկ և կանայք այլևս անմահություն չունեն այս աշխարհում, բայց ամուսնությունը՝ կյանքը շարունակելու միջոց է:

Մենք ունենք բարի լուր. այժմ Քրիստոսի խաչն է մեր կյանքի ծառը: Խաչը վերականգնում է այն ամենը, ինչը կորսվեց պարտեզում: Աստծուն հաճելի ամուսնությունը կարող է հավերժական կյանքի ծառ դառնալ: Այն ստեղծում է անհրաժեշտ միջավայր թե՛ ժառանգություն թողնելու, թե՛ մտերմություն ունենալու համար: Ահա թե ինչու Աստծո համար անչափ կարևոր է, որ մենք պատվենք ամուսնությունը, պահպանենք ամուսնության հոգին և սիրենք իրար:

Անհրաժեշտ չէ փոխհարաբերությունների մասնագետ լինել՝ հասկանալու համար, որ մեր օրերում կորսվել է կարևոր մի բան, որը կար պարտեզում: Շատ ամուսնություններ հավերժական կյանքի ծառի հակառակն են: Ամուսնալուծությունը, ամուսնական դավաճանությունը, հիասթափությունը, դժբախտությունը և վիրավորվածությունը քայքայում են մեր ամուսնությունները և ընտանիքները: Նման սայթաքումների պատճառով շատերը չեն հասկանում ամուսնության նպատակը, և՝ թե ինչու նրանք պետք է ցանկանան ամուսնանալ: Իսկ նրանք, ովքեր ամուսնացած են, պարզապես փորձում են գոյատևել խաչաձև կրակի պայմաններում: Ամուսնությունը նրանց համար ապահով նավահանգիստ չէ, այլ պատերազմական գոտի:

Օր 3

Կյանքի աղբյուրը

«Հեթանոսները հայհոյում են Աստծո անունը ձեր պատճառով» (Հռոմեացիների 2.24, NLT):

Երբ մենք՝ որպես Քրիստոսի Մարմին, չենք ապրում և սիրում ինչպես հարկն է, մարդիկ հայհոյում են Աստծո անունը: Սա չպետք է զարմանք պատճառի մեզ, որովհետև քրիստոնյա կոչվելով՝ մենք պնդում ենք, որ Քրիստոսի դեսպաններն ենք: Պողոս առաքյալը գրեց.

«Որովհետև Աստված Քրիստոսում էր, երբ հաշտեցրեց աշխարհն Իր հետ, և այլևս չհամարեց մարդկանց մեղքերը նրանց դեմ: Եվ Նա տվեց մեզ այս հրաշալի հաշտության ուղերձը: Այնպես որ, մենք

Քրիստոսի դեսպաններն ենք. Աստված ներկայացնում է Իր հորդորը մեր միջոցով: Մենք խոսում ենք Քրիստոսի անունից…» (Բ Կորնթ. 5.19,20, NLT):

Դեսպանը՝ լիազորված ավետաբեր կամ ներկայացուցիչ է[3]: Որպես քրիստոնյա՝ մենք խոսում ենք Քրիստոսի անունից: Ինչ-պիսի՞ արտոնություն: Մենք ստացել ենք առաջարկ, և նույնիսկ հրաման՝ կատարելու Աստծո հաշտության ծառայությունը: Սա մեր կյանքի նպատակն է: Մենք Աստծո գործակիցներն ենք, ովքեր տարածում են Նրա թագավորությունն այս երկրի վրա:

Այսպիսով, ի՞նչ է Քրիստոսը խնդրել մեզնից՝ Իր դեսպաններից: Հիսուսն ասաց. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք՝ ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհ. 13.34):

Բարեբախտաբար, մենք ստիպված չենք իրականացնելու այս առաքելությունը մեր կամքի ուժով: Սուրբ գիրքը պարզ ասում է, որ մեր նպատակն իրականացնելու համար նախ պետք է լինենք Քրիստոսի մեջ, այսինքն՝ դառնանք Նրա շնորհքի ժառանգները՝ խաչի վրա կատարած փրկարար գործի միջոցով: Միայն այդ դեպքում մենք կարող ենք վարվել Նրա Հոգու վերափոխող զորությամբ, և միայն այդ դեպքում կարող ենք սիրել մեկս մյուսին այնպես, ինչպես Նա է սիրում մեզ:

Շնորհքի նոր ուխտի ներքո, Աստված չի պատվիրում մեզ այնպիսի բան, ինչը կատարելու համար Նա զորություն չի տվել մեզ: Քանի որ մենք Քրիստոսում ենք, Նրա Հոգին կարողություն կտա, որ մեր ամուսնությունների և անձնական կյանքերի միջոցով հայտնենք Նրա ներկայությունն ու սերը այս աշխարհին: Այնուամենայնիվ, մենք չենք կարող հայտնել Նրա սերը, քանի դեռ անձամբ չենք վերապրել այն: Եփեսացիների 3.16-19-ում Պողոսը հայտնում է մեզ Քրիստոսի սիրո զորությունն ընդունելու բանալին.

«Ես աղոթում եմ, որ Իր փառավոր, անսահման հարստություններից Նա զորացնի ձեզ ներքին զորությամբ՝ Իր Հոգու միջոցով: Այդ ժամանակ Քրիստոսն Իր բնակությունը կհաստատի ձեր սրտերում, այնքանով, որքանով կվստահեք Նրան: Ձեր արմատները կաճեն Աստծո սիրո մեջ, և դրանց շնորհիվ դուք ուժեղ կմնաք: Եվ թող որ դուք զորություն ունենաք՝ հասկանալու համար, ինչպես որ Աստծո մարդիկ պետք է հասկանան, թե որքա՞ն լայն, որքա՞ն երկար,

> որքա՜ն բարձր և որքա՜ն խորն է Նրա սերը: Թող որ դուք վերապրեք Քրիստոսի սերը, թեև այն շատ մեծ է՝ լիովին հասկանալու համար: *Այդ ժամանակ* դուք ամբողջական կդառնաք կյանքի և զորության ամբողջ լիությամբ, որը գալիս է Աստծուց» (NLT, շեղագիրն ավելացված է):

Քրիստոսի սիրո հայտնությունն ստանալու համար, մենք նախ պետք է թույլ տանք, որ Աստված զորացնի մեզ ներքին զորությամբ՝ Իր Հոգու միջոցով: Բայց սա չի կարող տեղի ունենալ, եթե դուք չեք տվել Նրան ձեր կյանքը: Հենց որ ձեր կյանքն Աստծունը լինի, դուք հնարավորություն կունենաք շարունակ աճել Նրա սիրո մեջ, և արդյունքում լիարժեք և ամբողջական կյանք կունենաք (եթե ցանկանում եք իմանալ ավելին՝ ձեր կյանքը Քրիստոսին տալու մասին, կարդացե՛ք այս գրքի Հավելվածը):

Ընդամենը երկու խոսք հետո, Պողոսը բացատրում է այն զորության նպատակը, որը մենք ստանում ենք՝ ճանաչելով Քրիստոսի սերը.

> «Այդ իսկ պատճառով ես… աղաչում եմ ձեզ՝ *վարել այնպիսի կյանք, որն արժանի է ձեր կոչմանը*, որովհետև դուք կանչվել եք Աստծուց: Մշտապես խոնարհ և հեզ եղեք: Եղեք համբերատար իրար հետ՝ մեղմորեն վերաբերվելով մեկդ մյուսի սխալներին, ձեր սիրո պատճառով: Ամեն ջանք արեք, որ միաբան մնաք Հոգու մեջ՝ իրար հետ խաղաղության կապ ունենալով (Եփես. 4.1-3, NLT, շեղագիրն ավելացված է):

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը գրում է. «Վարե՛ք այնպիսի կյանք, որն արժանի է ձեր կոչմանը»: Կրկին Նա խոսում է մեր նպատակի մասին, որն է՝ հայտնել Աստծո սերը, ճշմարտությունը և կյանքի ոճը (Նրա թագավորությունը) այս աշխարհին: Սրանցից ոչ մեկը հնարավոր չէ անել՝ առանց Աստծո սերը փորձառաբար ճանաչելու: Տեսական գիտելիքը չի օգնի: Մենք կկարողանանք կառուցել կյանքեր և ամուսնություններ, որոնք արժանի են մեր կոչմանը, միայն երբ անձամբ և փորձառաբար վերապրենք Աստծո սերը:

Այս հատվածում Պողոսը նկարագրեց մի քանի վարքային մոդելներ, որոնք լավագույնս համապատասխանում են ամուսնությանը. լինել խոնարհ, հեզ, համբերատար, մեղմորեն վերաբերվել մեկը մյուսի սխալներին և ամեն ջանք անել՝ խաղաղությամբ միա-

բան մնալու համար: Պատահական չէ, որ անմիջապես Եփեսացիների ուղերձի հաջորդ գլխում գրված են Աստվածաշնչի ամենահայտնի խոսքերն ամուսնության մասին (հիշե՛ք, որ գլուխների և խոսքերի բաժանումը ավելացվել է եկեղեցու կողմից տասներեքերորդ դարում, և որ Պողոսի կողմից գրված ուղերձի մեջ նման բաժանում չկար): Հնարավո՞ր է արդյոք, որ Եփեսացիների 1-4-րդ գլուխներում Պողոսը պատրաստում էր իր ընթերցողների սրտերը, որպեսզի կիսվեր ամուսնության մասին հիմքային ճշմարտություններով, որոնք ընկալելու համար պահանջվում էր ծայրահեղ կերպով ճանաչել Աստծո սերը:

Այսպիսով, հաջորդականությունը հետևյալն է. մինչև կկարողանաք պատշաճ կերպով սիրել (թե՛ ձեր կողակցին, թե՛ այլ մարդկանց), դուք պետք է նախ՝ հայտնաբերեք այն սիրո խորությունները, որով Աստված սիրում է ձեզ: Ձեր գիտելիքն Աստծո սիրո մասին չի կարող հիմնված լինել երկրորդական տեղեկության վրա. դուք պետք է անձամբ վերապրեք այն: Երբ դուք վերապրեք Քրիստոսի սերը, «դուք ամբողջական կդառնաք կյանքի և զորության ամբողջ լիությամբ, որը գալիս է Աստծուց»: Միայն այդ ժամանակ կարող եք վարել այնպիսի կյանք, որն արժանի է ձեր կոչմանը: Երբ մտերմորեն ճանաչեք Աստծո անսահման սերը ձեր հանդեպ, դուք զորություն կստանաք պատշաճ կերպով ապրելու և սիրելու համար:

Ամուսնության Նպատակը

Եթե ձեր անձնական կյանքի նպատակն է՝ լինել Քրիստոսի ներկայացուցիչն այս աշխարհում, ապա ո՞րն է ձեր ամուսնության նպատակը:

Սկսենք հետևյալից. Աստված սեր է: Սերը պարզապես Աստծո գործը կամ սեփականությունը չէ: Աստված Ինքը՝ սեր է: Ամուսնությունը սիրո հաստատություն է՝ առաջին հաստատությունը, որն Աստված հիմնադրեց: Բացի Աստծո կողմից հիմնադրված առաջին հաստատությունը լինելուց՝ ամուսնությունը նույնպես պոետիկ խորհրդապատկեր է, որը Նա օգտագործում է, որպեսզի ցույց տա Իր սերը և նվիրումը մեր՝ Իր Եկեղեցու և հարսնացուի հանդեպ: Հարսնացուն և փեսացուն Եկեղեցու և Քրիստոսի խորհրդապատկերն են:

Այս աներևակայելի խորհրդապատկերի պատճառով, հարձակումներն ամուսնության դեմ ունեն շատ ավելի խորը, շատ ավելի խավար դրդապատճառ, քան շատերը գիտակցում են: Հարձակումներն ընդդեմ ամուսնության՝ դրա սահմանման, նպատակի և աստվածային արմատների, չեն սահմանափակվում քաղաքականությամբ կամ հասարակական առաջընթացով: Սուրբ գիրքը պարզ ասում է, որ մենք չենք պայքարում մարմնի և արյան դեմ, որ մեր թշնամին՝ որևէ կառավարություն կամ կազմակերպություն չէ (տե՛ս Եփես. 6.12): Կա մի հինավուրց ախոյան, ով մեր անձերի թշնամին է. նա գործում է ծածուկ՝ ձգտելով խեղաթյուրել այս աստվածային միությունը: Նա չի դադարի իր հարձակումներն ամուսնության վրա, քանի դեռ լիովին չի աղավաղել մեր պատկերացումն այն մասին, թե ինչպես է Աստված սիրում Իր ժողովրդին և հաղորդակցվում նրա հետ: Ամենից առավել սատանան ձգտում է, որ մենք չհայտնաբերենք և չընդունենք Աստծո վերափոխող սերը: Բայց Աստծո շնորհքով, մենք կարող ենք պարտության մատնել մեր թշնամուն և ընդունել այն ամենը, ինչ Աստված ցանկանում է անել մեր ամուսնության համար:

Ի՞նչ է մտածում Հիսուսը

Աստված ոչ միայն ստեղծել է ամուսնությունը, այլև ունի ծրագիր և նպատակ ամուսնության համար, որն անփոփոխ է մնացել: Թեև ամուսնությանը վերաբերող մասնավոր հարցերը թեժ քննարկումների առարկա են եղել հազարամյակներ շարունակ, Նա դեռ անվարան սատարում է Իր սկզբնական ծրագիրը: Տեսեք, թե ինչ ասաց Հիսուսը փարիսեցիներին Իր ամենահայտնի զրույցներից մեկի ժամանակ՝ խոսելով ամուսնության մասին:

> «Մի օր փարիսեցիները հանգիստ չէին տալիս Նրան. «Օրինավո՞ր է արդյոք, որ տղամարդը բաժանվի իր կնոջից ցանկացած պատճառով»»:
>
> Նա պատասխանեց. «Մի՞թե չեք կարդացել ձեր Աստվածաշնչում, որ Արարիչը սկզբում ստեղծեց տղամարդուն և կնոջն իրար համար, արու և էգ: Եվ այս պատճառով, տղամարդը թողնում է իր հորը և մորը և ամուր կապվում է իր կնոջը՝ դառնալով մեկ մարմին. այլևս ոչ

թե երկու մարմին, այլ մեկ: Քանի որ Աստված ստեղծեց երկու սեռերի այս բնական միությունը, ոչ ոք չպետք է պղծի Նրա արվեստի գործը՝ նրանց իրարից հեռացնելով» (Մատթ. 19.3-6, MSG):

Փարիսեցիներն ընդամենը ցանկանում էին իմանալ, թե ինչ էր ասում օրենքը, բայց Հիսուսը ցանկանում էր, որ նրանք հասկանային սիրո զորությունը:

Մենք չենք կարող ուրանալ այն փաստը, որ սկզբում Աստված նախատեսեց տղամարդուն և կնոջը՝ մեկը մյուսի համար: Ամուսնանալով՝ նրանք թողնում են իրենց ծնողներին, որպեսզի կենդանի միություն կառուցեն: Հենց որ երկու սեռերը միանում են, ոչ ոք չպետք է խզի նրանց միությունը:

Ինչո՞ւ է ամուսնալուծությունը մտահոգում Աստծուն

«Մեսիջ» (MSG) թարգմանության մեջ ամուսնալուծվելը համեմատվում է Աստծո արվեստի գործը պղծելու հետ: Ամուսնալուծությունը շատ մեծ խնդիր է այն պատճառով, որ ամուսնությունը՝ Աստծո արվեստի գործն է:

Պղծել բառը նշանակում է՝ *անպատվորեն վարվել սուրբ բանի հետ*[4]*: Պղծել* բառի հոմանիշներից են՝ *հայհոյություն անել, զրպարտել, ապականել, վնասել, վիրավորել* և *ոտնահարել*: Բոլոր այս խիստ արտահայտիչ բառերը բռնի արարքների իմաստ ունեն: Մենք մեջբերեցինք այս խոսքը «Մեսիջ» վերապատմողական թարգմանությունից, բայց Աստվածաշնչի բոլոր թարգմանություններն էլ շեշտադրում են, որ Աստծո միացրածը բաժանելը՝ ծանր հանցանք է: Եվ ելնելով այս խոսքի համատեքստի մանրամասն ուսումնասիրությունից՝ մենք կարող ենք միանշանակ եզրակացնել, որ Հիսուսը խոսում էր բոլոր ամուսնությունների մասին[5]:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես կարծագանքեր այս աշխարհը, եթե ինչ-որ մեկը պղծեր Լեոնարդո Դա Վինչիի «Մոնա Լիզան»: Բոլոր լրատվական միջոցները կհաղորդեին այս նորության մասին: Այդ ոճրագործությունն անողը կդատապարտվեր հասարակության կողմից, և, հավանաբար, կյանքի մնացած մասը կանցկացներ բանտում: Ինչպե՞ս ինչ-որ մեկը կհամարձակվեր պղծել

մարդկային արվեստի մեծագույն գործերը: Լեոնարդոն կշրջվեր իր գերեզմանում:

Իր հերթին, Աստված ամուսնությունը համարում է Իր մեծագույն արվեստի գործերից մեկը, որը պետք է արտահայտվի Իր սիրելի ստեղծագործության միջոցով: Նրա ավյունն ամուսնության վերաբերյալ ակնհայտորեն երևում է այն պատասխանից, որը Հիսուսը տվեց փարիսեցիներին: Հիսուսի խոսքերը չափազանց վեհ էին փարիսեցիների համար, և նրանք պարզապես հրաժարվեցին պատասխանել: Ի վիճակի չլինելով ընկալել ամուսնությունն Աստծո սկզբնական մտադրության լույսի ներքո՝ նրանք թաքնվեցին Մովսեսի օրենքի ետևում: Այս մոտեցումը հեռանալու իրավունք էր տալիս նրանց, բայց ոչ զորություն՝ մնալու համար:

Հերքելով Հիսուսի ասածը՝ նրանք պատասխանեցին. «Եթե այդպես է, ինչո՞ւ Մովսեսը կարգադրություններ արեց ամուսնալուծության փաստաթղթերի և ամուսնալուծության ընթացակարգերի մասին»:

> «Հիսուսն ասաց. «Մովսեսն ամուսնալուծության հնարավորություն տվեց ձեր խստասրտության համար, բայց այն Աստծո սկզբնական ծրագրի մասը չէր: Ես տանում եմ ձեզ դեպի սկզբնական ծրագիրը և պարտական եմ համարում ձեզ շնության մեջ, եթե դուք ամուսնալուծվեք ձեր հավատարիմ կնոջից, իսկ հետո ամուսնանաք մեկ ուրիշի հետ: Ես բացառություն եմ անում այն դեպքերում, երբ կողակիցը շնություն է գործել»» (Մատթ. 19.7-9, MSG):

Մովսեսի Օրենքի ներքո զիջումներ էին արվում մարդկային սրտի խստության պատճառով: Դրանք պայմանական դրույթներ էին, ոչ թե Աստծո սկզբնական մտադրությունը: Նույնիսկ կասկած չունենաք, որ Աստված ատում է ամուսնալուծության հետևանքները: Երբ ամուսինը և կինը բաժանվում են իրարից, Աստծո արարչագործության առեղծվածներից մեկը (ինչպես որ ամուսնությունը նկարագրված է Եփեսացիների 5.31,32-ում) ոտնահարվում և մասնատվում է:

Օր 4

Նոր սիրտ

«...Ես առաջնորդում եմ ձեզ դեպի սկզբնական ծրագիրը և պարտական եմ համարում ձեզ շնության մեջ, եթե դուք բաժանվեք ձեր հավատարիմ կնոջից, իսկ հետո ամուսնանաք մեկ ուրիշի հետ...» (Մատթ. 19.9, MSG):

Կրկին, Հիսուսը ոչ մի դեպքում չի խնդրի մեզ անել այնպիսի բան, ինչի համար Նա կարողություն չի տվել: Նա տանում է մեզ դեպի Աստծո սկզբնական ծրագիրն ամուսնության մասին, որովհետև Նա ցանկանում է տալ մեզ անհրաժեշտ ամեն ինչ՝ այն իրագործելու համար: Մովսեսի Օրենքը որոշ զիջումներ արեց խստասիրտ մարդկանց համար, բայց Հիսուսի զոհի միջոցով մենք ստանում ենք նոր, Հոգուց ծնված սրտեր, ոչ թե քարե սրտեր:

«…Ես կտամ ձեզ նոր սիրտ և կդնեմ նոր հոգի ձեր մեջ: Ես կվերցնեմ ձեր քարե, համառ սիրտը և կտամ զգայուն, արձագանքող սիրտ» (Եզեկ. 36.26, NLT):

Մենք տեսնում ենք, թե ինչպես է այս միտքը կրկնվում Նոր կտակարանում: Պողոս առաքյալը խրախուսում է մեզ հետևյալ խոսքով.

«…Մենք գիտենք, թե որքան սրտանց է Աստված սիրում մեզ, որովհետև Նա տվել է մեզ Սուրբ Հոգուն՝ մեր սրտերն Իր սիրով լցնելու համար» (Հռոմ. 5.5):

Մենք չենք կարող նոր սիրտ ունենալ մեր ուժերով: Սա կախված է Աստծո զորությունից և Նրա սիրո կարողությունից: Այնուամենայնիվ, մենք պետք է խոնարհվենք, որպեսզի ընդունենք այդ զորությունը: Հիշե՛ք, որ Աստված երբեք չի հարկադրի Իր սերը ձեզ: Նա ջենտլմեն է, Ով երբեք չի պարտադրում Իրեն մեզ:

Քանի որ մենք ունենք նոր սրտեր, որոնք կարող են ընդունել Քրիստոսի սերը, մենք նույնպես կարող ենք ընդունել Հիսուսի խոսքերն այն սկզբնական ծրագրի մասին, որն Աստված ուներ ամուսնության և ամուսնալուծության վերաբերյալ, թեև դրանք կարող են վիատեցնել այլ մարդկանց:

«Մեսիջ» Աստվածաշունչն օգտագործում է *պարտական* բառը (որը նշանակում է՝ «պատասխանատու՝ ըստ օրենքի, իրավաբանորեն հաշվետու»[6])՝ նկարագրելու համար այն մարդու վիճակը, ով ամուսնալուծվում է հավատարիմ կողակցից: Մենք գիտենք, որ սա կարող է չափազանց մեծ պահանջ թվալ, բայց եթե Աստված տալիս է մեզ այս չափանիշը, ուրեմն Նա ամենայն հոժարությամբ շնորհք կտա մեզ, որպեսզի համապատասխանենք այս չափանիշին: Բայց քանի որ այս ընթացքը հեշտորեն և ինքնաբերաբար տեղի չի ունենում, բազմաթիվ մարդիկ որոշում են հեռանալ ճիշտ այն պահին, երբ նրանք պետք է ջանք գործադրեին և առաջ գնային:

Համաձայն մի վիճակագրության՝ երեք դժբախտ ամուսնություն ունեցող զույգերից երկուսը երջանիկ կդառնան հաջորդ հինգ տարվա ընթացքում, եթե որոշեն չամուսնալուծվել[7]: Այնպես որ, մի՛ հանձնվեք: Մենք չգիտենք ձեր ամուսնության վիճակն այս պահին, բայց նույնիսկ եթե դուք անօգնական եք զգում ձեզ, դեռ հույս կա: Ձեր ճեղքումը կարող է շատ մոտ լինել: Հիսուսը եկավ, որպեսզի լավ ամուսնությունները դարձնի ավելի լավը, իսկ խաթարված ամուսնությունները՝ լիարժեք*:

Բացառությունը

> «Ես բացառություն եմ անում այն դեպքերում, երբ կողակիցը շնություն է գործել» (Մատթ. 19.9, MSG):

Հիսուսը պարզ ասաց, որ սա բացառություն է սկզբնական ծրագրից: Նույնիսկ շնության դեպքում, ամուսնությանը վերջ տալը՝ ընտրության հարց է: Եթե ձեր կողակիցն անհավատարիմ է եղել, դուք պարտավոր չեք մնալ նրա հետ, բայց նույնպես պարտավոր չեք թողնել նրան: Եվ ինչ տարբերակ էլ ընտրեք, դուք պարտավոր եք ներել նրան:

---

* Դուք երբեք չպետք է մնաք այնպիսի իրավիճակում, որը վտանգավոր է ձեզ և ձեր երեխաների համար: Եթե ձեր ամուսնության մեջ բռնություն կա, խնդրում ենք, անմիջապես քայլ արեք՝ ձեր անվտանգությունն ապահովելու համար: Կապ հաստատեք ձեր եկեղեցու կամ տեղական իշխանությունների հետ՝ օգնություն ստանալու համար:

Կա շատ մեծ տարբերություն ներման և հաշտության միջև: Դուք պետք է ներեք նրան, ով գողացել է ձեզնից, բայց դա չի նշանակում, որ պետք է ձեր տուն հրավիրեք այդ գողին: Հաշտությունը հնարավոր է, միայն եթե զույգը կարողանա վերականգնվել և կրկին մեկ դառնալ ուխտի, հավատքի և վստահության ցավալի խախտումից հետո:

Մենք երբեք չենք տառապել շնության հետևանքներից, բայց եղել ենք մեր ընկերների կողքին, ովքեր կրել են դրա սարսափները: Այդ զույգերից մի քանիսը ընտրեցին հաշտության ճանապարհը: Նրանք ջանադրաբար վերականգնեցին իրենց ուխտի կոտրված բեկորները: Ցանկացած այդպիսի դեպքում անհավատարիմ կողակիցը փշրված սիրտ և ապաշխարություն վերապրեց: Նույնիսկ Աստված, Ում բարությունը և ողորմությունն անսահման են, պահանջում է, որ մենք ապաշխարենք՝ փոխենք մեր միտքը և սիրտը, նախքան Նրա հետ հաշտվելը:

Մենք նույնպես ճանաչում ենք այնպիսի զույգերի, ովքեր չկարողացան հաշտվել: Կարիք չկար, որ նրանք դատապարտություն զգային: Հիսուսը հասկանում էր դավաճանության ծանրությունը, և անհրաժեշտ զիջում արեց դրա համար: Մենք տեսնում էինք, թե ինչպես էր Աստված օրհնում մեր ընկերներին, մինչ նրանք վերականգնվում էին ամուսնալուծությունից հետո:

Եթե ձեր կյանքում ամուսնալուծություն է տեղի ունեցել, մենք խրախուսում ենք ձեզ՝ թույլ չտալ, որ այն որոշի ձեր հետագա կյանքը: Ամուսնալուծությունը ձեր անցյալի մասն է, բայց այն չպետք է որոշի ձեր ապագան:

Անցյալը չի պատկանում ձեզ: Այն պատկանում է Աստծուն: Ձեր անձի թշնամին կփորձի օգտագործել ձեր անցյալը, որպեսզի խափանի Աստծո ծրագրերը ձեր ապագայի համար: Հիշեք, որ Աստված տվել է ձեզ ներկան, և այն որոշումները, որոնք դուք կայացնում եք այսօր, կձևավորեն ձեր վաղվա, ոչ թե երեկվա օրը: Եթե դուք ոչ ճիշտ որոշումներ եք կայացրել, ընդունեք Աստծո իմաստությունը և զորությունը: Խոնարհվեք ապաշխարության միջոցով և վերապրեք Նրա շնորհքի սքանչելիքները, որոնք կարող են վերափոխել ամենադժգույն հանգամանքները:

Արդյո՞ք ես ծուղակն եմ ընկել

Հիսուսի բացատրությունն այն մասին, թե ինչպիսին է Աստված ստեղծել ամուսնությունը, պետք է որ ծայրահեղ կերպով տարբերվեր այդ ժամանակվա չափանիշներից: Նրա խոսքերն ընկճեցին Իր աշակերտներին՝ ոգեշնչելու փոխարեն:

> Հիսուսի աշակերտներն առարկեցին. *«Եթե ամուսնության պայմաններն այդպիսին են, մենք ծուղակն ենք ընկել:* էլ ինչո՞ւ ամուսնանալ» (Մատթ. 19.10, MSG, շեղագիրն ավելացված է):

Ծուղա՞կն ընկնել: Ինչպիսի՜ սարսափելի կարծիք ամուսնական կյանքի մասին: Այնուամենայնիվ, ինչպես և աշակերտները, մեզնից շատերը համարում են, որ ամուսնությունը սահմանափակում և բանտարկում է մեզ: Որքա՜ն շատ ամուրի տղամարդիկ և կանայք են տանջվում սխալ մարդու հետ ամուսնանալու և այդ ամուսնության ծուղակն ընկնելու վախից:

Մենք մի բան ենք հասկացել. ամուսնության մեջ հարցն այնքան ճիշտ մարդուն գտնելը չէ, որքան ճիշտ մարդ *լինելն* է: Սխալ մի՛ հասկացեք մեզ. կողակից փնտրելու ժամանակ կարևոր է խորհուրդներ ստանալ աստվածապաշտ մարդկանցից և ձգտել Հոգու խաղաղությանը: Բայց շատ հաճախ մենք հավատում ենք, որ Պարոն կամ Տիկին Կատարելությունը հրաշքով կլրացնի մեր կյանքի բոլոր բացերը: Ոչ մի մարդ ի զորու չէ կատարել այս առաջադրանքը. միայն Աստված կարող է անել սա: Բացի այդ՝ դուք չեք կարող «կարգավորել» որևէ մարդու՝ վերածելով նրան ճիշտ այնպիսի անձնավորության, ում կարիքը, ձեր կարծիքով, դուք ունեք: Ձեր ուժերի մեջ է՝ ընդունել Աստծո մաքրման ընթացքը և դառնալ այնպիսի տղամարդ կամ կին, ով անձնուրաց նվիրում է իր կյանքն իր ներկա կամ ապագա կողակցին: Դուք ավելի մեծ բավականություն կունենաք՝ նվիրելով ձեր կյանքը, քան՝ եթե ձգտեք պաշտպանել ձեր շահերը:

Մատթեոս 6.22-ում գրված է, որ մարմնի լույսը՝ աչքն է: Այսինքն՝ ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես եք ընկալում կյանքը: Եթե դուք մտածեք, որ «ծուղակն եք ընկել», ձեր մտածելակերպը կսահմանափակի այն, ինչ Աստված կարող է անել ձեր ամուսնության մեջ և ձեր ամուսնության միջոցով: Եթե ձեզ թվում է,

որ ձեր ամուսնությունն անհուսության ծուղակ է, այդպես էլ կլինի: Ի վերջո, ձեր հոգևոր տեսողությունը որոշելու է ձեր բնական հանգամանքները, և ամուսնությունը բացառություն չէ այս օրինաչափությունից:

Միգուցե մտածեք. *«Ջոն և Լիզա, դուք չափից շատ եք խնդրում: Դուք ցանկանում եք, որ կյանքս նվիրեմ կողակցի՞ս: Դա ծիծաղելի՜ է: Չէ՞ որ ես ունեմ կարիքներ, հույսեր և երազանքներ: Հիսուսը ցանկանում է, որ ես երջանիկ լինեմ: Այն, ինչ դուք ասում եք, հաճելի գաղափար է, մի բան, որին կարելի է ձգտել»:* Մենք կարող ենք հավաստիացնել ձեզ, որ Աստված իսկապես ցանկանում է, որ դուք երջանիկ լինեք, բայց ճշմարիտ երջանկությունը՝ ավելի բարձր ձգտումներ ունենալու կողմնակի արդյունքն է: Երջանկությունը գալիս է, երբ մենք ձգտում ենք ավելի մեծ նպատակի, իսկ ցանկացած արժանավոր նպատակ պահանջելու է, որ զոհաբերեք ձեր կյանքը: Մենք ճշմարիտ երջանկություն ենք գտնում, երբ ուրանում ենք մեր անձը: Ամուսնությունը կատարյալ միջավայր է մեր եսակենտրոնության դեմ պայքարելու համար:

Թիմոթի և Քեթի Քելլերները գրում են. «Եթե երկու ամուսիններն էլ ասեն. «Ես համարելու եմ, որ մեր ամուսնության մեջ ամենամեծ խնդիրը իմ եսակենտրոնությունն է», այդ ամուսնությունը կարող է ճշմարտապես հոյակապ լինել»[8]: Եսակենտրոնությունը թույլ չի տալիս մեզ հոյակապ ամուսնություն ունենալ: Սա նշանակում է, որ ինքնազոհաբերումը՝ ամուսնությունը լիարժեք կերպով վայելելու բանալին է: Եթե ձեր փոխհարաբերությունները ձեր կողակցի հետ լարված են, պատճառը, հավանաբար, եսակենտրոնությունն է:

Օր 5

Ամուսնության մեծությունը

Բայց Հիսուսն ասաց. «Ամեն մեկը չէ, որ բավականին հասուն է՝ ամուսնանալու համար: Ամուսնությունը պահանջում է որոշակի ունակություններ և շնորհք: Ամուսնությունն ամեն մեկի համար չէ: Ոմանք, թվում է, ծնվելուց ի վեր երբեք չեն մտածում ամուս-

նության մասին: Մյուսներին երբեք առաջարկություն չեն անում, կամ նրանց առաջարկությունները չեն ընդունվում: Իսկ մյուսները որոշում են չամուսնանալ՝ Աստծո թագավորության հետ կապված պատճառներով: Բայց *եթե դուք կարող եք աճել՝ հասնելով ամուսնության մեծությանը, արե՛ք դա»* (Մատթ. 19.11,12, MSG, շեղագիրն ավելացված է):

Մինչ աշակերտները կենտրոնացած էին ծուղակն ընկնելու վրա, Հիսուսն այնպիսի բան էր ասում, որը կարող էր ընդլայնել նրանց կյանքի սահմանները: Հիսուսը չի դիտարկում ամուսնությունը որպես ծուղակ, այլ՝ որպես մի իրողություն, որը կարող է *հարստացնել* ձեր կյանքը:

Կարող է թվալ, որ ամուսնությունը նվազեցնում է իր մասնակիցների և՛ քանակը, և՛ արժեքը: Ի վերջո, չէ՞ որ երկուսը մեկ են դառնում: Բայց և այնպես, ամուսնությունն առաջացնում է ոչ թե նվազեցում կամ բաժանություն, այլ ավելացում: Երբ երկուսը մեկ են դառնում, տեղի է ունենում բազմապատկում կյանքի բոլոր բնագավառներում: Աստված չէր կարող պատվիրել Ադամին՝ աճել և շատանալ, կամ պտղաբեր լինել և բազմապատկվել, մինչև Եվային ստեղծելը, և այս պատվերը չէր սահմանափակվում երեխաներ ունենալով: Բազմապատկման իրական ներուժը, որն ամուսնության մեջ է, անկարելի է հաշվարկել և չափել դրա անսահման մեծության պատճառով:

Մենք կարող ենք հավաստիացնել ձեզ, որ դուք չէիք կարդա այս գիրքը (և ո՛չ էլ մեր գրքերից որևէ մեկը), եթե մենք ամուսնացած չլինեինք: Մեր կյանքերը սահմանափակ կլինեին: Այսօր ես այն եմ, ով կամ, քանի որ իմ կյանքում կա Աստծո շնորհքը և Նրա պարգևը՝ Լիզա Բիվերը: Արդյո՞ք մեր ամուսնությունը միշտ հեշտ է եղել: Իհարկե՝ ո՛չ: Բայց Աստված օգտագործել է մեր ամուսնությունը՝ իմ կյանքի բոլոր բնագավառները ընդարձակելու համար:

Ես (Լիզան) նույն կարծիքն ունեմ: Ես այնքա՜ն շնորհակալ եմ Աստծուց, որ Նա ընդլայնեց կյանքս իմ ամուսնու միջոցով: Երբ մենք նոր էինք ամուսնացել, ես սարսափում էի մարդկանցից: Ես անվստահության զգացում ունեի, հիմնականում այն պատճառով, որ հինգ տարեկանում քաղցկեղ էի ունեցել, որի արդյունքում կորցրել էի աչքս: Ջոնը գիտեր՝ իմ վախը սահմանափակում էր այն

պարգևը, որն Աստված տվել էր ինձ: Նրա խրախուսանքն օգնեց ինձ՝ մուտք գործել Աստծո ծրագրի և ավելի լայն կյանքի մեջ, ինչը, ի զարմանս ինձ, մեծ մասամբ կապված էր այլ մարդկանց ծառայելու հետ:

Ինչպես մենք նշեցինք, երբ Աստված պատվիրեց մեզ՝ շատանալ, Նա չէր խոսում պարզապես երեխաներ ունենալու մասին: Աստված գիտեր, որ տղամարդու և կնոջ միությունը (ինչը պարզապես ավելացնում է թվում՝ մեկին գումարած մեկ) մեծ բազմապատկման հնարավորություն կստեղծեր: Այս սկզբունքը գործում է կյանքի ամեն բնագավառում՝ ձեր աշխատանքի մեջ, ընտանիքում, հոգևոր կյանքում և այլն: Ամուսնության մեջ Աստված տվեց մեզ այն, ինչը կարող է հեռացնել մեր սահմանափակումները: Եթե ձեր կյանքում չկա օրհնություն և բազմապատկում, ժամանակն է, որ դադարեք ճիգեր թափելը և սկսեք պատվել ու սիրել ձեր կողակցին:

Սա հեշտ չէ

Լավ ռազմական փորձագետը կասի ձեզ, որ ամեն արդյունավետ զինվորական ծրագրի կարևորագույն մասերից մեկը թշնամուն և նրա ծրագրերը շատ լավ իմանալն է (ձեր կարծիքով, ինչո՞ւ են ֆուտբոլային թիմերն այդքան շատ ժամանակ անցկացնում՝ դիտելով իրենց հակառակորդների խաղերը): Երբ թշնամին հարձակվում է ամուսնությունների վրա, հատկապես քրիստոնյա ամուսնությունների, նրա նպատակն է՝ բաժանել և տիրել: Գիտությունն այս մասին պետք է շարժառիթ տա մեզ, որ դեմ կանգնենք նրա խորհուրդներին:

Պայքարելով մեր ամուսնությունների համար՝ մենք պայքարում ենք աստվածային գաղափարի համար: Հիշեք՝ Աստված է ստեղծել ամուսնությունը, ոչ թե դուք: Սատանան ատում է ամուսնությունը, որովհետև այն ավելին է, քան սեռական կապը. այն հոգևոր միություն է: Քանի որ ձեր ամուսնությունն այդ աստիճան կարևոր է, այն կհանդիպի հակառակության: Բայց դուք պետք է առաջ գնաք՝ մրցանակին հասնելու համար (տե՛ս Փիլիպ. 3.14): Հիսուսը երբեք չասաց, որ ամուսնությունը հեշտ է լինելու: Ըստ էության, Նա մարտահրավեր նետեց մեզ այս խոսքով.

«Ամեն մեկը չէ, որ բավականին հասուն է՝ ամուսնանալու համար: Ամուսնությունը պահանաջում է որոշակի ունակություններ և շնորհք» (Մատթ. 19.11, MSG):

Հասունության կարևոր մասերից մեկը՝ զարգանալու և սովորելու պատրաստակամությունն է: Գերի Թոմասը գրում է իր «Սուրբ ամուսնություն» գրքում. «Եթե ցանկանում եք ավելի նմանվել Հիսուսին, ապա ես չեմ կարող պատկերացնել ավելի լավ միջոց, քան ամուսնանալը: Ամուսնության շնորհիվ դուք բախվում եք այնպիսի թերությունների ձեր բնավորության մեջ, որոնց, հակառակ դեպքում, այդպես էլ ստիպված չէիք լինի բախվել»[9]: Հիսուսը պարզ ասաց, որ ամուսնական կյանքը ջրի երես է հանելու մեր բնավորության ոչ հասուն կողմերը, բայց եթե մենք ցանկանում ենք աճել Նրա շնորհքի մեջ (ինչի համար անհրաժեշտ է խոնարհություն, անձնազոհություն և համբերություն), մենք, ի վերջո, կվայելենք ամուսնության մեծությունը:

Պայմանագի՞ր, թե՞ ուխտ

Մարդիկ հաճախ դիտարկում են ամուսնական ուխտը՝ որպես պայմանագիր: Սա խնդիր է: Պայմանագիրը պարզապես համաձայնություն է, որն ստեղծված է սահմանափակումներ որոշելու համար: Այն անուղղակիորեն ասում է. «Ահա՛ սահմանները: Չհամարձակվե՛ս խախտել այս համաձայնությունը: Եթե խախտես մեր պայմանները, ես պայմանագիրը խզելու իրավունք կստանամ»: Այլ կերպ ասած՝ *ես ծուղակի մեջ չե՛մ:*

Պայմանագրային մտածելակերպը փոքրացնում է ամուսնությունը: Մերիամ-Վեբսթերի բառարանն այսպես է սահմանում *փոքրացնել* բառը. «կրճատել՝ քամելու կամ սեղմելու միջոցով»: Սա բոլորովին նման չէ ամուսնության մեծությանը, որի մասին խոսում էր Հիսուսը: Ամուսնությունը պետք է ընդլայնի մեր կյանքերը, ոչ թե ավելի սահմանափակի:

Աստված չի դիտարկում ամուսնությունն ուղղակի որպես պայմանագիր: Նրա համար ամուսնությունը՝ հոգևոր ուխտ է: Այն համաձայնություն է, որը բացականչում է. «Իմ ամբողջ էությամբ ես

նվիրվում եմ քո ամբողջ էությանը: Ես և այն ամենը, ինչ ունեմ, քոնն է, և այն ամենը, ինչ դու ունես, իմն է: Այս հրաշալի փոխանակման շնորհիվ, մեր բոլոր գործերը կբազմապատկվեն, կընդլայնվեն և կավելանան»: Ուխտը ցնծագին հռչակում է. «Ես ծուղա՜կն եմ ընկել, և ուրա՜խ եմ այդ պատճառով»: Ուխտը՝ ընդլայնում է:

Պողոսը գրեց Եփեսացիներին.

> «Ամուսիններ՛ը… սիրե՛ք ձեր կանանց *ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսը սիրեց Եկեղեցուն…*» (Եփես. 5.25, NLT, շեղագիրն ավելացված է):

Պողոսը խրախուսեց ամուսիններին՝ սիրել իրենց կանանց ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսը սիրում է Եկեղեցուն: Այս սերն ուխտի սեր է, որը շատ ավելին է պայմանագրից: Ամուսիններ՛ը, մի՞թե դուք ուրախ չեք, որ Հիսուսը սիրում է ձեզ նույնիսկ այն ժամանակ, երբ դուք այնքան էլ «սիրելի» չեք: Մի՞թե ուրախ չեք, որ Հիսուսը երբեք չի դիտարկում Իր փոխհարաբերությունները ձեզ հետ որպես հասարակ պայմանագիր, որով Նա «ծուղակն է ընկել»: Մենք պետք է ձգտենք նմանակել Հիսուսի սիրուն՝ շփվելով մեր հարսնացուների հետ (ի դեպ՝ Պողոսը կանգ չի առնում այստեղ: Նա շարունակում է՝ ասելով, որ մենք պետք է մատնենք մեր անձերը մեր կանանց համար: Ինչպիսի՜ պատվիրան):

Հիշե՛ք, որ Եփեսացիների 3-րդ գլխում՝ այս խոսքերը գրելուց մի փոքր առաջ, Պողոսը նկարագրեց Աստծո սիրո խորությունն Իր ժողովրդի հանդեպ: Ընդամենը երկու գլուխ անց նա պատվիրեց, որ նույն սերը լինի մեր ամուսնությունների մեջ, այսինքն՝ որ մենք սիրենք «ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսը սիրեց Եկեղեցուն»:

Մեր ամուսնությունների նպատակն է՝ նմանակել Քրիստոսի սիրուն Իր հարսնացուի հանդեպ: Ինչո՞ւ Հիսուսին չճանաչող մարդիկ պետք է ցանկանան շփվել Նրա հետ, եթե Նրա ժողովրդի փոխհարաբերությունները զուրկ են սիրուց, զորությունից, ներդաշնակությունից և նվիրումից: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու է ձեր ամուսնությունն այդքան կարևոր: Այն պարզապես ձեզ համար չէ: Աստված ցանկանում է օգտագործել ձեր ամուսնությունը, որպեսզի հասնի այս աշխարհին Իր սիրով:

Ինչպես արդեն ասացինք, ճշմարիտ սերը ձեր կողակցի հանդեպ պետք է բխի այն սիրուց, որը դուք ընդունում եք Աստծուց: Այս

աստիճան խորը սերն անկարելի է կեղծել: Այն պետք է ընդունվի Նրանից, Ում սերը գերազանցում է մարդկային հասկացողությունը:

Մենք առաջինը կասենք ձեզ, որ Աստծո մոտեցումն ամուսնությանը հեշտ չէ: Մեր ամուսնության մեջ եղել են պահեր, երբ մենք կգերադասեինք խզել մեր կապը: Թվում էր՝ այլևս ոչ մի հույս չկար: Բայց երեսնամյա ամուսնությունից հետո մենք ավելի երջանիկ ենք, քան երբևէ, և մենք հույսով ու ակնկալիքներով սպասում ենք հաջորդ երեսուն տարվան:

Կյանքի՞, թե՞ մահվան ծառ

Ես (Լիզան) սիրում եմ այգեգործությամբ զբաղվել, բայց Ջոնը չի կիսում իմ նախասիրությունը: Նրան դուր են գալիս այգու պտուղները, բայց ոչ՝ այն աշխատանքը, որը պահանջվում է դրանց համար: Այգիները պահանջում են շատ աշխատանք և շատ ժամանակ: Հուրախություն Ջոնի, մեր տնից «Առողջ սնունդ» հանրախանութ հասնելու համար պահանջվում է ընդամենը մի քանի րոպե, այնպես որ նա ստիպված չէ կեղտոտել իր ձեռքերը:

Ինչպես և այգիները, նույնպես և ամուսնությունը մշակելու համար պահանջվում են շատ ժամանակ և ուժեր: Եթե մենք ցանկանում ենք, որ մեր ամուսնությունն առողջ լինի, ապա չկա արագ լուծում, որը թույլ կտա մեզ՝ շրջանցել անհրաժեշտ աշխատանքը: Աշխատանքն օգտակար է մեզ համար, քանի որ մենք գնահատում ենք այն, ինչի համար աշխատում ենք, իսկ մենք պետք է գնահատենք մեր ամուսնությունը:

Բարի կամ վատ լուրն այն է, որ դուք ձեր կյանքի տարբեր բնագավառներում կհնձեք այն, ինչ ցանեք ձեր ամուսնության մեջ: Ավելի վաղ այս գլխում մենք նկարագրեցինք մեր ամուսնությունները՝ որպես կյանքի ծառեր: Հակառակը նույնպես ճշմարիտ է: Ձեր ամուսնությունը կարող է նաև մահվան ծառ լինել:

Այս ծառերից երկուսն էլ վայելում էին նույն անթերի և անապական պայմանները: Այնուամենայնիվ, ծառերից մեկը սերում էր կյանք, իսկ մյուսը՝ մահ:

Ամուսնական հաստատությունը, որը հիմնել է Աստված, նման է բերրի հողի, իսկ ձեր ներկա կամ ապագա ամուսնությունը՝ ծառի: Ամուսնության սկզբնական ծրագիրը՝ բարի հող է, որում ձեր միությունը կարող է աճել, բայց ընտրությունը ձերն է: Արդյո՞ք ձեր ամուսնությունը կլինի կյանք տվող ծառ: Արդյո՞ք ձեր կողակիցը, ընտանիքը, ընկերները և աշխատակիցները կվերապրեն սեր, ուրախություն և խաղաղություն՝ ճաշակելով այդ ծառից, թե՞ ձեր ծառը հուսահատություն, եսասիրություն և դառնություն կփոխանցի նրանց, ովքեր կուտեն դրա պտուղը:

Մեզնից շատերը մտածել են, որ հենց ամուսնական հաստատությունն է մեր խնդիրների պատճառը: Մյուսները ձգտել են մեղադրել իրենց կողակիցներին: Երկու մոտեցումներն էլ ցույց են տալիս, որ մենք հրաժարվում ենք ընդունել մեր սրտերի արատավորությունը և քայլեր ձեռնարկել, որպեսզի փոխենք դա: Հուսով ենք՝ այս նկարագրությունն այլևս չի վերաբերում ձեզ:

Մինչև այս ճանապարհորդությունը շարունակելը, դուք պետք է որոշում կայացնեք: Որոշեք հավատալ, որ ձեր ամուսնությունը կարող է դառնալ և կդառնա այնպիսին, ինչպիսին Աստված նախատեսել է:

Միգուցե մտածում եք. *«Ես կհավատամ դրան, երբ տեսնեմ»:* Բայց հավատքը փոփոխության հանդեպ՝ մշտապես նախորդում է փաստացի փոփոխությանը, որովհետև Աստծո բոլոր խոստումներն ընդունվում են հավատքով: Բարի լուրն այն է, որ Աստված ավելի շահագրգռված է ձեր ամուսնության մեջ, քան դուք: Դուք պարզապես պետք է «ցած իջնեք Երկնքից» և թույլ տաք Աստծուն՝ լինել Աստված ձեր կյանքում: Ի վերջո, ձեր ամուսնությունը՝ Նրա արվեստի գործն է: Եթե թույլ տաք, Նա կփոխի այն՝ վերածելով իսկական գլուխգործոցի:

Սերտողություն. Օր 1

ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Ամեն բանի ժամանակ կա, և ժամանակ՝ երկնքի տակի ամբողջ հեռնարկության»:

— Ժողովող 3.1

Գարունը, ամառը, աշունը և ձմեռը՝ տարվա չորս եղանակներն են: Ամեն մեկն ունի իր ուրախալի և դժվարին կողմերը: Ձեր ամուսնությունը շատ նման է սրանց. դուք շատ եղանակներ կտեսնեք ձեր ամուսնության ընթացքում, իսկ մի քանիսով կանցնեք նույնիսկ մի քանի անգամ: Ամեն եղանակի մեջ կան սովորելու բաներ և աճ ձեռք բերելու հնարավորություններ: Հեղինակ և հովիվ **Չարլզ Սուինդոլը** կիսվում է իր մտքերով եղանակների մասին.

> «Ես ուրախ եմ, որ Աստված փոխում է ժամանակները և եղանակները. մի՞թե դուք ուրախ չեք այս պատճառով: ...Տերը ո՛չ անխոս է, ո՛չ էլ անհոգ, երբ փոխում է մեր ժամանակները և եղանակները: Որքա՜ն սխալ է՝ մի կերպ, կուրորեն և միապաղաղ անցնել կյանքի փոփոխվող եղանակներով՝ այդպես էլ չբացահայտելով նոր գաղտնիքներ և չսովորելով նոր երգեր երգել: Եղանակների նպատակն է՝ դարձնել մեզ ավելի խորազգաց և խրատել մեզ Աստծո իմաստությամբ ու ճանապարհներով: Օգնել մեզ, որ ուժեղանանք... ինչպես ծառը, որը տնկված է գետերի մոտ»[10]:

Ձեր կարծիքով, ո՞րն էր ամենահիրաշալի եղանակը, որը դուք կիսել եք ձեր կնոջ կամ ամուսնու հետ: Կարճ նկարագրեք այն և ասեք, թե ինչու էր այն հատուկ ձեզ համար:

_____

_____

_____

Նկարագրե՛ք ամենածանր փոթորիկներից մեկը, որին միասին բախվել եք: Ինչպե՞ս անցաք դրա միջով, և ի՞նչ սովորեցրեց Տերը:

Որպես խրախուսանք՝ կարդացեք Ժողովող 3.11, Հռոմեացիների 8.28 և Բ Կորնթացիների 2.14 խոսքերը:

Մտածե՛ք, թե ներկայումս ի՞նչ եղանակ է ձեր ամուսնության մեջ: Ի՞նչ կարող եք անել՝ այս եղանակն ավելի շատ վայելելու համար:

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. *«Տե՛ր, ի՞նչ կարող ենք անել մենք, որպեսզի ավելի շատ վայելենք այն եղանակը, որում գտնվում ենք: Տո՛ւր մեզ աչքեր, որ տեսնենք ամեն ինչ այնպես, ինչպես Դու ես տեսնում: Օգնի՛ր մեզ շնորհակալ լինել այն բարիքների համար, որոնք հնձելու ենք ապագայում այս եղանակի շնորհիվ: Հիսուսի անունով, ամե՛ն»:*

Մինչ տարիներն անցնում են, ձեր ամուսնության եզակի «մատնահետքն» ավելի պարզ է դառնում: Որոշ ժամանակ լուռ մնացեք և փորձեք հասկանալ սա: Ի՞նչն է հատուկ դարձնում ձեր ամուսնությունը: Մտածեք ձեր և ձեր կողակցի պարգևների, տաղանդների, անձնային հատկանիշների, ցանկությունների, նպատակների, փորձառությունների մասին և այլն:

Աղոթե՛ք և խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ հայտնել ձեզ, թե որն է ձեր փոխհարաբերությունների յուրահատկությունը, և թե ինչ է Նա հատկապես ցանկանում իրականացնել ձեր և ձեր կողակցի միջոցով: Գրի առեք այն, ինչ Նա ցույց է տալիս ձեզ, իսկ հետո ժամանակ հատկացրեք, որպեսզի կիսվեք դրանով ձեր կողակցի հետ:

Սերտողություն. Օր 2

ԱՍՏՎԱԾ Է ՍՏԵՂԾԵԼ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

«Աստված է ստեղծել ամուսնությունը, ոչ թե դուք: Նրա Հոգին բնակվում է ամուսնության նույնիսկ ամենաիտոքր մանրուքներում»:

— Մաղաքիա 2.15, MSG

Ամենասկզբում՝ նախքան որևէ հաստատություն հիմնելը, ստեղծվեց ամուսնությունը: Հովիվ և տաղանդավոր հեղինակ **Մաքս Լուկադոն** գրում է.

> «Աստված է ստեղծել ամուսնությունը: Այն չի նախատեսվել որևէ կառավարական ենթակոմիտեի կողմից: Այն չի մշակվել որևէ հասարակական կազմակերպության կողմից: Ամուսնությունը բեղմնավորվել և ծնվել է Աստծո մտքում»[11]:

Աստված է ստեղծել ամուսնությունը, և այն կարևոր է Նրա համար, այնքան կարևոր, որ Նա ցանկանում է ներգրավված լինել ձեր փոխհարաբերությունների ամեն մի բնագավառի մեջ: Նրա Խոսքն ասում է. «Այն Հոգին, Ում Նա բնակեցրել է մեզանում, փափագում է մեզ, *և* Նա փափագում է, որ Հոգին [ընդունվի] նախանձավոր սիրով» (Հակոբ. 4.5, AMP):

Կա՛նգ առեք և մտածե՛ք. արդյո՞ք դուք հրավիրել եք Աստծո Հոգուն ձեր ամուսնության բոլոր բնագավառներում: Արդյո՞ք Նրա խորհուրդը կարևոր տեղ է զբաղեցնում ձեր ամենօրյա ծրագրերի մեջ: Եթե դուք միայն հազվադեպ եք խնդրել Նրա մասնակցությունը, ինչպիսի՞ն է ձեր կյանքն այն ժամանակ, երբ մոռանում եք հրավիրել Նրան:

_____

_____

_____

_____

_____

Դուք արտոնություն ունեք խոսելու Աստծո հետ ամեն ժամանակ, ամենուր և ամեն ինչի մասին: Արդյո՞ք ձեր կյանքում կան վախեր, ֆինանսական դժվարություններ կամ բարդություններ շփման մեջ: Ինչո՞ւ չբերել ձեր մտահոգություններն Աստծո առջև աղոթքի միջոցով: Ուշադրությամբ կարդացեք այս հատվածները և գրի առեք, թե ինչ է Սուրբ Հոգին ասում ձեզ:

Փիլիպեցիների 4.6,7 • Մատթեոս 6.25-34 • Ա Պետրոս 5.7 • Հակոբոս 5.13-16

Մատթեոս 7.7-11 • Հովհաննես 14.13,14 • Ա Հովհաննես 5.14,15

«Եվ մենք համոզված ենք սրանում, որ Նա կլսի մեզ, երբ որ խնդրենք Նրանից ցանկացած բան՝ համապատասխան Նրա կամքին: Եվ եթե իսկապես գիտենք, որ Նա լսում է, երբ մենք խոսում ենք Նրա հետ և մատուցում ենք մեր խնդրանքները, մենք կարող ենք համոզված լինել, որ Նա կպատասխանի մեզ»:

— Ա Հովհաննես 5.14,15, TLB

Աստված չի ցանկանում, որ ձեր ամուսնությունը պատերազմական գոտի լինի: Նա ցանկանում է, որ այն լինի Եդեմի պես: «Եդեմ» բառը նշանակում է «հաճույք և վայելք»: Ի՞նչ եք դուք ամենից շատ ցանկանում, որ Աստված փոխի ձեր ամուսնության մեջ: Երբ պատասխանեք, հարցրեք Նրան. «Ո՞րն է իմ դերը այս խնդրի լուծման մեջ: Ի՞նչ պետք է փոխեմ իմ մեջ»:

ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

«Մենք Քրիստոսի ներկայացուցիչներն ենք: Աստված օգտագործում է մեզ, որպեսզի համոզի տղամարդկանց և կանանց՝ մի կողմ դնել իրենց տարբերությունները և մուտք գործել Աստծո գործի մեջ, որն է՝ շտկել ամեն ինչ միմյանց միջև: Հիմա մենք խոսում ենք անձամբ Քրիստոսի անունից...»:

— Բ Կորնթացիների 5.20, MSG

Աստված՝ ամբողջ ստեղծագործության Ամենակարող Արարիչը, Իր հետ համագործակցելու արտոնություն է տվել մեզ: Մենք պետք է հայտնենք Նրա բնավորությունը և ցույց տանք Նրա կամքը և ճանապարհներն այս երկրի վրա: Սա վերաբերում է թե՛ մեր անձնական կյանքին, թե՛ մեր ամուսնությանը: Հովիվ **Ռիկ Ռեննները**, ով գրքերի հեղինակ և միսիոներ է, բացատրում է.

> «Համաձայն Պողոսի խոսքերի՝ Կորնթացիների երկրորդ թղթի 5.20-ում մենք երկնային պատվիրակներ ենք՝ «դեսպաններ», ովքեր ուղարկվել են երկիր մոլորակ՝ որպես Երկնքի *ներկայացուցիչներ:* Որպես Քրիստոսի դեսպաններ՝ մենք *Երկնքի ձայնն ենք:* Որպես Նրա ներկայացուցիչներ՝ մենք Տիրոջ կողմից խոսելու և գործելու լիազորություն ունենք: Եվ որպես Երկնքի դեսպաններ՝ մենք ունենք *լիարժեք* աջակցություն, մատակարարում, *պաշտպանություն և օգնություն* Երկնքի իշխանության կողմից և Երկնքի միջոցներով»[12]:

Դուք և ձեր կողակիցն Աստծո ներկայացուցիչներն եք այս աշխարհում: Նա հորդորում է ձեր միջոցով՝ աղաչելով անհավատներին՝ վերադառնալ Իր մոտ: Բայց որքանո՞վ եք դուք «գրավիչ» այս առաջադրանքի համար: Եթե դուք չճանաչեիք Աստծուն և տեսնեիք մի զույգի, որի ամուսնությունը ձեր ամուսնության նման է, նրանց մեջ ի՞նչը ձեզ կմոտեցներ Աստծուն և ի՞նչը կվաներ Նրանից:

_____

_____

_____

_____

Երբ Քրիստոսի մարմինը չի ապրում և չի սիրում պատշաճ կերպով, մարդիկ հայհոյում են Աստծո անունը (տե՛ս Հռոմ. 2.24): Արդյո՞ք Սուրբ Հոգին ցույց է տալիս ձեզ այնպիսի բան, ինչը պետք է փոխվի՝ միգուցե վերաբերմունք, սովորություն կամ ձեր ամուսնության բնագավառներից մեկը, որը պատշաճ կերպով չի ներկայացնում Նրան: Եթե այո, ի՞նչ է Նա ցույց տալիս:

Կարիք չկա, որ դատապարտություն և հուսալքություն զգաք: Սուրբ Հոգին ցանկանում է փոխել այն, ինչ ցույց է տալիս ձեզ: Դուք պետք է պարզապես հանձնեք դա Նրան և խնդրեք Նրա օգնությունը:

Բոլորիս կյանքերում էլ կան բնագավառներ, որոնցում մենք կարող ենք զարգանալ և պետք է սովորենք ավելի լավ ներկայացնել Տիրոջը: Ինչպե՞ս անել սա. Նրա Հոգու զորությամբ: Երբ դուք անձամբ ընդունեք Նրա սերը, կկարողանաք սիրել ձեր ամուսնուն կամ կնոջը և ձեզ շրջապատող մարդկանց: Ուշադրությամբ կարդացեք այս հատվածները և գրի առեք, թե ինչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ Իր սերն ընդունելու և Իր սիրո մեջ աճելու մասին:

Հռոմեացիների 5.5 • Եփեսացիների 3.16-19 • Ա Հովհաննես 4.7-17

«...Աստված սեր է, և յուրաքանչյուրը, ով ապրում է սիրո մեջ, ապրում է Աստծո հետ, և Աստված ապրում է նրանում: Եվ, ապրելով Քրիստոսի հետ, մեր սերն ավելի կատարյալ և ամբողջական է դառնում...»:

— Ա Հովհաննես 4.16,17, TLB

ՆՈՐ ՍԻՐՏ

«Ես կտամ ձեզ նոր սիրտ, նոր հոգի կդնեմ ձեզանում: Ես կհեռացնեմ քարե սիրտը ձեր մարմնից և կփոխարինեմ այնպիսի սրտով, որն Աստծո կամքի մեջ է, ոչ թե ինքնակամ է: Ես կդնեմ իմ Հոգին ձեզանում, և այնպես կանեմ, որ դուք կարողանաք անել այն, ինչ Ես պատվիրում եմ ձեզ, և ապրել Իմ պատվիրաններով»:

— Եզեկիել 36.26,27, MSG

Միգուցե մտավախությամբ եք վերաբերվում ամուսնությանը: Միգուցե ձեր անձնական փորձառությունը կամ մեր մշակույթի նորմերը համոզել են ձեզ, որ դիտարկեք ամուսնությունը որպես բեռ: Միգուցե դուք խստացրել եք ձեր սիրտը ձախողման վախի պատճառով: Միգուցե ձեզ մոտ էլ է առաջացել «Արդյո՞ք ես ծուղակն եմ ընկել» հարցը: Աստված ցանկանում է ճեղքել ցանկացած պատնեշ և տալ ձեզ նոր սիրտ՝ մեղմ և զգայուն Նրա ջերմ հպմանը, որպեսզի դուք ծաղկունք ապրեք և իրականացնեք Նրա սկզբնական ծրագիրը:

Հիսուսի համար չկա ավելի կարևոր բան, քան ձեր սիրտը: Ուշադրությամբ կարդացեք Նրա խոսքերը Ղուկաս 8.5-15-ում: Ի՞նչ է ցույց տալիս ձեզ Սուրբ Հոգին այս հատվածում: Ի՞նչ է Նա հայտնում ձեր սրտի մասին:

_____

_____

_____

_____

Սերմնացանի առակը նույնպես գրված է Մատթեոս 13.3-23-ում և Մարկոս 4.3-20-ում:

Ինքներդ չեք կարող իմանալ, թե ինչ կա ձեր սրտում: Բայց Տերը կարող է և՛ *հայտնել* ձեր սրտում եղածը, և՛ *բժշկել* այն:

Մի պահ մտորեք այս ճշմարտությունների շուրջ:

«… որովհետև Տերը քննում է ամեն սիրտ և հասկանում է ամեն դրդապատճառ ետին մտքերում: Եթե դու փնտրես Նրան, Նա կգտնվի քեզ համար…»:

— Ա Մնացորդաց 28.9, NIV

«Սիրտը... հանելուկ է, որը ոչ ոք չի կարող լուծել: Բայց Ես՝ Աստվածս, քննում եմ սիրտը և ստուգում եմ միտքը: Ես թափանցում եմ մարդու սիրտը: Ես թափանցում եմ դեպի ամեն ինչի արմատները: Ես վարվում եմ նրանց հետ այնպես, ինչպես նրանք իրականում կան, ոչ թե՝ ինչպես նրանք ձևանում են»:

— Երեմիա 17.9,10, MSG

«Քննի՛ր ինձ, ո՛վ Տեր, և ճանաչիր իմ սիրտը. փորձի՛ր ինձ և ճանաչի՛ր իմ անհանգիստ մտքերը: Մատնացույց արա ցանկացած բան ինձանում, ինչը վիրավորում է Քեզ, և առաջնորդի՛ր ինձ հավիտենական կյանքի շավիղով»:

— Սաղմոս 139.23,24, NLT

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Տե՛ր, ցույց տուր, թե ինչ կա իմ սրտում իմ ամուսնության վերաբերյալ: Հայտնի՛ր դա, որպեսզի կարողանաս բժշկել, Հիսուսի անունով»: Լռությամբ լսեք, թե ինչ է Նա հայտնում: Գրի՛ առեք դա և հանձնե՛ք Նրան:

Արդյո՞ք դուք նոր սրտի կարիք ունեք, որը ցանկանում է ընդունել Աստծո սերը և շնորհքը: Ձեր երկնային Հայրը չէր ծանոթացնի ձեզ Իր ամուսնական ծրագրի հետ, եթե պատրաստ չլիներ օգնել ձեզ՝ այն իրականացնելու համար: Ինչո՞ւ հիմա՛ չխնդրել Նրա օգնությունը: Դուք կարող եք աղոթել...

*«Հա՛յր, շնորհակալություն ամուսնության պարգևի համար: Ազատի՛ր ինձ այն ամենից, ինչի պատճառով կարող եմ սխալ վերաբերվել ամուսնությանը և, որպես հետևանք, բաց թողնել դրա օրհնությունները: Տո՛ւր ինձ **նոր սիրտ**, որը մեղմ է և զգայուն Քո հպմանը: Տո՛ւր ինձ **նոր աչքեր**, որպեսզի տեսնեմ իմ ամուսնությունն այնպես, ինչպես Դու ես տեսնում: Օգնի՛ր ինձ՝ հավատալ լավագույնին, ոչ թե սպասել, որ կկատարվի ամենավատը: Օգնի՛ր մեզ՝ մեր բոլոր գործերում դասել Քեզ առաջին տեղում: Շնորհակալությո՛ւն, Հա՛յր, Հիսուսի անունով, ամե՛ն»:*

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ամեն մեկը չէ, որ բավականին հասուն է՝ ամուսնանալու համար: Ամուսնությունը պահանջում է որոշակի ունակություններ և շնորհք: ...Բայց եթե դուք կարող եք աճել՝ հասնելով ամուսնության մեծությանը, արե՛ք դա»:

— Մատթեոս 19.11,12, MSG

Մեծացնել. այս բառը նշանակում է՝ ավելացնել, տարածել, ընդարձակել կամ ընդլայնել: Աստված՝ ամուսնությունը Ստեղծողը, ցանկանում է օգտագործել ձեր միությունը՝ ձեր կյանքն ընդլայնելու համար: Եթե դուք ընդունեք Նրա գերազանց ծրագիրը, Նա կգործի ձեր կողակցի միջոցով, որպեսզի դարձնի ձեզ Հիսուսին ավելի նման, և կարողություն տա, որ հաջողություն ունենաք ձեր բոլոր գործերի մեջ:

«Ինչպես որ երկաթը երկաթ է սրում, այնպես էլ մեկ մարդը սրում է մյուսին»:

— Առակաց 27.17, NIV

Ասում են, որ ամուսնության մեջ միմյանցից տարբեր լինելը գրավում է: Մեր տարբերությունների մեջ զորություն կա. հենց դրանց շնորհիվ է, որ մենք կարող ենք մեկ դառնալ: Բայց այն բաները, որոնք անցյալում գրավում էին մեզ, որոշ ժամանակ անց կարող են վանել:

Որո՞նք են ձեր կողակցի երեք գլխավոր հատկանիշները, որոնք սկզբում գրավում էին ձեզ: Որո՞նք են այն երեք հատկանիշները, որոնք ներկայումս ամենից շատ են հիասթափություն պատճառում ձեզ: Արդյո՞ք կա որևէ կապ սրանց միջև:

Երեք գլխավոր հատկանիշները, որոնք գրավում էին ինձ
Երեք գլխավոր հատկանիշները, որոնք վանում են ինձ

_____ _____
_____ _____
_____ _____

Հիշեք՝ ձեր տարբերությունները պետք է միաբանեն ձեզ, ոչ թե բաժանեն:

Աստծո Հոգին կիսվում է Իր իմաստությամբ թե՛ ձեր, թե՛ ձեր կողակցի հետ, և Նրա խորհուրդը միշտ չէ, որ տրվում է այն ժամանակ, երբ միասին աղոթում եք: Հաճախ Նա առանձին կխոսի որևէ մեկիդ հետ՝ ասելով այնպիսի բան, որը դուք պետք է իմանաք: Եթե ցանկանում եք Աստծուց առաջնորդված և Նրա կողմից օրհնված որոշումներ կայացնել, ձեզ անհրաժեշտ է այն իմաստությունը, որը Նա ավանդել է յուրաքանչյուրիդ ներսում: Անկեղծորեն պատասխանեք հետևյալ հարցերին.

Արդյոք իմ կյանքում ես բա՞ց եմ, թե՞ փակ, իմ կողակցի ավանդի (իմաստության, առաջնորդության, կառուցողական քննադատության) համար:

Ո՞ր բնագավառներում եմ ես բաց նրա ավանդի համար, իսկ որոնցում՝ փակ: Ինչո՞ւ:

Այն կողակիցը, ում Աստված տվել է ձեզ, ամենամեծ ներդրումն է ունեցել ձեր անձի ձևավորման մեջ: Անվանեք առնվազն մեկ դրական փոփոխություն կամ հատկանիշ, որը ձևավորվել է ձեզանում ձեր կողակցի հետ շփման արդյունքում: Ինչպե՞ս է ներկայումս Աստված օգտագործում այդ հատկանիշները՝ ձեր կյանքն ընդլայնելու համար:

Արդյո՞ք երբևէ շնորհակալություն եք հայտնել ձեր կողակցին այն բանի համար, որ նա օգնել է ձեզ՝ հստակեցնել և ընդլայնել ձեր կյանքը: Եթե ոչ, ժամանակ հատկացրեք հենց հիմա՝ ձեր երախտագիտությունն անկեղծորեն արտահայտելու համար:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 1-ը:

1 | Ամուսնությունն ի սկզբանե Աստծո գաղափարն էր: Նա է ստեղծել այն, և Նա ունի մտադրություն ու նպատակ ամուսնության համար: Ուշադրությամբ կարդացեք Ծննդոց 1.27,28,31 և Մաղաքիա 2.15 խոսքերը: Առանձնացրեք հինգ նպատակ, որոնք Աստված որոշել էր ամուսնության համար: Այս կետերի կողքին գրեք հինգ աղավաղված կեղծիք, որոնք սատանան փորձում է առաջարկել դրանց փոխարեն:

ԱՍՏԾՈ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ՍԱՏԱՆԱՅԻ ԱՂԱՎԱՂՎԱԾ ԿԵՂԾԻՔՆԵՐԸ

2 | Աստծուն հաճելի ամուսնություններն ազդեցություն ունեն այն մարդկանց վրա, որոնց հպվում են: Կարո՞ղ եք մտաբերել մի զույգի, որը լավ ամուսնություն ունի: Ի՞նչ կերպով են նրանք բարձր պահում ամուսնության վարկանիշը: Կա՞ արդյոք այնպիսի բան, որ դուք կարող եք սովորել նրանցից, և որը կօգնի ձեզ՝ պահպանել ձեր ամուսնության հոգին:

3 | Մատթեոս 19.6-ում Հիսուսն ասաց. «Քանի որ Աստված ստեղծեց երկու սեռերի այս բնական միությունը, ոչ ոք չպետք է պղծի Նրա արվեստի գործը՝ նրանց իրարից հեռացնելով» (MSG): Երբ դուք լսում եք «բնական» բառը, ի՞նչ եք մտաբերում: Ինչպե՞ս են այս գաղափարներն օգնում ձեզ՝ տեսնել ամուսնությունը նոր, դրական լույսի ներքո:

4 | Մատթեոս 19.11,12-ում Հիսուսն ասաց. «Ամեն մեկը չէ, որ բավականին հասուն է՝ ամուսնանալու համար: Ամուսնությունը

պահանջում է որոշակի ունակություններ և շնորհք: Ամուսնությունն ամեն մեկի համար չէ: ...Բայց եթե դուք կարող եք աճել՝ հասնելով ամուսնության մեծությանը, արե՛ք դա» (MSG): Ի՞նչ է ամուսնության մեծությունը: Ինչպե՞ս մենք կարող ենք վերապրել այն:

5 | Ամուսնությունը սուրբ է. այն ուխտ է ամբողջ կյանքի համար մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև: Կա՞ արդյոք այնպիսի բան այս դասի մեջ, որը մղում է ձեզ՝ պայքարել ձեր ամուսնության համար: Ինչպիսի՞ դրական գաղափարներ և նոր պատկերացումներ ստացաք այս դասից:

6 | Հիսուսն ասաց, որ մարմնի ճրագը՝ աչքն է (տե՛ս Մատթ. 6.22): Այսինքն՝ ձեր պատկերացումը կյանքի մասին անչափ կարևոր է, քանի որ այն դառնում է ձեր իրականությունը: Սա հատկապես ճշմարիտ է ամուսնության մեջ: Ի՞նչ կկատարվի, եթե դուք պատկերացնեք ամուսնությունը՝ որպես ծուղակ:

Սուրբ գիրքն ասում է, որ մենք հոգևոր պատերազմի մեջ ենք (տե՛ս Եփեսացիների 6.12,13 և Բ Կորնթացիների 10.3,4): Արդյո՞ք այս գաղափարն օգնում է ձեզ՝ նայել ձեր ամուսնական անհամաձայնություններին և դժվարություններին այլ լույսի ներքո:

7 | «Պատմություն ամուսնության մասին» գիրքն օգտակար կլինի թե՛ ամուսնացածների, թե՛ նշանվածների, և թե՛ ամուրիների համար: Անկախ այն բանից, թե որ խմբին եք պատկանում՝ ի՞նչ սպասումներ ունեք այս դասընթացից:

Եթե դուք ամուսնացած եք (կամ եղել եք), ի՞նչ կցանկանայիք իմանալ, մինչև «Ես համաձայն եմ» բառերն ասելը: Ի՞նչ խորհուրդ կարող եք տալ ձեր խմբակի չամուսնացած անդամներին:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Աստված ստեղծեց ամուսնական ուխտը նախքան որևէ հաստատություն ստեղծելը: Նա սահմանեց ամուսնությունը, և այս սահմանումը երբեք չի փոխվել:
- Աստծուն հաճելի ամուսնությունները պետք է լինեն Կյանքի ծառի պես: Մենք պետք է նմանակենք Աստծո սիրուն և լինենք դեսպաններ, ում միջոցով Նա առաջարկում է վերականգնել այն, ինչը մի ժամանակ կորսվեց Եդեմում:
- Հսկե՛ք ձեր ամուսնության հոգին՝ հրավիրելով Աստծուն ձեր ամուսնության ամեն բնագավառի մեջ: Նա նոր սիրտ կտա ձեզ, որպեսզի ընդունեք և տաք Նրա սերը, և նոր աչքեր, որպեսզի տեսնեք ձեր ամուսնությունը Նրա տեսանկյունից:
- Եսակենտրոնությունը մեծ խոչընդոտ է, որը թույլ չի տալիս վերապրել և վայելել ամուսնության զարմանալի պարգևն այնպես, ինչպես Աստված է ցանկանում:
- Հարձակումն ամուսնության վրա՝ հարձակում է այն պատկերացման վրա, թե ինչպես է Աստված շփվում Իր ժողովրդի հետ:
- Աստված ստեղծեց ամուսնությունը՝ մեր կյանքի բոլոր բնագավառներն ընդլայնելու համար:

ԵՐԿՈՒ

Տեսե՛ք վերջը՝ սկզբից

Օր 1

Արբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, որ ամենառոմանտիկ ֆիլմերը և գրքերը անդրադառնում են միայն սիրային պատմության սկզբին: Հիշե՛ք ձեր սիրած սիրային վեպերը կամ ֆիլմերը (իհարկե, մի քանիսիդ համար սա ավելի հեշտ է, քան մյուսների): Ինչպիսի՞ն էր սյուժեն: Դուք զգո՞ւմ էիք առաջին պարի զգացմունքային լարվածությունը սիրահետման ժամանակ: Միգուցե դուք սեղմվում էիք ձեր նստատեղի եզրին, մինչ ֆիլմը գրգռում էր ձեր նյարդերը սյուժեի շրջադարձերով, որոնք խանգարում էին սիրային թռչնակներին՝ վայելել իրենց առաջին, սպասված համբույրը: Իհարկե, լինում են ժամանակավոր խոչընդոտներ՝ որևէ մրցակից, խիստ վիճաբանություն կամ անսպասելի պատահար, բայց մենք գիտենք, որ, ի վերջո, դրանք ավարտվելու են: Չնայած այն խնդիրներին, որոնք սպառնում էին բաժանել նրանց՝ երազկոտ սիրահարները կարողանում են հաղթել: Պատմությունն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Եվ նրանք ունեցան երկարատև և երջանիկ կյանք»:

Մենք գիտենք, որ նրանք ունեցան *երկարատև և երջանիկ կյանք*, բայց ինչպիսի՞ն էր այն: Հեշտ է հրաշալի սկիզբ կազմել, բայց անհրաժեշտ է ծանր աշխատանք տանել՝ այս պատմության հիմնական մասը և ավարտը կազմելու համար:

Ակնհայտ է, որ մեր մշակույթը կլանված է միայն սիրային պատմության սկզբով: Սիրահար զույգը կարող է ժամեր շարունակ ծրագրել իրենց հարսանիքը, բայց շատ քիչ ժամանակ անցկացնել՝ ծրագրելով այն տարիները, որոնք հետևելու են հարսանեկան արարողությանը: Հարսնացուն կարող է ժամեր շարունակ որոնել շքեղ հարսանեկան զգեստ, սակայն հատկացնել ընդամենը մի քանի ժամ նախամուսնական խորհրդատվության համար: Արդյունքում ամուսնական զույգը մեծ մասամբ անպատրաստ է այն ժամանակվա համար, երբ հեքիաթը մարում է, և նրանք հայտնաբերում են, որ պետք է կառուցեն իրական փոխհարաբերություններ՝ շատ իրական խնդիրներով:

Հարսանեկան արարողության օրերը պետք է լցված լինեն հույսով, գեղեցկությամբ և տոնական տրամադրությամբ: Այնուամենայնիվ, հետագա ամուսնությունը լցված կլինի հույսով և գեղեցկությամբ այն դեպքում, երբ զույգերը կներդնեն նույն եռանդը, որով նախապատրաստում են իրենց սկիզբը, իրենց ավարտը ծրագրելու համար: *Երկարատև և երջանիկ կյանքը* պատահականորեն չի ստացվում. այն նպատակ է, որին պետք է վճռականորեն ձգտենք, և որը պետք է խնամքով կառուցենք:

Նայեք ձեր շուրջը և ուշադրություն դարձրեք որևէ հմտորեն պատրաստված և գեղեցիկ առարկայի: Օրինակ՝ որևէ տան, մեքենայի, կամ այն աթոռի, որի վրա նստած եք: Հավանաբար, ձեր մտքով չի անցել, որ այդ առարկան պատրաստվել է երկու անգամ. առաջին անգամ, երբ այն նախագծվել է ինչ-որ մեկի մտքում, և երկրորդ անգամ, երբ այդ նախագիծն իրագործվել է: Մտահղացումը մշտապես նախորդում է պատրաստմանը: Առաջինի համար պետք է ունենալ պարզ տեսիլք վերջնական արդյունքի մասին, իսկ երկրորդի համար պահանջվում են նյութեր և աշխատանք: Այն ամենը, ինչ անում ենք՝ սկսած հասարակ սենդվիչ պատրաստելուց մինչև բարդ երկնաքեր կառուցելը, նախ՝ պետք է լինի մեր երևակայության մեջ, մինչև նյութական դառնալը:

Նույնիսկ ձեր մտքով չի անցնի տուն կառուցել՝ առանց նախագծի, քանի որ ձեր գործը խառնաշփոթի կվերածվի: Ցանկացած գեղեցիկ տան կառուցում սկսվում է լավ մշակված նախագծից: Տունը կառուցվում է քրտնաջան աշխատանքի և համապատասխան նյութերի միջոցով, բայց միայն այն ժամանակ, երբ նախագիծն ավարտված է:

Նախագիծը նույնպես անհրաժեշտ է՝ շինարարական արժեքը որոշելու համար: Մի՞թե դուք կարող եք հանգիստ սկսել տան կառուցումը՝ առանց իմանալու, թե որքան է այն արժենալու: Հիսուսը տվեց այս հարցը, երբ սովորեցնում էր մեզ, թե ինչպես պետք է կառուցենք մեր կյանքերը:

> «Որովհետև ձեզնից ո՞վ է, որ կամենա աշտարակ շինել, և սկզբում չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի՞: Որ, միգուցե, երբ որ հիմքը դնի և չկարողանա ավարտել, բոլոր տեսնողներն սկսեն ծաղրել նրան և ասել, թե՝ այս մարդն սկսեց շինել և չկարողացավ ավարտել» (Ղուկ. 14.28-30):

Շենք կառուցելու սկզբունքը ճշմարիտ է նաև ամուսնություն կառուցելու մեջ: Ինչպիսի՞ ամուսնություն եք դուք կառուցում: Արդյո՞ք հաշվել եք գինը և պայմանավորվել այն մասին, թե ինչ է պահանջվելու ձեզնից՝ ձեր ամուսնությունը կառուցելու համար:

Աստված չի ցանկանում, որ մեր ամուսնություններն ավարտվեն ցավով կամ ամոթով: Նա չի ցանկանում, որ մենք թողնենք դրանք՝ այդպես էլ ավարտին չհասցնելով: Անկախ այն բանից՝ ձեր ամուսնությունը նո՞ր է սկսում, թե՞ տարիներ շարունակ դժվարին խնդիրներ է ունեցել, երբեք ուշ չէ ընդունել Աստծո ծրագիրը: Աստծո մեջ մենք գտնում ենք անհրաժեշտ տեսիլքը, միջոցները և զորությունը, որպեսզի Նրա մեծությունն արտացոլող ամուսնություն կառուցենք: Կա մի զարմանալի ճշմարտություն. Աստված ցանկանում է, որ դուք երջանիկ ավարտ ունենաք: Նա ավելի շատ է ցանկանում, որ Իր արվեստի գործի կառուցումն ավարտին հասնի, քան դուք:

Այս գլուխը պարունակում է ճշմարտություններ, որոնք ցույց կտան ձեզ, թե ինչպես ծրագրել և, որպես արդյունք, բարեհաջող կերպով կառուցել ձեր ամուսնությունը: Մենք կպատմենք, թե ինչ արեցինք մեր ամուսնության վաղ շրջանում, որպեսզի ամուր հիմք կառուցեինք՝ կյանքի փոթորիկներին դիմակայելու համար: Բացի այդ՝ մենք կսովորեցնենք ձեզ՝ մշակել այնպիսի ծրագիր, որը կառաջնորդի ձեզ դեպի *երկարատև և երջանիկ կյանք:* Մենք կսկսենք՝ խոսելով սկզբունքների մասին, և կավարտենք շատ գործնական դիտողություններով: Այս գլուխը միայն նորապսակների և դեռ չամուսնացած զույգերի համար չէ: Եթե երկար ժամանակ է՝ ամուսնացած եք, դուք նույնպես կարող եք օգուտ քաղել այս գլխից՝

նորովի նայելով ձեր փոխհարաբերություններին: Մենք այդպես էլ արեցինք:

Աստված սկսում է՝ տեսնելով վերջը՝ սկզբից

Հիմարություն է ուխտի մեջ մտնելը՝ առանց նախապես հարցնելու. «Ինչո՞ւ ենք անում սա և ո՞ւր ենք գնում»: Ամեն ուխտ պետք է համապատասխան տեսիլք ունենա: Օրինակ՝ Աստված հատուկ նպատակ ուներ, երբ որոշեց ուխտ կնքել Աբրահամի հետ:

Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստված ընտրեց Աբրահամին՝ Իր ընտրյալ ժողովրդի հայրը դառնալու համար: Այս հարցի ամենատարածված պատասխանն է. «Որովհետև նա մեծ հավատք ուներ»: Թեև հավատքն անհրաժեշտ է Աստծո ծրագիրը կատարելու համար, սակայն դա չէր Աբրահամին ընտրելու պատճառը: Աստված ընտրեց Աբրահամին, որովհետև գիտեր, որ Աբրահամը կսովորեցներ իր սերունդներին՝ հետևել Տիրոջը:

> «Որովհետև ես ընտրել եմ նրան, որ *նա պատվիրի իր զավակներին և իր տանը՝ իրենից հետո* պահել Տիրոջ ճանապարհը՝ արդարություն և իրավունք անելով, որպեսզի Տերը Աբրահամի վրա բերի այն, ինչ խոստացել է» (Ծննդ. 18.19, ESV, շեղագիրն ավելացված է):

Ընտրելով Աբրահամին՝ Աստված նայեց այս քոչվոր և անզավակ մարդու ապագային և տեսավ նրա սերունդները: Աստծո համար էապես կարևոր էր, որ Աբրահամը «պատվիրեր իր զավակներին՝ պահել Տիրոջ ճանապարհները», որովհետև Նա ցանկանում էր իրագործել Իր փրկության պատմությունն Աբրահամի սերունդների միջոցով: Նա գիտեր, որ Աբրահամը և Սառան սխալներ էին գործելու, բայց նույնպես գիտեր, որ նրանք ճիշտ «հումք» էին: Մեզ հետ ուխտ կնքելիս Աստված մշտապես հաշվի է առնում մեր սերունդները, որովհետև Նա արդեն եղել է ապագայում և գիտի, թե ինչ պետք է կատարվի այսօր, որպեսզի Նա կարողանա հասցնել մեզ այդտեղ:

Աստծո ուխտն Աբրահամի հետ ընդլայնվեց այնքան, որ ի վերջո հասավ նաև մեզ: Հավատքի միջոցով Աբրահամը, ով անզավակ էր, աստղերի պես շատ ժառանգներ ունեցավ: Այն մարդը, ով աստան-

դական էր՝ առանց ազգ, դարձավ հավատքի հայր բոլոր ազգերի համար:

> «…Աբրահամն անպատճառ մեծ և զորավոր ազգ է դառնալու, և երկրի բոլոր ազգերն օրհնված կլինեն նրանում…» (Ծննդ. 18.18, ESV):

Մեր կյանքերը տարբերվում են Աբրահամի կյանքից, բայց սկզբունքը նույնն է: Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր գիտակցաբար թույլ են տալիս, որ Նրա ուխտը տարածվի իրենց միջոցով: Ձեր պատմությունը չի վերաբերվում միայն ձեզ և ձեր կողակցին. այն ընդգրկում է ավելին:

Միայն Երկինքը կհայտնի Աստծո ուխտի ամբողջական ազդեցությունը, որն արտահայտվել է ձեր և Նրա փոխհարաբերությունների միջոցով: Նա ցանկանում է հասնել ամեն մարդու, ով գալիս է այս աշխարհ ձեր միջոցով (ձեր ժառանգությանը) և ամեն մարդու, ով ձեր ազդեցության շրջանակում է: Սա նշանակում է, որ դուք պետք է ընդունեք մի տեսիլք, որը չի ավարտվում ձեզանով և չի սահմանափակվում ձեր մտքով: Աստծո ծրագիրը ձեր ամուսնական պատմության համար մշտապես ընդգրկելու է գալիք սերունդներին:

Օր 2

Աստծո զավակները

> «Աստված է ստեղծել ամուսնությունը, ոչ թե դուք: Նրա Հոգին բնակվում է ամուսնության նույնիսկ ամենափոքր մանրուքներում: *Եվ ի՞նչ է Նա ցանկանում ամուսնությունից: Աստծո զավակներ՝ ահա թե ինչ…»* (Մաղաքիա 2.15, MSG):

Աստծո զավակներ՝ ահա թե ինչ է ակնկալում Աստված ամուսնությունից: Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք Նա ցանկանում է, որ ավելի շատ մանուկներ ծնվեն և բնակեցնեն աշխարհը: Այո՛ և ո՛չ:

Մաղաքիա 2.15-ում գրված չէ, որ Աստված ցանկանում է *երեխաներ* ստանալ ամուսնությունից: Նա ցանկանում է ստանալ *Աստծո զավակներ:* Աստված ցանկանում է զավակներ՝ ցանկացած տարիքի, ովքեր կփառավորեն Նրան և կքայլեն Նրա ճանապարհ-

ներով: Հիշեք, որ մենք Նրա դեսպաններն ենք: Աստծո նպատակն է՝ հայտնել Իրեն մեզ, ինչպես նաև այլ մարդկանց՝ մեր միջոցով:

Վեսթմինսթերի «Կարճ վարդապետարան»-ի մեջ գրված է. «Մարդու գլխավոր նպատակն է՝ փառավորել Աստծուն և հավիտյան վայելել Նրան»: Մեզ շատ է դուր գալիս այս պնդումը: «Փառավորել» բառը հաճախ է գործածվում Աստվածաշնչում, բայց քանի որ այս բառը գործածական չէ առօրյա խոսքի մեջ, այն հոգևոր և անհասկանալի է թվում: *Փառավորել* բառը պարզապես նշանակում է, որ մենք հայտնի ենք դարձնում Աստծուն: Աստված ցանկանում է հայտնի դառնալ մեր կյանքի, ամուսնության և սերնդի միջոցով: Եվ լավագույն խթանը հասունանալու և Աստծո զավակներ դառնալու համար՝ ամուսնությունն է:

Նույնիսկ եթե դուք այդպես էլ երեխա չմեծացնեք, Աստված ցանկանում է օգտագործել ձեր ամուսնությունը՝ ձեզ Աստծո զավակ դարձնելու համար: Նա ցանկանում է մաքրել ձեզ՝ վերածելով Իր փառքի ներկայացուցչի, և ձևավորել ձեզ՝ դարձնելով ձեր Հոր նման: Ձեր կյանքը մեկ այլ մարդու հետ կիսելը Աստծուն նմանվելու շատ հնարավորություններ է ստեղծում: Մենք հայտնաբերել ենք, որ շատ հաճախ աստվածային բնավորությունը ձեռք չի բերվում երանության գրկում. այն կռվում է ամուսնական կրակի հնոցում:

Ես ամուսնությունը նմանեցնում եմ հնոցի, իսկ մեզ՝ թանկարժեք մետաղի համաձուլվածքի կամ խառնուրդի: Ի՞նչ է անում վառվող հնոցը համաձուլվածքի հետ: Այն ցույց է տալիս դրա անմաքրությունները: Իմ ամուսնական մատանին նման է մաքուր ոսկու, բայց այն մոտավորապես հիսուն տոկոսով բաղկացած է այլ նյութերից: Եթե մատանիս դնեի հնոցի մեջ, այդ անմաքրությունները կերևային: Նմանապես, այն դժվարությունները, որոնց մենք բախվում ենք ամուսնության մեջ՝ սկսած աննշան անհամաձայնություններից մինչև դժվարին ժամանակները, բացահայտում են մեր կյանքի անմաքրությունները (որոշ անմաքրություններ բացահայտելու համար պահանջվում է ավելի բարձր ջերմաստիճան):

Երբ ամուսնությունն աննահանջ կերպով ցույց է տալիս մեր անկատարելությունները, հեշտ է մեղադրել մեր կողակիցներին: Չէ՞ որ ամուսնանալուց առաջ մեզ հետ նման բաներ տեղի չէին ունենում: Երբ մենք հիասթափություն ենք զգում մեր կողակիցների

հանդեպ այն պատճառով, որ նրանք ավելի արտահայտիչ են դարձնում մեր «թուլությունները», մենք պետք է գոհանանք Աստծուց, որ ամուսնությունը մեզ դարձնում է ավելի նման Հիսուսին: Մի՞թե սա չէ մեր գլխավոր նպատակը:

Ունենալ նպատակ դժվարին պահերին

Մենք գիտենք, որ մեր համեմատությունը հնոցի հետ ոգևորիչ չէ, բայց ճանապարհը դեպի երջանիկ ավարտը բոլորովին նման չէ հեքիաթի: Երբեմն ձեր ամուսնական պատմությունը նման է ոչ թե զբոսանքի՝ ողողված մայրամուտի ճառագայթներով, այլ, ավելի շուտ, էվերեստ սարը մագլցելու:

Այն մարդիկ, ովքեր համարձակվում են գնալ դեպի Հիմալայան լեռների ձյունածածկ լանջերը, որպեսզի անցնեն խստաշունչ և դժվարին ճանապարհով դեպի էվերեստի գագաթը, պետք է մտապահեն երկու բան: Առաջինը՝ նրանք պետք է իմանան, որ այս նախաձեռնությունը կփորձի իրենց ֆիզիկական և զգացմունքային կարողությունների սահմանները: Այս խիզախ տղամարդիկ և կանայք չգիտեն գալիք վտանգների բոլոր մանրամասները, բայց գիտեն, որ հանդիպելու են դժվարությունների: Երկրորդը՝ նրանք պետք է հիշեն իրենց նպատակը՝ բարձրանալ աշխարհի ամենաբարձր սարը: Նրանց համար հաղթանակը հետևյալն է՝ հասնել ծովի մակարդակից 8.848 մետր բարձրության վրա: Առանց իմանալու այս նպատակի մասին՝ արշավախմբի անդամներն անմիջապես ետ կդառնան, հենց որ հանդիպեն առաջին լուրջ խոչընդոտին:

Նույնը վերաբերում է ամուսնությանը: Եթե մենք գիտակցում ենք, որ դժվարությունները մեր ամուսնական պատմությունը կերտելու անբաժան մասն են, մենք չենք կոտրվի, երբ փորձվեն մեր զգացմունքային, ֆիզիկական և հոգևոր կարողությունները: Եթե սկսենք և կառուցենք՝ տեսնելով վերջը՝ սկզբից, մենք չենք հանձնվի, երբ բախվենք լուրջ խնդիրների:

Սովորեցնելով հոգևոր հասունության մասին՝ Հիսուսն ասաց, որ Աստծո Խոսքին հավատացողները բախվելու են *նեղությունների և հալածանքների:* Այս բառերը հունարեն բնագրում «թլիփսիս»-ը և «դիոգմոս»-ն են: «Թլիփսիս»-ը նշանակում է «փորձանք, որն առա-

ջացնում է վիշտ, ճնշումներ, տառապանք և տանջանք»[1]: «Դիոգմոս»-ը նշանակում է՝ «ծրագրված ընթացք, որի նպատակն է՝ հետապնդել և ճնշել ինչ-որ մեկին»[2]: Ոչ մեկն էլ հաճելի չի թվում, բայց այս ուժերը հեշտացնում են մեր աճն Աստծո մեջ: Պողոսը գրեթե կրկնում է Հիսուսի խոսքերը.

> «Մենք նույնպես կարող ենք ուրախանալ, երբ բախվում ենք խնդիրների և նեղությունների [թլիփսիս], որովհետև գիտենք, որ դրանք օգնում են մեզ՝ զարգացնել մեր համբերությունը: Եվ համբերությունը զարգացնում է հաստատուն բնավորություն, իսկ բնավորությունը զորացնում է մեր վստահ հույսը փրկության մեջ: Եվ այս հույսը հիասթափության չի տանի, որովհետև մենք գիտենք, թե որքան քնքշորեն է Աստված սիրում մեզ, որովհետև Նա տվեց մեզ Սուրբ Հոգուն՝ մեր սրտերն Իր սիրով լցնելու համար» (Հռոմ. 5.3-5, NLT):

Պողոսը գրեց, որ մենք պետք է *ուրախանանք* խնդիրների և նեղությունների ժամանակ: Ինչո՞ւ: Նեղությունները հնարավորություն են ստեղծում, որ կոփենք մեր բնավորությունը: Խնդիրներն օգնում են մեզ՝ դառնալ Աստծո նման: Եվ մենք կարող ենք հույս ունենալ՝ իմանալով, որ Աստված մեզ այնքան է սիրում և մշտապես հոգում մեր կարիքները, որ տվել է մեզ Իր Հոգին, որպեսզի լցնի մեր սրտերը սիրով՝ նույնիսկ մեր ամենադժվարին պայքարների ժամանակ:

Սուրբ գիրքը նույնպես պարզ հայտնում է, որ Աստված մեր դժվարությունների հեղինակը չէ: Մեր նեղությունների և հալածանքների ետևում կանգնած է սատանան (տե՛ս Մարկ. 4.15 և Հակոբ. 1.12,13), բայց Աստված օգտագործելու է թշնամու դավերը հենց նրա դեմ: Այն, ինչի նպատակն էր հեռացնել մեզ Աստծուց, Մեր Փրկչի ձեռքերում վերածվում է գործիքի, որով Նա մեզ դարձնում է Իրեն ավելի նման:

Հիշեք՝ թշնամին ատում է ամուսնությունը և այն ամենը, ինչը կապ ունի ամուսնության հետ: Նա կանի այն, ինչ կարող է, որպեսզի բաժանի մեր միությունները և ծանրաբեռնի դրանք այնպիսի նեղություններով, որոնք անտանելի են թվում: Եթե մենք ունենք տեսիլք մեր միության համար և հավատք, որ Աստված դուրս կբերի մեզ դժվարություններից, մենք կզորանանք հույսով և կկա-

րողանանք հակառակվել թշնամու հարձակումներին: Աստված չի ցանկանում, որ պարզապես դիմանանք մեր ամուսնության դեմ ուղղված հարձակումներին: Նա ցանկանում է, որ մենք ավելի ուժեղ դառնանք դրանց միջոցով: Մենք պետք է հիշենք, թե ինչի համար ենք պայքարում (Աստծո նպատակի), ում դեմ ենք պայքարում (սատանայի) և Ով է մեր կողմից (Աստծո Հոգին): Մեր հավատքն ու հույսը ամրանում են դժվարությունների միջոցով, եթե մենք չենք նահանջում մինչև այն պահը, երբ Նա կավարտի Իր գործը մեզանում:

Հիսուսի երջանիկ ավարտը

Հիսուսը չարչարվեց ավելի շատ, քան ցանկացած մարդ: Նա՝ կատարյալ Աստված, դարձավ մեզ նման, որպեսզի կրեր անարդար մահվան ցավը և նվաստացումը հասարակ մահկանացուի պես: Նա ճանապարհ պատրաստեց մեզ համար, որպեսզի մենք հաշտվենք Աստծո հետ. այնուամենայնիվ, մարդկության մեծամասնությունը դեռևս մերժում է նրան:

Ինչպե՞ս Հիսուսը կարողացավ նման անասելի ցավ և մերժվածություն կրել: Պատասխանը պարզ է, բայց և զարմանալիորեն խորը. Նա երբեք չհեռացրեց հայացքն Իր երջանիկ ավարտից: Նրա օրինակով մենք տեսնում ենք, թե ինչպես գրենք մեր պատմությունները.

> «Հառե՛ք ձեր հայացքը *Հիսուսին*, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այս ընթացքը, որում մենք գտնվում ենք: Ուսումնասիրե՛ք, թե ինչպես Նա արեց դա: Քանի որ Նա երբեք չհեռացրեց Իր հայացքն այն տեղից՝ ուրախալի ավարտից, որն ունենալու էր Աստծո մեջ և Աստծո հետ, Նա անցնելով խաչի ճանապարհը՝ կարողացավ դիմանալ ամեն բանի՝ ամոթին…» (Եբր. 12.2, MSG):

Հիսուսը դիմացավ, որովհետև Նա գիտեր, թե ուր էր գնում: Նա նայում էր ավելի հեռուն, քան չարչարանքն էր, և տեսնում էր խոստումը:

Անգլերեն «Սթենդրդ» թարգմանության մեջ (ESV) Եբրայեցիների 12.1,2-ը գրված է հետևյալ կերպով.

«…Եկեք համբերությամբ վազենք այն ասպարեզը, որը դրված է մեր առջև՝ նայելով Հիսուսին՝ մեր հավատքի հիմնադիրին և կատարելագործողին, *Ով Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը կրեց…»* (շեղագիրն ավելացված է):

Դուք որսացի՞ք սա. «Այն ուրախությունը, որը դրված էր Նրա առջև»: Մի՞թե խաչը ոգեշնչում էր Հիսուսին: Իհարկե՝ ո՛չ: Նա այնքա՜ն տագնապած էր, որ Իր մահապատժից առաջ ամբողջ գիշերն անցկացրեց՝ Հորից այլ ճանապարհ խնդրելով: Բայց Հիսուսն ուներ մի բան, որը պակասում է շատ ամուսնությունների մեջ՝ արտասովոր տեսիլք: Նա կարողանում էր տեսնել ավելին, քան Իր հանգամանքները. Նա տեսնում էր այն զորությունը և խոստումը, որոնք գալու էին Իր որոշումների միջոցով: Եվ ո՞րն էր Հիսուսի նպատակը: Պատասխանը գրված է Եփեսացիների 5-ում.

«…Նա տվեց Իր կյանքը նրա համար [Իր Եկեղեցու], որպեսզի դարձնի այն սուրբ և մաքուր՝ լվացված Աստծո Խոսքով: *Նա արեց սա, որպեսզի ներկայացնի այն որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի կամ խորշոմության կամ ցանկացած այլ թերության:* Փոխարենը՝ նա սուրբ և անմեղ կլինի» (խոսքեր 25-27, NLT, շեղագիրն ավելացված է):

Մենք ենք Հիսուսի երջանիկ ավարտը: Մենք այն ուրախությունն էինք, որը դրված էր Նրա առջև: Հիսուսը կրեց խաչը, որպեսզի կարողանար հաշտվել մեզ հետ, այսինքն՝ Իր Հարսնացուի հետ: Այժմ եկեղեցին կարող է հարել Նրան՝ առանց ամաչելու իր նախկին թշվառությունից, որովհետև Նրանում մենք նոր ինքնություն ունենք: Ահա թե ինչ տեսակի հարատևություն, ողորմություն և անպայմանական սեր պետք է լինի մեր ամուսնությունների մեջ: Բայց անհրաժեշտ է ունենալ տեսիլք, այսինքն՝ հույս այն բանի համար, որը կարող է լինել ապագայում, որը նեցուկ կլինի մեզ և կանցկացնի կյանքի դժվարություններով:

Եբրայեցիների նամակի հեղինակը շարունակում է՝ հորդորելով մեզ.

«Երբ պարզեք, որ տկարանում եք ձեր հավատքի մեջ, կրկին կետ առ կետ կարդացե՛ք այս պատմությունը՝ թշնամանքի այդ երկար շարանը, որը Նա ճեղքեց-անցավ: *Դա* ադրենալինի լիցք կհաղորդի ձեր անձերին» (Եբր. 12.3, MSG):

Ժամանակ առ ժամանակ բոլորս էլ տկարանում ենք հավատքի մեջ: Ահա թե ինչու է Եբրայեցիների նամակի հեղինակը գրում՝ *երբ*, ոչ թե *եթե* պարզեք, որ տկարանում եք ձեր հավատքի մեջ: Ակնառու ամուսնությունը պահանջում է ոչ պակաս, քան մեծ հավատք, որովհետև *հավատարիմ* լինելը նշանակում է՝ *լցված լինել հավատքով:* Երբ ձեր ամուսնության մեջ դժվարություններ են լինում, հիշեք, թե ինչ կրեց Քրիստոսը: Կրկին կարդացեք Նրա պատմությունը: Ձեր ակնթարթային խնդիրները, որքան էլ ցավոտ լինեն, ոչինչ են՝ համեմատած խաչի հետ: Երբ ձեր հավատարմությունը ձեր կողակցի հանդեպ մարում է, հիշեք, որ Հիսուսը հավատարիմ է ձեր հանդեպ: Հիշեք այն ամենը, ինչ Նա կրեց՝ ձեզ հետ հաշտվելու համար: Նրա օրինակը ադրենալինի լիցք կհաղորդի ձեր անձին:

Օր 3

Հավատալ լավագույնին

«…Ես եմ Աստված… և Ինձ պես մեկ ուրիշը չկա, որ պատմում եմ առաջուց վերջինը…» (Եսայի 46.9,10):

Մենք նորություն չենք ասի՝ գրելով, որ Աստծո նմանը չկա, բայց շատ հաճախ մոռանում ենք այս արտահայտության զորությունը և ճշմարտացիությունը: Որպես Աստծո զավակներ՝ մենք կանչված ենք՝ որ դառնանք Նրա նման և հագնենք Նրա բնությունը: Հավատքով մենք կարող ենք ապագան կերտողներ դառնալ. մենք կարող ենք ձևավորել մեր կյանքերը, երեխաներին և ամուսնությունները՝ հռչակելով վերջը սկզբից:

Մենք արդեն պարզ նշեցինք, որ *երկարատև և երջանիկ կյանքն* ինքնաբերաբար չի կառուցվում. մենք ենք կանխամտածված կառուցում այն: Այս պնդմանը հետևում է տրամաբանական հարց. «Ինչպե՞ս կառուցեմ իմ երջանիկ ավարտը»: Միգուցե բազում անգամներ կարդացել եք այս խոսքերը, բայց կրկին արեք դա.

«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունն է… Հավատքով ենք իմանում, որ աշխարհներն Աստծո Խոսքով հաստատվեցին, որ չերևացողներից այս տեսնվողներս եղած են» (Եբր. 11.1,3):

Մեր նպատակն է՝ կառուցել *երկարատև և երջանիկ կյանք*, որը դեռ գոյություն չունի: Հավատքն այն շինանյութն է, որը մենք օգտագործում ենք, որպեսզի կառուցենք այն, ինչը դեռ իրական չէ:

Աստված հավատաց մեզ այն ժամանակ, երբ մենք դեռ չէինք արել որևէ բան, ինչին արժեր հավատալ: Նա մեծ հավատք ունի ձեր հանդեպ, քանի որ Նա մեծ հավատք ունի Իր հանդեպ: Նա գիտի, որ Իր զորությունը կարող է անել ցանկացած բան ձեր կյանքում: Միակ բանը, որը կխանգարի մեզ վայելելու Աստծո անսահման զորությունը՝ անհավատությունն է, որն արմատացած է հպարտության մեջ:

Հպարտությունը դրսևորվում է որպես ամբարտավանություն կամ չափազանց մեծ վստահություն սեփական ուժերի հանդեպ: Կա նույնպես հպարտության ավելի աննկատ ձև՝ ատելություն սեփական անձի հանդեպ: Երկու դեպքում էլ հպարտությունը հրաժարվում է ընդունել այն ամենը, ինչ Աստծո փառահեղ զորությունը գնել է մեզ համար խաչի վրա՝ շնորհիվ Քրիստոսի կատարած գործի: Հիսուսը մահացավ՝ ձեզ արտասովոր դարձնելու համար: «Միգուցե մենք գոհ կլինենք,– գրել է Կ. Ս. Լյուիսը,– մնալ, այսպես կոչված, «հասարակ մարդիկ», բայց Նա բոլորովին այլ ծրագիր ունի: Այդ ծրագրից խուսափելը խոնարհություն չէ, այլ՝ ծուլություն և վախկոտություն: Այս ծրագրին հպատակվելը՝ սնապարծություն կամ մեծամտություն չէ, այլ՝ հնազանդություն»[3]: Մենք ընդունում ենք այն զարմանալի կյանքը, որն Աստված առաջարկում է մեզ, երբ բարձրացնում ենք մեր մտածելակերպը Նրա մատակարարման մակարդակի վրա:

Դուք հավատո՞ւմ եք, որ արժանի եք հրաշալի ամուսնության: Միգուցե ձեզ տանջում են այսպիսի մտքեր.

Ես շատ մեծ «ուղեբեռ» ունեմ անցյալից:
Ես չեմ մեծացել լավ ընտանիքում:
Իմ ծնողներին չհաջողվեց լավ ընտանիք կառուցել:
Ես արդեն չափից շատ սխալներ եմ գործել:
Ես պետք է գոհ լինեմ պարզապես մի կերպ ապրելով:

Եթե դուք դեռ չեք նկատել, Աստված սիրում է մարտահրավեր, բայց հավատքի պակասը կսահմանափակի Նրա զորությունը մեր կյանքերում: Մենք պետք է հայտնություն ունենանք Նրա մեծության մասին. այն կոգեշնչի մեզ, որ վստահ լինենք Նրա մեջ, և միևնույն ժամանակ կօգնի խոնարհ մնալ: Խոնարհության շնորհիվ մենք

ստանում ենք լավագույնը, ինչ Աստված պատրաստել է մեզ համար: Եսայի 55.8,9-ը հռչակում է.

> «Իմ մտքերը բոլորովին նման չեն ձեր մտքերին,- ասում է Տերը:- Եվ Իմ ճանապարհները շատ ավելի հեռու են ցանկացած բանից, որը կարող եք պատկերացնել: Որովհետև, ինչպես որ երկինքներն են բարձր երկրից, այնպես էլ Իմ ճանապարհներն են բարձր ձեր ճանապարհներից, և Իմ մտքերը բարձր են ձեր մտքերից» (NLT):

Դուք նույնպես կհամաձայնեք, որ Աստված ավելի մեծ իմաստություն և կարողություն ունի, քան դուք: «Աստծո մեջ,– գրում է Լյուիսը,– դուք բախվում եք մի իրողության, որն անչափելիորեն գերազանց է ձեզնից ամեն առումով»[4]: Դուք պետք է հավատաք սրան, եթե ցանկանում եք ստանալ անհրաժեշտ ամեն ինչ՝ անզուգական ամուսնության համար:

Ինչպիսին էլ մենք համարենք մեր ամուսնության ներուժը, Աստծո երազանքները մեր ամուսնության մասին շատ ավելի մեծ են: Նա ոչ միայն շատ է մտածել այդ մասին, այլև հրաշալի ծրագրեր է կազմել:

> «Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,– ասում է Տերը,– խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը» (Երեմիա 29.11):

Այս խոստումն ընտրության առջև է կանգնեցնում մեզ. կա՛մ հավատալ, որ Աստծո ասածը ճշմարիտ է, և ընունել Նրա տեսիլքը մեր ամուսնությունների համար, կա՛մ ենթադրել, որ Նա ստախոս է: Նայելով ձեր ապագային՝ Աստված տեսնում է Իր Որդու հայտնությունը ձեզանում: Այս տեսիլքն իրական կդառնա միայն, եթե դուք ընդունեք Նրա շնորհքը (զորացումը) խոնարհությամբ և հավատքով: Թեև մենք ծրագրում ենք *երկարատև և երջանիկ կյանք,* այն չի սահմանափակվում մեր ուժերով: Մեր ծրագրած կյանքն Աստծո սիրո արտահայտությունն է, որն իրական է դառնում Նրա Հոգու միջոցով, Ով գործում է մեզանում:

Միգուցե մտածեք. *«Ես համոզված եմ, որ Աստված հանձնվել է իմ ամուսնության հարցում: Մեզ համար այլևս հույս չկա: Մենք չունենք տեսիլք ապագայի համար: Մենք կորցրել ենք այդ նվիրական զգացումը»:*

Իսկ միգուցե դուք այդպես եք զգում ձեզ, քանի որ գործել եք ձե՞ր ուժերով. փոխանակե՛ք ձեր ջանքերը և ձեր երազանքներն ամուսնության մասին՝ ստանալով այն, ինչ Աստված ունի ձեզ համար: Երբ ձեր ամուսնությունը վստահեք Նրան, Նա կվերցնի ձեր երազանքները, կյանք կներշնչի դրանց մեջ և երկնային տեսիլք կդնի ձեր սրտում:

Ամուսիններ՛, սա նշանակում է, որ Նա կզորացնի ձեզ, որպեսզի սիրեք ձեր կնոջն այնպես, ինչպես Քրիստոսն է սիրում Եկեղեցուն՝ առանց եսակենտրոնության նշույլի: Կանա՛նք, Նա նույնպես կզորացնի ձեզ, որպեսզի հարգանք ունենաք ձեր ամուսնու հանդեպ: Այս կերպով երկուսդ էլ ճիշտ դիրքում կլինեք, որպեսզի միասին աճեք՝ հասնելով ամուսնության մեծությանը:

Աստվածաշունչը պարզ ասում է, որ առանց հավատքի անհնար է հաճեցնել Աստծուն (տե՛ս Եբր. 11.6): Ինչո՞ւ է Աստված այսքան սիրում հավատքը: Պատճառն այն է, որ հավատալով Աստծուն՝ մենք զորություն ենք ստանում, որ նմանվենք Նրան և ապրենք Նրա պես, իսկ աստվածային կյանքը լավագույնն է: Նա բավականություն է ստանում ձեր բավականությունից, և մենք չենք խոսում պարզապես երջանկության կարճատև զգացումի մասին, այլ՝ հարատև ուրախության և բավականության: Աստված ցանկանում է տալ ձեր ամուսնությանը լավագույնը, ինչ ունի, իսկ այդ լավագույնը հաստատվում է միայն այնպիսի միության մեջ, որի հիմքը Նա է:

Նախագիծը

Հաճախ մարդիկ շփոթում են հավատքը և հույսը՝ դրանք համարելով միևնույն բաները, բայց այս երկուսի միջև տարբերություն կա: Եթե հավատքը՝ հրաշալի ամուսնության շինանյութն է, հույսը՝ դրա նախագիծն է: Այլ կերպ ասած՝ հույսը կաղապարն է, իսկ հավատքն այն է, ինչը լցնում է այդ կաղապարը: Առանց հույսի՝ հավատքն անձև նյութ է, և դրա օգուտը նույնքան է, որքան շինանյութի օգուտը՝ առանց տան նախագծի:

Դուք կհիշեք, որ Աստված անձամբ ընտրեց Աբրահամին և ուխտ կնքեց նրա հետ հատուկ նպատակով. Աբրահամը պետք է խրատեր

Իր սերունդներին Տիրոջ ճանապարհի մեջ: Աբրահամն անզավակ էր, երբ Աստված կանչեց նրան այս խոստման մեջ, բայց Տերը հավաստիացրեց նրան, որ նա մեծ ազգի հայր է դառնալու:

Աբրահամն արտասովոր հավատք ունեցող մարդ էր, ում մասին Աստվածաշունչն ասում է, որ «Աստծո խոստման համար չերկմտեց անհավատությունով» (Հռոմ. 4.20): Այնուամենայնիվ, Ծննդոց 15-ում տեսնում ենք, որ մինչև հավատքով լցվելը նա պայքարում էր հուսալքության դեմ.

> «…Տեսիլքում Եհովայի խոսքը եղավ Աբրամին՝ ասելով. «Մի՛ վախիր, Աբրա՛մ, Ես քեզ համար վահան եմ, քո վարձքը խի՜ստ շատ է:
>
> Եվ Աբրամն ասաց. «Ո՛վ Տեր Եհովա, ինձ ի՞նչ ես տալիս, քանի որ առանց զավակի եմ մնացել, և իմ տան տիրողն ահա Դամասկացի Եղիազարն է»: Աբրամը նաև ասաց. «Որովհետև ինձ սերունդ չտվիր, ահա իմ ընդոծինն ինձ ժառանգ կլինի»:
>
> Եվ ահա Եհովայի խոսքը եղավ նրան՝ ասելով. «Նա չի ժառանգի քեզ, այլ նա, որ քո մեջքից դուրս կգա, նա կլինի քո ժառանգը»:
>
> Եվ Նա դուրս հանեց նրան և ասաց. «Դեպի երկինք նայիր և աստղերը համրիր, եթե կարող ես դրանք համրել»: Եվ ասաց նրան. «Այսպես կլինի քո սերունդը»:
>
> Եվ նա հավատաց Եհովային, և Նա նրա համար արդարություն համարեց այս» (Ծնն. 15.1-6):

Մենք կարող էինք ակնկալել, որ Աստված հավատքի նոր չափ կտար Աբրահամին: Բայց փոխարենը Նա տեսիլք տվեց Աբրահամի հավատքին, որից նա կարող էր ամուր կառչել: Այս տեսիլքը զորացրեց նրա հավատքը, քանի որ ձև հաղորդեց նրա հույսին: Աստված դուրս կանչեց Աբրահամին՝ աստղերը հաշվելու համար: Գիշերային երկինքը պատկերեց նրա հավատքի աստղային նախագիծը. անթիվ աստղերը վերևում ձևափոխվում էին նրա մտքի կտավի վրա՝ ստանալով երեխաների դեմքեր: Աստված պարզապես չասաց Աբրահամին, որ նրա ժառանգներն անհաշվելի կլինեն՝ ինչպես աստղերը. Նա ցույց տվեց մշտական, արտահայտիչ և նյութական

օրինակ: Այս աստղային ցուցադրության միջոցով Աստծո տեսիլքը դրոշմվեց Աբրահամի երևակայության մեջ:

Նույն կերպով Աստված ցանկանում է օգտագործել ձեր երևակայությունը, որպեսզի փոխանցի Իր տեսիլքը ձեր ամուսնության մասին, որովհետև եթե կա տեսիլք, կա նաև հույս: Ահա թե ինչու Պողոսը խրախուսեց մեզ՝ քանդել ամեն երևակայական միտք, որը գոռոզանում է Աստծո գիտության դեմ (տե՛ս Բ Կորնթ. 10.4,5): Դուք պետք է պաշտպանեք ձեր մտքի կտավը, որովհետև այն կորոշի ձեր գործողությունների բնույթը և արժեքը: Մտածե՛ք ձեր երևակայության մասին՝ որպես գծագրության տախտակի, որի վրա պետք է պատկերվի ձեր հույսը:

Աստված խոստացավ լցնել մեզ հույսով, բայց ինչպե՞ս ենք մենք ստանում այն: Նրա Հոգին լցնում է մեր հոգիները գերբնական հույսով, երբ աղոթում ենք:

> «Ես աղոթում եմ, որ Աստված՝ հույսի աղբյուրը, ամբողջովին լցնի ձեզ ուրախությամբ և խաղաղությամբ, որովհետև դուք վստահում եք Նրան: Այդ ժամանակ դուք կհամակվեք վստահ հույսով՝ Սուրբ Հոգու զորության միջոցով» (Հռոմ. 15.13, NLT):

Աստված մեր հույսի աղբյուրն է: Եթե մենք խնդրենք, Նա կլցնի մեզ ուրախությամբ և խաղաղությամբ, ինչը բոլորս էլ ցանկանում ենք ունենալ մեր ամուսնության մեջ: Երբ մենք խոնարհաբար գանք Նրա մոտ, մենք կհամակվենք վստահ հույսով՝ Սուրբ Հոգու զորության միջոցով: Ինչպիսի՜ խոստում:

Առակաց 29.18-ում գրված է, որ առանց տեսիլքի մենք կվայրենանանք (անգլ.՝ կկործանվենք): Իսկապես որ, ամուսնությունն առանց աստվածային տեսիլքի՝ զուրկ է կյանքից: Այնպես որ, մենք կոչ ենք անում ձեզ, որ մեծ երազանքներ ունենաք: Մինչ դուք պատրաստվում եք գրի առնել ձեր երազանքները և նպատակները, աղոթե՛ք, որ Աստված զարթնեցնի ձեր սիրտը՝ Իր ծրագիրը հասկանալու համար:

Օր 4

Չինական ռեստորանը

Երբ մենք նոր էինք ամուսնացել, կար մի հատուկ վայր, որտեղ գնում էինք, որպեսզի խոսեինք մեր ապագայի մասին: Դա մի փոքրիկ չինական ռեստորան էր, ոչ շատ հեռու մեր բնակարանից: Մենք նոր էինք ավարտել համալսարանը, և այնքան քիչ փող ունեինք, որ երկուսիս համար պատվիրում էինք մեկ բաժին ճուտ՝ նրբաբլիթի և սալորի թանձրուկի հետ: Այդ հանդարտ, համեստ և օտարոտի միջավայրը խրախուսում էր երիտասարդ զույգին՝ երազել հեռավոր երկրների մասին և մեծ սպասումներ ունենալ, մինչ նրանք թեյ էին խմում:

Այդ ժամանակ մենք շատ բան չգիտեինք, բայց համոզված էինք մեկ բանում. մենք ցանկանում էինք ծառայել Աստծուն ամբողջ սրտով, մտքով և զորությամբ: Մենք ջերմեռանդորեն ցանկանում էինք հաջողակ կյանք և ընտանիք ունենալ: Ճիշտ կլինի ասել, որ մենք չգիտեինք, թե ուր կգնայինք կամ՝ որտեղ կհասնեինք կյանքում, բայց գիտեինք, թե ինչպիսի ճանապարհ էինք ցանկանում անցնել: Մենք ցանկանում էինք ապրել այնպես, որ Աստված նոր ժառանգություն հաստատեր մեր միջոցով:

Ես (Զոնը) հրաշալի ընտանիք եմ ունեցել: Ծնողներս ավելի քան վաթսունհինգ տարի է՝ ամուսնացած են: Հայրս հավատարմորեն սիրել է մեզ և ապահովել մեր ընտանիքը, իսկ մայրս տնային տնտեսուհի է եղել: Ծնողներս հրաշալի օրինակ են եղել ինձ համար կյանքի և ամուսնության շատ հարցերում, և ես հավիտյան շնորհակալ եմ լինելու դրա համար:

Ես (Լիզան) բոլորովին այլ ընտանիք եմ ունեցել: Զոնի ծնողները կատարյալ են թվում՝ համեմատած իմ ընտանիքի հետ, որը կրել էր ալկոհոլի, շնության, բռնության, դավաճանության, ագահության, կորստի և ամուսնալուծության կործանարար ազդեցությունը: Երբ Զոնը և ես սկսեցինք մեր ամուսնական կյանքը, ակնհայտ էր, որ ես չունեի պատկերացնում առողջ ընտանիքի մասին, բայց շատ էի ցանկանում նման ընտանիքի անդամ լինել:

Երբ մենք զրուցում էինք այդ չինական ռեստորանում, գիտեինք, որ ցանկանում էինք այլ տեսակի ամուսնություն ունենալ: Թեև մենք

մեծ հարգանքով էինք վերաբերվում այն օրինակին, որով Ջոնի ծնողները կառուցել էին իրենց ընտանիքը, սակայն այդ տարբերակը ճիշտ չէր մեզ համար: Երկուսս էլ գիտեինք, որ ամուսնության մեջ կար ավելին, քան մենք տեսել էինք, որ ամուսնական հաստատությունն ինքնին աստվածային կոչում ունի: Մեզ համար ամուսնությունը պարզապես չէր նշանակում՝ միասին լինել մինչև մեր կյանքի վերջը, այլ նաև հավիտենական ժառանգություն կառուցել մեր միության միջոցով: Իհարկե, սա վերաբերվելու էր մեր երեխաներին և թոռներին, բայց նույնպես ազդելու էր անթիվ մարդկանց վրա:

Մենք սկսեցինք պատկերել մեր ամուսնության տեսիլքը: Մենք հարցեր էինք տալիս իրար, չափանիշներ էինք որոշում և երազում այնքան մեծ բաների մասին, որքան կարող էինք: Մենք համաձայնեցինք, որ մեր առաջնային նպատակն էր՝ միասին ծառայել Աստծուն և պատվել Նրան մեր որոշումներով: Մնացած ամեն ինչը պետք է անցներ այս զտիչով:

Երեսուներկու տարի տևող ամուսնության ընթացքում եղել են ժամանակներ, երբ միասին ենք եղել զուտ այն պատճառով, որ որոշել էինք պատվել Աստծուն: Կար մի ընթացք, երբ ես (Լիզան) չէի *զգում*, որ սիրում եմ Ջոնին, իսկ Ջոնը նույնիսկ ասում էր, որ չի սիրում ինձ: Նա լիովին տրվում էր իր լարված ճանապարհորդական գրաֆիկին, իսկ ես մնում էի տանը մեր փոքր երեխաների հետ:

Անկեղծ ասած՝ այդ ժամանակ ես հույս չունեի, որ ապագայում մեր սերը կվերականգնվեր: Իմ անձն ստացած վերքերից սպիացել էր: Ես զգում էի, որ լիովին միայնակ եմ թե՛ զգացմունքային առումով, թե՛ ֆիզիկական: Եթե ամուսնալուծությունը հնարավոր տարբերակ լիներ ինձ համար, ես ուրախությամբ կընտրեի այդ ճանապարհը: Ես չունեի տեսիլք մեր ամուսնության համար. ես ընդամենը տեսնում էի այն ամենի աղոտ ստվերը, ինչը կարող էր լինել: Կար մի պահ, երբ ես մտածում էի. *«Աստվա՛ծ, ես կմնամ այս ամուսնության մեջ, եթե Դու խոստանաս ինձ, որ ստիպված չեմ լինի ապրել Ջոնի հետ Երկնքում»:* Ես այնքա՜ն միայնակ էի զգում ինձ, իսկ ծառայողների կանանց համար դժվար է իրենց ցավով կիսվել ինչ-որ մեկի հետ:

Այդ ժամանակ ես նույնպես պայքարում էի հուսահատության դեմ: Թվում էր՝ ինչ էլ անեի, անկարող էի գոհացնել Լիզային: Ես համոզված էի, որ ճիշտ եմ գնահատում իրավիճակը, քանի որ

Լիզան անհարգալից էր վերաբերվում ինձ և կոպիտ էր խոսում ինձ հետ: Մենք արագորեն անկում էինք ապրում, և երկուսս էլ չէինք տեսնում որևէ հնարավորություն սիրո, հարգանքի և հոգատարության վերականգնման համար:

Այն զգացմունքային ցավը, որը մենք զգում էինք այդ շրջանում, անտանելի էր: Այն սարսափելի էր, բայց դա պարզապես մեկ ընտանեկան եղանակ էր, իսկ եղանակները փոխվում են: Լացի երեկոն կարող է շատ երկար տևել, բայց Աստված խոստացել է, որ առավոտյան ուրախություն կգա (տե՛ս Սաղմ. 30.5): Վերհիշելով այդ ամենը՝ թվում է, որ այդ ժամանակն անիրական էր, ասես դա տեղի ունեցած լիներ մեկ այլ զույգի հետ: Աստծո շնորհքով մենք հավատարիմ մնացինք մեր նպատակին, որն Աստծուն պատվելն էր: Երբ անկեղծորեն ապաշխարեցինք մեր եսասիրությունից, ինչպես նաև հնազանդվեցինք աստվածային իմաստությանը, մեր ամուսնությունն ու սերը նոր ուժ ստացան:

Այն շարժիչ ուժերից մեկը, որն օգնեց մեզ հաղթահարել այդ դժվարին շրջանը, մեր պատկերացումն էր կյանքի մասին: Մենք չէինք դիտարկում այն որպես յոթանասուն կամ ութսուն տարվա ժամանակահատված. մենք նայում էինք կյանքին հավիտենական տեսանկյունից: Յոթանասուն կամ ութսուն տարին պարզապես գոլորշի է՝ համեմատած հավիտենության հետ: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ մեր դիրքորոշումը խաչի հանդեպ՝ կորոշի, թե *որտեղ* կանցկացնենք հավիտենությունը, բայց մեր՝ հավատացյալներիս կյանքը կորոշի, թե *ինչպես* կանցկացնենք հավիտենությունը: Պողոսը գրում է:

> «…ավելի ընտրում ենք այս մարմնից դուրս գնալ և Տիրոջ մոտ մտնել… Որովհետև մենք՝ ամենքս, պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, թե՛ չար» (Բ Կորնթ. 5.8,10):

Ակնհայտ է, որ Պողոսը չի գրում անհավատների մասին, որովհետև երբ անհավատները դուրս են գալիս իրենց մարմնից, չեն մտնում Տիրոջ ներկայության մեջ: Նա դիմում է այն մարդկանց, ովքեր Աստծո ընտանիքի մեջ են Հիսուս Քրիստոսի փրկարար շնորհքի միջոցով: Մենք՝ հավատացյալներս, կանգնելու ենք Նրա առջև և պատասխան ենք տալու մեր կյանքի և որոշումների համար:

Քրիստոսի դատաստանի արդյունքում կլինեն հավիտենական վարձատրություններ և հավիտենական կորուստներ: Դրանք կլինեն տարբեր չափերի՝ սկսած այն բանից, որ ոմանց ամբողջ կյանքում արած գործը կայրվի, մինչդեռ ոմանք էլ հավիտենական վարձատրություն կստանան և նույնիսկ կթագավորեն Նրա կողքին ամբողջ հավիտենության ընթացքում: Գիտությունն այս հիմնարար վարդապետության մասին՝ պահպանեց մեր ամուսնությունը: Մեզնից ոչ մեկը չէր ցանկանում պատասխան տալ Հիսուսի գահի առջև այն մասին, թե ինչու մենք պղծեցինք Նրա արվեստի գործը՝ քանդելով ամուսնության միությունը (եթե ցանկանում եք իմանալ ավելին Դատաստանի գահի մասին, կարդացե՛ք Ջոնի «Հավիտենականությամբ շարժվողները» գիրքը):

Աստծուն պատվելուց հետո մեր երկրորդ նպատակն էր՝ ավելի սիրահարված լինել միմյանց մեր ամուսնության վերջում, քան սկզբում: Այս նպատակն ստիպում էր մեզ՝ անցնել դժվարին ժամանակներով և սիրել միմյանց նույնիսկ՝ երբ դա չէինք զգում:

Կ. Ս. Լյուիսը գրել է.

> «Սերը… խորը միություն է, որը պահպանվում է կամքով և գիտակցաբար ամրացվում է սովորությունների միջոցով. այն զորանում է (քրիստոնեական ամուսնություններում) շնորհքով, որը ամուսինները խնդրում են և ստանում Աստծուց: Նրանք կարող են նման սեր զգալ իրար հանդեպ նույնիսկ այն պահերին, երբ միմյանց դուր չեն գալիս»[5]:

Անկասկած, եղել են ժամանակներ, երբ միմյանց դուր չենք եկել: Բայց Աստված շնորհք է տվել մեզ՝ անցնելու այդ ծանր ժամանակներով, և Նա կանի նույնը ձեզ համար: Այսօր մենք միմյանց դուր ենք գալիս և սիրում ենք մեկս մյուսին ավելի շատ, քան մեր ամուսնության օրը. դա ճշմարտությո՞ւն է: Եվ մենք ակնկալում ենք, որ յուրաքանչյուր անցնող տասնամյակի ընթացքում ավելի կաճենք սիրո մեջ:

Աստված նշումներ է անում

Մենք գրում էինք մեր երազանքները ռեստորանի անձեռոցիկների վրա՝ խոսելով այն մասին, թե ինչպես էինք մեծացնելու երեխաներին, որոնց դեռ չունեինք: Մենք քննարկում էինք, թե ինչ-

պես էինք դաստիարակելու նրանց, ինչպիսի տնային պարտականություններ էինք հանձնարարելու, որքան գումար էինք տալու ծախսերի համար և ինչպես էինք բաժանելու մեր տան սենյակները նրանց մեջ: Մենք խոսում էինք մեր ժառանգության մասին, նաև այն որոշումների մասին, որոնք ազդեցություն էին թողնելու մեր երեխաների և թոռների վրա: Մեզ համար կարևոր էր, որ մենք հոգևոր և ֆինանսական ժառանգություն փոխանցեինք նրանց (տե՛ս Առակ. 13.22):

Մենք պատկերացնում էինք մեր ապագա տունը: Մեզ համար կարևոր չէր ունենալ մեծ և նրբաճաշակ տուն. մենք ցանկանում էինք, որ մեր տունը հյուրընկալ և ջերմ լիներ, որտեղ մարդիկ ներս մտնելուն պես ապահով կզգային: Մենք ցանկանում էինք, որ այն ուրախ վայր լիներ, որտեղ մեր երեխաները կհրավիրեին իրենց ընկերներին:

Մենք շարունակում էինք՝ խոսելով այն մասին, թե ինչի համար էր, մեր համոզմամբ, Աստված կանչել մեզ, և՝ թե ինչպես մեր կոչումները կազդեին մեր ամուսնական կյանքի վրա: Մենք քննարկում էինք կնոջ և տղամարդու դերերը: Որոշում էինք, թե ինչպես էինք տնօրինելու մեր ֆինանսները և ինչպես էինք ապրելու առանց պարտքերի: Մենք շարունակ խոսում ու խոսում էինք, մինչև որ նայելով մեր ձեռքերին՝ հայտնաբերում էինք, որ խզբզած անձեռոցիկները կարծես դարձել էին այն կյանքի նախագծերը, որոնք ցանկանում էինք կառուցել:

Մեզ դուր է գալիս մտածել, որ երբ գրի էինք առնում մեր ծրագրերը թղթի կտորների վրա, Աստված նույնպես գրում էր:

> «Այն ժամանակ խոսեցին Տիրոջից վախեցողներն իրար հետ, և Տերը ականջ դրեց և լսեց, և հիշատակի գիրք գրվեց Նրա առջև Տիրոջից վախեցողների համար և Նրա անունը պատվական համարողների համար» (Մաղաքիա 3.16):

Այդ վաղ օրերին մենք խոսում էինք տարբեր թեմաների շուրջ, ու թեև շատ բաներ մոռացանք, սակայն Աստված հիշեց և իրականացրեց դրանք: Աստված գրի է առնում Իրենից երկյուղ ունեցող մարդկանց խոսակցությունները: Երբ դուք ծրագրում եք այնպիսի ամուսնություն, որը պատիվ է բերում կյանքի Հեղինակին, Երկինքը նշումներ է անում:

Օր 5

Գրելով ձեր տեսիլքը

«…Գրի՛ր տեսիլքը, պարզ դարձրու այն տախտակների վրա, որպեսզի նա, ով կարդում է այն, կարողանա վազել» (Ամբակում 2.2, ESV):

Կրկին, երբեք շատ ուշ չէ ձեր ամուսնության տեսիլքը գրելու համար: Ազատորեն գրե՛ք և փոփոխե՛ք այն, մինչև որ ստանաք որոշակի և հասկանալի ծրագիր: Պարզ տեսիլքն անհրաժեշտ ուժեր կհաղորդի ձեզ, որպեսզի անցնեք ամբողջ վազքուղին և հատեք եզրագիծը:

Անպայման ժամանակ հատկացրեք, որպեսզի խոսեք ձեր կողակցի (կամ ապագա կողակցի) հետ ձեր ամուսնության միացյալ տեսիլքի մասին: Եթե դուք ամուրի եք, սկսեք գրի առնել տեսիլքի ձեր մասը: Գտեք մի վայր, որտեղ կարող եք երազել: Ունեցե՛ք հստակ ցանկություններ և սպասումներ: Որոշե՛ք ձեր բացարձակ սկզբունքներն ու արժեքները, և մի՛ վախեցեք մեծ երազանքներից: Այս տեսիլքը կլինի ձեր հյուսիսային աստղը գալիք օրերի համար:

Ամուսնությունը նման է մարաթոնյան վազքի, որում մեկնարկի գիծը բաժանվում է եզրագծից տասնամյակներով: Չափազանց շատ զույգեր կարճատև երազանքներ ունեն: Նրանք երազում են տուն գնելու և երեխաներ դաստիարակելու մասին: Այդ երազանքները հրաշալի են, բայց դրանք հեռու չեն տանի ձեզ: Կա շատ ավելին: Շարունակե՞ք երազել:

Մտապահե՛ք, որ դուք և ձեր կողակիցը միասին եք վազում, ոչ թե մրցակցում եք իրար հետ: Դուք չեք կարող մենակ ավարտել ձեր ընթացքը, այնպես որ, դուք պետք է գործեք որպես թիմ: Եթե ձեր սկիզբը դժվար է եղել, մխիթարվեք՝ իմանալով, որ ձեր ավարտը շատ ավելի կարևոր է սկզբից: Ձեր ծրագիրը կազմելը՝ ձեր եզրագիծը որոշելու ձևերից մեկն է: Դուք պետք է դնեք տեսիլքը ձեր առջև, որպեսզի ունենաք այն, ինչին կարող եք ձգտել:

«Որովհետև տեսիլքը դեռ սպասում է իր նշանակված ժամանակին. այն շտապում է դեպի ավարտը. այն չի ստի: Եթե թվա, թե հապաղում է, սպասի՛ր. այն անկասկած կգա և չի ուշանա… Արդարը կապրի իր հավատքով» (Ամբակում 2.3,4, ESV):

Այն տեսիլքը, որով Աստված կոգեշնչի ձեզ, կգնա ձեր առջևից և ճանապարհ կպատրաստի իր իրականացման համար: Եթե դուք պահեք այդ տեսիլքը ձեր աչքերի առջև, այն հուսախաբ չի անի ձեզ: Երբեմն ձեզ կթվա, թե այն, ինչ Աստված ասել է, չի կարող ճշմարիտ լինել: Ձեր ճանապարհը կարող է տանել ձեզ այնպիսի վայրեր, որտեղ դուք չէիք ցանկանում գնալ կամ չէիք սպասում, որ կգնայիք: Վստահե՛ք Աստծո ընթացքին: Աստված գիտի, թե ինչ պետք է հեռացվի ձեզնից, որպեսզի ավարտեք ձեր ճանապարհը: Աստված ձեր տեսիլքի իրականացման ոգեշնչողն է, և Նա զորություն և ուժ կտա ձեզ, երբ կարիքներ ունենաք: Բայց դուք պետք է պահեք այդ տեսիլքը ձեր առջև:

Ձեր ծրագիրը պետք է կյանքով լեցուն փաստաթուղթ լինի, ինչը նշանակում է, որ այն պետք է ընդգրկի երկու բան.

Պարզորեն որոշված բացարձակ սկզբունքներ և արժեքներ

Հստակ համոզմունքները և որոշումները անհրաժեշտ կաղապար կստեղծեն ձեր տեսիլքի համար, օրինակ՝ «մեր ամուսնությունը կպատվի Աստծուն» կամ «մենք կդասենք մեկս մյուսի կարիքները սեփական կարիքներից բարձր»: Այս բաները քննարկման ենթակա չեն: Սրանք երբեք չպետք է փոխվեն կամ փոխզիջման գնան:

Զարգանալու հնարավորություն

Լավ ծրագիրը չի տալիս բոլոր հարցերի պատասխանը, այլ՝ պարզություն է բերում: Միայն Աստված գիտի այն ամենը, ինչ կա ձեր առջևում, բայց դուք կարող եք աստիճանաբար բացահայտել Նրա ծրագրի տարբեր կողմերը՝ Նրա Հոգու առաջնորդությամբ: Ժամանակի ընթացքում ձեր տեսիլքն ավելի լայն գործունեության շրջանակ կունենա և ավելի հստակ կդառնա. այն կհարմարվի տարբեր եղանակների դժվարություններին և կօգտվի դրանց առավելություններից: Այս փոփոխությունները կարող են վերաբերել ձեր երեխաների դաստիարակությանը՝ կախված նրանց տարիքից, կամ այն աջակցությանը, որը դուք ցուցաբերելու եք մեկդ մյուսի կարիերային կամ տեսիլքին:

Ահա հինգ գործնական քայլեր, որոնք մենք առաջարկում ենք ձեռնարկել՝ ձեր ամուսնական ծրագիրը կազմելու համար:

1. Աղոթե՛ք

Խնդրե՛ք Աստծուն՝ Իր Հոգով ներկա լինել ձեր խոսակցությունների, մտքերի և ձգտումների մեջ: Խնդրե՛ք Նրան՝ տալ ձեզ հույսի կաղապարը, որը Նա ցանկանում է լրացնել ձեր հավատքով:

2. Հավաքե՛ք այն, ինչը ոգեշնչում է ձեզ

Գրի առեք խոսքեր Աստվածաշնչից, հոդվածներ, պատմություններ, լուսանկարներ, երգերի բառեր, և ցանկացած բան, ինչը խոսում է ձեզ հետ:

3. Գնացե՛ք այնպիսի վայր, որտեղ կարող եք երազել

Կարիք չկա, որ այդ վայրն առանձնահատուկ կամ թանկ լինի: Այն կարող է հասարակ լինել, օրինակ՝ ձեր փողոցի վրա գտնվող սրճարանը կամ մի նստարան ձեր թաղամասի այգում:

4. Որոշե՛ք ձեր նպատակները

Մեծ երազանքնե՞ր ունեցեք: Ոչ մի դեպքում մի՛ սահմանափակվեք ձեր ներկա հանգամանքներով կամ այն օրինակներով, որոնք տեսել եք անցյալում:

Դուք կարող եք քննարկել հետևյալ թեմաները. ֆինանսներ, երեխաների դաստիարակություն, ընտանեկան կենսաձև, անձնական զարգացում, հոգևոր աճ, շփում, հանգիստ և վերականգնում, ինչպես նաև ձեր կարիերաները, կենցաղային պարտականությունները, ձեր մասնակցությունը եկեղեցու գործունեությանը, ձեր հասարակական կյանքը և այլն:

5. Որոշե՛ք, թե ինչպես հասնեք դրանց

Անմիջապես ձեր տեսիլքը որոշելուց հետո, գնահատե՛ք ձեր ներկա իրավիճակը: Որտե՞ղ եք դուք հենց հիմա և որքանո՞վ եք հեռու ձեր նպատակներից: Գնահատե՛ք ձեր

ներկա դրությունը և որոշե՛ք այն չափանիշները, քայլերը կամ փոփոխությունները, որոնք կկանգնեցնեն ձեզ ձեր ճանապարհին կամ կպահեն ձեզ դրա վրա:

Ձեր ծրագիրը կընդգրկի շատ եղանակներ ձեր կյանքում: Մտապահելով ձեր նպատակները՝ պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ինչպիսի՞ն կլինի մեր ամուսնությունը, երբ մենք…

Դեռ երեխաներ չունենք:
Փոքր երեխաներ ունենանք:
Դեռահասների ծնողներ լինենք:
Երկուսով մնանք երեխաների հեռանալուց հետո:
Թոռներ ունենանք:
Միասին ապրենք մեր վերջին տարիները:

Եթե դուք ամուրի եք, ժամադրվում եք կամ նշանված եք, ինչպե՞ս կարող եք պատրաստվել այն ամուսնությանը, որը ցանկանում եք ունենալ ապագայում:

Դուք նպատակներ եք որոշել ֆինանսների, երեխաների դաստիարակության և այլ բնագավառների համար: Այս նպատակները շատ մեծ են, բայց դրանք կձևավորվեն ամեն օր՝ ձեր չափանիշների, ընտրությունների և սովորությունների միջոցով: Մտածե՛ք հետևյալ հարցերի շուրջ.

Ինչպե՞ս և ե՞րբ եք տնօրինելու ձեր ամսական բյուջեն:
Ինչպիսի՞ արձակուրդներ եք վերցնելու և ինչպե՞ս եք ծրագրելու դրանք:
Ինչո՞վ եք զբաղվելու կամ ինչպե՞ս եք զվարճանալու միասին:
Արդյոք շարունակելո՞ւ եք ժամադրվել ձեր կողակցի հետ:
Ինչպե՞ս եք հարթելու տարաձայնությունները ձեր կողակցի հետ:
Ինչպե՞ս եք կազմակերպելու ժամանակը ձեր երեխաների հետ:
Ինչպե՞ս եք դաստիարակելու ձեր երեխաներին:

Արդյո՞ք երկուսդ էլ ցանկանում եք կարիերա կառուցել՝ աշխատելով տնից դուրս: Եթե այո, ապա ինչպե՞ս է դա տեղի ունենալու ձեր ամուսնության տարբեր եղանակների ընթացքում:

Ինչպե՞ս եք աջակցելու մեկդ մյուսի կարիերաներին կամ այլ խոշոր նպատակներին:

Ինչպիսի՞ կրթություն եք ստանալու: Ինչպիսի՞ կրթություն են ստանալու ձեր երեխաները:

Ինչպիսի՞ հանգստի հնարավորություններ կունենան ձեր երեխաները: Ինչպե՞ս եք աջակցելու նրանց հետաքրքրություններին և տաղանդներին:

Ինչպե՞ս եք հոգալու ձեր առողջության մասին (վարժություններ, հանգիստ, սնունդ և այլն):

Ինչպե՞ս եք հոգալու ձեր հոգևոր բարեկեցությունը:

Ինչպե՞ս եք մեծացնելու ձեր երեխաներին Աստծո գիտության մեջ:

Ինչպե՞ս է ձեր ամուսնությունը և ընտանիքն օգուտ տալու ձեզ շրջապատող աշխարհին (ձեր եկեղեցուն, համայնքին, բնակության վայրին, աշխատավայրին և այլն):

Ինչպես արդեն նշեցինք, ձեր ծրագրի մանրամասները, ամենայն հավանականությամբ, կփոփոխվեն և կզարգանան՝ իմաստություն և փորձառություն ձեռք բերելու հետ մեկտեղ: Դա բնական է: Բայց շատ կարևոր է, որ դուք հաստատեք ձեր ծրագրի կաղապարը և նվիրվեք այն հիմնարար չափանիշներին, որոնք անփոփոխ կլինեն ձեր ամբողջ կյանքում:

Մագլցել Էվերեստը

Պատկերացրեք մի զույգի, որն ինքնաթիռ է նստում: Նրանք ոգեշնչված են, որ ճանապարհորդելու են, բայց նույնիսկ գաղափար չունեն, թե ուր են գնալու: Նրանք միայն գիտեն, որ այդ ինքնաթիռն իրենց տանելու է դեպի մեծ արկածներ: Նրանք ենթադրում են, որ ուղևորվում են տաք կլիմա ունեցող մի վայր, այնպես որ, վերցրել են միայն լողափի համար նախատեսված հագուստ և մի քանի թեթև սվիտեր՝ ենթադրելով, որ երեկոյան միգուցե զով եղանակ լինի:

ժամեր տևող թռիչքից հետո տեղ են հասնում և բացահայտում, որ վայրէջք են կատարել Նեպալում: Այդ զույգի կարծիքով, նրանք տրոպիկական ճանապարհորդություն էին կատարելու, բայց պարզվեց, որ պետք է բարձրանան էվերեստ լեռը՝ ցուրտ պայմաններում: Պարզ է, որ նրանք պատրաստ չեն նման դժվարին և վտանգավոր ճանապարհորդություն կատարել, այնպես որ, անմիջապես տուն են վերադառնում:

Շատերի կարծիքով՝ ամուսնությունը նման է դեպի ծովափ ճանապարհորդությանը, բայց այն ավելի շուտ նման է լեռան գագաթը մագլցելուն: Ամուսնությունը բավականություն և ուրախություն է պատճառում, բայց այն նույնպես ծանր աշխատանք է: Թեև այս օրինակը կարող է մի փոքր անհեթեթ թվալ, սակայն ամուսնությունների «մահացությունը» մոտավորապես քսանհինգ անգամ ավելի է, քան էվերեստ լեռը մագլցողներինը6:

Ինչո՞ւ են էվերեստը բարձրացող լեռնագնացներն ավելի հաջողակ, քան ամուսնական զույգերը: Նրանք տեսիլք ունեն իրենց ճանապարհորդության մասին և գիտեն, թե ինչ ակնկալեն: Նրանք զարմանքից չեն ցնցվում, երբ բախվում են ավելի նոսր օդի, սառեցնող ցածր ջերմաստիճանի և անդադար փչող քամիների: Ցավոք, չափից շատ ամուսնություններ ձախողվում են անհիրատեսական սպասումների և տեսիլքի բացակայության պատճառով: Արժե, որ հիմա որոշ ժամանակ հատկացնեք՝ ծրագիր կազմելու համար:

Անել ամեն ինչ բարեհաջող կերպով

Ձեր պատմության ընթացքում Աստված կընդարձակի ձեր տեսիլքի սահմանները և գեղեցիկ կերպով կզարդարի այն: Նա երբեք չի կործանի այն կյանքը, որը դուք և ձեր կողակիցը կառուցում եք: Հնարավոր է՝ նեղություններով անցնելիս ձեզ թվա, որ Աստված փորձում է վերջ տալ ձեր պատմությանը: Հնարավոր է, որ դուք լցվեք բարկությամբ և հիասթափությամբ և Նրան մեղադրելու գայթակղություն ունենաք: Բայց և այնպես, իմացե՛ք, որ Աստված չէ ձեր նեղությունների հեղինակը, և որ Նա ամեն բան բարիին գործակից է դարձնում (տե՛ս Հռոմ. 8.28): Նրա շնորհքը և Նրա Հոգին երբեք չեն թողնի ձեզ. Նա խոստացել է, որ ոչ մի

դեպքում թույլ չի տա ձեզ՝ անցնել այնպիսի նեղություններով, որոնք չեք կարողանա հաղթահարել:

> «…բայց Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ՝ ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ՝ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթ. 10.13):

Երբեմն ձեզ կարող է թվալ, որ ամեն ինչ կործանվում է, բայց եթե հաստատ մնաք հույսի մեջ, դուք կկարողանաք հանդարտեցնել ձեր փոթորիկները: Երբ ամեն ինչ ասված և արված լինի, դուք կլսեք Տիրոջ խոսքը.

> «Լավ, բարի և հավատարիմ ծառա…» (Մատթ. 25.23):

Մի՞թե հետաքրքիր չէ, որ Տերն օգտագործում է «լավ», ոչ թե «կատարյալ» բառը: Մեզնից ոչ ոք կատարելապես չի վարվում այս կյանքում, բայց մենք կարող ենք ունենալ *լավ* կյանք և ամուսնություն: Սա նշանակում է՝ ապրել մեր ամուսնական կյանքը ողջամիտ կերպով և խոնարհությամբ, սովորելով մեր սխալներից և ձգտելով դեպի Աստծո շնորհքը, որպեսզի ստանանք լավագույնը, որը Նա ունի: Եթե դուք ընտրեք այս ճանապարհը, ձեր ամուսնությունը պարզապես չի գոյատևի, այլ ծաղկունք կապրի: Աստված հոգ կտանի, որ դուք բարեհաջող ավարտեք ձեր ընթացքը:

> «…Մենք ցանկանում ենք, որ ձեզնից ամեն մեկը… ունենա հույսի լիարժեք համոզվածություն մինչև վերջ, որպեսզի դուք ծույլ չլինեք, այլ նմանվեք նրանց, ովքեր հավատքով և համբերությամբ ժառանգում են խոստումները» (Եբր. 6.11,12, ESV):

Աստված ցանկանում է, որ դուք ժառանգեք Իր խոստումներն ամուսնության մասին: Հավակնե՛ք այն հույսին, որը տալիս է Նրա Հոգին: Համբերատա՛ր եղեք ձեր կողակցի հետ և հավատացե՛ք, որ ձեր ամուսնությունը կարող է փոխվել: Դուք կզարմանաք, երբ տեսնեք, թե ինչ կարող է անել Աստված ձեր՝ երկու ոչ կատարյալ մարդկանց կյանքերում, և ձեր միջոցով: Աստված ձգտում է կառուցել այնպիսի ամուսնություններ, որոնց պատմության ամենահետաքրքիր մասն ավարտն է, ոչ թե սկիզբը:

Սերտողություն. Օր. 1

ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ՝ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

«Որովհետև մենք Աստծո գլուխգործոցն ենք: Նա նորովի ստեղծել է մեզ Քրիստոս Հիսուսում, որպեսզի մենք կարողանանք անել այն բարի գործերը, որոնք շատ վաղուց ծրագրել է մեզ համար»:

— Եփեսացիների 2.10, NLT

Այն ամենը, ինչ Աստված ստեղծում է, նպատակ ունի, և ձեր ամուսնությունը բացառություն չէ: Նա ցանկանում է դարձնել այն Իր շնորհքի գլուխգործոցը՝ Իր Հոգու միջոցով, Ով անձամբ ներգրավված է ձեր կյանքում:

Հիշե՛ք այն ժամանակը, երբ դուք ամուրի էիք կամ նշանված էիք: Ինչպե՞ս էիք կանխատեսում ամուսնությունը: Ինչպիսի՞ իդեալական պատկերացումներ և գաղափարներ ունեիք ձեր սրտում և մտքում:

_____

_____

_____

Որքանո՞վ է ձեր ամուսնությունը տարբերվում ձեր պատկերացումներից:

_____

_____

_____

Աստված ծրագրել է ամուսնությունը՝ որպես ուխտ: Այն պայմանագիր է ամբողջ կյանքի համար՝ «մինչև մահը չբաժանի մեզ»: Ուխտի մասնակիցներից ամեն մեկը նվիրվում է և իր բոլոր ռեսուրսները տրամադրում է դիմացինին: Մեկի դժվարությունները դառնում են մյուսինը. երկուսն էլ երդվում են՝ պաշտպանել միմյանց և հոգալ մեկմեկու կարիքները:

Հեղինակներ և քարոզիչներ **Բոբ և Օդրի Մեյսներները** կիսվում են ուխտի մասին ունեցած իրենց գաղափարներով.

«Ուխտն աստվածային է: Աստվածաշունչը պարզ խոսում է այն օրհնությունների մասին, որոնք գալիս են, երբ մենք պահում ենք ուխտը: Դրանց թվում են Աստծո բարեհաճությունը, օրհնված ֆինանսները, ապահովությունը և վստահությունը, երկարատև կյանքը, առողջությունը և աստվածապաշտ բնավորությունը... Ճշմարիտ ուխտի պայմաններում մենք ազատորեն ընդունում ենք մեր ձախողումները և կրկնվող դժվարությունները, որովհետև գիտենք, որ չենք մերժվի, եթե ազնիվ լինենք: Մեր կողակիցը, ով մեզ հետ է դժվարությունների ընթացքում, ազատորեն կարող է խոսել ճշմարտությունը սիրով, որպեսզի օգնի մեզ՝ հաղթահարել մեր ձախողումները: Սա Քրիստոսի մեջ եղած ուխտի կյանքն է՝ լավագույն դրսևորմամբ»[7]:

Ի՞նչ է ձեզ ասում Աստված ուխտի մասին: Հարցրե՛ք ինքներդ ձեզ. *«Արդյո՞ք իմ ամուսնությունը՝ ուխտի ամուսնություն է: Ի՞նչ եմ ես պատրաստ անել՝ այդպիսի ամուսնություն ունենալու համար»:* Աղոթե՛ք և խնդրե՛ք Հոգուն՝ օգնել և զորացնել ձեզ:

Աստված մեծ նպատակ ունի ձեր ամուսնական ուխտի համար, որը վերաբերում է շատ ավելիին, քան ձեզ և ձեր կողակցին: Նա ցանկանում է, որ ձեր միությունը՝ Աբրահամի և Սառայի միության պես, ապագայում ճանապարհ բացի Իր սիրո և ճշմարտության համար: Հարցրե՛ք ինքներդ ձեզ և Տիրոջը. *«Ո՞ւմ վրա է ազդում իմ ամուսնությունը և ի՞նչ կերպով»:*

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, ինչպե՞ս կարող եմ փոխանցել Քո ուխտն իմ երեխաներին, թոռներին և այն մարդկանց, ովքեր իմ ազդեցության շրջանակում են»:

Լռությամբ մոտեցեք Աստծուն: Լսե՛ք, թե ինչ է Նա խոսում ներկա և գալիք օրերի մասին: Գրե՛ք Նրա ցուցումները և խնդրե՛ք Նրա շնորհքը՝ դրանց հնազանդվելու համար:

Սերտողություն. Օր 2

ԿՌՎԱԾ ՀՆՈՑԻ ՄԵՋ

«Ընկերնե՛ր, երբ կյանքն իսկապես դժվարանում է, մի՛ եզրակացրեք, որ Աստված չի գործում: Փոխարենը՝ ուրախ եղեք, որ դուք այն ամենի կենտրոնում եք, ինչ վերապրեց Քրիստոսը: Սա հոգևոր մաքրման ընթացք է, և փառքը շատ մոտ է ձեզ»:

— Ա Պետրոս 4.12,13, MSG

Ամուսնությունը հոգևոր մաքրման ընթացք է, և Աստված է, որ մաքրում է ձեզ: Նա չէ ձեր խնդիրների հեղինակը, բայց Նա կօգտագործի դրանք, որպեսզի դարձնի ձեզ և ձեր կողակցին ավելի նման Հիսուսին:

Եկեք անկեղծ լինենք. ոչ ոք չի սիրում նեղություններ: Եթե կարողանայինք շրջանցել դրանք, մենք այդպես էլ կանեինք: Բայց դժվարին ճանապարհն արժեք ունի:

Մի պահ մտորե՛ք այս ճշմարտությունների շուրջ, որոնք նեղությունների օգուտի մասին են: Մենք հատուկ ավելացումներ ենք արել, որպեսզի կարողանաք ուղղակիորեն վերագրել այս խոսքերը ձեր ամուսնությանը:

«Բայց [Աստված] գիտի ամեն մանրուք այն մասին, թե ինչ է կատարվում ինձ [և իմ կողակցի] հետ, և երբ Նա քննի ինձ, լիովին անմեղ կհամարի՝ այնքան մաքուր, որքան իսկական ոսկին»:

— Հոբ 23.10, TLB

«Դու մաքրել ես [իմ կողակցին և ինձ] կրակով, ո՜վ Տեր, ինչպես արծաթը հալոցում… Մենք անցանք կրակով և ջրերի հեղեղով: Բայց վերջում դու բերեցիր մեզ հարստության և մեծ առատության մեջ»:

— Սաղմոս 66.10,12, TLB

«Իսկական պարգև համարեք [ամուսիններ և կանայք], երբ փորձություններ և դժվարություններ եք ունենում ձեր կյանքում ամեն առումով: Դուք գիտեք, որ ճնշման ներքո ձեր հավատքի կյանքը հարկադրված բացահայտվում է և ցույց է տալիս իր իրական գույները: Այնպես որ, մի՛ փորձեք ազատվել որևէ բանից ժամա-

նակից շուտ: Թո՛ւյլ տվեք, որ այն կատարի իր գործը, որպեսզի դուք հասունանաք և լավ զարգանաք, և որևէ հարցում անկատար չլինեք»:

— Հակոբոս 1.2-4, MSG

«...Նեղությունները ցույց կտան, որ ձեր հավատքն իսկական է: Այն ստուգվում է այնպես, ինչպես որ կրակը ստուգում և մաքրում է ոսկին, թեև ձեր հավատքը շատ ավելի թանկ է ոսկուց: Այնպես որ, երբ ձեր հավատքը հաստատ մնա շատ նեղություններով անցնելիս, այն կբերի ձեզ [և ձեր կողակցին] մեծ գովասանք և փառք և պատիվ...»:

— Ա Պետրոս 1.7

Կարճ նկարագրե՛ք որևէ նեղության հնոց (կոնֆլիկտային իրավիճակ), որին դուք և ձեր կողակիցը ներկայումս բախվում եք:

_____

_____

_____

Ի՞նչ է ձեզ ցույց տալիս Սուրբ Հոգին ձեր, ձեր կողակցի և ձեր իրավիճակի մասին վերոնշյալ խոսքերի միջոցով:

_____

_____

_____

Եթե դուք իմանաք, թե ինչն է սխալ ձեր կողակցի մեջ, դա չի օգնի ձեզ՝ փոխվել: Փոփոխությունն սկսվում է, երբ իմանում եք, թե ինչն է պետք շտկել ձեզանում: Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, ի՞նչ է կատարվում իմ սրտում և մտքում: Ի՞նչ ես ձգտում փոխել: Արդյո՞ք ես սխալ համոզմունքներ ունեմ իմ մասին: Օգնի՛ր ինձ՝ լսել Քո ձայնը և հնազանդվել Քո պատվերներին, Հիսուսի անունով»:

Սուրբ Հոգին հայտնում է հետևյալ ճշմարտությունն իմ մասին...

_____

_____

_____

Սուրբ Հոգին դրդում է ինձ՝ անել հետևյալ քայլերը...

_____

_____

_____

ՀԱՎԱՏՔ, ՀՈՒՅՍ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

«Թող որ Աստված՝ հույսի աղբյուրը, լցնի ձեզ ուրախությամբ և խաղաղությամբ Իր հանդեպ ունեցած հավատքի միջոցով: Այդ ժամանակ դուք համակված կլինեք հույսով, Սուրբ Հոգու զորությամբ»:

— Հռոմեացիների 15.13, GW

Հավատքը շինանյութ է տրամադրում մեզ աներևակայելի ամուսնություն կառուցելու համար, իսկ հույսը՝ այդ աներևակայելի ամուսնության նախագիծն է, որը պետք է իրականացնել: Աստված՝ հույսի աղբյուրը, հավատք ունի ձեր և ձեր կողակցի հանդեպ: Շարունակե՛ք վստահել Նրան, և Նա կտա ձեզ Իր նախագիծը ձեր ամուսնության համար, նաև կզորացնի ձեզ, որ ունենաք ձեր երազանքների ամուսնությունը:

Հովիվ և հեղինակ **Ֆ. Բ. Մայերը** *«Աբրահամը կամ Հավատքի հնազանդությունը»* գրքում բացատրում է.

> «Հավատքն այն փոքրիկ սերմն է, որը պարունակում է քրիստոնեական կյանքի բոլոր հազվագյուտ բուրմունքները և պայծառ երանգները, որը միայն սպասում է սնուցմանը և Աստծո օրհնությանը: Երբ մարդը *հավատում է*, ընդամենը կրթության և ժամանակի հարց է, թե երբ կզարգանա այն սաղմը, որն արդեն նրա ներսում է… … Հավատքն այնքա՜ն լիարժեք կերպով է միավորում մեզ Աստծո Որդու հետ, որ մենք հավիտյան Մեկ ենք Նրա հետ, և Նրա բնավորության ամբողջ փառքը… վերագրվում է մեզ»[8]:

Այսպիսով, ի՞նչ է հավատքը: Որտեղի՞ց է այն ստացվում: Եվ ի՞նչ անել, որ այն ավելի ուժգին դառնա ձեր կյանքում: Ուշադրությամբ մտորե՛ք այս հատվածների շուրջ և գրե՛ք, թե ինչ է հայտնում ձեզ Սուրբ Հոգին:

Հռոմեացիների 1.11,12, 10.17, 12.3 • Եբրայեցիների 11.1,6 • Եփեսացիների 2.8 • Կողոսացիների 2.6-8

Հավատքի հետ միասին, դուք կարիք ունեք ստանալու Աստծուց տրված նախագիծը ձեր միության համար: Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Տե՛ր, իմ և իմ կողակցի սրտում դի՛ր Քո աստվածային գծագիրը մեր ամուսնության համար: Ինչպես որ Աբրահամին տվեցիր երկնքի աստղերի օրինակը, այնպես էլ մեր սրտերում դաջի՛ր այնպիսի պատկեր, որը մենք կարող ենք հասկանալ և հավիտյան հիշել, Հիսուսի անունով»: Ուշադի՛ր եղեք, լսե՛ք և գրե՛ք այն, ինչ Տերը հայտնում է:

Կա մի բանալի առաքինություն, որը դուք պետք է ունենաք, որպեսզի հավատք և հույս ստանաք: Այն *խոնարհությունն* է: Խոնարհությունն ասում է. «Ես ոչինչ չեմ կարող առանց Քեզ, Տե՛ր, բայց ես կարող եմ ամեն բան Քո միջոցով»: Երբ դուք խոնարհ սիրտ ունեք, ձեր ամուսնությունը կստանա լավագույնը, ինչ ունի Աստված:

Տասնիններորդ դարի հեղինակ և հովիվ **Էնդրյու Մյուրին** ասել է. «Հիսուսը եկավ, որպեսզի վերադարձնի խոնարհությունն այս երկիր, դարձնի մեզ դրա *բաժնեկիցները* և փրկի մեզ դրանով… Նրա խոնարհությունը՝ մեր փրկությունն է: Նրա փրկությունը՝ մեր խոնարհությունն է… *Մենք ճշմարտապես խոնարհ ենք դառնում միայն՝ շնորհիվ Քրիստոսի, Ով բնակվում է մեզանում Իր աստվածային խոնարհությամբ»*[9]:

Ուշադրությամբ մտորե՛ք այս խոսքերի շուրջ: Ի՞նչ է Աստված հայտնում ձեզ:

Մատթեոս 11.28-30 • Հովհաննես 13.1-17 • Փիլիպեցիների 2.1-11 • Հակոբոս 4.6 • Ա Պետրոս 5.5

*«…Ընդունե՛ք կյանքը **խոնարհությամբ** և համբերությամբ՝ զիջելով մեկդ մյուսին, քանի որ դուք սիրում եք իրար: Թող Հոգու մեջ միաբան լինելը դառնա ձեր նպատակը, և դուք անխուսափելիորեն խաղաղություն կունենաք իրար հետ»:*

— Եփեսացիների 4.2,3, Phillips

ՄԻԱՍԻՆ ԵՐԱԶԵՔ ՄԵԾ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երկուսը կարող են իրականացնել ավելին, քան մեկը՝ կրկնակի գործելու դեպքում, որովհետև նրանց արդյունքները շատ ավելի լավը կլինեն... Երեքն ավելի լավ է, որովհետև եռապատիկ թելը հեշտ չի կտրվում»:

— Ժողովող 4.9,12, TLB

Աստծո ծրագիրը յուրաքանչյուր ամուսնու և կնոջ համար՝ ամուսնության մեծության մեջ ապրելն է: Երբ Նրա Սուրբ Հոգին ձեր միության կենտրոնում է, դուք և ձեր կողակիցը կարող եք մեծ բաների հասնել:

Ցանկանո՞ւմ եք բարձր մակարդակի կյանք ունենալ: Ժամանակ տրամադրեք մեծ բաների մասին երազելուն: Այս գլխի վերջում մենք կսովորեցնենք ձեզ գրել ձեր ամուսնության տեսիլքը: Հենց հիմա դուք կարող եք պատրաստվել ձեր տեսիլքը կազմելուն:

Անվանե՛ք մի քանի վայրեր, որտեղ դուք և ձեր կողակիցը հաճույքով եք ժամանակ անցկացնում, որոնք հանգստություն են պարգևում ձեզ, և որտեղ դուք կարող եք ազատորեն երազել:

_____

_____

_____

Քննարկե՛ք ձեր պատասխանները, իսկ հետո ընտրեք մեկ կամ ավելի վայրեր, որտեղ կարող եք ժամադրվել՝ միասին երազելու համար:

Միասին երազելիս դուք և ձեր կողակիցը կարող եք անկեղծորեն կիսվել և պատկերացնել այն զարմանալի գործերը, որոնք երկուսով կարող եք անել՝ Աստծո ուժով, իմաստությամբ, բարեհաճությամբ և մատակարարմամբ: «Որպես զույգ՝ ի՞նչ կարող եք միասին անել, որպեսզի ավելի մեծ արդյունքների հասնեք»,– հարցնում են հեղինակներ **Բիլ և Փեմ Ֆարելները**:- «Կշռադատված եղեք... որպեսզի իմանաք, թե արդյոք գնո՞ւմ եք դեպի ձեր երազանքը: Դուք պետք է մի շարք նպատակներ գրի առնեք, որոնք ցույց կտան, թե ինչպես հասնեք ձեր երազանքին: Նպատակը պետք է լինի *որոշակի... իրատեսական...* [և] *հասանելի՝ Աստծո օգնությամբ»*[10]:

Նպատակներ որոշելու մասին մենք ավելի շատ կխոսենք հաջորդ օրվա ընթերցանության նյութի մեջ: Իսկ այժմ, ի՞նչ երազանքներ կան ձեր սրտում: Մտածե՛ք այն մասին, թե ինչ եք ցանկանում ձեր փոխհարաբերությունների, երեխաների դաստիարակության, ֆինանսական ապահովության, կրթության և կարիերաների, տուն գնելու կամ կառուցելու, թոշակի անցնելու համար և այլն:

Իմ ամենամեծ երազանքները մեր ամուսնության մասին՝ հետևյալն են...

_____

_____

_____

Կիսվե՛ք ձեր երազանքներով և գրի՛ առեք դրանք, իսկ հետո խնդրեք ձեր կողակցին՝ կիսվել իր երազանքներով և գրի առնել դրանք:

Իմ կողակցի ամենամեծ երազանքները մեր ամուսնության մասին՝ հետևյալն են...

_____

_____

_____

Արդյո՞ք ձեր երազանքները որոշ չափով համընկնում են: Կա՞ն արդյոք ընդհանրություններ: Քննարկե՛ք սա միասին:

Ամենամեծ ընդհանուր երազանքները մեր ամուսնության մասին՝ հետևյալն են...

_____

_____

_____

Հիշե՛ք. «Դուք գիտեք, որ Աստված կարող է անել ամեն ինչ՝ շատ ավելին, քան երբևէ պատկերացրել, կռահել կամ խնդրել եք ձեր ամենամեծ երազանքներում» (Եփես. 3.20, MSG): Աղոթքով հանձնե՛ք ձեր երազանքները Տիրոջը և խնդրե՛ք, որ ցույց տա ձեզ այն հստակ քայլերը, որոնցով կարող եք մոտենալ ձեր երազանքներին:

ԳՐԵ՛Ք ՁԵՐ ՏԵՍԻԼՔԸ

«...Գրի՛ր տեսիլքը և պարզ դարձրու այն նշանակիր տպիտակների վրա...»:

— Ամբակում 2.2, KJV

Այժմ երբ դուք և ձեր կողակիցը սկսել եք միասին երազել, հաջորդ քայլը՝ ձեր տեսիլքը գրի առնելն է: Տեսիլք ունենալը նշանակում է՝ ունենալ իրատեսական երազանք ձեր ամուսնության վերաբերյալ, որի համար դուք և ձեր կողակիցը կարող եք միաբան գործել Աստծո առաջնորդությամբ և շնորհքով:

Հեղինակ, պրոֆեսոր և ընտանեկան խորհրդատու **Հ. Նորման Ռայթն** արժեքավոր գաղափարներ է առաջարկում տեսիլքների վերաբերյալ.

«**Տեսիլքը** կարելի է սահմանել որպես *կանխատեսում*, որն արվում է՝ կարևորելով տեղեկությունները ներկա հանգամանքների և հնարավորությունների մասին և արժևորելով անցյալից քաղած դասերը: Տեսիլքը նույնպես կարելի է սահմանել որպես՝ *տեսնել անտեսանելին կամ տեսանելի դարձնել այն:* Այն նշանակում է՝ ունենալ պատկեր ձեր մտքում այն մասին, թե ինչպես պետք է լինի կամ ինչ կարող է լինել գալիք օրերում: Տեսիլքը նույնպես *դիմանկար է, որի վրա պատկերված են դեռևս գոյություն չունեցող պայմանները:* Այն նշանակում է՝ ի վիճակի լինել ավելի կենտրոնանալու ապագայի վրա, քան խճճվել անցյալի կամ ներկայի մեջ: Տեսիլքն ավելի լավ ապագա ստեղծելու ընթացք է՝ Աստծո զորացմամբ և առաջնորդությամբ»[11]:

Հաջողակ ամուսնական տեսիլքն ունի բացարձակ սկզբունքներ և արժեքներ: Արագորեն գրի՛ առեք մի քանի չափանիշներ, որոնք քննարկման ենթակա չեն, և որոնց դուք և ձեր կողակիցը ցանկանում եք համապատասխանել՝ առանց փոխզիջման գնալու:

_____

_____

_____

_____

_____

Օրինակ՝ խուսափել վիճաբանություններից, խուսափել պարտքեր վերցնելուց, մշտապես պատրաստ լինել ներելու համար, երբեք չնվաստացնել միմյանց և այլն:

Կրկին կարդացե՛ք տեսիլքի սահմանումը, որը գրել է Ռայթը: Ի՞նչ է այն ասում ձեզ: Ինչպիսի՞ **կարճաժամկետ նպատակներ** ունեք ձեր ամուսնության համար՝ այնպիսի բաներ, որոնց դուք և ձեր կողակիցը ցանկանում եք հասնել հաջորդ տարի:

Ինչպիսի՞ **միջին ժամկետայնության նպատակներ** ունեք ձեր ամուսնության համար: Ինչպիսի՞ նպատակների եք ցանկանում հասնել հաջորդ՝ հինգից տասը տարվա ընթացքում: Հիշե՛ք, որ պետք է լինեք հստակ և իրատեսական և կենտրոնանաք այն բանի վրա, թե ինչ եք ցանկանում տեսնել:

Ինչպիսի՞ **երկարաժամկետ նպատակներ** ունեք ձեր ամուսնության համար: Կա՞ն արդյոք հստակ նպատակներ, որոնց դուք ցանկանում եք հասնել հաջորդ քսան կամ երեսուն տարվա ընթացքում: Մտածե՛ք թոշակի անցնելու, թոռների, ծառայության, հանգստի կամ ճանապարհորդությունների մասին և այլն:

«Բայց այս բաները, որոնք Ես ծրագրում եմ, անմիջապես տեղի չեն ունենա: Դանդաղ, կայուն և հաստատուն կերպով մոտենում է ժամանակը, երբ այս տեսիլքը կիրականանա: Եթե թվում է, թե այն դանդաղում է, մի՛ հուսահատվիր, որովհետև այս բաներն անպատճառ կիրականանան: Միայն թե համբերատար եղիր: Դրանք չեն ուշանա նույնիսկ մեկ օրով»:

— Ամբակում 2.3, TLB

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 2-ը:

1 | Շատ ամուսնացած զույգեր ապրում են «գոյատևման ռեժիմով»: Բայց Աստված չի ցանկանում, որ ամուսնությունները հազիվ գոյատևեն: Նա ցանկանում է, որ ամուսնությունները ծաղկունք ապրեն: Մի քանի րոպե հատկացրեք և կիսվեք, թե ինչու է կարևոր ունենալ այնպիսի տեսիլք ձեր ամուսնության համար, որն ավելի մեծ է, քան ձեր և ձեր կողակցի կարիքները:

2 | Անկասկած՝ ամուսնության ընթացքում կբախվեք դժվարությունների: Դուք և ձեր կողակիցը երկու անհատներ եք, որոնք մեկ դառնալու ընթացքի մեջ են: Եբրայեցիների 12.2,3-ը տրամադրում է մեզ փորձված ծրագիր՝ խնդիրները հաղթահարելու համար: Ուշադրությամբ կարդացե՛ք այս հատվածը և որոշե՛ք Աստծո մարտավարությունը, որն է՝ մաքուր ոսկու պես դուրս բերել ձեզ մաքրման հնոցից:

«Հառե՛ք ձեր հայացքը Հիսուսին, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այս ընթացքը, որում մենք գտնվում ենք: Ուսումնասիրե՛ք, թե ինչպես Նա արեց դա: Քանի որ Նա երբեք չհեռացրեց Իր հայացքն այնտեղից, որտեղ գնում էր՝ այն ուրախալի ավարտից Աստծո մեջ և Աստծո հետ, ճանապարհին Նա կարողացավ դիմանալ ցանկացած բանի՝ Խաչին, ամոթին և ամեն ինչի: Իսկ հիմա Նա այնտեղ է՝ պատվի վայրում, անմիջապես Աստծո կողքին: Երբ պարզեք, որ տկարանում եք ձեր հավատքի մեջ, կրկին կետ առ կետ կարդացե՛ք այս պատմությունը՝ թշնամանքի այդ երկար շարանը, որը Նա անշեղորեն անցավ: Դա աղրեանալիին լիցք կհաղորդի ձեր անձերին»:

— Եբրայեցիների 12.2, MSG

3 | Հպարտությունը թույլ չի տալիս մեզ՝ վայելել լավագույնը, ինչ Աստված ունի մեզ համար: Արդյո՞ք թույլ եք տվել, որ հպարտությունը սահմանափակի տեսիլքը ձեր ամուսնության մասին: Ի՞նչ պետք է փոխեք, որպեսզի իրականություն դարձնեք այն ամուսնությունը, որն Աստված պատրաստել է ձեզ համար:

4 | Երջանիկ և առողջ ամուսնությունները, որոնք մեծության են հասնում, տեսիլք ունեն: Լավ տեսիլքը սատարվում է իրատեսական ծրագրով: Ամեն մի զույգ հարմարեցնում է իր ծրագիրը, և թե՛ ամուսինը, թե՛ կինը նվիրվում են դրա իրականացմանը: Ամուսնության մեջ անվանեք որոշ բնագավառներ, որոնցում անհրաժեշտ է մանրամասն տեսիլք ունենալ: Ինչո՞ւ է հստակ ծրագիր գրելն օգտակար և խիստ կարևոր: Ինչո՞ւ է կարևոր, որ այդ տեսիլքը հարմարեցվի և փոփոխվի ժամանակի ընթացքում:

Ավագներ. Հանձնարարե՛ք ձեր խմբակին՝ կարդալ Ամբակում 2.2,3-ը և Առակաց 29.18-ը:

5 | Մատթեոս 25.23-ում «բարի և հավատարիմ» ծառան գովեստի արժանացավ՝ իր տիրոջ կողմից վստահվածը «լավ» տնտեսելու համար: Կատարյալ ամուսնությունը և լավ ամուսնությունը նույնը չեն: Ինչպե՞ս կարող է կատարելության ակնկալիքը թույլ չտալ մեզ, որ լավ ամուսնություն ունենանք: Ի՞նչ է նշանակում լավ ամուսնությունը՝ մեր չափանիշների, դիրքորոշումների կամ սխալներին արձագանքելու տեսանկյունից:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Ձեր ամուսնության պատմությունը չի վերաբերում միայն ձեզ: Այն վերաբերում է յուրաքանչյուր մարդու, ում դուք և ձեր կողակիցը կհանդիպեք ձեր ամբողջ կյանքի ընթացքում, և այն ազդեցություն է թողնում գալիք սերունդների վրա՝ ձեր ժառանգության միջոցով:
- Ամուսնությունն ստեղծում է Քրիստոսին նմանվելու իդեալական միջավայր թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար: Այն մեծ փառք է բերում Աստծուն, քանի որ Աստված հայտնի է դառնում ամուսնության միջոցով:
- Հավատքը շինանյութ է իդեալական ամուսնության համար, որը դեռ իրականություն չի դարձել: Հույսը այն նախագիծն է կամ Աստծուց տրված տեսիլքը, որը կառուցվում է հավատքի միջոցով:
- Խոնարհությունը դուռ է բացում լավագույնի համար, ինչ Աստված ունի: Խոնարհության միջոցով մենք ընդունում ենք Աստծո շնորհքը (զորացումը), որպեսզի վերապրենք ամուսնության մեծությունն այնպես, ինչպես Նա ծրագրել է:
- Անկախ ձեր ամուսնության ներկա դրությունից՝ այն կարող է վերածվել երկարատև և երջանիկ կյանքի:
- Գրե՛ք կյանքով լեցուն տեսիլք ձեր ամուսնության մասին, որը զարգանալու է ժամանակի ընթացքում և ընդգրկելու է ձեր հույսերը, երազանքները և անփոփոխ չափանիշները:

ԵՐԵՔ

Մաքրե՛ք տախտակամածը

Մաքրել տախտակամածը (բայ). Պատրաստվել որոշակի իրադարձության կամ նպատակի՝ նախապես հարթելով այն ամենը, ինչը կարող է խոչընդոտել առաջընթացը[1]*:*

Օր 1

Այս ծովային տերմինը սկզբնականորեն հրաման էր, որը տրվում էր մարտի պատրաստվող նավի վրա: Այն լսելուն պես, նավաստիները գիտեին, որ պետք է հեռացնեն ցանկացած գործիքներ, պարաններ կամ այլ նավասարքեր, որոնք կխանգարեն նրանց՝ ազատորեն տեղաշարժվել նավի վրա[2]: Այսօր այս տերմինը վերաբերում է ցանկացած պատրաստությանը, որը թույլ է տալիս՝ գործի անցնել՝ առանց խոչընդոտների:

Նախորդ գլխում խոսեցինք ամուսնության մասին՝ որպես գործուն և կենդանի նախագծի: Այս գլխի նպատակն է՝ անդրադառնալ ցանկացած խնդրի, որը կարող է թույլ չտալ ձեզ՝ առաջ շարժվել և վերապրել ամուսնության մեծությունը: Նավի տախտակամածն ազատելն ունի նպատակ՝ թույլ չտալ, որ պարանները խճճվեն: Եթե տախտակամածը պատված է խճճված պարաններով կամ թափթփված վիճակում է, անբարենպաստ հանգամանքների կամ փոթորկոտ ծովի դեպքում դուք հեշտորեն կարող եք սայթաքել այն առարկաների պատճառով, որոնց կողքով պարզապես կանցնեիք հանդարտ նավարկության դեպքում:

Մենք ցանկանում ենք օգնել ձեզ՝ նավարկել դեպի ապագան՝ վերցնելով այն ամենը, ինչ հարկավոր է ձեզ, և միևնույն ժամանակ դուրս նետելով նավից այն ամենը, ինչը կծանրացնի ձեր ընթացքը կամ կխարսխի ձեզ դեպի ձեր անցյալը: Շատ հաճախ մարդիկ ոչ միայն սայթաքում են տախտակամածի վրա և վնասվում են, այլև ընկնում են նավից և կորում ծովում:

Աստծո ծրագիրն ամուսնության համար անթերի է: Բայց և այնպես, թվում է՝ ամուսնությունն ընդգծում է ամուսիններից յուրաքանչյուրի թերություններն ավելի, քան ցանկացած այլ հաստատություն: Մինչև որ կվարեք երթուղուց լիովին շեղված նավը՝ պատռված առագաստներով, կորցրած ուղեբեռով, ճեղքեր ունեցող նավամբարներով և կտրատված պարաններով, փոխարենը մենք ցանկանում ենք օգնել ձեզ, որ ճիշտ ուղղորդեք ձեր նավը:

Եկեք շարունակենք օգտագործել մեր ծովային այլաբանությունը: Երբ մարդիկ հրաժարվում են ողջամտորեն լուծել հիմնավոր խնդիրները, որոնք առաջանում են փոխհարաբերությունների մեջ, նրանք ասես ծով դուրս գան՝ խցանելով այն բացվածքը, որն առաջացել է նավի հատակին: Դա կգործի որոշ ժամանակ, բայց ուժգին ճնշման դեպքում, խցանը դուրս կգա իր տեղից:

Մենք չենք ցանկանում, որ դուք սայթաքեք կամ խորտակվեք: Մենք ցանկանում ենք, որ ձեր ամուսնությունը նման լինի տապանի, և կարողանա դիմանալ ցանկացած փոթորկի, որին դուք կհանդիպեք: Աշխատելով նախորդ գլխում նշված ամուսնության նախագծի վրա՝ դուք արդեն նկատած կլինեք որոշ խնդիրներ, որոնք պետք է լուծեք, մինչև որ կկարողանաք շարժվել դեպի ձեր տեսիլքը: Այնպես որ, եկեք հեռացնենք ամեն մի փոխզիջում և թերություն, որն արմատացած է եսասիրության, հպարտության և վիրավորանքի մեջ: Եկեք ազատվենք ամեն մի անեծքից, որը սահմանափակում է մեզ, ամեն մի վախից, որը կապում է մեզ, և թույլ տանք, որ հույսը լինի մեր խարիսխը:

Մեր սկիզբը

Մենք գիտենք, թե որքա՜ն կարևոր է «տախտակամածը մաքրելը», քանի որ մենք այդպես չսկսեցինք մեր ամուսնությունը: Մենք հաճախում էինք նախամուսնական խորհրդատվության, բայց իրա-

կանում չէինք լսում: Երբ մեր խորհրդատուն փորձում էր սովորեցնել մեզ, թե ինչպես նավարկել վեճերի և ալեկոծվող ջրերի միջով, մենք մտածում էինք. *«Վեճե՞ր: Մենք երբե՛ք չենք վիճելու: Աստված է միաբանել մեզ: Այս խորհուրդներն այն մարդկանց համար են, ովքեր մեզ պես սիրահարված չեն: Աստծո ձեռքը մեզ վրա է»:*

Ամուսնությունից ընդամենը մի քանի շաբաթ անց խնդիրներն սկսվեցին: Երկար ժամանակ չպահանջվեց՝ հասկանալու համար, թե որքա՜ն սխալ էինք մենք: Մենք ամուսնացանք՝ մտածելով, որ կատարյալ զույգ ենք, բայց շուտով սկսեցինք ավելի ու ավելի պարզ տեսնել մեկս մյուսի թերությունները: Մենք մեծ ջանք գործադրեցինք՝ միմյանց փոխելու համար: Արդյունքում՝ մեր երանելի ամուսնությունը վերածվեց պայքարի՝ երկու ուժեղ կամք ունեցող մարդկանց միջև. ինչպես երկաթն է սրվում երկաթով[3]:

Մենք դեռ չէինք գիտակցում, որ մեր միությունը թույլ և փխրուն էր: Այո՛, մենք խորապես նվիրված էինք իրար, բայց շատ բարձր կարծիք ունեինք մեր բնավորությունների մասին, հատկապես համբերության և անձնազոհության հարցերում: Մենք ավելի շատ թերություններ ունեինք, քան պատրաստ էինք ընդունել: Նույնիսկ մեր դրական կողմերն անհրաժեշտ էր ավելի ամրացնել, որպեսզի դրանք դիմանային սպասվող դժվարություններին:

Փոխարենը թույլ տայինք, որ Աստված «մաքրեր մեր տախտակամածը», մենք ցանկանում էինք անել դա մեկս մյուսի հետ: Այն զույգը, որը հավատում էր, որ Երկինքն ստեղծել է իրենց՝ մեկը մյուսի համար, ընկել էր երանությունից: Մենք դեռ ժպտում էինք եկեղեցում, բայց մեր ընտանեկան կյանքն ավելի շատ սկսում էր նմանվել *«Ըմբշամարտի համաշխարհային ֆեդերացիայի» հեռուստահաղորդումներին:*

Մեր ամուսնության առաջին տարվա ընթացքում մի օր մեր միջև խիստ լարվածություն առաջացավ: Ջոնը չէր ցանկանում, որ ես (Լիզան) դուրս գնայի սենյակից, և պատվիրեց ինձ՝ նստել մեր մահճակալին: Այդ առավոտ ես ցանկանում էի արագ դուրս գնալ, քանի դեռ չէի ասել այնպիսի բան, ինչի պատճառով զղջալու էի: Ես շարժում արեցի դեպի դուռը, երբ նա փորձեց կրկին նստեցնել ինձ մահճակալին, որպեսզի խոսեր ինձ հետ: Իմ շարժման և Ջոնի հրելու արդյունքում ես ընկա հատակին:

Ես վեր ցատկեցի՝ հատակին դրված լամպը ձեռքիս: Ջոնը նայեց ինձ սարսափահար հայացքով՝ չհավատալով աչքերին:

– Ինչի՞դ է սա պետք,– հարցրեց նա:

– Չգիտեմ,– ցածրաձայն ասացի ես:

Այդ դրվագն այնքա՜ն անհեթեթ էր, որ երկուսս էլ հանդարտվեցինք և խոսեցինք մեր խնդրի մասին, բայց դրա արմատը դեռ լուծված չէր:

Այդ դեպքից մի քանի օր անց ես ճաշում էի ընկերուհիներիցս մեկի հետ: Նա բավականին երկար ժամանակ էր՝ ամուսնացած էր, քան ես, այնպես որ մտածեցի, որ նրա հետ կարող էի կիսվել իմ ամուսնական դժվարություններով: Բայց հատակի լամպի դեպքը պատմելու փոխարեն, որոշեցի ավելի աննկատ սկսել խոսակցությունը: Ես հարցրի անլուրջ կերպով.

– Պատահե՞լ է, որ վիճես ամուսնուդ հետ և հանկարծ հասկանաս, որ կանգնած ես՝ հատակի լամպը ձեռքիդ:

Նա նայեց ինձ՝ ցույց տալով, որ իմ հարցն անհեթեթություն էր.

– Ո՜չ:

– Ինձ հետ՝ նույնպես,– արագ պատասխանեցի ես:

Իհարկե, ես ստում էի: Հավանաբար, ընկերուհիս կռահեց, որ իմ պատահական թվացող հարցն օգնության աղաղակ էր, բայց կեղծավորությունը մեր ամուսնությունների վերաբերյալ թույլ չտվեց մեզ շարունակել այդ խոսակցությունը:

Ե՛վ Զոնին, և՛ ինձ թվում էր, թե մենք փակուղու առջև էինք: Մեր ամուսնության մեջ լուրջ խնդիրներ էին առաջանում, բայց չգիտեինք, թե ում դիմենք: Եկեղեցում մենք թաքցնում էինք մեր պայքարը և քողարկում մեր տառապանքը: Մենք գիտեինք, որ մեր տարաձայնություններն ավելի էին սրվում, բայց չգիտեինք՝ ինչ անել: Անհուսությունը և ամոթը, որոնք առաջացան մեր իրավիճակի պատճառով, ավելի վատթարացրին ամեն ինչ: Արդյունքում՝ լարվածությունը մեր տանը անտանելի դարձավ:

Եվ դա տեղի ունեցավ: Մեր կոնֆլիկտը հասավ կիզակետին, երբ ես (Զոնը) հարվածեցի Լիզային: Մինչ այդ միջադեպը ես արդեն ուժ էի գործադրում մեր վեճերի մեջ (ես հրում էի Լիզային), բայց դա առաջին անգամն էր, երբ հարվածեցի նրան: Անմիջապես գիտակցելով իմ արարքը՝ ես սարսափեցի և խղճի սաստիկ խայթ զգացի: Լիզան պատասխան հարված հասցրեց ինձ, իսկ հետո փակվեց լոգարանում: Երկուսս էլ պառկեցինք քնելու՝ զգալով, որ ինչ-որ բան կորած է:

Հաջորդ առավոտյան, մինչ երկուսս էլ պատրաստվում էինք աշխատանքի գնալ, Լիզան անխոս էր և ավելի հեռու: Թվում էր՝ մեր փոխհարաբերությունները զրկվել էին սրբությունից և վստահությունից: Երկուսս էլ աշխատում էինք լրիվ դրույքով, և մինչև աշխատանքային շաբաթվա ավարտը մեր միջև հեռավորությունը ավելի մեծացավ: Այդ ժամանակ Լիզան վաճառքի պատասխանատու էր, և նա դիտավորյալ երկար էր մնում աշխատավայրում՝ ստուգելով իր տարածքի խանութները և խուսափելով ինձ հետ շփվելուց: Երբ նա, ի վերջո, տուն էր գալիս, հրաժարվում էր խոսել կամ ընթրել ինձ հետ, այլ անմիջապես գնում էր ննջասենյակ, պառկում էր և սկսում էր կարդալ: Ես սպասում էի շաբաթվա վերջին, որպեսզի վերջապես կարողանայինք հարթել այն, ինչ տեղի էր ունեցել:

ԻՄ ԵՐԴՈՒՄԸ

Երբ դեռ երիտասարդ էի, ես (Լիզան) երդվել էի, որ եթե իմ ապագա ամուսինը երբևէ հարվածի ինձ, ես կլքեմ նրան: Ես մեծացել էի շատ անկայուն ընտանիքում և սարսափով էի մտածում, որ ինքս կարող էի բռնության զոհ դառնալ: Երբ Ջոնը հարվածեց ինձ, ես հիշեցի իմ երդման մասին: Ես պետք է որոշում կայացնեի, որը կարող էր լիովին փոխել կյանքս: Կարո՞ղ էի արդյոք պահպանել իմ ամուսնությունը: Կարո՞ղ էի արդյոք սիրել և նվիրվել մի մարդու, ով հարվածեց ինձ:

Աշխատավայրում բոլորը նկատել էին, որ ինչ-որ բան խորապես անհանգստացնում էր ինձ: Իմ ղեկավարներից մեկը կռահեց, թե ինչ էր տեղի ունենում: Այդ կինը հորդորեց ինձ՝ անմիջապես և առանց վարանելու թողնել Ջոնին: Ես սպասում էի շաբաթվա վերջին, որպեսզի դուրս հանեի Ջոնին մեր տնից: Իմ աշխատակիցների հետ խոսելուց բացի՝ ես կարդում էի Դոկտոր Ջեյմս Դոբսոնի *«Սերը պետք է խիստ լինի»* գիրքը, որը դրդեց ինձ՝ ուռճացնել իմ իրավիճակը՝ հասցնելով այն ճգնաժամի:

Այդ երեկո, երբ Ջոնը վերադարձավ աշխատանքից, նա չկարողացավ տուն մտնել: Ես փակել էի դռան սողնակը, որը բացվում էր միայն ներսից: Այդ ժամանակ դեռ բջջային հեռախոսներ չկային, այնպես որ, նա կանգնեց դռան առջև և կանչեց. «Լի՛զա, ես եկե՛լ

եմ: Նե՛րս թող ինձ»: Վերջապես, ես բացեցի պատուհանը և ասացի, որ տեղյակ եմ, որ արդեն եկել է, բայց պետք է մեկ այլ տեղ գտնի գիշերելու համար: Ջոնը չհավատաց լսածին: Որոշ ժամանակ անց նա հասկացավ, որ ես ներս չէի թողնելու նրան, և որոշեց գիշերել ընկերներիցս մեկի տանը՝ աղոթքի և ծոմապահության պատրվակով:

Այժմ, երբ մենակ էի մնացել, որոշեցի լրջորեն խոսել Աստծո հետ: Կարծում եմ՝ իմ աղոթքն սկսվեց մոտավորապես այսպես. «Դե՛ ինչ, Աստվա՛ծ, ահա թե ինչ եմ առաջարկում Քեզ: Քանի դեռ Ջոնը տանը չէ, նա պետք է հայտնություն ստանա այն մասին, թե որքա՞ն սարսափելի է վարվել ինձ հետ: Միգուցե Դու վատ երազ տաս նրան կամ վախեցնես կայծակով: Միայն թե, խնդրո՛ւմ եմ, մի՛ սպանիր նրան, որովհետև մեր կյանքի ապահովագրության գումարը չի բավականացնի այդ ծախսերը հոգալու համար»:

Բայց որքան աղոթում էի Ջոնի համար, միակ մարդը, ում մասին Աստված խոսում էր ինձ հետ, ես էի: Աստված չէր ցանկանում ինձ հետ քննարկել Ջոնի խնդիրները, բայց ցանկանում էր ցույց տալ իմ սրտի վիճակը: Նա ասաց ինձ. «Լի՛զա, դու գերբնական միջամտության կարիք ունես քո ամուսնության մեջ: Եվ եթե ցանկանում ես գերբնական միջամտություն ունենալ քո ամուսնության մեջ, դու պետք է գործես գերբնական ձևով: Սա նշանակում է, որ դու պետք է ներես, նույնիսկ երբ կարծում ես, որ դիմացինդ արժանի չէ դրան»:

Աստված շարունակ ասում էր ինձ. «Լի՛զա, դու հաշիվ ես պահանջում Ջոնից»:

Հաշիվ պահանջելը

Երբ Ջոնը և ես վիճում էինք, պարզապես չէինք խոսում որևէ առկա խնդրի մասին: Մենք օգտագործում էինք այն, ինչը կուտակել էինք մեր՝ ամիսներ տևող ամուսնության ընթացքում, որպեսզի նվաստացնեինք և վարկաբեկեինք իրար: Վիրավորանքների, դատապարտության և դառնության մշտապես աճող ցուցակը մեր բոլոր անհամաձայնությունների հիմքն էր: Նույնիսկ փոքրիկ վիճաբանությունները վերածվում էին առասպելական չափերի հասնող բախումների:

Ես՝ այդ ձգձգվող վեճերի ամենամեծ հանցավորը, չէի ցանկանում ներել այն վիրավորանքները, որոնք Ջոնը հասցրել էր ինձ: Այն

վերքերի պատճառով, որոնք բերել էի մեր ամուսնության մեջ, ես վախենում էի, որ եթե ներեի նրան, վտանգի կենթարկեի ինձ, թե՛ ֆիզիկապես, թե՛ զգացմունքորեն: Այնուամենայնիվ, Աստված ասաց ինձ, որ թեև Ջոնը հեռու էր կատարյալ լինելուց, նա արժանի էր իմ ներմանը:

Ես շարունակ փորձում էի՝ ուղղել Աստծո ուշադրությունը Ջոնի վրա, բայց ապարդյուն:

– Ինչո՞ւ միշտ ե՛ս պետք է փոխվեմ,– աղերսում էի,– հուսով եմ՝ Դու կասես նույնը Ջոնին, որովհետև Նա չի փոխվի, մինչև Դու չխոսես նրա հետ:

Բայց այդ ամենի միջոցով Աստված ցույց էր տալիս հենց իմ սրտի արատավորությունը: Հպարտությունը և եսասիրությունը շուտով բարձրացրին իրենց գարշելի գլուխները: Հանկարծ ես սկսեցի մտածել, թե ինչ կասեին մարդիկ, եթե կիրակի առավոտյան Ջոնը և ես միասին նստած չլինեինք եկեղեցում կամ ձեռք ձեռքի բռնած չլինեինք: Ես որոշեցի, որ թույլ կտամ նրան՝ ժամանակին տուն վերադառնալ, որպեսզի հասցնի հագնվել և եկեղեցի գնալ ինձ հետ միասին. թող բոլորը մտածեն, որ մեզ մոտ ամեն ինչ լավ է: Ես մտահոգված չէի Ջոնով, և ո՛չ էլ՝ մեր փոխհարաբերություններով, այլ՝ թե ինչ էին մտածում մարդիկ մեր մասին: Իմ հպարտությունը թույլ չէր տալիս ինձ՝ վերապրել Աստծո շնորհքի վերափոխող զորությունը հենց այն հարցում, որում ես ամենից շատ ունեի դրա կարիքը:

Ի վերջո, ես դադարեցի պայքարել և թույլ տվեցի Աստծուն՝ աշխատել սրտիս հետ այնպես, ինչպես Նա էր ցանկանում: Նույնիսկ Ջոնի սարսափելի սխալից հետո ես որոշում կայացրի՝ գիտակցել իմ դերը տեղի ունեցածի մեջ: Հենց որ խոնարհեցրի ինձ, ես վերապրեցի Աստծո շնորհքը: Խոնարհությունը մշտապես բացում է շնորհքի պատուհանները:

> «…Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին շնորհք է տալիս» (Ա Պետր. 5.5):

Ինձ համար ակնհայտ դարձավ, որ ես անկարող էի փոխել Ջոնին: Միայն Աստված կարող էր անել դա: Բայց ես կարող էի թույլ տալ, որ Աստված փոխեր ինձ:

Հաջորդ օրը Ջոնը տուն վերադարձավ լիովին փոխված: Աստված աշխատեց նրա հետ մեր ամուսնության առաջին տարիների ընթաց-

քում, և նա այլևս ձեռք չբարձրացրեց ինձ վրա, իսկ մենք արդեն երեք տասնամյակ է՝ միասին ենք: Մեր միությունը վերափոխվեց, երբ երկուսս էլ խոնարհությամբ մոտեցանք Աստծուն և մեկս մյուսին՝ լիակատար վերականգնման և հաշտության հույսով:

Այս պատմության խրատը

Երանի՜ թե կարողանայինք ասել, որ այդ ժամանակվա ստացած վերքերը բժշկվեցին մեկ օրում, բայց այդպես չեղավ: Մեր ամուսնության հաջորդ երկու տարիները դեռ լի էին մեծ զգացմունքային ցնցումներով և պայքարներով. մենք փորձում էինք սովորել միմյանց հետ ապրել այնպես, որ պատիվ բերեինք Աստծուն: Մենք տարբեր խորհուրդներ էինք լսել՝ սկսած այն բանից, որ երկուսով էլ պետք է տնօրինեինք իրավիճակը, մինչև այն, որ Լիզան պետք է հնազանդ լիներ:

Մեր ոչ հասուն լինելու պատճառով, մենք հաճախ մեղադրում և քննադատում էինք իրար այն ժամանակ, երբ Աստված առանձին աշխատանք էր կատարում ամեն մեկիս հետ: Մեր ամուսնությունից չորս տարի անց մենք իսկապես կոտրված էինք զգում մեզ: Մեր ձախողումները նույնիսկ նյութական ապացույցներ ունեին, դրանց թվում էին վնասված սառնարանը և փոխված պատուհանը: Բայց Աստված չկորցրեց Իր հույսը մեր հանդեպ: Նա փրկում էր մեզ այդ սխալներից՝ վերածելով դրանք «տախտակամածը մաքրելու» հնարավորությունների: Աստված օգտագործեց այն ամենը, ինչով թշնամին ցանկանում էր կործանել մեր ամուսնությունը՝ որպես հիմք մեր ապագայի համար:

Թեև մենք մշտապես պատմել ենք, որ խնդիրներ ենք ունեցել, բայց երբեք այսքան մանրամասնորեն չենք խոսել մեր կյանքի մասին մեր ուսուցումների մեջ: Այժմ, պատմելով ավելին, մենք ցանկանում ենք ոչ թե արդարացնել մեր վարքը, այլ խրախուսել ձեզ, որ ամեն ինչ կարող է փոխվել: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ ընտանեկան բռնության բոլոր դեպքերը չէ, որ երջանիկ ավարտ են ունենում, և մենք չենք խրախուսում որևէ կնոջ կամ տղամարդու՝ մնալ այնպիսի վիճակում, որում նրանց և նրանց երեխաներին վտանգ է սպառնում: Եթե դուք այսպիսի վիճակում եք, ապահով վայր գտեք: Մի՛ ամաչեք: Հոգացե՛ք

ձեր անվտանգության մասին և ստացե՛ք այն օգնությունը, որի կարիքն ունեք: Քիչ անց այս մասին կխոսենք ավելին:

Այս դժվարին տարիների ընթացքում մեր ամուսնությունը լիովին անհուսալի էր թվում: Այնուամենայնիվ, երեսուն տարի անց մենք վայելում ենք կյանքն ավելի, քան երբևէ: Մեր ամուսնությունն անզուգական է, և սա Աստծո հրաշագործ զորության ճշմարիտ վկայություն է: Սա չի նշանակում, որ այս տարիների ընթացքում մենք չենք ունեցել այլ անապատներ, բայց գիտենք՝ քանի որ մենք որոշել էինք սիրել միմյանց, Աստված հավատարմորեն անցկացրել է մեզ ամեն մի անապատով:

Մենք չգիտենք, թե ինչպիսին են ձեր ներկա հարաբերությունները, բայց կարող ենք հավաստիացնել, որ ձեզ համար հույս կա: Ի սրտե դիմեք Աստծուն և թույլ տվեք Նրան՝ փոխել ձեզ: Դուք չեք կարող փոխել ձեր կողակցին, բայց Աստված կարող է: Հանձնե՛ք այդ պատասխանատվությունը Նրան: Աստված կսկսի այդ հրաշալի փոփոխությունը, եթե թույլ տաք Նրան:

Երկու խոսք բռնության մասին

Մենք ցանկանում ենք պարզաբանել հետևյալը. սիրելի ամուսի՛ն, ձեր կնոջ վրա ձեռք բարձրացնելը ոչ մի դեպքում ճիշտ չէ: Աստվածաշունչն ասում է, որ դուք պետք է պատվեք նրան տկար անոթի պես (տե՛ս Ա Պետր. 3.7): Ձեր կնոջ զգացմունքային կամ նույնիսկ ֆիզիկական հարձակումները ձեզ վրա՝ իրավունք չեն տալիս նրա հետ վարվելու նույն կերպով: Եթե անհրաժեշտ է, գնացե՛ք այդտեղից: Ձեռք մի՛ բարձրացրեք նրա վրա, նույնիսկ եթե անում եք դա ի պատասխան նրա հարձակումների, հակառակ դեպքում՝ դուք կկորցնեք ձեր կնոջ վստահությունը: Նա այլևս իրեն ապահով չի զգա ձեր գրկում: Եթե դուք ֆիզիկական ուժ եք գործադրել ձեր կնոջ նկատմամբ, անմիջապես ապաշխարե՛ք Աստծո առջև և խնդրե՛ք ձեր կնոջը՝ ներել ձեզ:

Սիրելի կի՛ն, ձեր ամուսինը բնականորեն ցանկանում է պաշտպանել ձեզ: Աստված ավելի մեծ ուժ է տվել տղամարդկանց հենց այս նպատակով: Դուք կարող եք համարել, որ ֆիզիկապես ձեր ամուսնու վրա հարձակվելը ձեր բարկության աննշան դրսևորումն է, և որ դա անվտանգ է, եթե որևէ կերպով վնաս չի հասցնում նրան:

Բայց նա խիստ ցավոտ կերպով է վերաբերվում ձեր կողմից նման հարձակումներին: Լինի դա ճիշտ, թե՝ սխալ, տղամարդիկ սովորաբար, երբ հարձակման են ենթարկվում, պատասխանում են ֆիզիկական ուժով: Մենք ոչ թե ցանկանում ենք հրահրել մեկս մյուսին կամ արթնացնել միմյանց ամենավատ կողմերը, այլ՝ միայն լավագույն կողմերը: Եթե դուք վիրավորական վերաբերմունք ունեք ձեր ամուսնու հանդեպ, ապաշխարե՛ք և անմիջապես դադարե՛ք այդպես վարվել:

Միգուցե դուք մեծացել եք այնպիսի ընտանիքում, որտեղ բռնությունն ընդունված է եղել: Հնարավոր է՝ ձեր ընտանիքի անդամները դիմել են խոսքային, զգացմունքային կամ ֆիզիկական բռնության: Մենք ցանկանում ենք, որ իմանաք՝ բռնությունը ոչ մի դեպքում կոնֆլիկտներ լուծելու ողջամիտ մեթոդ չէ: Քրիստոնեական խորհրդատվությունը կարող է օգնել ձեզ. դուք կսովորեք ողջամիտ կերպով հարթել դժվարին իրավիճակները կյանքում և ընտանիքում: Շատ եկեղեցիներ առաջարկում են նման ուսուցումներ փոքր խմբերում: Երբեք մի՛ ամաչեք մասնագիտական և հոգևոր օգնություն ստանալուց:

Սա վերաբերում է թե՛ ամուսիններին, թե՛ կանանց. եթե ձեր կողակիցն անապահով է զգում իրեն ձեր ներկայությամբ, հեռացե՛ք նրա մոտից և աշխատեք կրկին շահել նրա վստահությունը: Մի՛ փորձեք ստիպողաբար զրուցել նրա հետ այնտեղ, որտեղ նա վտանգ է զգում: Եթե այդպես վարվեք, իրավիճակն ընդամենը ավելի կսրվի, և դուք, հավանաբար, այնպիսի բան կանեք, ինչի պատճառով հետագայում կզղջաք:

Օր 2

Վիրավորանք

Ներել նշանակում է՝ ազատ արձակել բանտարկյալին և հայտնաբերել, որ այդ բանտարկյալը դուք էիք:

— Լյուիս Բ. Սմիդս

Առաջին բանը, ինչից պետք է մաքրել ձեր ամուսնության տախտակամածը՝ վիրավորանքն է: Քանի որ վիրավորանքը խիստ թունավոր է, մենք այս գլխի մեծ մասը կհատկացնենք այդ խնդրին:

Հրաժարվելով ներելուց՝ մարդը կորցնում է ազատությունը և ջերմեռանդությունը: Չներող մարդն այլասերված հաճույք է ստանում՝ ձգտելով վրեժ լուծել, բայց նրա միակ ուղեկիցը թշվառության զգացումն է: Ներման միջոցով ազատ են արձակվում թե՛ վիրավորողը, թե՛ վիրավորված մարդը:

Շատերը հավատում են, որ մարդուն պետք չէ ներել մինչև նրանից պատշաճ հատուցում չստանաս: Մեզնից քանի՞սն են ասել. «Ես կներեմ նրան, երբ նա փոխվի»: Բայց Աստծո թագավորության մեջ ներելն ընտրովի չէ: Այն միակ ճանապարհն է: Որքան ավելի ենք ներում, այնքան ավելի ենք նմանվում մեր երկնային Հորը: Եթե ցանկանում ենք լինել Նրա մեծության ներկայացուցիչները, մենք պետք է ընդունենք ներման զորությունը:

Պողոսը պատվիրեց մեզ.

> «Ներողամտորեն վերաբերվեք մեկդ մյուսի սխալներին և ներեք ցանկացած մարդու, ով վիրավորում է ձեզ: Հիշեք՝ Տերը ներեց ձեզ, այնպես որ, դուք պետք է ներեք այլ մարդկանց» (Կողոս. 3.13, NLT):

Հաճախ սա դժվար է ընդունել: Սա առաջարկ չէ, այլ պատվիրան, որը չունի պայմաններ կամ բացառություններ: Աստված պատվիրում է մեզ՝ ներել ցանկացած մարդու, ով վիրավորում է մեզ, և վերջ:

Հաճախ մենք ներողամտորեն ենք վերաբերվում մեր ձախողումներին և արդարացնում ենք դրանք՝ ակնկալելով նույն վերաբերմունքն այլ մարդկանցից: Այնուամենայնիվ, մեզ համար դժվար է ներել այլ մարդկանց հանցանքները, հատկապես՝ մեր կնոջ կամ ամուսնու: Բայց յուրաքանչյուրը, ով չի կարողանում ներել, մոռացել է, թե ինչ է ներվել իրեն: Մեզնից շատերն ինքնարդարացման մտածելակերպ են ձեռք բերել՝ մոռանալով, որ բոլորս արժանի էինք հավիտենությունը դժոխքում անցկացնելուն: Մեր հանցանքն Աստծո դեմ այնքա՜ն ծանր էր, որ Նա հարկադրված էր զոհաբերել Իր միակ Որդուն՝ դրա հետևանքները չեղյալ դարձնելու համար: Քրիստոսը խաչից ազդարարեց Իր ներումը, թեև այդ պահին դառնությամբ լցվելը շատ ավելի հեշտ էր: Նա ներեց մեզ, մինչև որ մեր գործերն արժանի կլինեին Նրա ներմանը, և մենք պետք է նույն կերպով վերաբերվենք մարդկանց:

Հավանաբար, պետք չէ երկար համոզել ձեզ, որ ձեր կողակիցը կատարյալ չէ: Ոչ ոք կատարյալ չէ: Բայց սխալները հնարավորու-

թյուն են ստեղծում՝ Աստծո շնորհքը ցուցաբերելու համար: Ներելու պատրաստակամությունը մեծագույն վկայություններից մեկն է այն մասին, որ Քրիստոսը մեր մեջ է:

Թողնել վիրավորանքը

Երբ մենք նոր էինք ամուսնացել, ես (Լիզան) այն մարդկանցից էի, ովքեր ասում են. «Ես կներեմ քեզ, երբ փոխվես»: Իմ վիրավորանքների ցուցակը միայն ավելանում էր, քանի դեռ Ջոնը չէր փոխում իր վարքը: Ես կարծում էի, որ չներելով՝ կդրդեի նրան՝ փոխվել, բայց փոխարենը նա դատապարտություն, անհուսություն և անզորություն էր զգում:

Ամեն ինչ փոխվեց, երբ Աստված ցույց տվեց ինձ, թե ինչպես է Նա ներում: Նրա ներումը վարձատրություն չէ փոխված վարքի համար: Այն վստահության քվե է: Աստված նորոգեց ներման մասին իմ պատկերացումը և փոխեց իմ խոսքը՝ դարձնելով այն Իր սրտի համեմատ. «Ես հավատում եմ, որ դու ցանկանում ես փոխվել, և ներում եմ քեզ»:

Այդ ժամանակ ես չէի հասկանում, թե որքա՜ն կարևոր էր, որ ներեի Ջոնին: Հետագայում ես հասկացա, որ իմ դառնությունն ամուսնուս հանդեպ թույլ չէր տալիս նրան փոխվել, քանի որ Հիսուսն ասում է.

> «Եթե ներեք որևէ մեկի մեղքերը, դրանք ներված կլինեն: Եթե չներեք, դրանք ներված չեն լինի» (Հովհ. 20.23, NLT):

Դարեր շարունակ այս խոսքը սխալմամբ է կիրառվել և աղավաղվել է՝ օգտագործվելով վախ և ճնշվածություն առաջացնելու համար: Դա չէր Հիսուսի մտադրությունը: Ուսումնասիրելով Նրա ամբողջ ծառայությունը՝ մենք կարող ենք հասկանալ, թե որն է այս խոսքի նպատակը և՝ թե որքան կարևոր է այն: Հիսուսը հասկանում է ներման զորությունը ավելի, քան որևէ մեկը, որովհետև դրա միջոցով Նա հաշտեցրեց այն, ինչն անկարելի էր հաշտեցնել:

Հիշեք, որ համաձայն Կորնթացիների երկրորդ թղթի 5.17-20-ի՝ մենք հաշտության ծառայողներ ենք, ում միջոցով Աստված դիմում է այս աշխարհին: Մենք պետք է հաստատենք և տարածենք այն ներումը, որն առաջարկված է Քրիստոսում: Երբ դրա փոխարեն

որոշում ենք պահել վիրավորանքը, մենք դադարում ենք ազդարարել Աստծո հույսը՝ համաձայնելով եղբայրների չարախոսի հետ: Մենք դատապարտություն ենք խոսում նրանց հանդեպ, ում Աստված ցանկանում է նոր սկիզբ առաջարկել: Գ. Լ. Բորխերտն այսպես է մեկնաբանել Հիսուսի խոսքերը. «Անհրաժեշտ է գիտակցել այն կարևոր դերը, որը ներման խոսքերը կարող են կատարել՝ ազատ արձակելով մարդկանց, որպեսզի նրանք թողնեն իրենց առաջվա մեղքերը և մեղքի զգացումը, և իրենց ուշադրությունն ուղղեն հարություն առած Քրիստոսի հետ ապրելու ուրախությանը՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ»[4]:

Ներումն աստվածային գործ է: Ոչ մի առաքինություն չի պահանջում այնքան մեծ անձնազոհություն, որքան ներումը: Ներելով՝ մենք գիտակցաբար որոշում ենք խոցելի լինել՝ սեփական իրավունքները պաշտպանելու փոխարեն: Բայց զոհելով մեր անձը՝ մենք ընկնում ենք Աստծո գիրկը: Ընտրելով ներումը՝ հրաժարվում ենք երկրպագել մեր զգացմունքներին, և փոխարենը՝ հնազանդվում ենք Աստծո ճշմարտությանը: Աստված առաջարկում է մեր կողակիցներին՝ վերափոխվել Իր շնորհքով. ներելով նրանց՝ մենք հնարավորություն ենք ստեղծում, որ նրանք գիտակցեն և ընդունեն այս առաջարկը:

Երբ մենք ապաշխարությամբ գալիս ենք Աստծո առջև, Նա չի ասում մեզ. «Ես Աստված եմ և գիտեմ, որ երկու շաբաթ անց դու կրկին կանես սա»: Նա պարզապես ասում է. «Ես ներո՛ւմ եմ քեզ», և առաջարկում է Իր զորությունը՝ փոխվելու համար: Աստված չի ասում մեզ, որ ապագայում ձախողվելու ենք: Նա հռչակում է Իր հույսը և խոստումներն ամեն մի պայքարի համար: Եկե՛ք միմյանց հետ վարվենք նույն կերպով:

Բացե՛ք ձեր հոգին

Վիրավորանքը դրդում է մեզ՝ փակել մեր հոգիները: Մենք պատեր ենք կառուցում մեր սրտերի շուրջ, որպեսզի կրկին չզգանք այդ ցավը: Մենք կարող ենք մտածել, որ այդ պատերը պաշտպանում են մեզ, բայց իրականում դրանք թույլ չեն տալիս՝ տալ և ստանալ Քրիստոսի սերը: Առանց Նրա սիրո՝ մեր կյանքերը զուրկ կլինեն նպատակից և զորությունից: Մեր նպատակը կլինի ինքնապահպանումը, իսկ մեր գործերը եսակենտրոն կլինեն: Ի վերջո, մեր

սրտերը կքարանան, և մենք անտարբեր կդառնանք այլ մարդկանց հանդեպ: Սա Ավետարանի ուղերձի ճիշտ հակառակն է:

Հավանաբար, դուք գիտեք Գալիլեայի և Մեռյալ ծովերի մասին: Այս երկուսն ամենամեծ և ամենահայտնի ջրային ավազաններն են Իսրայելում: Գալիլեայի ծովը ջուր է ստանում հյուսիսից և այն փոխանցում դեպի հարավ: Այս մշտական հոսքը կյանքի համար նպաստավոր է դարձնում Գալիլեայի ծովը, և այդ ջրերում բազմապիսի ջրային կենդանիներ են ապրում, իսկ Մեռյալ ծովը միայն ընդունում է ջուրը և ամբողջությամբ պահում է այն: Քանի որ Մեռյալ ծովը ոչ մի տեղ չի դատարկվում և ոչինչ չի դատարկում, բացի աննշան բակտերիաներից և սնկերից, այդ իսկ պատճառով չի կարողանում գոյատևել դրա աղի գոյահամակարգի մեջ, ինչից էլ առաջացել է այս ծովի անվանումը:

Պահելով վիրավորանքը՝ մենք դառնում ենք Մեռյալ ծովի պես: Մեր փակ հոգիների պատճառով մեր ամուսնության մեջ այնպիսի միջավայր է ստեղծվում, որտեղ ոչինչ չի կարող բազմանալ կամ նույնիսկ գոյատևել: Ներման միջոցով մենք կրկին բացում ենք մեր սրտերը, որպեսզի Աստծո զորությունը կարողանա հոսել դեպի ներս՝ մեր մեջ, և դեպի դուրս՝ մեր միջոցով:

Երբ մենք հրաժարվում ենք ներել կամ ներվել, մենք ի վերջո թունավորում ենք մեր անձը: Միայն Աստված է ինքնաբավ, իսկ մենք՝ ոչ: Կենսունակ լինելու համար, մենք պետք է ներդաշնակ շփում ունենանք այն մարդկանց հետ, որոնց հետ ապրում ենք: Մենք պետք է ձրիաբար տանք և ստանանք:

Ներման սահմանները

Դուք կարող եք մտածել. *«Թվում է՝ իմ կողակիցը մշտապես ներման կարիք ունի: Իմ ներումն անսպառ չէ: Պետք է որ սահման լինի»:* Հիսուսի աշակերտներն էլ էին այդպես մտածում.

> «Այն ժամանակ Պետրոսը Նրա [Հիսուսի] մոտ գալով՝ ասաց. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե իմ եղբայրն ինձ դեմ մեղք անի, ես ներեմ նրան. մինչև յոթ անգա՞մ»:
> Հիսուսը նրան ասաց. «Չեմ ասում քեզ՝ մինչև յոթ անգամ, այլ՝ մինչև յոթանասուն անգամ յոթ»» (Մատթ. 18.21,22):

Տալով այս հարցը՝ Պետրոսը փորձում էր հնարավորինս մեծահոգի լինել: Նա մեծացել էր Օրենքի ներքո, որն ասում էր. «Դու չպետք է խղճահարություն ցուցաբերես մեղավորի հանդեպ: Դու պետք է վարվես հետևյալ սկզբունքով. կյանքը՝ կյանքի փոխարեն, աչքն՝ աչքի փոխարեն, ատամն՝ ատամի փոխարեն, ձեռքը՝ ձեռքի փոխարեն, ոտքը՝ ոտքի փոխարեն» (Երկր. Օր. 19.21, NLT): Այնպես որ, երբ Պետրոսն առաջարկեց ներել մինչև յոթ անգամ, նա սպասում էր, որ Հիսուսը կասեր. «Այո՛, Պետրո՛ս, դու ամեն ինչ հասկացար»:

Նոր կտակարանի այլ հատվածներից մենք գիտենք, որ Պետրոսի առաջարկը՝ յոթ անգամ ներելու մասին, այն քանակն էր, որը, ինչպես նա կարծում էր, անհրաժեշտ կլիներ իրեն՝ օրվա ընթացքում ինչ-որ մեկին ներելու համար (տե՛ս Ղուկ. 17.3,4): Այնուամենայնիվ, Հիսուսի պատասխանը «յոթանասուն անգամ յոթ» ներելու մասին՝ պարզապես ավելի բարձր սահման չէր, ըստ որի անհրաժեշտ էր ներել վիրավորանքներն ամբողջ կյանքում: Նա ցույց էր տալիս Պետրոսին, որ ներումը պետք է շնորհվի առանց չափի:

Հիսուսի ասած չափով մեղք գործելու համար, մարդը պետք է 490 վիրավորանք հասցնի մեկ օրվա ընթացքում: Այդքան մեղանչելու համար, ձեր կողակիցը պետք է վիրավորի ձեզ երեք րոպեն մեկ՝ այն պայմանով, որ երկուսդ էլ ո՛չ սնվելու եք, ո՛չ քնելու եք: Հազիվ թե ինչ-որ մեկը կարող է այդքան մեղանչել: Բայց նույնիսկ եթե ձեր կողակիցը մեղանչի ձեր դեմ ավելի, քան օրը 490 անգամ, դա չի նշանակում, որ 490-րդ վիրավորանքից հետո դուք կարող եք այլևս չներել նրան:

Սուրբ գրքում յոթ թիվը խորհրդանշում է կատարելություն, հատկապես երկնքի և երկրի միջև: Հիսուսն օգտագործեց 490 թիվը, որը բաժանելի է յոթի, որպեսզի ցույց տար, որ մենք պետք է կատարելապես ներենք՝ հետևելով մեր երկնային Հոր չափանիշին: Այս առատաձեռն ներումը հնարավոր է միայն մեկ պատճառով. Քրիստոսի միջոցով մենք վերականգնվել ենք Աստծո համար: Քրիստոսում կա ներդաշնակություն Հոր և Նրա զավակների միջև: Այդ իսկ պատճառով, մենք պետք է ներենք, որովհետև մենք նոր ստեղծվածներ ենք և նոր սրտեր ունենք: Մեր սրտերը ձրիաբար ընդունել են Նրա ներումը, և հոգևորապես առողջ մնալու համար, մենք պետք է ձրիաբար ներենք այլ մարդկանց:

Մենք գիտենք՝ Հիսուսը ցանկանում է, որ մեր ներումն անսպառ լինի, որովհետև Պետրոսի հետ խոսելուց հետո Նա մի առակ պատմեց ներող թագավորի և չներող ծառայի մասին՝ ավարտելով այն հետևյալ բացատրությամբ.

«Այդ ժամանակ բարկացած թագավորն ուղարկեց այդ մարդուն բանտ՝ չարչարվելու, մինչև որ կվճարեր իր ամբողջ պարտքը:

Ահա թե ինչ կանի Իմ երկնային Հայրը ձեզ, եթե հրաժարվեք ի սրտե ներել ձեր եղբայրներին և քույրերին» (Մատթ. 18.34,35, NLT):

Մենք ներում չենք ստանա, եթե հրաժարվենք ներելուց: Այս կանոնը բացառություն չունի: Ինչո՞ւ է Աստծո համար այդքան կարևոր, որ մենք ներենք: Պատճառն այն է, որ ներելով մենք բացահայտում ենք Նրա բնությունը և նմանակում ենք դրան: Մենք գերազանցում ենք մեր մարդկային թշվառությունը և վերափոխվում մեր Հոր նմանությամբ: Աստծո ներման շնորհիվ մենք բժշկություն ենք ստանում, և մեզ առաջարկվում է (նույնիսկ՝ հրամայվում) փոխանցել Նրա բժշկությունն այն մարդկանց, ում մենք ներում ենք: Եթե ձեր կողակիցը հաճախ է ներում խնդրում ձեզնից, ուրեմն Աստված օրհնել է ձեզ՝ թույլ տալով լինել Իր բժշկարար զորության ներկայացուցիչը:

Վիրավորանքի թեմայի մասին ավելին իմանալու համար, կարդացե՛ք Ջոնի «Սատանայի խայծը» *գիրքը:*

Օր 3

Մեր պայքարը. Ջոնի պատմությունը

Մեր ամուսնության մեջ կար մի ժամանակաշրջան, երբ մենք վիրավորված էինք իրարից գրեթե տասնութ ամիս շարունակ: Նույն վիճաբանությունը կրկին ու կրկին գլուխ էր բարձրացնում: Մենք նույնիսկ մի թեթև «կծում» էինք իրար մեր երեխաների ներկայությամբ: Ավելի մեծերն արդեն հասկանում էին, թե ինչ էր տեղի ունենում, և ընդհատում էին մեզ. «Կարո՞ղ եք չխոսել այս մասին ճաշի ժամանակ»: Մեր ցավը և միաբան չլինելը մշտական լարվածություն էին ստեղծում մեր տանը և քայքայում էին մեր ամուսնությունն ու ընտանիքը:

Մի երեկո՝ այն բանից հետո, երբ կրկին վիճեցինք մեր սովորական ձևով, ես (Ջոնը) զայրացած դուրս եկա տնից և անմիջապես բողոքեցի Աստծուն: Ես գանգատվում էի Լիզայի սխալներից և անհեռատեսությունից: Ինձ թվում էր, որ Աստված դիտմամբ այն-

պիսի կին էր տվել ինձ, ով չէր աջակցում ինձ և անհարկի քննադատում էր: Ներսումս հարց էր առաջանում, թե ինչպե՞ս կարող էի շարունակել իմ կյանքը նման կնոջ հետ:

Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես Աստված պատասխանեց: Սուրբ Հոգին ոչ մի բառ չասաց այն մասին, թե որքա՜ն էր Նա ցավում ինձ համար, ո՛չ էլ խոսեց այն ծանրության մասին, որը ես զգում էի. փոխարենը՝ Նա պարզապես շշնջաց ինձ. «Որդի՛ս, Ես ցանկանում եմ, որ մտածես մեկ բանի մասին, որը դու գնահատում ես Լիզայի մեջ, և գոհանաս Ինձնից դրա համար»:

Ինձնից որոշ ժամանակ պահանջվեց՝ պատասխանելու համար, բայց, ի վերջո, ես մրթմրթացի. «Նա լավ մայր է»: Երբ այդ բառերը դուրս թռան բերանիցս, ես աշխուժություն զգացի իմ ներսում: Աստված դրդեց ինձ, որ շարունակեմ: Ես ասացի. «Տե՛ր, շնորհակալություն, որ Լիզան իսկապես լավ խոհարար է»: Իսկ հետո՝ «Շնորհակալություն, որ նա գեղեցիկ է»: Բառերն սկսեցին հորդել, և ես շարունակեցի թվարկել Լիզայի դրական հատկանիշները և շնորհակալություն հայտնել դրանց համար գնդացրի արագությամբ:

Այդ պահին ես այլևս բարկացած չէի Լիզայի վրա. ես բարկանում էի ինքս ինձ վրա: Եվ մտածեցի. *«Դու իսկական հիմար ես: Դու հրաշալի կին ունես, բայց այնքա՜ն վատ ես վերաբերվում նրան: Ի՞նչ է կատարվում քեզ հետ»*: Ներսումս ցավ զգացի, երբ մտածեցի, թե որքա՜ն սարսափելի էի վարվում Լիզայի հետ: Նա իմ կինն էր՝ իմ ընտրյալը և իմ երեխաների մայրը. նա իսկապես Աստծո օրհնությունն էր, իսկ ես վերաբերվում էի նրան՝ կարծես մի խանգարող հանգամանք՝ իմ կոչման համար:

Երբ ես դուրս եկա տնից, Լիզան արդեն հոգնել էր ինձնից, իսկ ես՝ նրանից, բայց այժմ ես միայն ցանկանում էի ներս գնալ և ասել, թե որքա՜ն շնորհակալ էի նրա համար: Արագորեն տուն մտնելով՝ ես մտածեցի. *«Միգուցե Լիզան չընդունի իմ ասածը, բայց ես պետք է ասեմ նրան, թե որքա՜ն շնորհակալ եմ նրա համար»:*

Տուն մտնելուն պես՝ գտա Լիզային և բացականչեցի.

Լի՛զա, ես այնքա՜ն եմ զղջում: Ես անպետքի մեկն եմ եղել: Խնդրում եմ, ների՛ր ինձ: Դու հրաշալի մայր և գերազանց կին ես և իմ սրտի ցանկությունն ես»: Ես պատմեցի, թե Աստված ինչ հիշեցրեց ինձ, իսկ հետո սկսեցի գովել նրան՝ նրա հրաշալի բնավորության գծերի, հատկանիշների և պարգևների համար: Բառերը դուրս էին բխում սրտիցս գետի պես:

Մինչ ես խոսում էի, Լիզան մեղմացավ և սկսեց լաց լինել: Ես չգիտեի, որ երբ տանը չեմ եղել, նա աղոթել է. «Աստվա՛ծ, եթե Դու վերադարձնես Ջոնին, և նա ասի, որ զղջում է, ես կրկին կբացեմ սիրտս»:

Մեր պայքարը. Լիզայի պատմությունը

Տասնութ ամսվա ընթացքում ամեն ինչ այն աստիճան վատթարացավ, որ դադարեցի կրել իմ նշանադրության մատանին: Ես ասում էի Ջոնին, որ մենք ամուսնացած ենք, բայց ոչ՝ նշանված, ինչ էլ որ դա նշանակեր: Ես սկսեցի հավատալ, որ չէի սիրում Ջոնին: Քանի որ ես հրաժարվում էի ներել, իմ սիրտն սկսեց սառչել, և մեր հարաբերություններին լուրջ վտանգ էր սպառնում:

Այդ ընթացքում Ջոնը շատ էր ճանապարհորդում, և ինձ ավելի շատ էր դուր գալիս, երբ նա տանը չէր, քան՝ երբ տանն էր: *«Կյանքն ավելի թեթև է, երբ նա տանը չէ,*– մտածում էի ես:- *Երբ տանն է, նա միայն զայրացնում է ինձ անդադար վեճերի և լարվածության պատճառով»:*

Ես այնքա՜ն էի հուսահատվել, որ սկսեցի աղաղակել Տիրոջը. «Աստվա՜ծ, մեր փոխհարաբերությունները լճացած վիճակում են: Ջոնը շատ վատ է վերաբերվում ինձ: Ես գիտեմ՝ Դու պետք է որ բարկացած լինես նրա վարքի պատճառով»:

Ես շարունակեցի բողոքել. գրեթե ամեն օր ներկայացնում էի իմ խնդիրը Հոր առջև: Բայց երբ, ի վերջո, լռեցի, ես լսեցի, թե ինչպես Նա ասաց. «Լի՛զա, ասա՛ Ինձ, որ Ես բավական եմ քեզ համար»:

Սկզբում ես մի փոքր վախեցա: Եթե ասեի, որ Աստված բավական էր, մի՞թե դա կնշանակեր, որ Ջոնը չէր փոխվելու: Ես կրկնեցի այդ բառերը. «Հա՛յր, Դու բավական ես ինձ համար»:

Ես կրկին տվեցի իմ հարցը. «Իսկ Ջո՞նը»:

Եվ կրկին լսեցի. «Ասա՛ Ինձ, որ Ես բավական եմ քեզ համար»:

«Դու բավական ես ինձ համար»[5]:

Այդ բառերը դարձան իմ կրկներգը: Ամեն անգամ, երբ մենք վիճում էինք, կամ՝ երբ հիասթափվում էի, ես աղոթում էի. «Հիսո՛ւս, Դու բավական ես ինձ համար»: Ժամանակի ընթացքում այդ հայտնությունն արմատացավ իմ սրտում, և աղոթքներս փոխվեցին: Այն, ինչն սկսվեց որպես անվստահ դավանանք («Հիսո՛ւս, Դու բավական

ես ինձ համար»), վերածվեց բավականության արտահայտման, որը ես գտա Աստծո մեջ. «Հիսո՛ւս, Դու ավելի, քան բավական ես ինձ համար»:

Շուտով Աստված կատարեց Իր աշխատանքը երկուսիս սրտերում: Երբ Ջոնը վերադարձավ իր հերթական ճանապարհորդությունից, ես ուրախությամբ դիմավորեցի նրան օդանավակայանում (մինչ այդ, երբ գերադասում էի, որ նա ընդհանրապես տուն չգար, ես այդ գործը վստահում էի այլ մարդկանց): Ես ուրախ էի՝ տեսնել ամուսնուս, և ինձ նույնպես անակնկալ էր սպասվում. նա մի գեղեցիկ նվեր էր բերել ինձ համար:

Այդ պահը նոր սկիզբ էր մեր ամուսնության մեջ: Հետաքրքիր է, որ այդ փոփոխությունից առաջ Աստված արդեն բացել էր երկուսիս սրտերը գոհության միջոցով:

Եթե մեր ամուսնության մեջ հետևենք Հիսուսի օրինակին և ներենք նույնիսկ սխալ վերաբերմունքի արժանանալու դեպքում, մեր միությունն առողջ կմնա և կծաղկի: Ամենամեծ օրինակը, որն այդ ընթացքում մենք անգիտակցաբար փոխանցեցինք մեր երեխաներին, այն էր, որ մենք ներողություն խնդրեցինք և ներեցինք միմյանց: Մեր երեխաները հասկացան, որ մենք ոչ կատարյալ մարդիկ ենք, ովքեր ապրում են ոչ կատարյալ աշխարհում, բայց Աստծո կատարյալ ներումը մեր սրտերում կարող է ծածկել մեղքերի բազմությունը: Այդ մեղքերը, որոնց նպատակն էր՝ քայքայել և կործանել մեր ամուսնությունը, իրականում մեր երեխաների համար դարձան լավ դաս Աստծո սիրո, շնորհքի և ներման մասին:

«Սերը բարգավաճում է, երբ սխալը ներվում է…» (Առակ. 17.9, NLT):

Երբ դուք որոշում եք պահել վիրավորանքը, բոլորը տուժում են, որովհետև սերն սկսում է սպառվել: Այնուամենայնիվ, երբ դուք որոշում եք ներել, ձեր ընտանիքի բոլոր անդամները շահում են, որովհետև սերն սկսում է ծաղկել:

Վախ

Հաջորդ բանը, որը պետք է հեռացնել ձեր փոխհարաբերություններից, վախն է: Մեր ամուսնության առաջին տասը տարիների ընթացքում ես (Լիզան) պայքարում էի լքվածության վախի

դեմ: Ե՛վ հայրս, և՛ իմ առաջին հովիվը լքել էին իրենց կանանց՝ ավելի երիտասարդ կանանց հետ ամուսնանալու համար: Իմ անցյալի պատճառով ես թույլ էի տալիս, որ վախն անարգել մնար իմ մտքում: Մտքերս չէին բղավում. դրանք շշնջում էին. *«Միևնույն է, բոլոր տղամարդիկ էլ հեռանում են: Թույլ մի՛ տուր նրանց՝ շատ մոտենալ քեզ, և նրանք չեն հիասթափեցնի քեզ»:* Նման մտածելակերպի պատճառով ես հակառակվում էի նույնիսկ սիրո և քնքշության փոքրիկ դրսևորումներին: Երբ Ջոնը գրկում էր ինձ, կարճ ժամանակ անց ես սկսում էի թփթփացնել նրա մեջքին, որպեսզի բաց թողներ ինձ:

Մի օր, հերթական «թփթփացնելուց և գրկից ազատվելուց» հետո, Ջոնը կտրուկ հարց տվեց ինձ.

– Քանի՞ տարեկան պետք է դառնանք, մինչև դու հասկանաս, որ ես չեմ լքելու քեզ: Արդյո՞ք սպասելու ես, մինչև յոթանասուն տարեկան դառնանք:

Ես ցնցվեցի:

– Ես կսպասեմ այնքան, որքան պահանջվի,– շարունակեց նա,- բայց մենք շատ հաճելի պահեր բաց կթողնենք այդ ընթացքում:

Ես հասկացա, որ ստիպում էի Ջոնին՝ վճարել այն հիասթափությունների համար, որոնք այլ տղամարդիկ պատճառել էին ինձ: Ես մտածեցի. *«Ինչո՞ւ Ջոնը պետք է վճարի նրանց սխալների համար: Դա ազնիվ չէ: Փորձելով պաշտպանել ինձ՝ ես վնաս եմ հասցնում մեր հարաբերություններին»:* Ջոնին ապագայում կորցնելու վախը թալանում էր մեր ներկան: Այդ ժամանակ որոշեցի, որ ավելի լավ է լիարժեք կերպով սիրեմ Ջոնին, նույնիսկ եթե կորցնելու եմ նրան, քան սիրեմ կիսով չափ, իսկ հետո ետ նայեմ ու զղջամ՝ մտածելով, թե ինչպես ամեն ինչ կարող էր լինել:

Վախը և անվստահությունը թույլ չեն տալիս մեզ՝ լիարժեք կերպով վայելել մեր ամուսնությունը, որովհետև վախը համառորեն հարում է անցյալին՝ հրաժարվելով հավատալ, որ ապագայում կարող է ինչ-որ լավ բան կատարվել: Եթե մենք ցանկանում ենք, որ Աստված նոր բաներ անի մեր ամուսնության մեջ, մենք պետք է որոշենք թողնել վախը և ընդունել այն, ինչ սերն է կանխատեսում մեր ապագայի համար: Վախն սպասում է ձախողման, իսկ սերը երբեք չի ձախողվում:

Վախը՝ հոգևոր ուժ է, որն ուղղակիորեն հակառակվում է Աստծո սիրուն և պաշտպանությանը մեր կյանքերում: Այն սիրո հա-

կադրությունն է, որովհետև թե՛ սերը, թե՛ վախը գործում են անտեսանելիի հանդեպ ունեցած համոզվածությամբ: Սերը կոչ է անում մեզ՝ կասկածանքով վերաբերվել այն ամենին, ինչ տեսնում ենք, և հավատալ այն բաներին, որոնք չենք կարող տեսնել: Վախը հորդորում է մեզ՝ հավատալ տեսանելի բաներին և կասկածանքով վերաբերվել անտեսանելիին: Մենք կարող ենք հավատալ կա՛մ ձախողման վախին, կա՛մ հուսադրող սիրուն, բայց ոչ՝ երկուսին միաժամանակ: Վախը հեռացնում է սերը, իսկ սերը քշում է վախը[6]:

> «…Կատարյալ սերը վտարում է ամբողջ վախը: Այն վախը, որը զգում ենք՝ պատժվելու վախն է, և սա ցույց է տալիս, որ մենք լիովին չենք վերապրել Նրա կատարյալ սերը: Մենք սիրում ենք իրար, որովհետև սկզբում Նա սիրեց մեզ» (Ա Հովհ. 4.18,19, NLT):

Սիրո վերափոխման կարողությունն ավելին է, քան վախի թակարդելու կարողությունը: Այն կատարյալ սերը, որը վտարում է վախը, առաջանում է միայն Աստծո սերը ճանաչելուց: Նրա սիրո զորությամբ մենք կարող ենք դադարել մեր մասին անհանգստանալուց, քանի որ գիտենք, որ Աստված հավատարմորեն կհոգա մեր կարիքները: Բայց եթե մենք ժամանակ չենք անցկացնում Աստծո ներկայության մեջ, մենք չենք կարող մտերմորեն ճանաչել Նրա սերը, որովհետև Նրա հավատարմությունը հայտնվում է Նրա ներկայության մեջ:

Չճանաչելով Աստծո ճշմարիտ բնությունը՝ մենք մշտպես վախ կունենանք, որ Նա կամ մեր կողակիցը կլքի մեզ, ինչը պատիժ ստանալու աղավաղված տեսակ է: Երբ ավելի ու ավելի վստահություն ձեռք բերենք Նրա սիրո մեջ, մենք կկարողանանք ազատ լինել վախից և անշահախնդիր սեր առաջարկել մեր կողակիցներին: Աստծո Խոսքն ասում է.

> «…Շարունակե՛նք սիրել մեկս մյուսին, որովհետև սերն Աստծուց է: Ցանկացած մարդ, ով սիրում է, Աստծո զավակ է և ճանաչում է Աստծուն: Բայց ցանկացած մարդ, ով չի սիրում, չի ճանաչում Աստծուն, որովհետև Աստված սեր է» (Ա Հովհ. 4.7,8, NLT):

Վախի ամրությունն է, որ դրդում է մեզ՝ ասել, օրինակ. «Եթե իմ ամուսինը (կամ՝ կինը) երբևէ դավաճանի ինձ, ես երբեք չեմ ների

նրան»: Այսպիսի երդումները, որոնց նպատակն է՝ պաշտպանել մեր ապագան, թույլ չեն տալիս մեզ՝ ընդունել Աստծո սիրո զորությունը մեր ներկայում: Մենք պետք է սովորենք վստահել, որ Աստված կհոգա մեր մասին, նույնիսկ եթե մեր կողակիցը վիրավորի, մերժի կամ դավաճանի մեզ: Աստված խնդրել է մեզ՝ Իրեն հանձնել մեր բոլոր վախերը: Հրաժարվելով անել սա՝ մենք ասում ենք Աստծուն, որ չենք հավատում, որ Նա կարող է առաջնորդել մեր կյանքերը: Մենք չենք կարող հնազանդվել Հիսուսի իշխանությանը՝ առանց մեր վախերը Նրան հանձնելու:

Օր 4

Ընտանեկան անեծքներ

Մեր ամուսնության սկզբում մենք գիտեինք, որ Աստված ցանկանում էր նոր բան անել մեր և մեր երեխաների կյանքերում: Բայց մեր ծնողների և պապերի կյանքերում կային ակնհայտ հոգևոր ամրություններ, որոնք արատավորել էին մեր ընտանեկան անցյալը, օրինակ՝ հարբեցողություն, անբարոյություն, կախարդություն: Մինչև նոր ժառանգություն ստանալը, մենք պետք է հակառակվեինք այդ անեծքներին, որոնք սերունդներ շարունակ չարչարել էին մեր ընտանիքները: Այդ անեծքների դեմ կարելի է պայքարել միայն աղոթքով և դրանք կարելի է քանդել միայն Աստծո Խոսքով:

Ընտանեկան անեծքները տարբեր առանձնահատկություններ ունեն ամեն զույգի համար, բայց ահա մեկ օրինակ: Նախորդ գլխում նշեցինք, որ մեր ընտանիքները բոլորովին տարբեր էին: Ես (Լիզան) մտահոգված էի, թե ինչպես էր Ջոնի ընտանիքը վերաբերվելու իմ ակնհայտորեն անառողջ ընտանիքին: Մեր նշանադրության երեկոյան հայրս հարբել էր, և անամոթաբար սիրախոսում էր Ջոնի մորը՝ անմիջապես նրա ամուսնու ներկայությամբ: Այնպես չէր, որ նա որևէ իրական մտադրություն ուներ Ջոնի մոր նկատմամբ. նրա նպատակն էր՝ վիրավորել իմ մորը: Ավելի ուշ, Ջոնի մայրը խորը մտահոգություն էր արտահայտել այն մասին, որ մեր ամուսնությունը լինելու էր առաջին դեպքը, երբ ինչ-որ մեկը, ում ընտանեկան

պատմության մեջ ամուսնալուծություն կար, միանալու էր նրանց չաղճատված տոհմին: Ես լսեցի, թե ինչպես նա ասաց. «Մեր ընտանիքում երբեք ամուսնալուծություններ չեն եղել»:

«Մի՞թե նա այդպիսի կարծիք ունի իմ մասին,– մտածեցի ես,– *որ ես փչացնելու եմ նրանց ժառանգությունը»:*

Ընթրիքի ավարտից հետո ես զգում էի այն վիրավորանքը, որն ստացավ մայրս: Բացի այդ՝ ես սաստիկ ամոթ էի զգում: Թվում էր՝ եթե լիներ այնպիսի կշեռք, որը չափում էր նախամուսնական «դրական» և «բացասական» ներդրումն ամեն ընտանիքի կողմից, դրական նժարը կտրուկ կբարձրանար՝ հօգուտ Ջոնի: Իմ ներդրումը միայն բացասական էր. ընտանիքիս խնդիրների թվում էին ամուսնական անհավատարմություն, ամուսնալուծություն և կախվածություն:

Իմ կյանքում ճեղքում եկավ, երբ գիտակցեցի, որ Աստծուն չէին մտահոգում Ջոնի ընտանիքի լավ և իմ ընտանիքի վատ կողմերը: Նա ցանկանում էր սուրբ ժառանգություն ունենալ:

> «Լսի՛ր ինձ, ո՜վ թագավորական դուստր. ընդունի՛ր սրտով այն, ինչ ասում եմ: Մոռացի՛ր քո ժողովրդին և քո հեռավոր ընտանիքը: Որովհետև քո թագավորական ամուսինը բերկրանք է զգում քո գեղեցկությունից. պատվի՛ր նրան, որովհետև նա քո տերն է... Քո որդիները կդառնան թագավորներ՝ իրենց հոր նման: Դու իշխաններ կդարձնես նրանց բազմաթիվ երկրների վրա: Ես պատիվ կբերեմ քո անվանը ամեն սերնդի մեջ: Այդ իսկ պատճառով, ազգերը կգովեն քեզ հավիտյան» (Սաղմ. 45.10-12,16,17, NLT):

Այս հատվածը նկարագրում է Հիսուսին և Նրա Հարսնացուին, բայց Աստված օգտագործեց այն, որպեսզի պատկերեր Իր խոստումն իմ կյանքի համար, որը չէր սահմանափակվում ընտանիքիս անցյալով: Երբ ես կարդացի «ո՜վ թագավորական դուստր» բառերը, ինչոր բան իմ ներսում կյանք ստացավ: Աստված խոսում էր ինձ հետ՝ ինչպես Իր թագավորական դստեր: Այդ պահին ես նորովի հասկացա, թե ո՛վ եմ Քրիստոսում: Ես մերժեցի իմ անցյալի հոգևոր ամրությունները և նոր հույս ստացա իմ ընտանիքի ապագայի համար:

Ես հասկացա, որ երեխաներս չէին ունենալու իմ բնական հոր նմանությունը (ով շնացող, հարբեցող և խորապես կոտրված մարդ էր): Նրանք ոչ միայն ժառանգելու էին իրենց երկրային հոր նմա-

նությունը (ով աստվածապաշտ մարդ է), այլ ավելին՝ նրանք ժառանգելու էին իրենց Տիրոջ նմանությունը: Ես կանգնեցի այն խոստման վրա, որ իմ որդիները Բարձրյալի արքայազներ էին դառնալու:

Հակառակվելով մեր ընտանեկան անեծքներին՝ մենք տեսանք, որ Աստծո Խոսքը ճշմարիտ էր: Աստված խոստումներ տվեց մեզ ծոմապահությունների և հռչակումների ժամանակ, և շնորհիվ այդ խոստումների՝ մեր ընտանիքը ծաղկունք ապրեց:

Աղոթք՝ ընտանեկան անեծքները քանդելու համար

Գաղատացիների 3.13-ում գրված է. «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք լինելով»: Ինչպիսի անեծքներ էլ հետևեն ձեր ընտանիքին սերունդներ շարունակ, Քրիստոսի մեջ դրանք այլևս իշխանություն չունեն ձեզ վրա:

Եթե դուք տեղյակ եք ձեր ընտանեկան անեծքների մասին, մենք ցանկանում ենք օգնել ձեզ, որ քանդեք այն, ինչը սահմանափակել և բնորոշել է ձեր ընտանեկան ժառանգությունը: Ստորև բերված աղոթքը կօգնի ձեզ՝ հակառակվել սատանայի ամրություններին Աստծո Խոսքի թրով: Ազատությունն ընտանեկան անեծքներից հենց այնպես տեղի չի ունենում. դուք պետք է բացահայտեք սատանայի խարդավանքները և հակառակվեք դրանց: Նրա նպատակն է՝ թույլ չտալ, որ վայելեք այն ուրախությունը, խաղաղությունը և բավականությունը, որոնք Աստված շնորհել է ձեզ: Այնուամենայնիվ, դուք կարող եք հաղթահարել ձեր թշնամուն այն իշխանությամբ, որն այժմ ունեք Քրիստոսի մեջ:

Խնդրում ենք, մի պահ կանգ առեք և որոշ ժամանակ սպասեք, մինչև այս աղոթքն անելը: Եթե ցանկանում եք աղոթել հենց հիմա, հավաստիացեք, որ մենակ եք, կամ միայն ձեր կողակցի, մտերիմ ընկերներից (ընկերուհիներից) մեկի կամ ձեր աղոթքի ընկերոջ հետ եք: Սա անձնական աղոթք է, որի ընթացքում դուք պետք է բարձրաձայն խոսեք՝ արտահայտելով ձեր խնդրանքները, հրաժարումը և դիրքորոշումը:

Ստորև բերված աղոթքը հակառակվում է այն անեծքներին, որոնք սպառնում էին մեր ամուսնությանը և ընտանիքին: Մենք

կազմել ենք այս աղոթքը՝ միավորելով հատվածներ Աստվածաշնչից, որովհետև Խոսքը՝ Հոգու սուրն է և զորավոր երկսայրի թուրը: Եթե ձեր ընտանիքի պատմության մեջ կան խնդիրներ, որոնք ընդգրկված չեն այս աղոթքի մեջ, մենք խրախուսում ենք ձեզ՝ գտնել հատվածներ Աստվածաշնչից, որոնք հակառակվում են այդ խնդիրներին Աստծո ճշմարտությամբ և խոստմամբ: Կազմե՛ք համարձակ հռչակում, որը համապատասխանում է Աստծո Խոսքին, և ձեր կյանքից քանդե՛ք այդ անեծքը Հիսուսի արյան զորությամբ: Աղոթքի վերջում մենք զետեղել ենք հատվածներ Աստվածաշնչից՝ հետագա ուսումնասիրության համար:

Թանկագին երկնային Հա՛յր,

Ես գալիս եմ Քո առջև Քո թանկ Որդու՝ Հիսուսի անունով. ես մուտք եմ գործում Քո դռներով՝ գոհությամբ, և գալիս եմ Քո սրահները՝ փառաբանությամբ: Զգացմունքները համակում են ինձ, երբ մտածում եմ իմ հանդեպ ունեցած Քո շնորհքի, ողորմության և սիրո մասին, և առաջին հերթին գոհանում եմ Քեզնից փրկության զորավոր աշխատանքի համար, որը Դու կատարել ես իմ կյանքում:

Այժմ ես մտադրված եմ ուխտ կնքել ՏԻՐՈՋ՝ Իսրայելի Աստծո հետ: Դու ՏԵՐՆ ես՝ երկնքի և երկրի Աստվածը, մեծ և ահավոր Աստվածը, Ով պահում է Իր սիրո ուխտը նրանց հետ, ովքեր սիրում են Նրան և հնազանդվում Նրա պատվիրաններին: Թող որ Քո ականջն ուղղված լինի և Քո աչքերը բաց լինեն՝ Քո ծառայի աղոթքը լսելու համար: Ես խոստովանում եմ իմ մեղքերը և իմ հոր տան մեղքերը՝ ամեն անօրինություն, որը մենք գործել ենք Քո դեմ: Ների՛ր մեզ, որովհետև մենք շատ հանցավոր ենք Քո դեմ: Մենք ծածկվել ենք ամոթով, որովհետև մեղանչել ենք Քո դեմ: Բայց Դու, Տե՛ր՝ մեր Աստված, ողորմած և ներող ես, թեև մենք ապստամբել ենք Քո դեմ և չենք հնազանդվել ՏԻՐՈՋԸ՝ մեր Աստծուն, ո՛չ էլ պահել ենք այն օրենքները, որոնք Նա տվել է մեզ Իր ծառաների՝ մարգարեների միջոցով: Մենք խնդրում ենք Քեզ, թլփատի՛ր մեր սրտերը և հեռացրո՛ւ մեր անցյալի մեղքը, ամոթը և նախատինքը:

Ես խոստովանում եմ իմ և իմ հայրերի մեղքերը, որոնք վերաբերում են ամեն տեսակի ներգրավվածությանը օկուլտիզմի, կախարդության կամ գուշակության մեջ, և հրաժարվում եմ դրանցից (կա՛նգ առեք այստեղ և զգայուն եղեք, որպեսզի ավելացնեք այն ամենը, ինչ Սուրբ Հոգին ցույց կտա ձեզ, և հատկապես ինչից դուք պետք է հրաժարվեք՝ մինչև շարունակելը, օրինակ՝ աստղագուշակությունից, ոգեհարցության հավաքույթներից, սարսափ ֆիլմերից, խաղերից, գրքերից և այլն): Ես հրաժարվում եմ իմ մասնակ-

ցությունից այս բաների մեջ և քանդում եմ դրանց անեծքն իմ կյանքից և իմ երեխաների, նրանց երեխաների և նրանց երեխաների երեխաների կյանքերից:

Ես խոստովանում եմ իմ և/կամ իմ հայրերի մեղքերը թմրանյութերի և խմիչքի չարաշահման մեջ և հրաժարվում եմ դրանցից: Հա՛յր, փակի՛ր ամեն մի դուռ մեղքի, գերության կամ հարստահարման դեմ, որ այս գործերը կարող էին բացել հոգևոր իրականության մեջ: Ես հրաժարվում եմ դրանցից (տվե՛ք թմրադեղերի անունները, եթե սա վերաբերում է ձեզ), և ես քանդում եմ դրանց անեծքի զորությունն իմ կյանքից և իմ երեխաների, նրանց երեխաների և նրանց երեխաների երեխաների կյանքերից: Հիսուսի անունով, ամե՛ն:

Հաջորդ գլուխներից մեկում մենք կշարունակենք խոսել այս սկզբունքի մասին՝ անդրադառնալով այն անեծքներին և շնչավոր կապերին, որոնք առաջանում են սեռական մեղքերի պատճառով: Քանի որ Հիսուսը լիարժեք հաղթանակ է տարել խաչի վրա, դուք ազատ եք այս անեծքներից: Կարիք չկա, որ վախենաք այդ անեծքներից կամ անհանգստանաք, որ այդ մեղքերը կհետևեն ձեզ և ձեր երեխաներին: Այսօր դուք նոր ժառանգություն հաստատեցիք ձեր ընտանիքի համար:

Հետագա ուսումնասիրության համար կարդացե՛ք. Սաղմոս 100.4, Բ Մնացորդաց 29.10,11, Նեեմիա 1.5-7, Դանիել 9.8-10, Հեսու 5.9, Մատթեոս 10.34, Եբրայեցիների 4.12, Բ Մնացորդաց 29.5,6[7]:

Օր 5

Ինչպե՞ս վարվել Նոր հարազատների հետ

Նոր հարազատների վերահսկողության հետ կապված Խնդիրներն ավելի հաճախ լինում են նորապսակների մոտ, բայց դրանք կարող են շարունակվել նաև ամուսնության սկզբնական շրջանից հետո: Երբ մեր կողակիցների և մեր հարազատների միջև կոնֆլիկտներ են լինում, մենք բնականորեն ցանկանում ենք պաշտպանել մեր ծնողներին (կամ այլ հարազատների), ում մենք ճանաչում ենք ամբողջ կյանքում: Բոլորս էլ պետք է սեր և հարգանք ցուցաբերենք մեր ծնողների հանդեպ, բայց թեև դուք ընդունում

եք ձեր ծնողների խորհուրդը, ամուսնանալուց հետո դուք, նախ և առաջ, պետք է հաշվի առնեք ձեր կողակցի կարծիքը:

Մինչև մեր ավագ որդու ամուսնանալը, ես (Ջոնը) ասում էի նրան. «Էդիսո՛ն, ես չեմ կարգադրելու քեզ, թե ինչպես վարվես որևէ հարցում, քանի դեռ խորհուրդ չես հարցրել ինձնից: Ես այլևս չեմ փորձելու առաջնորդել կյանքդ: Դու հիմնելու ես քո ընտանիքը, և ես ուզում եմ սովորելու և աճելու հնարավորություն տալ քեզ»: Էդիսոնը շնորհակալություն հայտնեց ինձ այդ դիրքորոշման համար: Նա դիմում է ինձ ամեն անգամ, երբ ցանկանում է ստանալ իմ խորհուրդը:

Ես չեմ ցանկանում վերահսկել Էդիսոնին՝ դարձնելով նրան իմ պատճենը: Ես ցանկանում եմ, որ Էդիսոնը դառնա այնպիսին, ինչպիսին Տերն ստեղծել է նրան, և եթե չափից շատ միջամտեմ նրա ամուսնության մեջ, ես թույլ չեմ տա նրան՝ ստանձնել իր ընտանիքի ղեկավարի դերը (անկեղծ ասած՝ ինձ զարմացնում է, թե ինչպես է նա ղեկավարում իր ընտանիքը: Նա անում է դա շատ ավելի լավ, քան ես՝ նրա տարիքում):

Աստվածաշնչում պարզ գրված է.

> «…Տղամարդը *թողնում է* իր հորը և մորը և միանում է իր կնոջը, և այս երկուսը միանում են՝ մեկ դառնալով» (Ծննդ. 2.24, NLT, շեղագիրն ավելացված է):

Ձեր հորը և ձեր մորն այս կերպով թողնելը նշանակում է՝ թողնել ձեր ծնողների ընտանիքի իշխանությունը: Սա նույնպես նշանակում է՝ հեռանալ ցանկացած անառողջ ազդեցությունից, որը ձեր ծնողներն ունեն ձեր կյանքում: Ձեր ծնողներին պատվելը կարևոր է, բայց դուք կարող եք պատվել նրանց՝ առանց նրանց հնազանդվելու: Դուք նոր ընտանիք եք կազմել՝ նոր իշխանությամբ: Ձեր ծնողներն այլևս իշխանություն չունեն ձեր կյանքում, այնպես որ, նրանք չպետք է ղեկավարեն ձեր կյանքը և ամուսնությունը:

Միգուցե դուք ստիպված լինեք գործ ունենալ այն հարազատների հետ, ովքեր փորձում են չափից շատ մասնակցություն ունենալ ձեր ամուսնության մեջ: Սկզբնական շրջանում մեր հարազատներից մեկը փորձում էր վերահսկել մեզ և բաժանություն մտցնել մեր միության մեջ: Նրա միջամտությունն ավելի կործանարար էր դառնում, իսկ մեր փորձերը՝ այդ խնդիրը մեղմորեն լուծելու համար, ապարդյուն էին: Ի վերջո, մենք հանդիպեցինք այդ անձնավորությանը (ում

երկուսս էլ պատվում և սիրում ենք) և պարզ արտահայտեցինք մեր դիրքորոշումը:

Ես ասացի. «Դու այլևս չես միջամտելու իմ ընտանիքի ղեկավարման հարցում: Սա նոր ընտանիք է: Մենք պատվում ենք քեզ, բայց դու չես վերահսկելու այն որոշումները, որոնք կայացվում են այս ընտանիքում: Մենք թույլ չենք տալու, որ դու շահարկես մեզ՝ ստիպելով վարվել՝ ինչպես դու ես ցանկանում»: Ես պետք է խիստ բառեր օգտագործեի, որովհետև ավելի անուղղակի մոտեցումներն արդյունք չէին տվել: Բարեբախտաբար, նա հասկացավ, թե ինչ էր տեղի ունենում, և այժմ նա պատշաճ, ողջամիտ դիրք է զբաղեցնում մեր հարաբերությունների մեջ:

Մենք՝ ամուսնական զույգերս, պետք է մշտապես պաշտպանենք մեր միությունն ամեն տեսակի հարձակումներից, այդ թվում՝ մեր ընտանիքի անդամների հարձակումներից: Հաճախ այս հարձակումները չարամտորեն չեն արվում, և այդ պատճառով անմեղ են թվում: Դրանք հաճախ լինում են ծաղրական կատակների տեսքով, բայց նման աննշան թվացող դիտողությունները մշտապես կործանարար ազդեցություն ունեն: Երբ ես ամուսնական արարողություններ եմ անցկացնում, նայում եմ ամուսնական զույգի ընտանիքի բոլոր անդամներին և ընկերներին, ովքեր ներկա են, և ասում եմ. «Վա՜յ ձեզ, եթե դուք խոսեք այս միության դեմ: Այս միությունը հաստատված է Աստծո կողմից: Չհամարձակվե՛ք շահարկել կամ բաժանել այն: Խոսե՛ք միայն կյանք այն միությանը, որն Աստված հաստատեց այսօր»:

Երբ Էդիսոնն ամուսնացավ, մենք որոշեցինք, որ նրան չենք ստիպելու՝ ընտրություն կատարել իր կնոջ՝ Ջուլիի, և մեր միջև: Իրականում, նա արդեն կատարեց իր ընտրությունն այն օրը, երբ ամուսնացավ Ջուլիի հետ, և մենք շատ ուրախ ենք այդ որոշման համար: Ընտանեկան փոխհարաբերությունների շրջանակներում սերը երբեք չի ստիպում մարդկանց՝ ընտրություն կատարել: Սերն աջակցում և կամուրջներ է կառուցում հին և նոր փոխհարաբերությունների միջև: Մենք սիրում ենք Ջուլիին և նրան ավելի շատ համարում ենք մեր աղջիկը, քան հարսը: Այս մտերմությունը հնարավոր է միայն մեկ պատճառով. մենք հարգալից վերաբերմունք ենք ցուցաբերել նրա նոր ընտանիքի հանդեպ և թույլ ենք տվել, որ նա և Էդիսոնը գրեն իրենց պատմությունը:

Անիրատեսական սպասումներ

Միացյալ Նահանգներում Անիրատեսական սպասումներն ամուսնալուծության գլխավոր պատճառներից են[8]: Մեզնից շատերն ամուսնանում են՝ ակնկալելով հարատև երանություն, անդադար սեռական շփում և անկաշկանդ փոխհարաբերություններ: Մենք չենք սպասում, որ ամուսնությունը հավատարմորեն և աննահանջ կերպով բացահայտելու է մեր եսասիրությունը և այն բնագավառները, որոնցում անապահով ենք զգում մեզ, ո՛չ էլ նախատեսում ենք, որ հայտնաբերելու ենք մեր կողակցի թուլությունները և սխալները: Մեր սխալ ակնկալիքները կարող են դառնության և դժգոհության պատճառ դառնալ, ինչը թույլ չի տա մեզ կառուցել աստվածահաճո միություն:

Անիրատեսական սպասումները հաճախ ծագում են ոչ իմաստուն համեմատությունների պատճառով: Մենք ապրում ենք մի մշակույթում, որը կենտրոնացած է զվարճությունների վրա: Այնպես որ, մեզ մշտապես հնարավորություններ են ընձեռվում՝ համեմատելու մեր միությունն այն ամուսնությունների հետ, որոնք պատկերվում են հեռուստատեսությամբ: Ֆիլմերը և հաղորդումներն առաջարկում են մեզ սեր՝ առանց աշխատանքի, գեղեցկություն՝ առանց զոհի, և վստահություն՝ առանց ռիսկի: Դրանք շեշտադրում են հարաբերությունների ռոմանտիկ մասը, բայց չեն պատկերում կյանքի «ոչ հոլիվուդյան» կողմերը:

Եթե դուք որոշ ժամանակ է՝ ամուսնացած եք, արդեն հասկացել եք, որ ամուսնությունը բաղկացած չէ միայն ռոմանտիկ հանդիպումներից, կատարյալ համատեղելիությունից և այնպիսի օրերից, երբ դուք չունեք ոչ մի պարտավորություն: Ամուսնությունը՝ ծանր աշխատանք է, որը միշտ չէ, որ հաճելի է կատարել:

Այն, որ ձեր ամուսնության մեջ դժվարություններ կան, դեռ չի նշանակում, որ դուք չպետք է ամուսնանայիք: Ամուսնական դժվարություններն օգտակար են, որովհետև դրանք օգնում են ձեզ՝ ընդարձակվել: Դրանք զտում են ձեր բնավորությունը և ավելացնում ձեր կարողությունները: Դուք դեռ հիշո՞ւմ եք, որ ամուսնական հարաբերություններն օգնում են ձեզ՝ *մեծության* հասնել: Բոլորին դուր է գալիս զարգանալու և հասունանալու գաղափարը, քանի դեռ նրանք չեն բախվում այնպիսի իրավիճակի, որը հասունացում է պահանջում:

Անիրատեսական սպասումները չեն առաջանում միայն հեռուստատեսային պատկերացումներից: Մենք ինքներս կոպիտ սխալ ենք գործում՝ համեմատելով մեր ամուսնությունը ընկերների կամ հարևանների ամուսնությունների հետ: Նույնիսկ միտքն այս մասին սարսափելի է: Մենք ոչ մի կերպ չենք կարող իմանալ, թե ինչ է կատարվում այդ ընտանիքներում: Արտաքնապես ամեն ինչ կարող է հիանալի թվալ, բայց միգուցե փակ դռների ետևում նրանք կործանում են իրար:

Բացի այդ՝ մեզ մոտ կարող է գայթակղություն առաջանալ, որ համեմատենք մեր ամուսնության տարբեր ժամանակաշրջանները: Մենք կարող ենք համեմատել մեր ներկա կյանքը (երեխաներ, տակդիրներ, գրեթե ոչ մի ազատ ժամանակ) այն ժամանակվա հետ, երբ դեռ երեխաներ չունեինք: Տրամաբանորեն սա անիմաստ է: Անհնար է, որ ձեր կյանքը ոչ մի կերպ չփոխվի երեխաներ ունենալուց հետո: Երբ ծնողներ եք դառնում, դուք ավելի քիչ ազատություն եք ունենում և ավելի շատ պատասխանատվություն: Երեխաներ ունենալը բնականորեն փոխում է ձեր կյանքը, այնպես որ, ձեր ամուսնական հարաբերությունները նույնպես փոխվում են: Մենք գիտենք, որ սա հասկանալը դժվար չէ, բայց որքա՜ն հաճախ ենք հիմար համեմատություններ անում, որոնք խլում են այն ուրախությունը և բավականությունը, որը մենք կարող ենք ունենալ հիմա, և լարվածություն են առաջացնում մեր հարաբերությունների մեջ:

Թեոդոր Ռուզվելտն ասել է. «Համեմատությունը գողանում է ուրախությունը»: Եթե ցանկանում եք ուրախություն ունենալ ձեր ամուսնության մեջ, դուք պետք է դադարեք համեմատել ձեր հարաբերություններն այն հարաբերությունների հետ, որոնք ավելի լավն են թվում, անկախ այն բանից՝ խոսքն իրակա՞ն մարդկանց մասին է, թե՞ հեռուստատեսային հերոսների: Ուրախությունն աննշան բան չէ, այնպես որ, դուք չեք կարող ձեռք բերել այն, եթե մանրախնդիր լինեք: Ուրախությունը վեր է հանգամանքներից. այն չի սահմանափակվում զգացմունքներով և ուժ է ստանում, երբ տեսնում է ընդհանուր պատկերը՝ Աստծո ամբողջական ծրագիրը ձեր կյանքի համար:

Ուրախությունը՝ Հոգու պտուղ է (տե՛ս Գաղատ. 5.22,23), ինչը նշանակում է, որ այն ստացվում է Աստծուց, ոչ թե հանգամանքներից: Մարդու կամքը չի կարող առաջացնել այն: Երջանկությունն զգացմունք է, որը կարող է խափանվել ժամանակավոր դժվարությունների պատճառով, մինչդեռ ուրախությունը վեր է դժվա-

րություններից: Ուրախության աղբյուրն այն հույսն է, որն ունենք Քրիստոսի մեջ: Եթե մենք չունենք ուրախություն Աստծո մեջ, մեր կյանքում չի լինի այն զորությունը, որն անհրաժեշտ է հաջողակ ամուսնություն կառուցելու համար, որովհետև Նրա ուրախությունը՝ մեր զորությունն է (տե՛ս Նեեմիա 8.10): Գրելով Փիլիպեի եկեղեցուն՝ Պողոսը կրկնեց այս միտքը.

> «Ուրա՛խ եղեք Տերում ամեն ժամանակ. դարձյալ ասում եմ՝ ուրա՛խ եղեք: Ձեր հեզությունը թող հայտնի լինի բոլոր մարդկանց. Տերը մոտ է: Ոչինչ հոգս մի արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 4.4-7):

Երբ ձեր փոխհարաբերություններում անհանգստություններ ունեք, բերեք ձեր խնդրանքներն Աստծո առջև՝ ուրախությամբ և գոհությամբ: Նա խոստացել է փոխել ձեր հոգսերն Իր խաղաղության հետ: Սա ձեռնտու փոխանակում է:

Անհիրատեսական սպասումները կգողանան ձեր ուրախությունը, և արդյունքում կխլեն այն ուժերը, որոնց կարիքը դուք ունեք ձեր ամուսնության մեջ: Մի՛ ընկեք այս ծուղակը: Բացահայտե՛ք այն սպասումները, որոնք արգելքներ են ստեղծել ձեր հարաբերությունների մեջ, և ապաշխարե՛ք, որ թույլ եք տվել դրանց՝ ավելի կարևոր դիրք զբաղեցնել ձեր կյանքում, քան Աստծո Խոսքի ճշմարտությունը և Նրա միակ ծրագիրը ձեր կյանքի համար:

Ձեր հերթը

Որոշ ժամանակ հատկացրեք, որպեսզի խոսեք ձեր կնոջ կամ ամուսնու հետ այս գլխի մասին: Խնդրեք Սուրբ Հոգուն՝ առաջնորդել ձեզ, և գրի առեք, թե ինչը պետք է մաքրվի և հեռացվի ձեր ամուսնությունից: Կան այնպիսի բաներ, որոնք անհրաժեշտ է փոխել, օրինակ՝ ձեր վարքը և վերաբերմունքը, և Աստված կօգնի, որ անեք դա Իր շնորհքի զորությամբ: Այլ բաներին, օրինակ՝ ընտանեկան անեծքներին, պետք է հակառակվել աղոթքով:

Մի՛ հիասթափվեք, եթե ձեր ցուցակը բաղկացած լինի մի քանի էջից: Այս առաջադրանքի նպատակն այն չէ, որ պարզեք, թե որքա-

նով է ձեր ամուսնությունը «սխալ», ո՛չ էլ՝ որ տեսնեք, թե ձեզնից ո՛վ ավելի շատ խնդիրներ ունի: Անելով սա՝ դուք ընդառաջ կգնաք այն հոյակապ բաներին, որոնք կարող են տեղի ունենալ ձեր ապագայում: Եթե լուծեք ձեր խնդիրները հիմա, դուք հնարավորություն կտաք ձեր ընտանիքին՝ փայլուն պատմություն գրել, որը կլինի երկնքի ժառանգությունը՝ հայտնված երկրի վրա: Մենք ցանկանում ենք, որ դուք մաքրեք ձեր տախտակամածը, որպեսզի կարողանաք առաջ շարժվել և ազատ լինել այն բաներից, ինչը կխանգարի ձեզ՝ ստանալու Աստծո պատրաստածը ձեզ համար: Մենք մի աղոթք ենք կազմել, որը կօգնի ձեզ՝ սկսելու ձեր ընթացքը.

Թող որ սա նվիրական պահ լինի ձեզ համար:

Հա՛յր, մենք շնորհակա՛լ ենք, որ առաջարկում ես մեզ նոր սկիզբ և նոր ժառանգություն:

Մինչ գրի ենք առնում այն ամենը, ինչ պետք է մաքրվի մեր փոխհարաբերություններից, մենք աղոթում ենք, որ երկնային մթնոլորտը շրջապատի մեզ:

Մենք խնդրո՛ւմ ենք Քեզ, Սո՛ւրբ Հոգի, առաջնորդի՛ր և սովորեցրո՛ւ մեզ:

Մենք աղոթում ենք, որ Տիրոջ հրեշտակները բանակ կազմեն մեր շուրջը և պատրաստ լինեն վրեժխնդրություն իրականացնելու թշնամու վրա, ով չարչարել է մեր ընտանիքը սերունդներ շարունակ:

Մենք աղոթում ենք մեծ շնորհքի համար, որը կզորացնի մեզ՝ ներելու և վերափոխվելու համար:

Մենք աղոթում ենք, որ մեր մտքերը նորոգվեն՝ համաձայն Քո Խոսքի:

Մենք խնդրում ենք Քո սիրո հայտնության համար, որը կհեռացնի ամեն վախ:

Մենք խնդրում ենք վստահության վերականգնման և մեր փոխհարաբերությունների մաքրման համար:

Մենք աղոթում ենք, որ միաբանություն բերես այնտեղ, որտեղ բաժանություն է եղել:

Մենք խնդրում ենք, որ Դու ոգեշնչես մեզ, որպեսզի երազենք ոչ թե համաձայն ոչ աստվածահաճո սպասումների՝ այլ համաձայն Քո խոստումների:

Մենք հռչակում ենք ազատություն մեր ընտանիքում, մեր ամուսնության մեջ և մեր կյանքերում, Հիսուս Քրիստոսի անունով: Մենք հռչակում ենք, որ Աստծո թագավորությունը մեր մեջ է: Աստծո կամքը կկատարվի մեր ամուսնության մեջ և մեր ընտանիքում՝ երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է: Հիսուսի զորավոր անունով, ամե՛ն:

Սերտողություն. Օր 1

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

«Ստուգե՛ք ինքներդ ձեզ՝ համոզվելու համար, որ հաստատուն եք հավատքի մեջ: Պարզապես մի՛ ապրեք՝ ամեն ինչին սովորականի պես վերաբերվելով: Պարբերաբար ստուգումներ անցկացրեք ձեզ համար: Դուք պետք է անմիջական վկայություն ունենաք, որ Քրիստոսը ձեզանում է, ոչ թե հիմնվեք ձեր լսածի վրա: Ստուգե՛ք դա: Եթե չանցնեք այդ ստուգումը, ինչ-որ բան արեք»:

— Բ Կորնթացիների 13.5, MSG

Երբեմն առաջ շարժվելու համար պետք է ետ նայել և հասկանալ, թե ինչպես եք հասել այնտեղ, որտեղ գտնվում եք: Այսպիսի ընտանեկան ստուգումը կօգնի ձեզ՝ տեսնել այն խառնաշփոթը, որը պետք է մաքրվի ձեր ամուսնության տախտակամածից, և զբաղվել դրանով: Կա՛նգ առեք մի քանի րոպե և մտածե՛ք, իսկ հետո անկեղծորեն պատասխանեք:

Հիշե՛ք ձեր մանկությունը: Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կնկարագրեիք ձեր տան մթնոլորտը:

_____

_____

Օրինակներ՝ խաղաղ, խառնաշփոթ, սիրով լի, անկարեկից, բաց, փակ, առատաձեռն, ժլատ, վախով լի, ուրախ, ջերմ և հյուրասեր կամ սառն ու թշնամական:

Կարճ նկարագրե՛ք ձեր ծնողների փոխհարաբերությունները՝ ընդհանուր առմամբ (շփումը, զգացմունքները, ընկերությունը և այլն):

_____

_____

Ինչպե՞ս էին ձեր ծնողները հարթում անհամաձայնությունները և վեճերը: Ինչպե՞ս էին նրանք վերաբերվում միմյանց:

_____

_____

Երբ դուք ինչ-որ բան սխալ էիք անում կամ՝ երբ վատ էիք վարվում, ինչպե՞ս էին ձեզ խրատում: Արդյո՞ք խրատից հետո այդ սխալը դեռ պահվում էր ձեր դեմ, թե՞ դուք լիովին վերականգնվում էիք և կրկին սիրվում:

_____

_____

ԱՎԱՐՏԵ՛Ք ԱՅՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր տանը կային բաներ, որոնք **ինձ դուր էին գալիս**, և ես ցանկանում եմ կրկնել դրանք սեփական ընտանիքում…

_____

_____

Մեր տանը կային բաներ, որոնք **ինձ դուր չէին գալիս**, և ես չեմ ցանկանում կրկնել դրանք սեփական ընտանիքում…

_____

_____

Վերանայե՛ք ձեր պատասխանները և համեմատե՛ք դրանք ձեր ամուսնության և ընտանեկան կյանքի հետ: Ինչպիսի՞ ***նմանություններ*** եք տեսնում ձեր ընտանեկան մթնոլորտում, ձեր և ձեր կողակցի փոխհարաբերությունների մեջ, այն բանում, թե ինչպես եք հարթում վեճերը և ինչպես եք դաստիարակում ձեր երեխաներին: Արդյոք նկատո՞ւմ եք որևէ կապ:

_____

_____

_____

Համաձայն ձեր պատասխանների՝ դուք և ձեր կողակիցը ի՞նչը պետք է մաքրեք ձեր ամուսնության տախտակամածից:

_____

_____

_____

Պատմե՛ք ձեր կողակցին ձեր պատասխանների մասին: Աղոթե՛ք և հանձնե՛ք Սուրբ Հոգուն այն ամենը, ինչ պետք է մաքրվի ձեր կյանքից:

ՎԱՐՎԵ՛Ք ՆԵՐՈՂԱՄՏՈՐԵՆ

«Ներողամտորե՛ն վերաբերվեք միմյանց սխալներին և ներե՛ք ցանկացած մարդու, ով վիրավորում է ձեզ: Հիշեք՝ Տերը ներեց ձեզ, այնպես որ, դուք էլ պետք է ներեք մարդկանց»:

— Կողոսացիների 3.13, NLT

Արդյո՞ք *ներողամտորեն* եք վերաբերվում ձեր կողակցին: Արդյո՞ք դուք թույլ եք տալիս, որ ձեր կողակիցը սխալներ գործի և հնարավորություն եք տալիս, որ նա աճի Աստծո շնորհքով՝ Նրան նմանվելու համար: Իրականում, բոլորս էլ ներողամտության կարիք ունենք, որովհետև բոլորս էլ սխալներ ենք գործում: Ներելով՝ մենք նմանվում ենք մեր երկնային Հորը. մենք դառնում ենք Նրա շնորհքի միջնորդը մեր կողակցի համար՝ օգնելով նրան փոխվել: Հեղինակ **Կ. Ս. Լյուիսը** գրում է.

> «Լինել քրիստոնյա նշանակում է՝ ներել աննե՛ներելին, որովհետև Աստված ներել է այն աննե՛ներելին, որը քո մեջ էր: Սա դժվար է: Միգուցե այնքան էլ դժվար չէ ներել մեկ վիրավորանքը. բայց ներել առօրյայում անդադար կրկնվող սադրանքները... շարունակ ներել իշխող սկեսրոջը, կռվարար ամուսնուն, անդադար բողոքող կնոջը, եսասեր դստերը, ստախոս որդուն. ինչպե՞ս մենք կարող ենք անել սա: Կարծում եմ՝ միայն հիշելով, թե ի՜նչ դիրքում ենք մենք, և իսկապես հավատալով այն խոսքերին, որոնք աղոթում ենք ամեն երեկո. «Ների՛ր մեզ՝ մեր մեղքերը, *ինչպես մենք ենք ներում նրանց, ովքեր մեղանչել են մեր դեմ*»: Չկա այլ պայման, որով կարող ենք ներում ստանալ: Սա մերժելը նշանակում է՝ մերժել Աստծո ողորմությունը մեր հանդեպ: Այս խոսքում նույնիսկ բացառության ակնարկ չկա. Աստված նկատի ունի ճիշտ այն, ինչ ասում է»[9]:

Ո՞ր բնագավառներում եք ցանկանում, որ ձեր կողակիցը ներողամիտ լինի ձեր հանդեպ: Ո՞ր բնագավառներում դուք սխալներ գործելու և աստվածային բնավորություն ձեռք բերելու կարիք ունեք: Նշե՛ք երեք բնագավառ, որոնց մասին տեղյակ եք և որոնց վրա աշխատում եք:

_____

_____

_____

_____

_____

Անվանե՛ք երեք բնագավառ, որոնցում ձեր կողակիցն ունի ձեր ներողամտության կարիքը: Արդյո՞ք դուք ներողամիտ եք: Եթե ոչ, ինչո՞ւ:

_____

_____

_____

Համաձայն Աստծո Խոսքի՝ ի՞նչ կկատարվի ձեզ հետ, եթե դուք որոշեք պահել ձեր կողակցի դեմ ունեցած վիրավորանքը: Ուշադրությա՛մբ կարդացեք Մատթեոս 6.14,15, 18.21-35, Մարկոս 11.25 խոսքերը և գրե՛ք, թե ինչ է հայտնում Սուրբ Հոգին:

_____

_____

_____

Աստծո ներումն *անսահմա՞ն* է: Եթե դուք դժվարանում եք ներել ձեր կողակցին, որոշ ժամանակ հատկացրեք և ետ նայեք ձեր կյանքին: Արդյո՞ք վիրավորանք եք պատճառել Տիրոջը ձեր մտքում, ձեր խոսքերով և գործերով: Երբ հիշեք ձեր մեղքի խորությունը և մտորեք այն տանջալի ցավերի շուրջ, որոնք Հիսուսը կրեց, որպեսզի վճարեր դրա համար, Սուրբ Հոգին կմեղմացնի ձեր սիրտը և շնորհք կտա՝ ներելու համար:

ԱՂՈԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՐ ԿՈՂԱԿՑԻՆ ԱՍՏՑՈՒՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Տե՛ր, ների՛ր ինձ՝ իմ կողակցի դեմ վիրավորանք պահելու համար: Ես այլևս չեմ ցանկանում հաշվել նրա մեղքերը: Դու ներում ես իմ բոլոր մեղքերը և երբեք չես հիշեցնում դրանք: Տո՛ւր ինձ ուժ և ցանկություն, որ անեմ նույնը: Ես հանձնում եմ իմ կողակցին Քո ձեռքերի մեջ: Լցրո՛ւ Քո սերը և շնորհքը մեր սրտերում: Օգնի՛ր, որ ի սրտե սիրեմ և ներեմ նրան, ներողամիտ լինեմ նրա սխալների հանդեպ և օգնեմ նրան՝ աճել Քեզանում: Ես օրհնում եմ նրան առողջությամբ, իմաստությամբ, խաղաղությամբ, ուրախությամբ, սիրով, բարեհաճությամբ, վստահությամբ, Քո Խոսքի հայտնությամբ և Քեզ հետ ունեցած զարմանալի, մտերիմ փոխհարաբերությամբ: Շնորհակալություն, Հա՛յր, որ բժշկում ես մեր ամուսնությունը: Հիսուսի անունով, ամե՛ն»:

Թույլ տվեք Սուրբ Հոգուն, որպեսզի կառուցի Իր սիրող և ներող բնավորությունը ձեզանում, երբ ժամանակ եք անցկացնում Նրա ներկայության մեջ և ուշադրությամբ մտորում եք սուրբգրային հատվածների շուրջ, օրինակ՝ հետևյալ խոսքերի.
Ա Կորնթացիների 13, Հռոմեացիների 5.5, Եփեսացիների 3.16-19, Ա Պետրոս 3.8,9:

Սերտողություն. Օր 3

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱԽՎԱԾ Է ՁԵՐ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*«...**Ուղղե՛ք ձեր մտքերը** դեպի այն ամենը, ինչը ճշմարիտ է, բարի և արդար: Մտածե՛ք այն բաների մասին, որոնք մաքուր և գեղեցիկ են և վերաբերում են այլ մարդկանց հաճելի և բարի հայրականիշներին: Մտածե՛ք այն ամենի մասին, ինչի համար դուք կարող եք փառք տալ Աստծուն և ուրախ լինել»:*

— Փիլիպեցիների 4.8, TLB

Ինչի՞ վրա եք կենտրոնանում, երբ մտածում եք ձեր կողակցի մասին: Եթե դուք կենտրոնանաք նրա սխալների և ձախողումների վրա, ձեր ամուսնական խնդիրներն ավելի մեծ կթվան: Սակայն եթե կենտրոնանաք այն բաների վրա, որոնց համար կարող եք շնորհակալ լինել, դուք կտեսնեք ձեր փոխհարաբերությունները բոլորովին նոր լույսի ներքո: Ձեր ամուսնությունը և ձեր ամբողջ կյանքը կախված է ձեր տեսանկյունից:

Այն, թե ինչպես եք ընկալում ձեր կողակցին, ուղղակիորեն ազդելու է ձեր փոխհարաբերությունների վրա: Ինչպե՞ս եք դուք, ընդհանուր առմամբ, վերաբերվում նրան: Մտածե՛ք ձեր բառերի, գործողությունների և վերաբերմունքի մասին, որոնք նա սովորաբար ստանում է ձեզնից:

_____

_____

_____

_____

Աղոթե՛ք և խնդրե՛ք Տիրոջը, որպեսզի հայտնի ճշմարտությունը ձեր վերաբերմունքի մասին: Ի՞նչ է Նա ցույց տալիս ձեզ: Ի՞նչ է խնդրում, որ փոխեք Իր օգնությամբ:

Ցանկանո՞ւմ եք նորովի տեսնել ձեր կողակցի արժեքը: Ուշադրությամբ մտորե՛ք Փիլիպեցիների 4.8-ի շուրջ: Դրանից հետո ցուցակ կազմեք՝ ընդգրկելով ձեր կնոջ կամ ամուսնու տասը գլխավոր հատկանիշները, առանձնահատկությունները և պարգևները, որոնց համար դուք կարող եք շնորհակալ լինել Աստծուց:

Շարունակե՛ք մտածել այս մասին և նոր կետեր ավելացրեք այս ցուցակին՝ հաջորդ երեսուն օրվա ընթացքում: Անպայման անկեղծորեն շնորհակալություն հայտնեք ձեր կողակցին այս հատկանիշների համար:

Վախը քողարկում է մեր տեսողությունը: Այն կենտրոնացնում է մեր ուշադրությունը մեր կողակցի սխալների, ինչպես նաև մեզ և մեր իրավիճակների վրա: Շատ առումներով, վախը **կեղծիք է, որն իրական է թվում**: Որո՞նք են ամենամեծ վախերը ձեր և ձեր կողակցի փոխհարաբերություններում: Խնդրե՛ք Տիրոջը՝ հայտնել դրանք:

Անցկացրե՛ք այդ վախերը Փիլիպեցիների 4.8-ի զտիչով: Արդյո՞ք դրանք ճշմարիտ, բարի կամ արդար են: Արդյո՞ք դրանք մաքուր և գեղեցիկ են: Կարո՞ղ եք արդյոք փառաբանել Աստծուն դրանց համար: Ցանկացած բան, ինչը չի դիմանում այս ստուգմանը, պետք է դեն նետվի և փոխարինվի ճշմարտությամբ:

Հաճախ մեր ներկա վախերը ծնվում են անցյալի հիասթափություններից և վիրավորանքներից: Վախենալով, որ մեզ կրկին ցավ կպատճառեն՝ մենք անգիտակցաբար փորձում ենք ստիպել մեր կողակիցներին՝ վճարել մեր ծնողների, նախկին զուգընկերների կամ զուգընկերուհիների, նախկին կնոջ կամ ամուսնու սխալների համար:

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, ինչպե՞ս ձևավորվեցին այս վախերը: Ո՞րն է դրանց հիմքը: Ինչպե՞ս կարող եմ ավելի վստահել Քեզ և ջնջել դրանք իմ կյանքից»: Լուռ մնացեք և լսե՛ք: Ի՞նչ է Նա հայտնում ձեզ:

Սերտողություն. Օր 4

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԵՌՔՆԵՐԻՑ

«Քրիստոսը վճարեց գինը՝ մեզ անեծքից ազատելու համար... դառնալով անիծված մեր փոխարեն...»:

— Գաղատացիների 3.13, GW

Աստված ցանկանում է լիովին նոր բան անել ձեր ընտանիքում: Նա ասում է. «Ահա Ես նոր բան եմ անում, հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաև մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր» (Եսայի 43.19): Ինչպես գրում է **Ջոյս Մայերը**.

> «Հիսուսը եկավ, որպեսզի բացեր բանտի դռները և ազատ արձակեր գերիներին... Միգուցե դուք դժբախտ մանկություն եք ունեցել: Միգուցե նույնիսկ ձեր ներկա հանգամանքները շատ բացասական և ճնշող են: Միգուցե դուք այնքա՜ն վատ իրավիճակում եք, որ թվում է՝ չունեք ոչ մի իրական պատճառ հուսալու համար: Բայց ես համարձակ ասում եմ ձեզ. *ձեր ապագան չի որոշվում ձեր անցյալով կամ ներկայով:* Նորոգե՛ք ձեր մտածելակերպը: Հավատացե՛ք, որ Աստծո հետ ամեն բան հնարավոր է (տե՛ս Ղուկ. 18.27)»[10]:

Քրիստոսը վճարեց գինը, որպեսզի ազատեր ձեզ, ձեր կողակցին և ձեր երեխաներին ամեն անեծքից, որը թաքնված է ձեր ազգաբանության մեջ: Դուք միայն պետք է *կիրառեք* Նրա հաղթանակը: Լո՛ւռ մնացեք Տիրոջ առջև և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, արդյո՞ք իմ կամ իմ կողակցի ազգաբանության մեջ կան անեծքներ, որոնք ոչ աստվածահաճո վարքի հետևանք են: Խնդրո՛ւմ եմ, ցո՛ւյց տուր մեզ այդ անեծքները, որպեսզի կարողանանք հակառակվել դրանց և ճշմարիտ ազատություն ունենալ»:

_____

_____

_____

_____

Երբ Սուրբ Հոգին հայտնի այդ անեծքները, հանձնե՛ք դրանք Նրան: Գործածե՛ք այն աղոթքը, որը գրված է այս գլխում, և վստահեք, որ Աստված ճեղքում կբերի ձեր կյանքում:

Երբեմն անգիտակցաբար թույլ չենք տալիս, որ խնդիրները, որոնք շարունակաբար վնասում են մեր ընտանիքին, հեռանան մեր

կյանքից: Պատճառն այն երդումներն են, որոնք մենք արել ենք (կամ խոստումները, որոնք տվել ենք) ինքներս: Ասելուն պես՝ այդ երդումները պարիսպներ են բարձրացնում մեր սրտի շուրջը: Թեև դրանց նպատակը մեզ պաշտպանելն է, բայց փոխարենը դրանք բանտարկում և ավելի մեծ ցավ են պատճառում մեզ:

> «Դու ծուղակն ես ընկել քո իսկ բերանի խոսքերով, բռնված ես քո իսկ խոստումով»:
>
> — Առակաց 6.2, GW

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, արդյո՞ք ինչ-որ երդումներ եմ արել ինքս ինձ: Եթե այո, որո՞նք են դրանք»: Լո՛ւռ մնացեք և լսե՛ք: Ապաշխարե՛ք այն երդումների համար, որոնք Նա ցույց է տալիս ձեզ, և խնդրե՛ք Նրան՝ ազատ արձակել ձեզ բոլոր վախերից, Հիսուսի անունով:

_____

_____

_____

*Մենք երդումներ ենք անում ինքներս մեզ վախի պատճառով: Վախենալով կրկին ցավ զգալուց՝ մենք հաճախ ասում ենք այսպիսի բաներ. «**Ես երբեք թույլ չեմ տա** որևէ տղամարդու/կնոջ...», «**Եթե իմ ամուսինը/կինը երբևէ** դավաճանի ինձ (ձեռք բարձրացնի ինձ վրա և այլն), ես...»: Եթե դուք մտածել եք նման բաներ ձեր ներսում կամ բարձրաձայն ասել եք, ապաշխարե՛ք: Խնդրե՛ք Տիրոջը՝ օգնել ձեզ, որ վստահեք Նրա պաշտպանությանը:*

> «Ոչ մի զենք, որը պատրաստված է քո դեմ, հաջողություն չի ունենա, և ամեն լեզու, որը դատաստանի կբարձրանա քո դեմ, պիտի դատապարտվի: Սա [խաղաղությունը, արդարությունը, ապահովությունը, հաղթանակն ընդդեմ հակառակության] Տիրոջ ծառաների *ժառանգությունն* է [նրանց, որոնց մեջ վերարտադրվել է Տիրոջ կատարյալ Ծառան]...»:
>
> — Եսայի 54.17, AMP, շեղագիրն ավելացված է

Դուք ազատ եք ամեն անեծքից և ժառանգել եք բոլոր հոգևոր օրհնությունները, քանի որ շփվում եք Հիսուսի հետ (տե՛ս Եփես. 1.3): Ուշադրությա՛մբ կարդացեք այս սուրբգրային հատվածները և գտե՛ք այն օրհնությունները, որոնք հասանելի են ձեզ և ձեր ընտանիքին Քրիստոսում. Մատթեոս 11.28, 16.19, Ղուկաս 10.19, 11.13, Հովհաննես 4.14, 7.38,39, 14.27, 15.11, Ա Կորնթացիների 1.30, Բ Կորնթացիների 5.21, Բ Պետրոս 1.3,4: Ուրիշ ի՞նչ է հայտնում ձեզ Սուրբ Հոգին այս խոսքերում:

_____

_____

_____

_____

ԻՆՉՊԻՍԻ՞ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՔ

«... [Ասված] Ինքն է ասել՝ Ես ոչ մի կերպով չեմ ձախողի քեզ, ո՛չ էլ կլքեմ քեզ, ո՛չ էլ կթողնեմ քեզ առանց աջակցության: [Ես չեմ], [Ես չեմ], [Ես չեմ] թողնի քեզ անօգնական կամ չեմ լքի քեզ, ո՛չ էլ հուսախաբ կանեմ (բաց չեմ թողնի Իմ ձեռքը քեզնից): [Անկասկած՝ ո՛չ]»:

— Եբրայեցիների 13.5, AMP

Սպասումը՝ «ուժգին համոզմունք է, որ ինչ-որ բան տեղի կունենա կամ կլինի ապագայում»[11]: Երբ մենք սպասումներ ենք ունենում որևէ մարդուց, մեր ներսում ուժեղ զգացում կամ համոզմունք է առաջանում, որ նա շատ հաջողակ է լինելու կամ շատ բարի է լինելու: Մենք հատկապես մտածում ենք այն մասին, թե ինչպես է դա անդրադառնալու մեզ վրա: Որպես կանոն՝ ամենամեծ սպասումները մեր կյանքում լինում են այն մարդկանցից, ովքեր ամենամոտն են մեզ, և առաջին հերթին՝ մեր կողակիցներից: Հեղինակ և քարոզիչ **Պատրիկ Մ. Մորլին** բացատրում է.

> «Բոլորս էլ սպասումներ ունենք մեր ամուսնության հետ կապված: Այդ սպասումները տարբեր են և հաճախ՝ անիրատեսական: Դրանց հիմքն է՝ (1) մեր պատկերացումն ամուսնության մասին և (2) մեր չլրացված կարիքները: Յուրաքանչյուրս մտքում պատկերացում ունի այն մասին, թե ինչպիսին է կատարյալ ամուսնությունը: Միգուցե մենք ստացել ենք այդ պատկերացումը մեր ծնողներից՝ նրանց խոսքերից կամ գործերից, ընտանեկան պատմվածքներից մեր նախորդ սերունդների մասին, մեր ընկերներից մեկի ծնողներից, հեռուստատեսությունից, գրքերից, կինոաստղերի կամ որևէ հերոսի կյանքից»[12]:

Անիրատեսական սպասումները կարող են գոյություն ունենալ ձեր ամուսնության ցանկացած բնագավառում: Դրանք կարող են լինել փողը, շփումը, տնային պարտականությունները, երեխաների դաստիարակությունը, փոխհարաբերություններն ընկերների հետ, սեռական հարաբերությունները և այլն: Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Տե՛ր, արդյո՞ք ես ունեմ անիրատեսական սպասումներ իմ ամուսնությունից: Եթե այո, որո՞նք են այդ սպասումները»:

Ի՞նչ է ցույց տալիս ձեզ Սուրբ Հոգին: Գրի՛ առեք դա, ինչպես նաև այն քայլերը, որոնք Նա դրդում է ձեզ, որ անեք:

Ինչպե՞ս կարող եք իրատեսական դարձնել ձեր անիրատեսական սպասումները: **Պատրիկ Մորլին** շարունակում է.

> «Մենք պետք է սովորենք տալ՝ առանց փոխարենը որևէ բան ակնկալելու: Մենք պետք է սովորենք *պատմել մեր սպասումների մասին* մեր կողակիցներին, իսկ հետո լսել նրանց, որպեսզի պարզենք, թե արդյո՞ք դրանք իրատեսական են»[13]:

Հարցրե՛ք ձեր կողակցին. «Կարո՞ղ ես ասել, որ ես անիրատեսական սպասումներ ունեմ քեզնից: Եթե այո, ապա որո՞նք են այդ սպասումները»: Հարգանքով վերաբերվեք նրան և լսեք՝ առանց ընդհատելու: Գրե՛ք այն, ինչով նա կիսվում է ձեզ հետ:

Եթե դուք ունեցել եք անիրատեսական սպասումներ ձեր կողակցից, ժամանակ հատկացրեք, որպեսզի անկեղծորեն ներողություն խնդրեք՝ նրան ճնշման ենթարկելու համար: Աղոթե՛ք և խնդրե՛ք Տիրոջը՝ բժշկություն բերել ձեր ամուսնության մեջ և իրատեսական սպասումներ զարգացնել երկուսիդ մոտ:

Ի վերջո, մեր սպասումները պետք է լինեն Աստծուց և այն խոստումներից, որոնք Նրա Խոսքում են: Նա հավատարիմ է և չի թողնի մեզ: Աղոթե՛ք. «Տե՛ր, արդյո՞ք ես ինչ-որ չափով սպասում եմ, որ իմ կողակիցը լրացնի այն կարիքները, որոնք միայն Դու կարող ես լրացնել: Եթե այդպես է, խնդրո՛ւմ եմ, ցո՛ւյց տուր ինձ դա: Տո՛ւր ինձ շնորհք, որպեսզի վստահեմ, որ Դու կլրացնես բոլոր այդ կարիքները: Լո՛ւռ եղեք և լսե՛ք. ի՞նչ է ցույց տալիս Սուրբ Հոգին:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 3-ը:

1 | Ամուսնության մեջ անհամաձայնություններն անխուսափելի են, բայց այն, թե ինչպես եք հարթում դրանք, մեծ նշանակություն ունի: Դուք պետք է հաշվի առնեք, որ ամուսինը և կինը՝ երկու տարբեր մարդիկ են, ովքեր մեկ դառնալու ընթացքի մեջ են: Յուրաքանչյուրը եզակի և անկրկնելի է: Հետևաբար, ամուսիններից ամեն մեկն ունի այլ մտածելակերպ, հասկացողություն և զգացմունքներ: Ամուսինները տարբեր ձևով են դիտարկում իրենց շրջապատող իրավիճակները, մարդկանց, հնարավորությունները և այլն: Երբևէ մտածե՞լ եք այս մասին: Արդյո՞ք այն, որ դուք հասկանում եք ձեր կողակցի յուրահատկությունը, օգնում է ձեզ, որպեսզի գնահատեք և տեսնեք նրան նոր, դրական լույսի ներքո:

2 | Քրիստոսի միջոցով Աստված ներում է նրանց, ովքեր ներում են խնդրում: Բայց ի՞նչ կլիներ, եթե դուք խնդրեիք Աստծուն՝ ներել ձեզ ինչ-որ բանի համար, իսկ Նա պատասխաներ. «Ես համոզված չեմ, որ ցանկանում եմ ներել քեզ: Հավանաբար, դու կրկին կանես դա: Նախ՝ Ես ցանկանում եմ փոփոխություն տեսնել քեզանում»: Ինչպե՞ս կզգայիք ձեզ՝ նման պատասխան ստանալով: Արդյո՞ք երբևէ պատասխանել կամ մտածել եք այսպես, երբ ձեր կողակիցը ներողություն է խնդրել ձեզնից: Ինչպե՞ս նա կարող էր զգալ իրեն:

3 | Աստծո ներումը վարձատրություն չէ փոխված վարքի համար: Այն Նրա վստահության քվեն է: Կա՛նգ առեք և մտածե՛ք: Ինչպե՞ս են Աստծո անպայմանական սերը և ներումը զորություն և շարժառիթ տալիս մեզ՝ փոխվելու համար: Այս ճշմարտության լույսի ներքո, ինչպիսի՞ վերաբերմունք դուք պետք է ունենաք ձեր կողակցի հանդեպ, երբ պահանջվում է ներել: Ի՞նչ կկատարվի նրա հետ ձեր վերաբերմունքի պատճառով:

«Ներումը միակ միջոցն է, որով փոխհարաբերության մեջ կարելի է քանդել մեղադրանքի և ցավի շրջանը ... Այն չի լուծում բոլոր հարցերը՝ կապված մեղադրանքի և արդարության հետ... Բայց այն միանշանակ թույլ է տալիս, որ փոխհարաբերությունները նոր սկիզբ առնեն»:

— Ֆիլիպ Յանսի[14]

4 | Վախը հոգևոր ուժ է, որն ուղղակիորեն հակառակվում է Աստծո սիրուն և պաշտպանությանը մեր կյանքերում: Եթե մենք չբացահայտենք վախը և չհակառակվենք, այն կաթվածահար կանի մեզ՝ թույլ չտալով հասնել ամուսնության մեծությանը: Ամուսիններ՛ր, ինչպիսի՞ վախեր ունեն տղամարդիկ իրենց կանանց հետ շփվելիս: Կանա՛յք, ինչպիսի՞ վախեր ունեն կանայք իրենց ամուսինների հետ շփվելիս: Ինչպիսի՞ միջոցներ եք գտել՝ այդ վախերը հաղթահարելու համար:

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՎԱԽԵՐԸ	ԿԱՆԱՆՑ ՎԱԽԵՐԸ

5 | Անիրատեսական սպասումներն ամուսնության մեջ պարարտ հող են վիրավորանքի, վրդովմունքի և հիասթափության համար: Թշնամին խորամանկորեն օգտագործում է զանգվածային լրատվամիջոցները, որպեսզի առաջացնի և հրամցնի անիրատեսական պատկերացումներ մեր կողակիցների մասին, ինչպես նաև դժգոհության սերմեր ցանի: Կա՛նգ առեք և մտածե՛ք: Ինչպե՞ս են ֆիլմերը, երաժշտությունը, հեռուստատեսային հաղորդումները, ամսագրերը, գրքերը և ինտերնետը ձևավորում պատկերացումը մեր կողակցի և մեր ամուսնության մասին: Ինչպիսի՞ գործնական քայլեր կարող ենք ձեռնարկել, որպեսզի պաշտպանենք մեր սրտերն ու մտքերն անիրատեսական սպասումներից:

Ավագներ. Ներկայացրե՛ք Փիլիպեցիների 4.8-ը՝ որպես անսխալական չափանիշ լրատվամիջոցների ընտրության հարցում:

«Որովհետև, ինչպես որ նա մտածում է իր սրտում, այնպիսին է նա...»:

— Առակաց 23.7, NKJV

6 | Արդյո՞ք բախվել եք դժվարին իրավիճակների՝ կապված հարազատների վերահսկողության հետ: Առանց որևէ անուն տալու՝ պատմե՛ք նրանցից մեկի մասին: Եթե դուք կարողացել եք հաղթահարել այդ դժվարին իրավիճակը, պատմե՛ք, թե ինչպես Աստված օգնեց ձեզ: Եթե դեռ այդպիսի իրավիճակում եք, խնդրե՛ք ձեր խմբակին՝ աղոթել, որ Աստծո շնորհքը զորացնի ձեզ՝ այդ իրավիճակում ճիշտ վարվելու համար:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Մաքրելով ձեր ամուսնության տախտակամածը՝ դուք հնարավորություն կունենաք մուտք գործել այն մեծության մեջ, որն Աստված նախատեսել է ձեզ համար:
- Ներումը՝ ազատագրման քայլ է և՛ վիրավորանքը հասցնողի, և՛ վիրավորանքը ստացողի համար: Աստծո շնորհքով մենք կարող ենք ազատորեն և առանց սահմանափակման ներել մարդկանց և ընդունել Աստծո ներումը:
- Մենք չենք կարող փոխել մեր կողակիցներին. միայն Աստված կարող է անել դա: Բայց կարող ենք համագործակցել Նրա հետ՝ թույլ տալով, որ Նա փոխի մեզ:
- Գոհությունը ձեր կողակցի համար կբացի ձեր սիրտը՝ թույլ տալով սիրել, ներել և ցուցաբերել Աստծո շնորհքը, որպեսզի թե՛ նա, թե՛ դուք կարողանաք աճել և փոխվել:
- Երբ դուք որոշում եք ներել, բոլորը ձեր ընտանիքում շահում են, որովհետև սերը ծաղկեցնում է մեզ:
- Աստծո սիրո վերապրումը բացահայտում և վտարում է վախը մեր կյանքերից: Երբ մենք թույլ ենք տալիս, որ Նրա սերը գործի մեզանում և մեր միջոցով, այն հեռացնում է մեր կողակցի վախերը և ծածկում մեր սխալներն ու ձախողումները:
- Մինչև նոր ժառանգություն կառուցելը, դուք պետք է հակառակվեք այն անեծքներին, որոնք չարչարել են ձեր ընտանիքը: Շնորհիվ Քրիստոսի ավարտած աշխատանքի՝ ամեն անեծք քանդվա՛ծ է:
- Ինչպիսի վիճակում էլ լինի ձեր ամուսնությունը, Աստված կարող է փոխել այն, որովհետև Նա այդ ամուսնության մեջ է: Նրա հետ անհնարին ոչինչ չկա:

Հիշե՛ք, որ Աստված տվել է ձեզ **ներկան**, և այն որոշումները, որոնք դուք կայացնում եք **այսօր**, կձևավորեն ձեր **վաղվա**, ոչ թե ձեր երեկվա օրը:

- Ջոն Բիվեր, *Պատմություն ամուսնության մասին*


...ուղղե՛ք ձեր ուշադրությունն Աստծուն:
Դուք կփոխվեք՝ ներսից դուրս:
- Ջոն Բիվեր, Սուրբ Հոգի. Ներածություն




John Revere
SEHTAN
SIAU
RAWL


НЕОТСТУПНАЯ

Աստծո Խոսքը զորություն ունի

լուսավորելու մեր ճանապարհը

և մաքրելու մեր շավիղների աղբը և

ավերակները, որպեսզի մենք կարողանանք

քայլել դրանցով:

- Լիզա Բիվեր. *Թրեր կրող կանայք. Ինչպես հերոսաբար կրել ձեր խաչը*





Qantas Credit Union Arena
Qantas Credit Union Arena
00:17
SO
LOVED.

"Ինչպես որ դուք ընդունեցիք
Քրիստոս Հիսուսին՝ որպես ձեր
Տեր, այնպես էլ պետք է շարունակեք
հետևել Նրան: Թող որ ձեր արմատներն
աճեն Նրա մեջ, և թող որ ձեր կյանքերը
կառուցվեն Նրա վրա:"

(Կողոսացիների 2.6,7; NLT)

- Ջոն Բիվեր, *Բարի՞, թե՞ Աստված*

Ինչո՞ւ բարին առանց Աստծո բավական չէ





«Եթե մենք (որպես քրիստոնյաներ) չտանենք Աստծո ճշմարտությունը և լույսն այս աշխարհին, այլևս ոչ ոք չի տանի:»

- Ջոն Բիվեր, *Սուրբ Հոգի. Ներածություն*



Իմացե՛ք ավելին՝ www.CloudLibrary.org

ՉՈՐՍ

Ոտքի՛ ելեք և կառուցե՛ք

«...Գիտեք, որ ազգերի իշխանները տիրում են, և մեծամեծները իշխում են նրանց վրա: Բայց այդպիսին չլինի ձեր մեջ, այլ ձեզնից ով որ կամենա մեծ լինել, թող ձեզ ծառա լինի: Եվ ձեզնից ով որ կամենա առաջին լինել, թող ձեզ ծառա լինի: Ինչպես մարդու Որդին չեկավ, որ Իրեն ծառայեն, այլ՝ որ Ինքը ծառայի և շատերի փոխարեն Իր անձը փրկանք տա»:

— Մատթեոս 20.25-28

Օր 1

Կա միայն մեկ արդյունավետ միջոց՝ առողջ ամուսնություն կառուցելու համար: Թեև այն ակնհայտ է, սակայն թվում է, թե այն թաքնված է շատերիս համար: Մենք պետք է զգուշացնենք ձեզ, որ այս միջոցը չի ոգեշնչի ձեզ, և ո՛չ էլ հեշտությամբ կտրվի: Բայց այն միակ ճանապարհն է, որով կարելի է ստանալ այն բավականությունը, նպատակաուղղված կյանքը և սերը, որը բոլորս ցանկանում ենք ունենալ մեր ամուսնության մեջ: Դուք պատրա՞ստ եք իմանալ այս մեծ գաղտնիքը. այն *ծառայելն* է: Ձեր երազանքի ամուսնությունը կառուցելու միակ միջոցն է՝ նվիրել ձեր կյանքը ձեր կողակցին ծառայելուն:

Խնդրո՛ւմ ենք, ընդդիմացե՛ք այս գիրքը մի կողմ դնելու կամ այս գլուխը բաց թողնելու ցանկությանը: Մենք գիտենք, որ գաղափարը ծառայության մասին՝ սովորաբար մեծ ոգևորություն չի առաջացնում: Ավելի հաճախ այն առաջացնում է դժկամություն, և նույ-

նիսկ սարսափ: Մենք զարհուրում ենք՝ մտածելով այն մասին, որ կարող ենք ենթակա լինել մեկ ուրիշի շահերին, ցանկություններին կամ նախընտրություններին: Այնուամենայնիվ, Հիսուսը՝ Աստծո Որդին և թագավորների Թագավորը, որոշեց ծառա դառնալ, քանի որ Նա ցանկանում էր լավագույնը մեզ համար: Մեր շահերը դարձան Նրա մտահոգության ամենակարևոր առարկան: Նա մերժեց այն իշխանական և արտոնյալ դիրքը, որն իրավամբ պատկանում էր Իրեն, որպեսզի ճանապարհ պատրաստեր՝ Աստծուն և մարդուն բաժանող անդունդի վրայով: Իսկ հիմա՝ այն բանից հետո, երբ Նա ճանապարհ պատրաստեց և հաշտեցրեց մեզ Աստծո հետ, Նա բերկրանք է ապրում, երբ կատարում է մեր խորին երազանքներն ու ցանկությունները, և ուրախություն է պատճառում մեզ՝ տալով կարողություն՝ արտասովոր կյանքով ապրելու և Իր նման դառնալու համար: Զոհելով Իր կյանքը՝ Հիսուսն առաջարկեց լցնել մեր կյանքն առատությամբ: Այս աննախադեպ և անսահմանափակ ծառայությունն այն չափանիշն է, որով մենք պետք է կառուցենք մեր բոլոր փոխհարաբերությունները, և հատկապես՝ մեր ամուսնությունը:

Այժմ, երբ տախտակամածը մաքրված է, դուք կարող եք կառուցել այն ամուսնությունը, որի մասին երազել եք: Այնուամենայնիվ, կա միայն մեկ միջոց, որով դուք կիրականացնեք ձեր ամուսնական երազանքը՝ այդ երանության նախագիծը, որը ոգեշնչված է Աստծուց. դուք պետք է փոխարինեք այն ձեր կյանքի հետ: Այն ուրախությունը, սերը և բավականությունը, որոնք դուք ցանկանում եք ունենալ ձեր ամուսնության մեջ, կարող են իրական դառնալ, միայն երբ դուք զոհաբերեք ձեր շահերը՝ ձգտելով ձեր կողակցի շահերին:

Դուք նկատե՞լ եք, որ ամենադժբախտ քրիստոնյաները նրանք են, ովքեր կլանված են իրենց սեփական ձգտումներով: Ամենասահմանափակ հավատացյալները նրանք են, ովքեր երբեք ոչինչ չեն անում ուրիշների համար: Պատճառն այն է, որ երբ մենք Քրիստոսի մեջ ենք, Հիսուսի հոգևոր ԴՆԹ-ն, որի մեջ դրված է ծառայելը, դառնում է մեր բնության մասը: Հիսուսը՝ ամենամեծ ծառան է: Երբ մենք հրաժարվում ենք ընդունել մեր ինքնությունը Նրանում, որը, ի թիվս այլ բաների, ընդգրկում է ծառայի պես ապրելը, մենք առանձնացնում ենք մեզ Նրա վերափոխող զորությունից: Այս զորությունն էապես կարևոր է աստվածահաճո կյանք և ընտանիք կառուցելու համար: Մենք կարող ենք ստանալ այն, միայն երբ ձգտում ենք ապրել այնպես, ինչպես Նա էր ապրում: Եթե մենք չենք ծառայում, չենք

կարող կառուցել այնպիսի ամուսնություն, որը ցանկանում ենք ունենալ:

Դառնալ փոքրագույնը

Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուսն ասաց Իր աշակերտներին՝ ամենամոտ ընկերներին, որ Իր մահն անխուսափելի է, և որ շուտով Իրեն դավաճանելու են: Ինչպիսի՞ն էր նրանց պատասխանը: Սկզբում նրանք բուռն կերպով հերքեցին, որ կարող էին դավաճանել Հիսուսին, բայց հանկարծ սկսեցին վիճել այն մասին, թե նրանցից ո՛վ է ամենամեծը:

Որքա՜ն անհեթեթ է: Հիսուսը պատմում էր Իր մոտալուտ մահվան մասին, և միակ բանը, որը Նրա ամենամոտ ընկերները կարող էին անել ի պատասխան, իրենց մեծության մասին վիճելն էր: Ահա թե ինչպես Հիսուսը պատասխանեց նրանց հիմարությանը:

> «…այլ ձեր միջի մեծը թող փոքրագույնի պես լինի, և առաջնորդը՝ ծառայողի պես: Որովհետև ո՞վ է մեծ՝ սեղան նստո՞ղը, թե՞ ծառայողը. չէ՞ որ սեղան նստողը, բայց ես ձեր մեջ ծառայողի պես եմ» (Ղուկ. 22.26,27):

Հիսուսի խոսքերը, միգուցե, հարվածեցին աշակերտներին այնպես, ինչպես ֆուտբոլի գնդակը՝ ինչ-որ մեկի դեմքին: Նրանք պարզ ասացին, որ ձգտում էին մեծ լինել: Իսկ Նա պատասխանեց նրանց՝ ասելով, որ մեծ լինելու համար նրանք պետք է գերազանցության հասնեին ծառայության մեջ:

Բայց Հիսուսը չավարտեց այս դժվար խոսքերով: Նա շարունակեց՝ անելով այնպիսի բան, ինչի պատճառով աշակերտները հայտնվեցին ավելի անհարմար դրության մեջ և ավելի շփոթվեցին: Աստվածաշնչում գրված է.

> «Հիսուսը գիտեր, որ Հայրը իշխանություն էր տվել Իրեն ամեն ինչի վրա, և որ Ինքը եկել էր Աստծուց և վերադառնալու էր Աստծո մոտ: Այնպես որ, Նա վեր կացավ սեղանից, հանեց Իր հանդերձը, մի սրբիչ փաթաթեց գոտկատեղին և ջուր լցրեց մի կոնքի մեջ: Եվ Նա սկսեց լվանալ աշակերտների ոտքերը՝ չորացնելով դրանք այն սրբիչով, որով փաթաթել էր Իրեն» (Հովհ. 13.3-5, NLT):

Այս հատվածը ցնցող է, քանի որ ցույց է տալիս, թե *ինչո՛ւ* Հիսուսը լվաց Իր աշակերտների ոտքերը: Պատասխանը կարելի է գտնել՝ ուշադրություն դարձնելով «*Այնպես որ*» բառին: Հիսուսին տրվել էր իշխանություն ամեն ինչի վրա, *այնպես որ*, Նա խոնարհեցրեց Իրեն և արեց այն, ինչը նվաստ ծառայի պարտականություն էր: Հիսուսը չուներ կեղծ խոնարհություն. Նա լիովին գիտակցում էր Իր իշխանական դիրքը: Բայց Իր անսահմանափակ իշխանությունը ցուցադրելու կամ չարաշահելու փոխարեն, Նա օգտագործեց Իր դիրքը՝ ծառայության անհրաժեշտ քայլի դիմելու համար:

Առաջին դարում ճանապարհները սալիկապատված չէին, և չկային հանրախանութներ, որտեղից ճանապարհորդները կարող էին սպորտային կոշիկ գնել: Մարդիկ սանդալներ էին կրում (կամ ընդհանրապես կոշիկ չունեին), այնպես որ ճանապարհի ցեխը և կենդանական աղբը կպչում էին նրանց ոտքերին: Վստահ եմ, որ նման պայմաններում, մարդկանց կեղտոտ ոտքերի գարշահոտությունն այն աստիճանի էր, որը ժամանակակից աշխարհում խորթ է թվում:

Մարդկանց ոտքերը մշտապես կեղտոտվում էին, այնպես որ ծառաները կամ ստրուկները պետք է մաքրեին իրենց տերերի և նրանց հյուրերի ոտքերը: Հարուստ մարդկանց տներում կային շատ պարտավորություններ. անհրաժեշտ էր հոգալ գոմերի մասին, սնունդ պատրաստել և մաքրել տան սենյակները: Բայց ոտքերը լվանալու պարտականությունը հանձնված էր ամենացածր ծառային: Որոշ վայրերում մարդիկ ավելի հեռու էին գնում՝ հանձնարարելով այս պարտականությունը միայն կին ծառաների, քանի որ միայն նրանք էին «անարժան» համարվում՝ այդպիսի նվաստացնող և տհաճ գործի համար:

Հիսուսը որոշեց կատարել ամենանվաստ ծառայությունը: Ինչո՞ւ: Նա ցանկանում էր ցույց տալ Իր աշակերտներին, թե որքա՛ն կարևոր էր ծառայելը: Նա նույնիսկ հանեց Իր հանդերձը, որը Նրա վարդապետական դիրքի նշանն էր, և փաթաթեց Իր գոտկատեղը սրբիչով՝ ստրուկների պես: Հիշեք՝ Հիսուսն արեց այս ամենը՝ պատրաստվելով լվանալ այն մարդկանց ոտքերը, ովքեր կարճ ժամանակ անց ուրանալու էին, դավաճանելու էին կամ թողնելու էին Նրան:

> «Եվ երբ որ նրանց ոտքերը լվաց, Իր հանդերձներն առավ և դարձյալ սեղան նստեց և նրանց ասաց. Գիտե՞ք ես ինչ արի ձեզ: Դուք Ինձ կանչում եք Վարդապետ և Տեր, և լավ եք ասում, որովհետև եմ:

Արդ, եթե Ես՝ Տերս և Վարդապետս, ձեր ոտքերը լվացի, դուք էլ պետք է միմյանց ոտքերը լվանաք: Որովհետև Ես ձեզ օրինակ տվի, որ ինչպես Ես ձեզ արի, դուք էլ անեք: Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ՝ ծառան իր տիրոջից մեծ չէ, ո՛չ էլ ուղարկվածը մեծ է իրեն ուղարկողից: Եթե այս գիտեք, երանելի եք, թե որ այս անեք» (Հովհ. 13.12-17):

Աշակերտների ոտքերը լվանալուց հետո, Հիսուսը կրկին հագավ Իր հանդերձը՝ վերադառնալով Ուսուցչի դերին, և ավարտեց այն դասը, որը Նրա աշակերտները երբեք չէին մոռանա: Այս դասի հավիտենական խրատները կարելի է ընդհանրացնել չորս կետով.

1. Որպես Տեր և Ուսուցիչ՝ Ես ձեր գլխավոր օրինակն եմ:
2. Քանի որ Ես հոժարությամբ կատարեցի այս նվաստ գործողությունը, մի՛ մտածեք, որ սա կամ ցանկացած այլ ծառայության գործ ցածր է ձեր արժանապատվությունից:
3. Ես ձեր Տերն եմ, Ով ավելի մեծ է, քան դուք. բայց և այնպես, կամենում եմ ծառայել ամենանվաստ ծառայի պես:
4. Ես օրհնում եմ նրանց, ովքեր հետևում են Իմ ծառայող առաջնորդության օրինակին:

Կանչված՝ ծառայելու համար

Հիսուսն ասաց, որ մենք օրհնված կլինենք, եթե հետևենք Իր օրինակին: Սա նշանակում է, որ Նրա օրհնությունը կհանգչի մեր ամուսնության վրա, երբ մենք նմանակենք Նրան՝ ծառայելով մեր կողակիցներին:

Մենք չենք հորդորում ձեզ՝ նմանակել Հիսուսին՝ երեկոյան ոտնալվայի ծես կազմակերպելով: Իմաստն այն է, որ մեր կյանքում հետևենք Նրա ծառայության օրինակին: Ամուսնության մեջ մենք առավելագույնս նմանակում ենք Քրիստոսի օրինակին, երբ օգտագործում ենք մեր դիրքն ընտանիքում՝ որպես հարթակ ծառայության համար: Պողոսը գրում է.

«Եսասեր մի՛ եղեք… Եղե՛ք խոնարհ՝ ավելի լավը համարելով ուրիշներին, քան ձեզ: Դուք *պետք է* ունենաք միևնույն վերաբերմունքը, որն ուներ Քրիստոս Հիսուսը» (Փիլիպ. 2.3,5, NLT, շեղագիրն ավելացված է):

Ո՞րն էր Քրիստոսի վերաբերմունքը: Նա որոշեց լինել ծառայի պես՝ բարձրացնելով այլ մարդկանց շահերն Իր շահերից: Նա գնաց մինչև վերջ՝ մահանալով նրանց համար, ում սիրեց: Մեզնից շատերը կանչված չեն անելու այդ մեծագույն զոհը մեր կողակիցների համար, բայց մենք կանչված ենք թողնելու մեր եսակենտրոնությունը՝ հանուն նրանց:

Ուրեմն, եթե ծառայելն այդքան փառահեղ է, եթե այն բերում է Աստծո օրհնությունը, ինչո՞ւ ավելի շատ մարդիկ չեն անում դա: Խնդիրը մեր անկում ապրած մարդկային բնության մեջ է, որը մշտապես պատերազմում է Աստծո Հոգու ճանապարհների դեմ և խրախուսում է մեզ՝ ձգտել մեր շահերին: Մեր մարմինը պահանջում է հաշվի առնել իր ցանկությունները և կատարել իր ձգտումները: Բայց որքան էլ կերակրենք մեր մարդկային բնությունը, այն մշտապես ցանկանալու է ավելին:

Մեղավոր բնությունը մշտապես եսասիրություն և դժգոհություն է առաջացնում, իսկ Աստծո Հոգին զորացնում է մեզ անձնվիրության համար և տևական բավականություն է տալիս: Ամեն վայրկյան մենք ընտրում ենք՝ առաջնորդվել Աստծո Հոգո՞վ, թե՞ մեր մարմնի անհագ ցանկություններով:

> «Մեղավոր բնությունը ցանկանում է չարիք գործել, ինչը Հոգու ցանկությունների ճիշտ հակառակն է: Եվ Հոգին տալիս է մեզ ցանկություններ, որոնք հակառակ են այն ամենին, ինչ ցանկանում է մեղավոր բնությունը: Այս երկու ուժերը մշտապես կռվում են իրար դեմ, այնպես որ, դուք ազատ չեք, որ կատարեք ձեր բարի մտադրությունները» (Գաղատ. 5.17, NLT):

Հիսուսն ազատեց մեզ մեր մեղավոր բնությունից, որպեսզի մենք կարողանանք ազատորեն զոհել մեր կյանքերը: Փրկությունը չազատեց մեզ, որ ստանանք ավելին, այլ՝ որ տանք ավելին: «Որովհետև դուք կանչվել եք,– գրում է Պողոսը,– որ ապրեք ազատության մեջ… Բայց մի՛ օգտագործեք ձեր ազատությունը՝ ձեր մեղավոր բնությունը գոհացնելու համար: Փոխարենը՝ օգտագործե՛ք ձեր ազատությունը, որ սիրով ծառայեք մեկդ մյուսին» (Գաղատ. 5.13):

Մենք ազատություն ենք ստացել, որպեսզի կարողանանք զոհաբերել մեր կյանքերը: Եթե ապրենք միայն մեզ համար, մենք կվատնենք մեր ազատությունը Քրիստոսում և կտրվենք եսասիրությանն ու մեղքին, այնինչ՝ Քրիստոսը մահացավ, որ ազատեր մեզ դրան-

ցից: Բայց եթե մենք սովորենք ապրել՝ մարդկանց ծառայելու համար, հատկապես մեր կողակիցներին, մենք կբաժնեկցենք այն առատ կյանքին, որը Նա շնորհել է մեզ:

Օր 2

Լցված՝ Հոգով

Երբ մարդիկ հիշատակում են, այսպես կոչված, «ամուսնության հատվածը» Եփեսացիների 5-րդ գլխում, նրանք սովորաբար սկսում են 22-րդ խոսքից, որը պատվիրում է կանանց՝ հնազանդվել: Բայց իրականում Պողոսի հորդորանքն սկսվում է ավելի վաղ: Որպեսզի լիովին հասկանանք, թե մեր ամուսնությունները ինչպես պետք է պատկերեն փոխհարաբերությունները Քրիստոսի և Եկեղեցու միջև, կարդանք 18-րդ խոսքից.

> «…Մշտապես լցված եղեք և խթանվեք [Սուրբ] Հոգով» (Եփես. 5.18, AMP):

Այն բառը, որը թարգմանված է այս խոսքում «լցված» բառով, հունարեն բնագրում նկարագրում է Հոգով շարունակաբար հագեցած լինելը: Մեկ անգամը բավական չէ: Եթե մենք շարունակաբար չենք լցվում Աստծո Հոգով և չենք խթանվում Նրանով, մենք կսպասենք, որ մեր կողակիցները լրացնեն այն կարիքները, որոնք միայն Աստված կարող է լրացնել: Նույնիսկ եթե ձեր կինը կամ ամուսինը հրաշալի անձնավորություն է, նա երբեք չի կարողանա փոխարինել Աստծուն: Եթե դուք ակնկալում եք, որ ձեր ամուսինը նպատակ և իմաստ կհաղորդի ձեր կյանքին և կտա ձեզ այնպիսի օրհնություններ, որոնք միայն Աստված կարող է շնորհել, դուք կհիասթափվեք, կվհատվեք և չեք կարողանա ցուցաբերել նրան Աստծո սերը:

Մեր ամուսնությունները կարտացոլեն Քրիստոսին այն չափով, որով Նրա Հոգուն թույլ ենք տալիս գործել մեր կյանքերում: Քրիստոսը՝ մեր փրկության անկյունաքարն է, իսկ Սուրբ Հոգին Նա է, Ում շնորհիվ մենք փոխվում ենք: Եթե թույլ տանք, որ մեր կյանքը շարունակաբար լցված լինի Սուրբ Հոգով, մեր մտածելակերպը կնորոգվի, իսկ վարքը կփոխվի: Աստված ասում է.

> «Հեռացրե՛ք ձեզնից ձեր նախկին բնությունը… Եվ շարունակաբար նորոգվե՛ք ձեր մտքի հոգով [ունենալով առողջ մտավոր և հոգևոր դիրքորոշում], և հագե՛ք նոր բնությունը (վերածնված անձը), որն ստեղծված է Աստծո պատկերով, [Աստվածանման] ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ» (Եփես. 4.22-24, AMP):

Ի՞նչ կլինի, եթե ցանկանաք ջրելու համար օգտագործել ռեզինե խողովակը, որը միացված չէ ծորակին. նույնը տեղի կունենա, եթե փորձեք ծառայել և սիրել Քրիստոսի նման՝ առանց Նրա Հոգու: Խողովակը չի կարող ջուր տալ. այն ընդամենը անցկացնում է ջուրն իր միջով: Նմանապես, մենք կարող ենք սիրել և ծառայել մեր կողակիցներին այնպես, ինչպես Աստված է ցանկանում, միայն երբ ընդունենք Սուրբ Հոգու զորությունը:

Մեր կամքի ուժը գործադրելը և մեր վարքի վրա աշխատելն իրենց տեղն ունեն, բայց, միևնույն է, դրանք չեն կարող նորոգել մեր մտածելակերպը կամ հաղթել մարմնի ցանկությունները: Սուրբ Հոգին է, որ գործում է մեզանում և մեր միջոցով՝ փոխելով մեր կյանքը: Մենք կարող ենք վերապրել Նրա ազդեցությունը միայն այն դեպքում, երբ մոտենանք Նրան և ընդունենք Նրա զորությունը: Նրա ազդեցությունը մեր կողակիցների հանդեպ արտահայտվում է քրիստոսանման վերաբերմունքով և գործերով: Եթե փորձեք փոխել ձեր վարքը՝ առանց Սուրբ Հոգու միջամտության, դուք կընկնեք կա՛մ հիասթափության, կա՛մ մոլորության մեջ:

Մենք անթիվ նամակներ ենք ստացել թե՛ տղամարդկանցից, թե՛ կանանցից, որոնց ամուսնությունները քայքայվել են կողակցի շահագործող կամ տիրապետող վերաբերմունքի պատճառով: Հաճախ այդ մարդիկ լավ գիտեին Աստվածաշունչը, բայց չունեին Հոգու սերը և շնորհքը: Որպես արդյունք՝ այն բառերը, որոնք պետք է ազատեին և զորացնեին, օգտագործվել էին սահմանափակելու, թուլացնելու և ամաչեցնելու համար: Այս չարիքները կան ամենուր, որտեղ սողոսկում է եսասիրությունը: Այն ավելանում է մեզանում, երբ մենք բաց չենք լինում Սուրբ Հոգու աշխատանքի համար և չենք ընդունում, որ ծառայությունը մեր գլխավոր դերն է ամուսնության մեջ:

Մինչև այս գլխի ավարտը, մենք կխոսենք այն մասին, թե ինչպես ծառայել ամուսնության մեջ: Մեր նպատակն է, ըստ Աստվածաշնչի, ցույց տալ, թե ինչպես կարող ենք ծառայելու միջոցով վարել և կառուցել մեր ամուսնությունները: Մենք նաև հորդորում ենք ձեզ՝

չօգտագործել այս գլուխը որպես թույլտվություն՝ ձեր կողակցի ներկա կամ անցյալ վարքը դատապարտելու համար: Փոխարենը՝ օգտագործե՛ք այն որպես ուղեցույց՝ առաջ շարժվելու համար:

Մենք հասկանում ենք, որ խոսում ենք այս մասին՝ ենթադրելով, որ երկու ամուսիններն էլ հարգանքով են վերաբերվում ամուսնական դերերին, որոնք Աստված որոշել է իրենց համար: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ ոչ բոլոր զույգերն են այդպիսին: Ինչպիսի իրավիճակում էլ լինեք, հիշե՛ք, որ դուք չեք կարող փոխել ձեր կողակցին: Եթե փորձեք անել դա, դուք ընդամենը կխանգարեք Աստծուն: Բացե՛ք ձեր սիրտը, որպեսզի Աստծո Հոգին աշխատի ձեզ հետ, և թո՛ւյլ տվեք Նրան՝ ձեր կողակցի մեջ կատարել այն աշխատանքը, որը միայն Նա՛ կարող է անել:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԵՐԵՐ

Որպեսզի հասկանանք այն ծառայողական դերերը, որոնք ստանձնում ենք ամուսնության մեջ, մենք պետք է ևս մեկ անգամ վերադառնանք Եդեմի պարտեզ.

> «Աստված ստեղծեց մարդ արարածներին Իր պատկերով: Աստծո պատկերով Նա ստեղծեց նրանց՝ արու և էգ ստեղծեց նրանց» (Ծնն. 1.27, NLT):

Թե՛ տղամարդը, թե՛ կինը կրում են Աստծո պատկերը և արտացոլում են Նրա բնությունը: Տղամարդը և կինը տարբեր են, բայց նրանք հավասարապես կարևոր են՝ այս աշխարհում Աստծո բնությունը ցուցադրելու համար:

Ամուսինը և *կինը*՝ դերեր են: Այս դերերը յուրօրինակ են, և Աստվածաշունչը հատուկ կերպով խոսում է այն մասին, թե ինչ են դրանք ենթադրում, սակայն այս դերերը մեր ինքնությունը չեն: Մեր ինքնությունը կապված է այն բանի հետ, թե ինչպես ենք մենք ստեղծված: Մենք ստեղծվեցինք այս երկրի վրա՝ որպես Աստծո նմանությունը կրողներ: Մարդու անկումն աղավաղեց այս նպատակը, բայց Քրիստոսի զոհը վերականգնեց այն: Մեր փրկությունը Քրիստոսի մեջ, նախ և առաջ, ինքնության փոփոխություն է:

Ոչ մի դեր՝ ամուսին, կին, մասնագետ, ծառայող, ծնող կամ ընկեր, չի կարող իմաստազրկել ձեր ինքնությունը: Եվ քանի որ դերի

փոփոխությունը (օրինակ՝ ամուրիից ամուսնացած դառնալը) հավասար չէ ինքնության փոփոխությանը, և՛ տղամարդիկ, և՛ կանայք նույնքան թանկ են Աստծո աչքերում ամուսնությունից հետո, որքան ամուսնությունից առաջ:

Ցավոք, շատերը (հատկապես՝ կանայք) մտածում են, որ իրենց արժեքը փոխվում է ամուսնանալուց հետո: Կանայք վախենում են, որ իրենց ամուսիններին պատվելու համար ստիպված են երկրորդական նշանակություն կամ կարևորություն ունենալ: Այս դեպքում, սիրո և ծառայության մեջ բարձրանալու փոխարեն, կինն անկում է ապրում՝ դառնալով ծառա, մինչև որ նրա անհատականությունը լիովին զրոյանում է:

Թեև առաջին հայացքից կարող է թվալ, որ ամուսինը շահում է այս պայմաններից, բայց դա այդպես չէ: Իրականում, երկուսն էլ տանուլ են տալիս, երբ նրանցից մեկը սկսում է եսասիրաբար ապրել: Այն ամուսինը, ով իր կնոջը չի համարում հավասար անդամ ամուսնության մեջ, ոչ միայն զրկվում է մտերիմ համախոհից, այլև կորցնում է անձնական աճ ունենալու իր մեծագույն հնարավորություններից մեկը: Տղամարդիկ ավելի քրիստոսանման են դառնում, երբ ծառայում են իրենց կանանց այնպես, ինչպես Հիսուսն է ծառայում Եկեղեցուն: Հիշեք՝ Հիսուսը ցույց տվեց, որ գլուխ լինելն Իր համար նշանակում է՝ ծառայել նրանց, ում Ինքն առաջնորդում և սիրում է:

Սերը, հարգանքը և պատիվը հիմքեր են թե՛ կնոջ, թե՛ ամուսնու համար: Երկուսն էլ կարևոր դիրք ունեն, և երկուսն էլ ծառայում են: Եթե ամուսնությունը դիտարկենք այս կերպով, մեր կյանքում կվերականգնվի այն զորության և իշխանության պարգևը, որն Աստված վստահել էր թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, մարդկության ստեղծվելու պահից ի վեր:

Տիրելն ընդդեմ տիրապետելու

«Եվ Աստված օրհնեց նրանց, և Աստված ասաց նրանց. «Աճե՛ք և շատացե՛ք (կամ՝ բազմապատկվեք) և լցրե՛ք երկիրը և տիրե՛ք նրան, և իշխե՛ք ծովի ձկների և երկնքի թռչունների վրա և երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա…»: Եվ Աստված տեսավ բոլորը, ինչ որ արել էր, և ահա շատ բարի էր…» (Ծննդ. 1.28,31):

Սկզբում տղամարդիկ և կանայք թշնամիներ չէին: Նրանք մտերիմ համախոհներ և գործակիցներ էին՝ երկու առանձին անհատներ, որոնք միաբան էին, և որոնց սրտերը մեկ էին: Նրանց վստահվեց երկիրը լցնելու և երկրին տիրելու առաջադրանքը: Աստված հանձնարարական տվեց նրանց (աճեք և շատացեք) և թույլ տվեց, որ նրանք որոշեին մանրամասները: Եվ նրանք սկսեցին տիրել:

Տիրել նշանակում է՝ ղեկավարել, իշխել և վերահսկել: Այս բառը նկարագրում է իշխանություն որոշակի ազդեցության շրջանակում: Ինչպես սովորեցինք Վերջին ընթրիքի պատմությունից, ամբողջ իշխանությունը, որը վստահված է որևէ տղամարդու կամ կնոջ, տրված է այլ մարդկանց ծառայելու նպատակով, նրանց օգուտի և զարգացման համար:

Սեռերի միջև պայքարը սկսվեց մարդու անկումից հետո: Աստծո և մարդու միջև առաջացած անսահման անդունդի պատճառով, տիրելը վերածվեց տիրապետման և շահագործման: Այս աղավաղումները մշտապես պատերազմում են անխաթար միության ծրագրի դեմ, որն Աստված ստեղծել է: Ամուսնությունը բաժանության գործիք դարձավ՝ բազմապատկման գործիք լինելու փոխարեն:

Ամուսնության ներսում չպետք է պայքար ընթանա իշխանության համար: Այն ստեղծվել է որպես իշխանական միություն: Ամուսնությունը միաբանում է երկու մարդու, ովքեր ունեն տարբեր աշխարհայացքներ և ուժեղ կողմեր, և օգտագործում է այդ տարբերությունները՝ ստեղծելով բազմապատկման հնարավորություն: Սա Աստծո ծրագրի մասն է, որով Նա հաշտեցնելու է այն, ինչը, թվում է, անկարելի է հաշտեցնել: Հիսուսն ասաց.

> «Որովհետև մարդու Որդին եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին» (Ղուկ. 19.10):

Մենք հաճախ հասկանում ենք այս խոսքը միայն ավետարանչական իմաստով, բայց այն նշանակում է շատ ավելին: Հիսուսը չեկավ միայն *կորածներին* փրկելու համար. Նա եկավ, որպեսզի փրկի *այն, ինչ կորած էր:* Մարդկության անկման պատճառով մենք կորցրինք մեր հաղորդակցությունն Աստծո հետ: Բայց մենք նույնպես կորցրինք փոխհարաբերությունները մեր եղբայրների և քույրերի, ծնողների և երեխաների, նաև ամուսինների ու կանանց միջև: Բացի այդ՝ մենք կորցրինք մեր ներդաշնակ փոխհարաբերությունները ամբողջ արարչագործության հետ:

Կատարելով Իր փրկության գործը՝ Հիսուսը տվեց մեզ ավելին, քան երկնային հույսն է: Այսօր մենք ունենք առատություն և վերականգնում: Խաչի շնորհիվ, ցանկացած փոխհարաբերություն, որը կորուստներ է ունեցել, կարող է վերականգնվել: Սա նշանակում է, որ այսօր մեր ամուսնությունը կարող է բժշկվել: Տղամարդիկ և կանայք կրկին կարող են միաբան լինել:

Երբ մենք մեկ ենք սրտով և նպատակով, մեր կյանքում բազմապատկում է սկսվում, քանի որ Աստված պատվիրում է Իր օրհնությունն այնտեղ, որտեղ միաբանություն կա (տե՛ս Սաղմ. 133): Մեր անձերի թշնամին չի ցանկանում, որ մենք ստանանք Աստծո օրհնությունը, և ո՛չ էլ, որ բազմապատկում ունենանք: Նա անում է հնարավորինս ամեն ինչ՝ մեր միաբանությունը կործանելու համար: Երբ մենք հակառակվում ենք տիրապետման խաբեությանը և ընդունում ենք տիրելու ճշմարիտ բնույթը, մենք համագործակցում ենք Աստծո հետ՝ կատարելով Նրա կամքն այս երկրի վրա:

Այժմ ավելի մանրամասնորեն կքննարկենք տղամարդկանց և կանանց դերերն ամուսնության մեջ: Չհասկանալով Աստծո տեսակետը մարդու ինքնության, արժեքի և իշխանության մասին, կարելի է հեշտությամբ սխալվել՝ մտածելով, որ այս դերերը, որոնք սահմանված են Աստծո կողմից, ամուսիններին դարձնում են մեկը մյուսից ավելի բարձր: Մենք հավատում ենք, որ այն բանից հետո, երբ կուսումնասիրեք Աստծո առաջին հանձնարարականն ամուսնության մասին և կհասկանաք տարբերությունը ինքնության և դերերի միջև, դուք կգիտակցեք, թե որքա՞ն ոգեշնչող, հեղինակավոր և վավերական են ամուսինների դերերը[1]:

Օր 3

Ամուսին. պատվե՛ք ձեր կնոջը

«Նույն կերպով դուք, ամուսիննե՛ր, պետք է պատվեք ձեր կանանց: Վերաբերվեք ձեր կնոջը հասկացողությամբ, քանի որ միասին եք ապրում: Միգուցե նա ավելի թույլ է ձեզնից, բայց նա ձեր հավասար գործընկերն է նոր կյանքի մեջ, որն Աստծո պարգևն է: Վերաբերվե՛ք նրան՝ ինչպես հարկն է, որպեսզի ձեր աղոթքները չխափանվեն» (Ա Պետր. 3.7, NLT):

Պատիվը երկկողմանի է: Աստվածաշունչը պարզ սովորեցնում է, որ ամուսիններից երկուսն էլ պետք է պատվեն իրար: Մի փոքր ուշ մենք կխոսենք կնոջ դերի մասին, իսկ այժմ անդրադառնանք տղամարդու դերին:

Ամուսի՛ն, ձեր կինը ցածր չէ ձեզնից: Նա ձեր ժառանգակիցն է Քրիստոսում, և դուք պետք է պատվեք նրան՝ որպես այդպիսին: Ասելով, որ նա ձեզնից թույլ է՝ Պետրոսը նկատի ունի նրա ֆիզիկական ուժը, ոչ թե մտավոր կարողությունները, զանազանությունը կամ հոգևոր զորությունը: Ձեր կնոջ ֆիզիկական «թուլությունը» չի դարձնում նրան պակաս արժեքավոր ձեզնից. դա պարզապես նշանակում է, որ նա չի կարող բարձրացնել ծանրաձողը պառկած վիճակում այնպիսի քաշով, որով դուք եք կարող: Պետրոսի մեկնաբանությունը փաստի արձանագրում է, ոչ թե գնահատական: Կարևոր է, որ մենք հասկանանք սա, որովհետև մենք չենք ծառայի նրանց, ովքեր, մեր կարծիքով, պատվի արժանի չեն: Մինչև մեր կանանց համար մեր կյանքը նվիրելը, մենք պետք է գիտակցենք նրանց արտասովոր արժեքը:

Մենք բացահայտ կերպով խոսում ենք այս մասին ոչ թե նրա համար, որ մտածում ենք, որ դուք ցանկանում եք թերագնահատել կամ անարգել ձեր կնոջը, այլ որովհետև չենք կարող թույլ տալ մեզ՝ պարզ չարտահայտվել: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք ստեղծված են Աստծո պատկերով, այնպես որ, Հոր նմանությունն այս երկրի վրա անպատվության է արժանանում, երբ տղամարդիկ չեն պատվում, գնահատում կամ պաշտպանում կանանց:

Սկզբում Աստված ասաց, որ լավ չէ, որ մարդը մենակ լինի (տե՛ս Ծննդ. 2.18): Տղամարդու մեկուսի կյանքն առաջին խնդիրն էր, և Աստված լուծեց այն՝ ստեղծելով Եվային: Կանայք Աստծո պատասխանն են, ոչ թե երկրորդական ստեղծագործություններ: Աստված ձեզ՝ որպես Իրեն ծառայող մարդու, վստահել է ձեր կնոջը, և ձեզ տվել է՝ նրան սիրելու, աջակցելու, ծառայելու և նրա կյանքում ներդրումներ անելու հնարավորություն: Անելով սա՝ ճանապարհից շեղված այս աշխարհին համարձակությամբ ազդարարում եք այն, ինչ կա Աստծո սրտում:

Պետրոսը նույնպես գրեց, որ տղամարդիկ պետք է հասկացողությամբ վերաբերվեն իրենց կանանց: Մենք պետք է ձգտենք հասկանալ նրանց, ովքեր տարբերվում են մեզնից: Տղամարդիկ տար-

բերվում են միմյանցից, և կանայք էլ տարբերվում են միմյանցից, բայց տղամարդիկ և կանայք իրարից շատ են տարբերվում: Ես (Ջոնը) չեմ անարգում Լիզային, որովհետև նա տարբերվում է ինձնից: Փոխարենը՝ վայելում եմ այդ տարբերությունը և ձգտում եմ հասկանալ այն:

Կյանքս շատ միապաղաղ և ձանձրալի կլիներ, եթե Լիզան և ես ճիշտ իրար նման լինեինք: Թեև մեր տարբերությունները երբեմն դժվարություններ են պատճառել մեզ, բայց դրանք օգնել են՝ բացահայտելու մեր թույլ կողմերը, որպեսզի աշխատենք դրանց վրա և զորացնենք: Ես կարիք ունեմ, որ Լիզան տարբերվի ինձնից: Ես պատվում եմ նրան և օգուտ եմ բերում ինձ և մեր ընտանիքին՝ ձգտելով ավելի լավ հասկանալ, թե ինչն է խթանում նրան:

Ի վերջո, ուշադրություն դարձրեք հետևյալին. Պետրոսի առաջին թղթի 3.7-ում գրված է, որ մեր կանանց անպատվելը կխափանի մեր աղոթքները: Կանանց բարօրությունն այնքա՜ն կարևոր է Աստծո համար, որ մեր կանանց հասկանալն ու նրանց պատվելը դարձրել է հիմքային պայման՝ մեր աղոթքի կյանքի համար:

Միության գլուխը

«Որովհետև ամուսինը իր կնոջ գլուխն է, ինչպես Քրիստոսը Եկեղեցու գլուխն է…» (Եփես. 5.23, NLT):

Այս խոսքը գերադասության և ստորադասության մասին չէ: Այստեղ բերված է Քրիստոսի և Նրա Հարսնացուի օրինակը, որովհետև հենց սա է ամուսնության խորհրդապատկերը: Քանի որ այս խոսքում ամուսինները համեմատվում են Քրիստոսի հետ, նշանակում է՝ նրանք ընտանեկան միության առաջնորդներն են: Նրանց ուսերին ահռելի պատասխանատվություն է դրված՝ առաջնորդել ծառայելու միջոցով, ինչպես առաջնորդում է Քրիստոսը, որպեսզի անհավատ աշխարհը կարողանա տեսնել Հիսուսի բնությունը (և երբ մտածեք այն մասին, թե որքա՜ն խորն է Հիսուսը սիրում Եկեղեցուն, դուք նույնիսկ մեկ վայրկյան չեք հավատա, որ Նա մտադրված էր թերագնահատել կամ նսեմացնել կանանց՝ համեմատելով նրանց դերն Իր Հարսնացուի դերի հետ):

Ամուսինը, որպես միության գլուխ, չի ստացել իշխանություն, որ-

պեսզի լռեցնի իր կնոջն ամեն անգամ, երբ նա ինչ-որ բան է ասում: Ընդհակառակը՝ խելացի ամուսինը չի անտեսի իր կնոջ ներդրումը՝ հասկանալով, որ այն էապես կարևոր է ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Մեր ամուսնության առաջին տարիներին ես (Զոնը) աղոթում էի օրական գրեթե մեկ ու կես ժամ: Որքան գիտեմ, Լիզան, ով այդ ժամանակ լրիվ դրույքով էր աշխատում, շատ քիչ էր աղոթում՝ միայն այն ժամանակ, երբ ցնցուղ էր ընդունում կամ մեքենա էր վարում: Երբ մենք անհամաձայնություն էինք ունենում որևէ հարցում, ես սխալվում էի՝ ենթադրելով, որ քանի որ ես ավելի շատ ժամանակ էի տրամադրում աղոթքին, քան նա, ես կարող էի օգտագործել իմ իշխանությունը և, որպես մեր միության գլուխ, վարվել իմ հայեցողությամբ: Այնուամենայնիվ, գրեթե հիսուն տոկոս դեպքերում, երբ ես լուծում էի մեր տարաձայնությունները նման կերպով, հետագայում պարզվում էր, որ Լիզան ճիշտ էր:

Անկեղծ ասած՝ ես վհատվել էի: *«Ինչո՞ւ էր Լիզան այդքան ճիշտ լինում,*– մտածում էի,– *այն դեպքում, երբ ես այսքան ժամանակ եմ անցկացնում աղոթքի մեջ»:* Եվ մի օր ես աղոթեցի.

«Աստվա՛ծ, ես աղոթում եմ մեկ ու կես ժամ ամեն առավոտ: Լիզան աղոթում է միգուցե տասը րոպե՝ ցնցուղ ընդունելիս: Բայց նա ճիշտ է լինում մեր անհամաձայնությունների հիսուն տոկոսից ավելիի դեպքում»:



«Տեսնո՞ւմ ես,– ասաց Աստված,– X-երի մոտավորապես կեսը գծի մի կողմում է, իսկ մյուս կեսը՝ մյուս: Զո՛ն, երբ դու ամուրի էիր, ամբողջական էիր Ինձանում: Դու լրիվ շրջանագիծ էիր: Բայց ամուսնանալով Լիզայի հետ՝ դու և նա մեկ մարմին դարձաք: Հիմա այս շրջանագիծը ներկայացնում է երկուսիդ: Դու մի կեսն ես, իսկ նա՝ մյուսը»:

«Գիտե՞ս, թե ինչ են նշանակում X-երը,– շարունակեց Աստված:- Դրանք խորհրդանշում են այն տեղեկությունը, որը պետք է ստանաս

Ինձնից, որպեսզի կարողանաս իմաստուն որոշումներ կայացնել: Խնդիրն այն է, որ դու կայացնում ես բոլոր որոշումներդ՝ հիմնվելով ամբողջ տեղեկության ընդամենը կեսի վրա: Որպես ընտանիքի գլուխ՝ դու պետք է սովորես ստանալ քո կնոջից այն, ինչ Ես հայտնում եմ նրան: Այդ ժամանակ դու որոշումներ կկայացնես՝ ունենալով Իմ տված ամբողջ տեղեկությունը»:

Այդ հայտնությունը հեղաշրջեց իմ պատկերացումն այն մասին, թե ինչ է նշանակում՝ լինել մեր ամուսնության գլուխը: Ես այլևս չեմ ցանկանում օգտվել իմ դերից, որպեսզի շրջանցեմ Լիզայի խորհուրդը: Ես մեծ սիրով օգտվում եմ այն ամենից, ինչ Աստված ասում է նրա միջոցով, և սիրով որոշումներ եմ կայացնում նրա հետ:

Առաջնորդող ծառան

Կրկին, տղամարդը չպետք է տիրապետի: Տիրապետելը շատ է տարբերվում առաջնորդելուց: Առաջնորդությունը պատվավոր է, քանի որ այն ընտրության հնարավորություն է ընձեռում, իսկ տիրապետումը պահանջում է՝ առանց ընտրություն առաջարկելու: Որպեսզի տղամարդիկ աստվածապաշտ առաջնորդներ դառնան մեր ընտանիքներում, նրանք պետք է հասկանան, թե ինչ է նշանակում իշխանական դիրք զբաղեցնելը: Հիշե՛ք Հիսուսի խոսքերը. «Առաջնորդը պետք է ծառայի պես լինի» (Ղուկ. 22.26, NLT): Որպես ընտանեկան միության գլուխ՝ ամուսինը պետք է առաջնորդող ծառա լինի:

Այնպես չէ, որ տղամարդը ղեկավարն է, իսկ կինը՝ նրա ենթական: Տղամարդը առաջնորդ է, ով գործում է իր կնոջ հետ: Իրականում, եթե ամուսինն իմաստուն է, նա մշտապես կասի իր կնոջը, որ չի կարող ոչինչ անել *առանց նրա:* Ինձ (Լիզային) դուր է գալիս, երբ ամուսինս ասում է, որ ունի իմ կարիքը: Երբ լսում եմ դա, ես զգում եմ, որ բացառիկ կարողություն ունեմ՝ նրա բոլոր կարիքները լրացնելու համար: Նույնիսկ եթե չիմանամ, թե ինչ է անհրաժեշտ նման կին լինելու համար, ես կանեմ ամեն ինչ, որպեսզի պարզեմ դա: Ես «ծաղկում եմ», երբ նա ասում է, որ անփոխարինելի եմ[2]:

Ամուսի՛ն, ձեր կնոջը ծառայելը չի նշանակում՝ պարզապես տալ նրան այն ամենը, ինչ նա ցանկանում է, այլ նշանակում է նվիրել ձեր կյանքը նրան և որոշումներ կայացնել՝ ելնելով նրա շահերից:

Մենք առաջնորդում ենք մեր կանանց այնպես, ինչպես Հիսուսն է առաջնորդում մեզ: Կան շատ բաներ, որոնք Հիսուսն անում է՝ ելնելով մեր շահերից, որոնք մեզ դուր չեն գալիս: Դուք անխուսափելիորեն կբախվեք այնպիսի իրավիճակների, որոնց ժամանակ ձեր կնոջ բարեկեցությունը չի համապատասխանի նրա ցանկություններին: Հետևելով Հիսուսի օրինակին՝ մենք գիտենք, որ նման իրավիճակներում պետք է ընտրել այն, ինչը ճիշտ է, ոչ թե այն, ինչը հարմարավետ է: Բայց դուք կկարողանաք ճիշտ կերպով որոշել ձեր կնոջ շահերը միայն այն ժամանակ, երբ սիրեք և պատվեք նրան, ինչպես որ Քրիստոսն է սիրում և պատվում Եկեղեցուն:

Իր աշակերտների ոտքերը լվանալուց հետո Հիսուսը պարզ ասաց, որ Ինքը դեռ նրանց Տերն է: Նա երբեք չթողեց Իր իշխանական դիրքը: Նա ցույց տվեց, որ մենք իշխանություն ենք ստացել՝ միմյանց ծառայելու համար: Տղամարդի՛կ, մենք պետք է օգտագործենք մեր իշխանությունն ամուսնության մեջ, որպեսզի ստեղծենք այնպիսի պայմաններ, որոնք լավագույնս ծառայում են մեր կանանց: Քանի որ մենք ենք մեր միության գլուխը, մենք պատասխանատու ենք ամենանվաստ ծառայի գործն անելու համար: Անելով սա՝ հնազանդվում ենք մեր կանանց:

> «…Հնազանդվե՛ք մեկդ մյուսին՝ Քրիստոսի հանդեպ ունեցած երկյուղածությունից ելնելով» (Եփես. 5.21, NLT):

Դուք հիշո՞ւմ եք Եփեսացիների 5.18-ում գրված Պողոսի պատվերը «[Սուրբ] Հոգով մշտապես լցված և խթանված» լինելու մասին (AMP): Նա շարունակում է՝ նկարագրելով, թե ինչ է անում Հոգով լցված մարդը, օրինակ՝ հոգևոր երգեր երգելը կամ գոհանալը: Իսկ արդեն 21-րդ խոսքում նա գրում է. «Հնազանդվե՛ք մեկդ մյուսին»: Սովորաբար այս խոսքը համարվում է Պողոսի «ամուսնական հատվածի» սկիզբը: Այնուամենայնիվ, իրենց *«Ամուսնության իմաստը»* գրքում Թիմոթի և Քեթի Քելլերները նշում են.

> *Անգլերենում այն [խոսք 21-ը] սովորաբար դիտարկվում է որպես առանձին նախադասություն, բայց այս դեպքում ընթերցողները չեն նկատում մի կարևոր պնդում, որը Պողոսն անում է: Հունարեն տեքստում խոսք 21-ով ավարտվում է նախորդ երկար նախադասությունը, որում Պողոսը նկարագրում է «Հոգով լցված» մարդու մի քանի նշան[3]:*

Քելլերները շարունակում են.

Այս խոսքում գրված է Հոգու լեցունության վերջին նշանի մասին: Այն հպարտության և ինքնակամության կորուստն է, ինչի շնորհիվ մարդը խոնարհաբար ծառայում է ուրիշներին[4]*:*

Ամուսնության մեջ սա նշանակում է հետևյալը. նա, ով ապրում է Հոգու զորությամբ (ինչի կարևորության մասին արդեն խոսեցինք), հայտնի կլինի որպես մարդ, ով հնազանդվում է իր կողակցին:

Շատերը վերագրում են հնազանդությունը միայն կնոջ դերին, բայց Պողոսը պարզորեն կարգադրում է ամուսիններին՝ երկուսն էլ հնազանդվեն իրար: *«Հնազանդություն»* բառը, որն օգտագործվում է այս խոսքում, նույն հունարեն բառն է, որը Պողոսն օգտագործում է քիչ անց՝ պատվիրելով կանանց՝ հնազանդվել իրենց ամուսիններին: Եթե խոսքն ընտանիքում իշխանության կառուցվածքի մասին է, այո՛, կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին՝ որպես ընտանիքի գլխի: Բայց տղամարդկանցից պահանջվում է այլ տեսակի հնազանդություն իրենց կանանց:

Պողոսը գրում է, որ մենք պետք է հնազանդվենք՝ ելնելով Քրիստոսի հանդեպ ունեցած երկյուղածությունից: Այս խոսքում օգտագործված «երկյուղածություն» բառը հունարեն «ֆոբոս» բառն է, և նշանակում է՝ ակնածանք ներշնչող սարսափ կամ վախ (կարող եք նկատել, որ «ֆոբոս» բառը շատ նման է «ֆոբիա» բառին): «Երկյուղածություն» բառը ճշգրտորեն չի փոխանցում բնագրի իմաստը. ավելի լավ կլիներ այս խոսքը թարգմանել հետևյալ կերպ. «հնազանդվե՛ք մեկդ մյուսին՝ ելնելով Քրիստոսի ակնածանք ներշնչող վախից»:

Մի օր, երբ ես կոպիտ էի վարվել Լիզայի հետ, Աստված խոսեց ինձ հետ. «Նախ և առաջ՝ Լիզան Իմ դուստրն է, իսկ հետո՝ քո կինը»: Երբ լսեցի դա, Աստծո երկյուղը եկավ ինձ վրա:

Ամուսի՛ն, Աստված մշտապես ներկա է: Նա գիտի, թե ինչպես եք խոսում և վարվում Իր դստեր հետ: Նա լսում է ձեր խոսքերը և տեսնում ձեր սրտի դրդապատճառները: Արդյո՞ք դուք պատվում եք Նրան՝ արժանի վերաբերմունք ցուցաբերելով ձեր հարսնացուի հանդեպ: Անպատվելով ձեր հարսնացուին՝ դուք անպատվում եք նրա Հորը: Հո՛գ տարեք նրա մասին ահով ու դողով:

Պողոսը շարունակում է բացատրել, որ ամուսինը հնազանդվում է իր կնոջը՝ տալով իր կյանքը նրան: Այլ կերպ ասած՝ նա հնազանդվում է իր կնոջը՝ ծառայելով նրա շահերին:

> «Ամուսինների համար սա նշանակում է՝ սիրե՛ք ձեր կանանց՝ ինչպես որ Քրիստոսը սիրեց Եկեղեցուն: Նա տվեց Իր կյանքը նրա համար…» (Եփես. 5.25, NLT):

Քրիստոսը երբեք չօգտագործեց Իր իշխանական դիրքը սեփական շահերի համար: Նա օգտագործեց այն, որպեսզի զորացնի մեզ: Նմանապես, մենք՝ ամուսիններս, կանչված ենք օգտագործելու մեր իշխանական դիրքը, որպեսզի պաշտպանենք մեր կանանց շահերը և զորացնենք նրանց: Քրիստոսը զոհեց Իր կյանքը՝ Իր Հարսնացուին փառավորելու և սրբացնելու համար: Նրա խորին ուրախությունը և «երջանիկ ավարտը»՝ Իր հարսնացուի փառավորվելն է: Ձեր կյանքում չի մնա ոչ մի տեղ եսասիրության համար, երբ դուք քայլեք Հիսուսի հետքերով: Որպես ամուսին՝ ձեր դերը հետևյալն է. ապրել՝ ծառայելով ձեր կնոջը: Ձեր գերագույն նպատակը պետք է լինի՝ ներկայացնել Քրիստոսին ձեր կնոջը և ձեզ շրջապատող մարդկանց: Երբ այս կերպով առաջնորդեք ձեր կնոջը, նրա համար շատ ավելի հեշտ կլինի ուրախությամբ հնազանդվել այն իշխանական դիրքին, որն Աստված տվել է ձեզ:

Օր 4

Կին. աջակցե՛ք ձեր ամուսնուն

> «Կանա՛յք, հասկացե՛ք և աջակցե՛ք ձեր ամուսիններին, ասես աջակցություն եք ցուցաբերում Քրիստոսին: Ամուսինն առաջնորդում է իր կնոջն այնպես, ինչպես Քրիստոսը՝ Իր եկեղեցուն, ոչ թե բռնանալով, այլ փայփայելով: Այնպես որ, ինչպես եկեղեցին է հնազանդվում Քրիստոսին, երբ Նա այդպես առաջնորդում է, այնպես էլ կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին» (Եփես. 5.22-24, MSG):

Դուք հիշում եք, որ Պողոսն իր հրահանգները տվեց ամուսիններին և կանանց՝ պատվիրելով «հնազանդվել մեկը մյուսին՝ ելնելով Քրիստոսի հանդեպ ունեցած երկյուղածությունից (տե՛ս Եփես.

5.21): Հաջորդ խոսքում նա շարունակում է միտքը. «Կանանց համար սա նշանակում է՝ հնազանդվե՛ք ձեր ամուսիններին՝ ինչպես Տիրոջը» (խոսք 22): Շատերի կարծիքով՝ կինը տուժում է այս պատվիրանի պատճառով, բայց դա այդպես չէ:

Քանի որ ամուսնության մեջ պետք չէ տիրապետել, կինը տիրում է իր ամուսնու հետ՝ որպես լիիրավ գործընկեր: Սա չի հակասում ամուսնու գլուխ լինելուն, որովհետև թե՛ ամուսինը, թե՛ կինը իշխանության և ազդեցության եզակի բնագավառներ ունեն իրենց ամուսնության մեջ և իրենց շրջապատող աշխարհում: Տիրելն ամուսնության մեջ նշանակում է. «Ես կգործադրեմ իմ իշխանությունը և ազդեցությունը՝ հօգուտ քեզ, և դու նույնպես կգործադրես քո իշխանությունը և ազդեցությունը՝ հօգուտ ինձ»:

Կինը ծառայում է իր ամուսնուն, երբ աջակցում է նրան: Կի՛ն, ձեզ վստահվել է ձեր ամուսնու սիրտը: Պաշտպանեք նրա սիրտը՝ խոսելով ճշմարտությունը սիրով և հարգանքով: Սա կարող է լինել մեծագույն ծառայությունը, որը դուք կմատուցեք նրան: Սովորեք ծառայել ձեր ամուսնուն՝ օգնելով նրան՝ արտահայտել այն, ինչ կա իր սրտում: Անմիջապես հետևություններ անելու փոխարեն՝ զրուցեք նրա հետ և օգնեք՝ ձևավորել իր տեսիլքն ու նպատակը:

Կանայք խոցելի են ֆիզիկական ուժի բնագավառում, իսկ տղամարդկանց խոցելի բնագավառը սիրտն է: Կինը տղամարդու սրտի պահապանն է ճիշտ այնպես, ինչպես որ տղամարդը պետք է լինի իր կնոջ ցանկացած ֆիզիկական տկարության պաշտպանը և մատակարարը: Կա՞ արդյոք ավելի պատվավոր առաջադրանք, քան սրտի պահապան լինելը[5]:

Երբ ամուսինը ծառայում է կնոջը և զոհում է կյանքը նրա համար, կինը պատասխանում է՝ պատվելով նրան որպես իրենց միության գլուխ: Սա նրա դերն է՝ Քրիստոսին այս աշխարհին հայտնելու գործում: Նրա պատիվը, սերը և հարգանքն իր ամուսնու հանդեպ ցույց են տալիս, թե ինչ է նշանակում Հիսուսի կողմից առաջնորդվելը: Աստված չի խնդրել կանանց՝ հնազանդվել, որովհետև նրանք երկրորդական են: Նա առաջարկում է նրանց, որպեսզի ցուցադրեն, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին: Ամուսնության մեջ մենք հնարավորություն ունենք ցուցադրելու, թե ինչպիսին կարող է լինել կյանքը, եթե առաջնորդվենք բարի, հավատարիմ, սիրող և առատաձեռն Տիրոջ և Փրկչի կողմից: Որքա՜ն ողբերգական կլինի,

եթե մենք թույլ տանք թշնամուն՝ աղավաղել այս դերը՝ դարձնելով այն արժանի արհամարհանքի և ափսոսանքի: Տալով այս դերը կանանց՝ Աստված խնդրել է Իր դուստրերին՝ ցույց տալ, որ Ինքը հավատարիմ է:

Աստված գիտի, որ Նա կանանց ստեղծել է ուժեղ և շնորհալի: Պատմության ընթացքում Նա ընտրել է կանանց՝ առաջնորդելու, դատելու, մարգարեանալու, բարեխոսելու և նույնիսկ Իր միածին Որդուն ծնելու և սնուցելու համար: Կոչ անելով կանանց՝ պատվել իրենց ամուսինների իշխանությունը, Նա չի ցանկանում ասել, որ նրանք թույլ կամ անարժան են: Փոխարենը՝ ասում է. «Ես գիտեմ, որ դու ուժեղ և շնորհալի ես, որովհետև դու Իմ դուստրն ես: Բայց ամուսնության հավիտենական օրինակի մեջ Ինձ պետք է ինչ-որ մեկը, ում միջոցով Ես ցույց կտամ այն երանելիությունը, որը կարելի է ունենալ՝ հնազանդվելով Ինձ: Արդյո՞ք դու հոժարությամբ կզբաղեցնես այս դերը. արդյո՞ք կաջակցես և կհնազանդվես քո ամուսնուն՝ ցույց տալով մարդկանց, որ Ես արժանի եմ նրանց նվիրմանը»:

Առաջնորդության բեռը

Ի տարբերություն Աստծո՝ ամուսինները կատարյալ չեն: Նրանք միշտ չէ, որ ճիշտ որոշումներ են կայացնում, և միշտ չեն ծառայում իրենց կանանց այնպես, ինչպես պետք է ծառայեին: Սա կարող է հիասթափության լուրջ պատճառ դառնալ նույնիսկ այն կանանց համար, ովքեր ցանկանում են պատվել և աջակցել իրենց ամուսիններին: Հնարավոր է, որ ժամանակի ընթացքում նրանք ամեն ինչ անձամբ տնօրինելու գայթակղություն ունենան: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե ամուսնու իշխանական դիրքին հակառակվելը ազատության հնարավորություն թվա, իրականում դա կարող է մեծ ցավ և դժբախտություն պատճառել կնոջը:

Երբ մեր առաջնեկը դեռ նորածին էր, ես (Լիզան) աշխատում էի լրիվ դրույքով և խիստ աշխատատար գրաֆիկով, որն ընդգրկում էր նաև հանգստյան օրերը: Աշխատավայրում Ես բախվում էի թե՛ մասնագիտական, թե՛ անձնական դժվարությունների, և միևնույն ժամանակ ձգտում էի կատարյալ մայր և կին լինել տանը: Այդ ընթացքում Ջոնը անցումային փուլում էր: Ես մշտական լարվա-

ծության մեջ էի աշխատանքի պատճառով և կարոտում էի որդուս, իսկ Ջոնը աշխատում էր կես դրույքով, աղոթում էր, ծոմեր էր պահում, շփվում էր ընկերների հետ և գոլֆ էր խաղում: Ես անասելի ճնշում էի զգում և մեղադրում էի Ջոնին իմ բոլոր դժվարությունների համար: Ես զգում էի, որ ամեն ինչ տանը իմ ուսերին էր, և որ արդեն անկարող էի դիմանալ դրան:

Ես ցանկանում էի, որ Ջոնն անհանգստանար ինձ հետ, բայց նա հրաժարվում էր: Մի անգամ, երբ փորձեցի պատմել նրան իմ վախերի և մտահոգությունների մասին, նա ասաց ինձ.

Լի՛զա, մի՛ անհանգստացիր այդ մասին, այլ հանձնի՛ր դա Աստծուն:

«Երբե՛ք,– մտածեցի ես:- *Եթե ես չհոգամ այս ամենի մասին, մեր տանը ոչինչ չի արվի»:* Լարվածությունը խեղդում էր ինձ, և ճնշումները, որոնցից ես անկարող էի փախչել, ծանրանում էին ինձ վրա:

Մի երեկո, երբ ցնցուղ էի ընդունում, ես բողոքեցի Աստծուն իմ ծանր բեռի մասին: Ես ասացի, որ չէի կարող Ջոնին տալ իմ բեռի ոչ մի մասը: Եթե ես չհիշեցնեի նրան, նա նույնիսկ աղբը չէր թափի, ուրեմն ինչպե՞ս կարող էի ավելի կարևոր հարցեր վստահել նրան: Ես պայքարի մեջ էի՝ ձգտելով արդարացնել այն, թե ինչու չեմ կարող չվերահսկել ամեն ինչ:

«Լի՛զա, քո կարծիքով, Ջոնը լա՞վ առաջնորդ է»,– Տերը մեղմորեն հարցրեց ինձ:

«Ո՛չ, չեմ կարծում,– պնդեցի ես:- Ես չեմ վստահում նրան»:

«Լի՛զա, դու չպետք է վստահես Ջոնին,– պատասխանեց Նա,– Դու միայն պետք է վստահես Ինձ: Դու կարծում ես, որ Ջոնը լավ չի կատարում այս ընտանիքի ղեկավարի պարտականությունները, և որ դու կարող ես ավելի լավ կատարել դրանք: Այն լարվածությունը և անհանգստությունը, որոնք զգում ես, ընտանիքի գլուխը լինելու ծանրությունն ու ճնշումն են: Դա բեռ է քեզ համար, իսկ Ջոնի համար՝ պատվավոր հանդերձ: Վա՛յր դիր դա, Լի՛զա»:

Ես անմիջապես հասկացա, թե ինչու էի բեռնավորված: Մեր տան ղեկավարի դիրքը, որը ես փորձում էի զբաղեցնել, ճնշում էր ինձ, քանի որ այդ դիրքն իմը չէր: Այն ճնշող չէր լինի ամուսնուս համար, որովհետև Աստված օծել էր նրան՝ որպես մեր ընտանիքի գլուխ:

Ես հասկացա, որ խլել էի մեր ընտանիքի ղեկը և պայքարում էի

դրա համար: Ես զրկել էի իմ ամուսնուն դիրքից, փոխարենը բարձրացնեի նրան և հավատայի նրա ուժերին: Նա, իր հերթին, զիջել էր իր իշխանության դիրքն ինձ, և ես ամեն ինչ խառնաշփոթի էի վերածել:

Անմիջապես զղջում զգալով՝ փակեցի ցնցուղը և արագորեն վերցրի սրբիչը: Ջոնը ննջասենյակում էր: Ես ներողություն խնդրեցի՝ լաց լինելով.

Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ: Ես վիճում էի քեզ հետ ամեն մի մանրուքի պատճառով, ես վախենում էի վստահել քեզ: Վաղը կհեռանամ աշխատանքից, եթե ցանկանում ես: Բայց պարզապես ուզում եմ, որ մենք կրկին միաբան լինենք:

Ես չեմ ցանկանում, որ դու թողնես աշխատանքդ,– պատասխանեց Ջոնը:- Չեմ կարծում, որ խնդիրը դա է: Բայց համոզված եմ, որ դու պետք է դադարես տեսնել քեզ՝ որպես մեր ընտանիքի մատակարարման աղբյուր:

Նա ճիշտ էր: Ե՛ս չէի այդ աղբյուրը, այլ՝ Աստված: Մոռանալով այդ մասին՝ ես ճնշված էի դարձել և դադարել էի աջակցել իմ մտերիմներին: Մենք շարունակեցինք զրուցել, և ես խոստացա Ջոնին.

Ես կլինեմ քո թիկունքում և կաջակցեմ քեզ: Ես հավատում եմ քեզ:

Այդ պահին ես չէի պատկերացնում, թե ինչին էի աջակցելու կամ հավատալու: Ես միայն գիտեի, որ Ջոնն ուներ այդ աջակցության կարիքն ավելի շատ, քան ես ունեի բոլոր մանրուքները հարթելու կարիքը: Ես գիտակցեցի, որ մեր ընտանիքը շատ անկարգ վիճակում էր: Ես ցանկանում էի, որ Աստված կարգ ու կանոն հաստատեր այն խառնաշփոթի մեջ, որը ստեղծել էի: Ջոնը նույնպես ներողություն խնդրեց մեր ընտանիքը չառաջնորդելու և ինձ մենակ թողնելու համար: Մենք սիրո, աջակցության և փոխադարձ օգնության ուխտ կնքեցինք միմյանց հետ:

Այդպիսի գիշեր առաջին անգամ էի ունենում մի քանի տարվա մեջ. ես քնեցի և իսկապես հանգստացա: Իմ գերության լուծը հեռացել էր:

Երբ կրում ենք այն, ինչ Աստված չի նախատեսել մեզ համար, մենք ընկնում ենք գերության ծանր լծի տակ: Իսկ այն ամենը, ինչով Աստված օծել է մեզ, պատվավոր հանդերձի պես պարուրում է մեզ՝ ցուցադրելով մեր դիրքը և իշխանությունը, և ապահովում պաշտպանություն ու մատակարարում:

Երբ ստանձնեցի մեր ընտանիքի ղեկավարի դերը, ես ընկա լծի տակ, իսկ Ջոնը հեռացվեց իր դիրքից: Ինչպիսի՜ խառնաշփոթ: Երբ հնազանդվեցի այն կարգին, որն Աստված հաստատել է ընտանիքի համար, իմ լուծը կոտրվեց, իսկ Ջոնը զգեստավորվեց առաջնորդի հանդերձով, որն Աստված էր տվել նրան: Ես նույնպես հայտնվեցի ծածկոցի տակ, որովհետև այդ հանդերձը տարածվեց՝ ծածկելով և պաշտպանելով ինձ և նրանց, ովքեր Ջոնի հովանու ներքո էին[6]:

Օր 5

Հարմարեցնել ձեր դերերը

Աստվածաշունչը ամուսնության մեջ տղամարդկանց և կանանց դերերի մասին շատ բան է ասում, բայց կան նաև շատ բաներ, որոնց մասին այն չի խոսում: Աստված պատվիրեց Ադամին և Եվային՝ շատանալ և լցնել երկիրը՝ առանց մանրամասնելու Իր պատվերը: Նույն կերպով, Նա սահմաններ է որոշում մեր ամուսնության համար՝ առանց մեզ սահմանափակելու: Աստված սովորեցրեց մեզ՝ ծառայել միմյանց, և թողեց մեզ Իր օրինակը, սակայն Նա չի վերահսկում ոչ մի մանրուք:

Պատկերացրեք, որ ձեզ տրվել է մեծ հողատարածք, որը պետք է բարեկարգեք, կառուցապատեք և վայելեք այնպես, ինչպես ցանկանում եք: Մի քանիսը կցանկանան լողավազան ունենալ, մյուսները՝ բասկետբոլի դաշտ, իսկ ուրիշները կցանկանան երկուսը միաժամանակ, կամ էլ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Ձեր ամուսնությունը՝ ձեր «տունն ու դաշտն» է, որը պետք է կառուցեք և վայելեք: Եթե կինը կարող է լավ նախագծել, թո՛ւյլ տվեք նրան՝ զբաղվել դրանով: Եթե ամուսինը սիրում է զբաղվել այգեգործությամբ, թո՛ւյլ տվեք նրան՝ անել դա: Ամեն մեկն էլ կօգտվի մյուսի ծառայությունից: Ոչ ոք իրավունք չունի ասել, որ տղամարդիկ պետք է միայն նախագծեն, իսկ կանայք պետք է միայն այգեգործությամբ զբաղվեն: Արեք այն, ինչը գործում է ձեզ համար՝ մշտապես հիշելով միմյանց ծառայելու մասին: Ձեր ընտանեկան մանրամասները վերաբերում են միայն ձեզ, ձեր կողակցին և Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Ամենից շատ միմյանց ծառայելու մեջ տարաձայնություններն առաջանում են, երբ սպասում ենք, որ մեր կողակիցը ծառայի մեզ այնպես, ինչպես մենք ենք ծառայում նրան, իսկ սա միշտ չէ, որ տեղի է ունենում: Մեր ընտանիքում մենք ծիծաղում էինք, երբ Ջոնն ասում էր մեզ, որ ինքը ծառա է: Նա տխրահռչակ էր այն բանով, որ անհետանում էր խոհանոցից անմիջապես ճաշից հետո՝ թողնելով ինձ (Լիզային) և մեր որդիներին կեղտոտ ափսեների հետ: Մեզ չէր թվում, որ նա ծառայում էր մեզ:

Մենք չէինք հասկանում, որ Ջոնը ծառայում էր մեզ այլ կերպով: Մինչ մենք հավաքում էինք սեղանը, նա հոգում էր մեր ֆինանսների մասին, ստուգում էր փոստը և վճարում մեր հաշիվները: Նա որոշում էր հրաժարվել այն գործից, որը մենք կարող էինք անել առանց նրա, որպեսզի հոգ տաներ այլ անհրաժեշտ գործերի մասին, որոնք նա կարող էր անել ավելի լավ, քան մեր ընտանիքի մյուս անդամները:

Այս օրինակից մենք կարող ենք եզրակացնել հետևյալը. ամուսինները պետք է բաժանեն ընտանեկան պարտականությունները: Ամենաօգտակար քայլերից մեկը, որը կարող եք ձեռնարկել՝ ձեր ամուսնության մեջ ծառայության մշակույթ ստեղծելու համար, յուրաքանչյուրիդ պարտականությունները որոշելն է: Ձեր համաձայնեցված պարտականություններն իմանալը երկու առավելություն ունի: Առաջինը՝ դուք լավագույնս ծառայում եք ձեր կողակցին, երբ բարեխղճորեն կատարում եք ձեր ամուսնական պարտականությունները: Այս կերպով դուք կնվիրեք ձեր կողակցին և՛ ազատ ժամանակ, և՛ խաղաղ միտք: Երկրորդը՝ երբ գիտեք, թե ինչի համար է պատասխանատու ձեր կողակիցը, ձեզ համար պարզ կլինի, թե ինչպես կարող եք օգնել նրան:

Հավանաբար, դուք նկատել եք, որ Եփեսացիների 5-րդ գլխի խոսքերից ոչ մեկը չի հարկադրում որևէ կարծրատիպ տղամարդկանց և կանանց հետաքրքրությունների կամ հմտությունների մասին: Կարիք չկա, որ սահմանափակեք պարտականությունների բաժանումը ձեր ընտանիքում «ավանդական» կամ «բնական» համարվող կանոններով: Կան ամուսիններ, ովքեր սիրում են խոհարարությամբ զբաղվել: Կան կանայք, որոնց դուր է գալիս ավտոմեքենա նորոգել: Ձեզնից մեկը մեծ հաճույքով կօգնի երեխաներին՝ կատարել տնային աշխատանքները, իսկ մյուսը կխաղա նրանց հետ ֆուտբոլի դաշտում:

Նա, ով ավելի լավ է հասկանում ֆինանսներից, կարող է վերահսկել ընտանեկան միջոցները: Նա կարող է ծառայել՝ գումար հատկացնելով իր կողակցին ամենօրյա ծախսերի համար և հետևելով, որ ընտանիքը պարտքեր չունենա:

Դուք նույնպես կարող եք ծառայել ձեր կողակցին՝ հոգ տանելով ձեր մարմնի մասին և հետևելով ձեր արտաքին տեսքին: Բացի այդ՝ մի՛ վարվեք ձեր ընկերների թելադրանքով, եթե դա հակառակ է ձեր կողակցի շահերին: Դուք կարող եք ծառայել խոսքով և ժեստերով, ինչպես նաև գործերով: Ամուսնությունը մեծ ազատություն է տալիս՝ գործելու համար, և բազմաթիվ հնարավորություններ՝ ծառայելու համար:

Վայելե՛ք ձեր օրհնությունը

«Եթե այս գիտեք, երանելի եք, թե որ այս անեք» (Հովհ. 13.17, NLT):

Թեև այն մարդը, ում ծառայում են, օրհնություն է ստանում, սակայն ամենամեծ օրհնությունը պատկանում է նրան, ով ծառայում է:

Դուք արդեն մաքրել եք ձեր ամուսնության տախտակամածը և հստակ տեսիլք եք որոշել: Այժմ այն պատրաստ է՝ դառնալու Աստծո սիրո հրաշալի օրինակն այս երկրի վրա: Բարեհաջող ամուսնություն կառուցելու համար լավագույն մոտեցումը այն է, որ օգտագործեք ցանկացած հնարավորություն՝ միմյանց ծառայելու համար: Բարձրացրեք մեկդ մյուսին և վայելեք Աստծո առատ օրհնությունները:

Երբ մենք սկսեցինք բարձրացնել մեկս մյուսին, Աստված սկսեց բարձրացնել մեզ: Նա ընդլայնեց մեր ազդեցության շրջանակները և թույլ տվեց Իր սիրով և շնորհքով կիսվել մեզ շրջապատող մարդկանցից շատերի հետ: Երբ բարձրացնեք մեկդ մյուսին՝ միմյանց ծառայելու միջոցով, Աստված հնարավորություն կտա՝ ծառայելու այն մարդկանց, ովքեր ձեր ազդեցության տակ են: Նա փայլուն ծրագիր է կազմել ձեր ամուսնության համար. Նա ցանկանում է ձեր ամուսնությունը դարձնել այնպիսի գլուխգործոց, որ նույնիսկ ամենակարծրացած անհավատները չկարողանան չզմայլվել դրանով:

Ծառայությունը բաղկացած է գործողությունից և վերաբերմունքից: Ամեն անգամ, երբ ձեր կողակցին ծառայելու հնարավորություն եք ունենում, դուք կարող եք ընտրել երեք տարբերակից մեկը.

- հրաժարվել՝ ընտրելով եսասիրությունը,
- ծառայել փնթփնթալով, քանի որ դուք պարտավորված եք զգում ձեզ,
- ուրախությամբ նվիրել ձեր կյանքը, քանի որ ձեր կողակցին օգնելը բերկրանք է պատճառում ձեզ:

«Դուք պետք է ունենաք նույն վերաբերմունքը, որն ուներ Քրիստոս Հիսուսը: Թեև Նա Աստված էր... Նա թողեց Իր աստվածային արտոնությունները. Նա ստանձնեց ստրուկի խոնարհ դիրքը...» (Փիլիպ. 2.5-7):

Երբ ամուսնանում եք ինչ-որ մեկի հետ, դուք, ըստ էության, պայմանագիր եք ստորագրում, որ ամբողջ կյանքում ծառայելու եք նրան: Ասելով ձեր «այո»-ն՝ դուք նկատի ունեք հետևյալը. «Ես նվիրում եմ իմ կյանքը քո շահերին: Ես որոշում եմ ուրախությամբ զոհել իմ կյանքը քեզ համար: Քո երազանքները, ցանկությունները և նպատակներն այժմ ամենակարևորն են ինձ համար: Ես ցանկանում եմ սովորել, թե ինչպես կարող եմ հայտնել Աստծո սերը քեզ հետ միասին»:

Եթե դուք մոտենաք ամուսնությանը ճշմարտապես խոնարհ դիրքից, այսինքն՝ որպես ծառա, դուք աստվածային միություն կունենաք: Դա միշտ չէ, որ հեշտ կլինի, բայց եթե դուք ցանկանում եք Աստծուց ունենալ լավագույնը և որոշում եք կայացնում՝ ապրել անձնուրաց կյանքով, ձեր ընտանիքը լեցուն կլինի սիրով, ուրախությամբ, խաղաղությամբ, երջանկությամբ և բավականությամբ, և դուք կհայտնեք Աստծո սերն այս աշխարհին:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

«...Ես ձեր մեջ ծառայողի պես եմ»:

— Ղուկաս 22.27

«...Մի՛ օգտագործեք ձեր ազատությունը՝ ձեր մեղավոր բնությանը գոհացնելու համար: Փոխարենը՝ օգտագործեք ձեր ազատությունը՝ մեկդ մյուսին սիրով ծառայելու համար»:

— Գաղատացիների 5.13, NLT

Դոկտորներ Հենրի Քլաուդն ու Ջոն Թաունսենդն ասում են. «Սերն ամուսնության հիմքն է. սեր՝ Աստծո հանդեպ և սեր՝ մեկ այլ մարդու հանդեպ: Այն արտահայտվում է նրանով, որ փնտրում է լավագույնը դիմացինի հանդեպ, անկախ այն բանից՝ նա արժանի՞ է դրան, թե՞ ոչ: Սերը դիմացինին համարում է սեփական եսասիրական կարիքներից և ցանկություններից ավելի բարձր: Այն զոհաբերում, տալիս և վնաս է կրում: Այն դիմանում է վիրավորանքներին և փոթորիկներին՝ ուխտը պահելու համար»[7]:

Ձեր կողակցի շահերին ձգտելը, նրա կարիքները ձեր կարիքներից վեր դասելը և զոհաբերող լինելը կարելի է արտահայտել մեկ բառով՝ *ծառայել*: Ահա հաջողակ ամուսնության գաղտնիքը:

Կա՛նգ առեք և մտածե՛ք: Ինչպիսի՞ *հետաքրքրություններ* ունի ձեր կինը կամ ամուսինը: Ի՞նչն է բավականություն պատճառում նրան: Ինչպիսի՞ հանգիստ է նա սիրում կամ՝ ի՞նչ նախասիրություններ ունի:

_____

_____

_____

Ի՞նչ եք անում, որպեսզի խրախուսեք նրա հետաքրքրությունները և առաջնահերթություն դարձնեք դրանք:

_____

_____

_____

Հարցրե՛ք ինքներդ ձեզ և Սուրբ Հոգուն. *«Ի՞նչը թույլ չի տալիս ինձ՝ ծառայել իմ կողակցին: Արդյո՞ք ինձանում կա այնպիսի բան, ինչը բորբոքում կամ խթանում է եսասիրությունը: Արդյո՞ք ես վախենում եմ մի բանից, ինչը կարող է տեղի ունենալ, եթե խոնարհեցնեմ ինձ և սկսեմ ծառայել»*: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ ցույց տալ ձեզ, թե ինչ կա ձեր սրտում:

Հիսուսը՝ մեծագույն Ծառան է, և որպես Աստծո զավակ՝ դուք ստացել եք Նրա ԴՆԹ-ն: Դուք ունեք Նրա հոգևոր գեները, որոնցից մեկը՝ ծառայելն է: Մի պահ մտորեք այս խոսքերի շուրջ:

> «Նա, ով ծնված է Աստծուց [հոժարությամբ, գիտակցաբար և սովորության համաձայն], մեղք չի գործում, որովհետև Աստծո բնությունը բնակվում է նրանում [Նրա կյանքի սկզբունքը՝ աստվածային սերմը, մշտապես մնում է նրանում], և նա չի կարող մեղք գործել, որովհետև նա ծնված է Աստծուց»:
>
> — Ա Հովհաննես 3.9, AMP

> «Ձեր նոր կյանքը նման չէ հին կյանքին: Ձեր հին ծնունդն առաջացավ մահկանացու սերմից. ձեր նոր ծնունդն առաջացավ Աստծո կենդանի Խոսքից: Պարզապես մտածե՛ք. կյանք, որը բեղմնավորվել է անձամբ Աստծո կողմից»:
>
> — Ա Պետրոս 1.23, MSG

> «Եկե՛ք Ինձ մոտ... Վերցրե՛ք Իմ լուծը ձեզ վրա: Թո՛ւյլ տվեք Ինձ՝ սովորեցնել ձեզ, որովհետև ես սրտով խոնարհ և հեզ եմ, և դուք հանգիստ կգտնեք ձեր անձերի համար: Որովհետև Իմ լուծը հեշտ է կրել, և այն բեռը, որը ես տալիս եմ ձեզ, թեթև է»:
>
> — Մատթեոս 11.28-30, NLT

Ի՞նչ է ձեզ հայտնում Սուրբ Հոգին: Արդյո՞ք այս խոսքերը խրախուսում են ձեզ և դրդում են՝ աղոթել:

_____

_____

_____

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼ

«Ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան...
Դու իշխան կարգեցիր նրան Քո ձեռքի գործերի վրա.
ամեն բան նրա ոտքի տակ դրիր...»:

— Սաղմոս 8.4,6

Անձնուրացությունը և ծառայող սիրտն այն ժառանգության մասն են, որն ստացել ենք Քրիստոսի մեջ՝ որպես հավատացյալներ: Մեր երկնային Հոր այս զարմանալի բնավորության գծերը զարգանում և արտահայտվում են մեր կյանքում, երբ մենք ժամանակ ենք անցկացնում՝ շփվելով Նրա հետ: Այսինքն՝ մեր կյանքն ու ամուսնությունն արտացոլում են Հիսուսի ծառայող բնավորությունն այն չափով, որով մենք թույլ ենք տալիս Նրա Սուրբ Հոգուն՝ լցնել մեզ:

Տիրոջը ճանաչելուց հետո հիշե՛ք ձեր կյանքը: Կարո՞ղ եք հստակ օրինակներ բերել այն մասին, թե ինչպես է Սուրբ Հոգին փոխել ձեզ: Ինչպե՞ս է Նա փոխել ձեր ամուսնությունը:

_____

_____

_____

Աստված ցանկանում է, որ դուք տիրեք այն ամենին, ինչը Նա վստահել է ձեզ՝ Իր ներբնակվող Հոգու միջոցով: Ըստ Վեբսթերի 1828 թվականի բառարանի՝ *«տիրություն (տիրելը)»* բառը նշանակում է. «զորություն՝ իշխելու կամ վերահսկելու համար. զորություն՝ առաջնորդելու, ղեկավարելու և գործածելու համար. գերագույն իշխանություն»[8]:

Եվս մեկ անգամ ուշադրությամբ կարդացե՛ք այս բառի սահմանումը: Իսկ հիմա կա՛նգ առեք և մտածե՛ք: Թե՛ անհատապես, թե՛ որպես զույգ՝ ո՞վ է կամ ի՞նչն է ձեր վերահսկողության, հոգատարության ներքո. ո՞ւմ կամ ի՞նչն եք դուք առաջնորդում, ղեկավարում կամ իշխում: Ինչպե՞ս եք կատարում ձեր պարտականություններն այս բնագավառներում:

_____

_____

Արդյո՞ք այն բնագավառներից մեկը, որում դուք տիրում եք, այնպիսի վիճակում է, որ այժմ ինքն է տիրապետում և վերահսկում ձեզ: Եթե այո, պատմե՛ք այդ մասին:

Աղոթե՛ք և հնազանդեցրե՛ք այդ բնագավառը Սուրբ Հոգուն: Խնդրե՛ք Նրան՝ ներել ձեզ և տալ Իր շնորհքը (զորությունը), ինչպես նաև ծրագիրը՝ այդ բնագավառում ձեր իշխանությունը կրկին հաստատելու համար:

Գործնական ինչպիսի՞ ձևերով կարող եք գործել ձեր կողակցի հետ՝ որպես *համախոհներ*, ոչ թե թշնամիներ: Ինչպե՞ս կարող եք լավագույնս տիրել ձեր երեխաների կյանքում, ձեր ունեցվածքին, ձեր աշխատանքի և ծառայության բնագավառներում և այլն:

Երբ դուք և ձեր կողակիցը սրտով միաբան լինեք և ձգտեք նույն նպատակների, դուք բազմապատկում կունենաք: Աստված պատվիրում է Իր օրհնությունն այնտեղ, որտեղ միաբանություն կա (տե՛ս Սաղմ. 133): Ո՞ր բնագավառներում է թշնամին աննահանջ գործում, որպեսզի պառակտում և վիճաբանություններ առաջացնի ձեր և ձեր կողակցի միջև: Խոնարհեցրե՛ք ձեզ և տվե՛ք այս խնդիրներն Աստծուն: Ընդունե՛ք Նրա Հոգու օգնությունը, խնդրե՛ք, որ միաբան լինեք ձեր կողակցի հետ, և սպասե՛ք Տիրոջ օրհնությանը:

Սերտողություն. Օր 3

ՊԱՏՎԵՔ ՄԵԿԴ ՄՅՈՒՍԻՆ՝ ՀԱՎԱՍԱՐԻ ՊԵՍ

«...Ամեն կին պետք է պատվի իր ամուսնուն»:

— Ա Պետրոս 3.7, MSG

Տղամարդը և կինը հավասար են ամուսնության մեջ: Կինը երկրորդական չէ իր ամուսնու համեմատ, ո՛չ էլ ամուսինը՝ իր կնոջ: Երկուսն էլ ժառանգակիցներ են, և հավասար բաժին ունեն Աստծո շնորհքի մեջ: Ինչպե՞ս մենք կարող ենք լավագույնս պատվել իրար՝ ինչպես հավասարներ: Սովորելով ապրել ըստ այն դերերի, որոնք Աստված տվել է մեզ:

Հովիվ Ջիմմի Էվանսը գրում է.

«Տղամարդու ամենամեծ կարիքն ամուսնության մեջ՝ պատիվ ստանալու կարիքն է: Մի՞թե հետաքրքիր չէ, որ Աստված պատվիրում է կնոջը՝ հնազանդվել ամուսնուն՝ «ինչպես Տիրոջը»: Երբ կինը *պատվում է* տղամարդուն և ուրախությամբ *հնազանդվում է* նրան, նա լրացնում է իր կողակցի ամենախորը ամուսնական կարիքը:

Նմանապես, երբ տղամարդն *անձնազոհաբար* հոգում է իր կնոջ մասին և փայփայում նրան, նա լրացնում է իր կնոջ ամենախորը ամուսնական կարիքը՝ ապահովության կարիքը: Կնոջն անհրաժեշտ է առաջնորդ, ով *կպաշտպանի* իրեն և *կհոգա* իր մասին: Երբ տղամարդն ուրախությամբ է անում սա, կնոջ ներքին բաղձանքը պատասխանվում է»[9]:

Տղամա՛րդ, ձեր կինը նախ՝ Աստծո դուստրն է, և հետո միայն՝ ձեր կինը: Կանա՛յք, ձեր ամուսինը նախ՝ Աստծո որդին է, և հետո միայն՝ ձեր ամուսինը: Մենք պատվում ենք մեր երկնային Հորը՝ պատվելով մեկս մյուսին՝ որպես Աստծո պատկերը կրող հավասար անձանց: Այս հատվածում ուշադրությամբ կարդացե՛ք Աստծո հրահանգները ամուսիններին և կանանց.

Կանա՛յք, հասկացե՛ք և աջակցե՛ք ձեր ամուսիններին, ասես աջակցություն եք ցուցաբերում Քրիստոսին: Ամուսինն առաջնորդում է իր կնոջն այնպես, ինչպես Քրիստոսը՝ Իր եկեղեցուն, ոչ թե բռնանալով, այլ՝ փայփայելով: Այնպես որ, ինչպես եկեղեցին է հնազանդվում

Քրիստոսին, երբ Նա այդպես առաջնորդում է, այնպես էլ կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին:

Ամուսիններ՛ը, ձեր կանանց համար արե՛ք այն ամենը, ինչ կարող եք, նրանց հանդեպ ունեցած սիրո պատճառով, այն սիրո, որի առանձնահատկությունը տալն է, ոչ թե վերցնելը, ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսն արեց եկեղեցու համար: Քրիստոսի սերն ամբողջական է դարձնում եկեղեցին: Նրա խոսքերը զարթնցնում են նրա գեղեցկությունը: Այն ամենը, ինչ Նա անում և ասում է, ունի մեկ նպատակ՝ դուրս բերել լավագույնը, որը նրա ներսում է, հագցնել շլացուցիչ սպիտակ մետաքս, որը շողում է սրբությամբ: Ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց հենց այսպես: Անելով դա՝ նրանք իրականում իրենք իրենց են շնորհ անում, քանի որ արդեն «մեկ» են ամուսնության մեջ:

«Ոչ ոք վնաս չի հասցնում իր մարմնին, այնպես չէ՞: Ո՛չ, նա կերակրում և փայփայում է այն: Ահա թե ինչպես է Քրիստոսը վերաբերվում մեզ՝ եկեղեցուն, քանի որ մենք Նրա մարմնի մասն ենք: Ահա թե ինչու է տղամարդը թողնում իր հորը և մորը և փայփայում իր կնոջը: Այլևս երկուս չլինելով՝ նրանք «մեկ մարմին» են դառնում»:

— Եփեսացիների 5.22-31, MSG

Ի՞նչ է ցույց տալիս ձեզ Սուրբ Հոգին ամուսնու և կնոջ դերի մասին:

_____

_____

_____

_____

_____

Արդյո՞ք դուք պատվում եք ձեր կնոջը՝ ապրելով ըստ այն դերի, որը տրվել է ձեզ Աստծուց: Ո՞ր բնագավառներում դուք աճելու տեղ ունեք:

_____

_____

_____

_____

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, ի՞նչը թույլ չի տալիս ինձ՝ պատվել իմ կողակցին: Ինչի՞ց եմ ես զրկվում անպատիվ վերաբերմունքի պատճառով: Ինչպիսի՞ ներուժ ունի իմ կողակիցը, որը դեռ չեմ բացահայտել: Խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ՝ տեսնել նրա արտասովոր արժեքը»: Լո՛ւռ մնացեք և լսե՛ք: Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ:

ՀԻՍՈՒՍԻ ՕՐԻՆԱԿԸ

«Ինչպես Սուրբ գիրքն է ասում. «Տղամարդը թողնում է իր հորը և մորը և միանում է իր կնոջը, և երկուսը միավորվում են՝ մեկ դառնալով»: Սա մեծ խորհուրդ է, բայց սա Քրիստոսի և եկեղեցու մեկ լինելու օրինակն է»:

— Եփեսացիների 5.31,32, NLT

Աստված որոշեց ամուսինների և կանանց դերերը: Այս դերերը կապ չունեն գերադասության կամ ստորադասության հետ: Դրանք, ի վերջո, Քրիստոսի և Եկեղեցու փոխհարաբերությունների օրինակ են:

Այժմ, երբ դուք կարդացիք երկու ամուսինների դերերի մասին, համեմատե՛ք այն, ինչ իմացաք այս գլխից, նախկինում ձեր լսածի կամ իմացածի հետ: Արդյո՞ք ինչ-որ բան այս գլխում տարբերվում էր այն բաներից, ինչ դուք լսել էիք կամ ինչին հավատում էիք: Ի՞նչն է մարտահրավեր նետում ձեզ: Ի՞նչն է խրախուսում ձեզ: Ի՞նչն եք դուք ցանկանում ավելի խորը ուսումնասիրել:

_____

_____

_____

_____

Մտածե՛ք ամուսնու դերի մասին. նա պետք է առաջնորդի իր կնոջը՝ ծառայելով նրան, ինչպես որ Հիսուսն է ծառայում: Ամուսնության մեջ նա Հիսուսի առաջնորդության, ծառայության և սիրո օրինակն է: Տղամարդի՛կ, ի՞նչն է այս դերի մեջ ոգեշնչում ձեզ: Արդյո՞ք կա ինչ-որ բան կապված այս դերի հետ, ինչի պատճառով դուք անվստահություն եք զգում:

_____

_____

_____

_____

Աստված չի ծրագրել, որ դուք կատարեք այս դերը ձեր ուժերով: Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, Դու Հիսուս Քրիստոսի Հոգին ես, և ապրում ես ինձանում: Սովորեցրո՛ւ ինձ՝ սիրել և ծառայել Հիսուսի նման: Տո՛ւր ինձ Քո շնորհքը, որպեսզի ճիշտ կերպով առաջնորդեմ իմ կնոջը, ողջամիտ որոշումներ կայացնեմ և պատվեմ նրան՝ որպես մեր միության իրավահավասար անդամի»:

Կանա՛յք, ի՞նչն է ոգեշնչում ձեզ ամուսնու դերի մեջ: Ինչպե՞ս կարող եք պատվել ձեր ամուսնու դերը, որպեսզի ավելի միաբան դարձնեք ձեր ընտանիքը:

Հաջորդը՝ մտածե՛ք կնոջ դերի մասին. նա պետք է հոժարությամբ ստանձնի հնազանդության և աջակցության դերը՝ խորհրդանշելով Եկեղեցու հնազանդությունը և աջակցությունը Քրիստոսին: Կանայք, ի՞նչն է ոգեշնչում ձեզ ձեր դերի մեջ: Արդյո՞ք ինչ-որ բան դրանում վախի կամ ստորադասության զգացում է առաջացնում ձեզանում: Ինչո՞ւ:

Ձեր ձայնը, պարգևները և ներդրումն էական և արժեքավոր են: Կանգ առեք և աղոթեք. «Աստված, շնորհակալություն, որ խնդրում ես ինձ պատկերել այն առաքինությունը, որը Քեզ հնազանդվելու մեջ է: Ես թույլ չեմ տա որևէ բանի ձևավորել իմ պատկերացումն իմ ինքնության մասին՝ բացի Քո Խոսքից: Տուր ինձ Քո շնորհքը, որպեսզի ես ծառայեմ իմ ամուսնուն, ինչպես որ ձգտում եմ ծառայել Քեզ»:

Տղամարդի՛կ, ի՞նչն է ոգեշնչում ձեզ կնոջ դերի մեջ: Ինչպե՞ս դուք կարող եք պատվել ձեր կնոջ դերը, որպեսզի ավելի միաբան դարձնեք ձեր ընտանիքը:

Խոսե՛ք ձեր կնոջ կամ ամուսնու հետ այն մասին, թե ինչպես պատասխանեցիք այս հարցերին: Քննարկե՛ք նրա հետ, թե ձեր կարծիքով ինչպես կարելի է միաբանություն հաստատել ձեր ամուսնության մեջ, անդրադարձեք ցանկացած մտահոգությունների կամ անհրաժեշտ փոփոխությունների: Եթե ձեզնից մեկը վախի կամ անվստահության զգացում ունի, թող դիմի Աստծո Խոսքին: Ի՞նչ է այն ասում:

Աղոթե՛ք միասին. «Հա՛յր, մենք շնորհակա՛լ ենք, որ Դու պատվել ես ամեն մեկիս՝ տալով գեղեցիկ, ծանրակշիռ և պատվավոր դեր մեր ամուսնության մեջ: Օգնի՛ր մեզ՝ ծառայել միմյանց և լինել միաբանության ու սիրո հրաշալի օրինակ Քո փառքի համար: Հիսուսի անունով, ամե՛ն»:

ԹԻ՛Մ ԴԱՐՁԵՔ

«Համերաշխ ապրեք իրար հետ. մի՛ եղեք գոռոզ (սնապարծ, մեծամիտ, առանձնահատուկ), այլ պատրաստակամորեն հարմարվեք [մարդկանց, իրավիճակներին] և հանձն առեք խոնարհ գործեր: Երբեք մի՛ թերագնահատեք ձեզ, ո՛չ էլ իմաստուն եղեք ձեր աչքերում»:

— Հռոմեացիների 12.16, AMP

Հավանաբար, դուք լսել եք «Թիմի մեջ *չկա ես*» ասացվածքը: Այն ճշմարիտ է ոչ միայն սպորտի մեջ, այլև ամուսնության: Դուք և ձեր «թիմակիցը» կարևոր և անփոխարինելի դերեր ունեք, և մեկը ստորադաս չէ մյուսին: «Տարբերությունները չպետք է խնդիրներ ստեղծեն ամուսնության մեջ»,– պնդում են **Դոկտոր Հենրի Քլաուդը** և **Դոկտոր Ջոն Թաունսենդը**:- «Եթե դուք և ձեր կողակիցը տարակարծիք եք, օրինակ, երեխաների դաստիարակության կամ տան կահավորանքի հարցում, դա ավելի կհարստացնի ձեր կյանքը: Ձեր «աշխարհն» ավելի կլայնանա»[10]:

Այսպիսով, ձեր ընտանեկան պարտականություններից որո՞նք են ավելի լավ ստացվում ձեզ մոտ, իսկ որո՞նք՝ ձեր կողակցի: Դուք մշտապես պետք է բաժանեք ընտանեկան պարտականությունները: Իհարկե, ժամանակի ընթացքում դրանք կարող են փոփոխվել: Բայց, ընդհանուր առմամբ, ո՞ր առաջադրանքները ներկայումս արժե վստահել ձեզ, իսկ որո՞նք՝ ձեր կողակցին:

Կազմակերպե՛ք թիմային պարտականությունների ցուցակ ձեր ընտանիքի համար: Գրի՛ առեք այն բոլոր առաջադրանքները, որոնք պետք է կատարվեն, և նշանակեք նրան, ում մոտ դա ավելի լավ է ստացվում: Որոշ առաջադրանքներ կարող են լիովին հանձնվել ձեզնից մեկին կամ մյուսին: Այլ առաջադրանքներն ավելի լավ կկատարվեն, եթե կիսեք դրանք՝ փոփոխաբար պատասխանատվություն ստանձնելով, օրինակ՝ երկու օրը կամ երկու շաբաթը մեկ անգամ:

Ահա որոշ օրինակներ.

Լվանալ և խնամել ավտոմեքենան	Որոշել և պատրաստել կերակուրներ
Ծրագրել արձակուրդը	Լվանալ ափսեները ճաշից հետո

Վարել ընտանեկան բյուջեն
Վճարել հաշիվները
Լվացք
Վերահսկել տնային գործերը
Տանել երեխաներին դպրոց, խաղերի և.
Մաքրել տունը փոշեկուլով
Վերցնել փոշին
Խնամել սիզամարգը
Խնամել պարտեզը և բակը
Գնել մթերք և այլ անհրաժեշտ բաներ

Հնարավոր է, որ դուք ամուսնացել եք՝ ունենալով նախապաշարմունքներ այն մասին, թե ինչպիսի պարտականություններ պետք է կատարի յուրաքանչյուրդ: Եթե այո, որո՞նք են դրանք: Գնահատեք ձեր պատասխանները՝ համեմատելով դրանք ձեր պարտականությունների ցուցակի հետ: Դուք տեսնո՞ւմ եք այնպիսի բնագավառներ, որոնցում պետք է փոփոխություններ մտցնեք:

Հրաժարվե՛ք կարծրատիպերից: Թույլ մի՛ տվեք, որ այլ մարդիկ որոշեն ձեր կյանքի մանրամասները:

Կրկին նայեք ձեր պարտականությունների ցուցակին և համեմատեք այն ձեր կնոջ կամ ամուսնու ցուցակի հետ: Քննարկե՛ք ձեր պատասխանները միասին, իսկ հետո կազմեք պարտականությունների համաձայնեցված ցուցակ:

«Տեսնենք, թե որքան հնարամիտ կարող եք լինել՝ միմյանց հանդեպ սերը խրախուսելու և մեկդ մյուսին օգնելու մեջ...»:

— Եբրայեցիների 10.24, MSG

Ինչպե՞ս կարող եք օգտագործել ձեր վերաբերմունքը, խոսքը և գործերը, որպեսզի օգնեք ձեր կողակցին կատարել իր պարտականությունները:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 4-ը:

1 | Հիսուսը մեծ օրինակ էր մեզ համար, երբ ստանձնելով ամենանվաստ ծառայության դիրքը՝ լվաց աշակերտների ոտքերը (տե՛ս Հովհ. 13.1-17): Թեև ժամանակակից հասարակության մեջ ոտքերը լվանալու կարիք այլևս չկա, մեկս մյուսին ծառայելը դեռևս անհրաժեշտ է: Ինչպիսի՞ գործնական միջոցներով կարող ենք նմանակել Հիսուսին և խորհրդանշական կերպով «լվանալ մեր կնոջ կամ ամուսնու ոտքերը»:

2 | *Տղամարդի՛կ*, ինչո՞ւ է կարևոր, որ դուք՝ որպես ամուսին, հավասար գործընկեր համարեք ձեր կնոջը (տե՛ս Ա Պետր. 3.7): Ի՞նչ տեղի կունենա, եթե այդպես չվարվեք: *Կանա՛յք*, ինչո՞ւ է կարևոր, որ դուք՝ որպես կին, պատիվ տաք ձեր ամուսնուն: Ի՞նչ տեղի կունենա, եթե այդպես չվարվեք:

Արդյո՞ք այս հարցերի պատասխանները լցնում են ձեզ Տիրոջ երկյուղով և օգնում են, որ Աստծո շնորհքով կատարեք այն դերերը, որոնք Նա տվել է ձեզ:

3 | Ամուսնական հարաբերությունները մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև պետք է արտացոլեն Հիսուսի հարաբերությունները մեր՝ Իր Հարսնացուի հետ: Նկարագրե՛ք, թե ամուսնության մեջ ում են խորհրդանշում ամուսինն ու կինը: Ինչպե՞ս են ամուսնու և կնոջ դերերը ցույց տալիս Հիսուսի սերն Իր Եկեղեցու և անհավատ մարդկանց հանդեպ: Ինչպիսի՞ զորություն ենք ստացել՝ այս առաջադրանքը կատարելու համար:

Ավագներ. Այս հարցի երկրորդ մասին պատասխանելու համար կարդացե՛ք Եփեսացիների 5.18-ը, ինչպես նաև՝ Գործք 1.8, Զաքարիա 4.6, Հակոբոս 4.6 և Փիլիպեցիների 4.13 խոսքերը:

4 | Աստված ցանկանում է, որ մեր տարբերությունները միաբանեն մեզ, ոչ թե բաժանեն իրարից: Մի պահ մտածեք, թե ինչպիսի՞ն կլիներ կյանքը, եթե դուք և ձեր կողակիցը ճիշտ իրար նման լինեիք և ունենայիք նույն ուժեղ ու թույլ կողմերը: Նկարագրե՛ք, թե ինչպես ամեն ինչ կարող էր դասավորվել, իսկ հետո առաջարկեք մի քանի նոր միջոց՝ ձեր տարբերություններից օգուտ քաղելու համար:

5 | Շատ օգտակար և կարևոր է իմանալ ձեր համաձայնեցված ընտանեկան պարտականությունները: Արդյո՞ք դուք արդեն որոշել եք դրանք ձեր ամուսնության մեջ: Արդյո՞ք այն, որ դուք գիտեք ձեր պարտականությունները, օգնում է ձեզ՝ ամուսնության մեջ ծառայության մթնոլորտ ստեղծել, ինչպես նաև աջակցել ձեր կողակցին:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Առողջ ամուսնություն կառուցելու ամենաարդյունավետ միջոցը ձեր կնոջ կամ ամուսնու ծառան դառնալն է՝ սովորելով զոհաբերել ձեր շահերը հանուն նրա շահերի:
- Մեր ամուսնությունները կարտացոլեն Քրիստոսին այն չափով, որով թույլ ենք տալիս Նրա Հոգուն՝ գործել մեր կյանքերում: Եթե թույլ տանք, որ Սուրբ Հոգին մշտապես լցնի մեզ, մեր մտածելակերպը կնորոգվի, իսկ վարքը կփոխվի:
- Տղամարդիկ և կանայք կրում են Աստծո պատկերը և արտացոլում Նրա բնությունն այս երկրի վրա: Երկուսն էլ հավասարապես արժեքավոր են, և երկուսն էլ իշխանություն ունեն միմյանց ծառայելու համար:
- Ամուսիններ՛ր, Աստված վստահել է ձեզ, որ մատակարարեք ձեր կնոջը՝ նաև պաշտպանեք և աջակցեք նրան: Դուք պետք է սիրեք և պատվեք նրան՝ զոհաբերելով ձեր կյանքը նրա համար և առաջնահերթություն դարձնելով նրա շահերը:
- Կանա՛յք, Աստված վստահել է ձեզ, որ ծառայեք ձեր ամուսնուն՝ լինելով նրա սրտի խնամակալը և պաշտպանը: Դուք պետք է պատվեք նրան՝ հնազանդվելով նրա առաջնորդությանը, ինչպես որ կհնազանդվեիք Քրիստոսին:
- Ձեր ընտանեկան պարտականությունները միասին որոշելը պակասեցնում է վեճերը, օգնում է խաղաղություն ունենալ և ձևավորում է թիմային մտածելակերպ:

ՀԻՆԳ

Մտերմություն

Սեռական հարաբերությունները նախատեսված են այն փոխհարաբերությունների համար, որոնցում լիակատար նվիրում կա, որովհետև սեռական հարաբերությունները կանխավայելքն են այն ուրախության, որը բխում է Աստծո հետ լիակատար միությունից՝ Քրիստոսի միջոցով: Ամենահիասքանչ սերը տղամարդու և կնոջ միջև, որը հնարավոր է այս երկրի վրա, ընդամենը աննշան ակնարկ է այդ միության մասին:

— Թիմոթի և Քեթի Քելլեր, «Ամուսնության իմաստը»[1]

«...Ո՜հ, սիրեկան և սիրեցյալ, կերե՛ք և խմե՛ք: Այո՛, խմե՛ք ձեր սիրուց մինչև վերջ»:

— Երգ երգոց 5.1, NLT

Օր 1

Այն եղանակը, որը Սուրբ գիրքն օգտագործում է՝ սեռական կյանքը նկարագրելու համար, ոչ մի դեպքում չի կարելի երկչոտ անվանել: Այն ավելի շուտ բացահայտ է և նույնիսկ՝ տենչալի: Եթե չեք հավատում մեզ, պարզապես մի քանի րոպե կարդացեք Երգ երգոց գիրքը ձեր կնոջ կամ ամուսնու հետ, և կտեսնեք, թե ինչ կլինի:

Ի տարբերություն մեզնից շատերի՝ Աստված չի ամաչում սեռական հարաբերություններից: Նա բերկրանք է զգում դրա գեղեցկությունից և բարձր է գնահատում դրա նպատակը: Աստված ցանկանում է մտերմորեն ներգրավված լինել մեր մտերիմ հարաբերու-

թյունների մեջ: Սեռական հարաբերություններն ամուսնության մեջ ոչ միայն դրական և թույլատրելի են, այլև վեհ և խրախուսելի:

«Խմե՛ք ձեր սիրուց մինչև վերջ»,– գրված է Երգ երգոց գրքում: Այլ կերպ ասած՝ սեռական հարաբերություններն առեղծվածային ու խորն են, և կարիք չկա բավարարվել մակերեսային վերապրումով: Ճաշակե՛ք և վայելե՛ք մտերմության անզուգական բավականությունը:

Սեռական մտերմությունը նման է համակարգչային «նորացում» ստեղնին՝ փոխհարաբերությունների մեջ: Զարմանալի չէ, որ հաճախ Սուրբ գիրքն օգտագործում է ջուրը՝ որպես սեռական հաճույքի և բավականության փոխաբերություն: Ջուրն անփոխարինելի է կյանքը շարունակելու համար: Այն թարմություն և կենսական ուժեր է հաղորդում: Թեև առողջ սեռական կյանքը ամուսնության ամբողջական էությունը չէ, սակայն դրա արժեքն անկարելի է չափազանցել: Աստծո նպատակն է, որ սիրային հարաբերությունները նման լինեն տոնի և հրաշալի հիշեցում լինեն այն խորը ուխտի մասին, որը միավորում է երկու ամուսինների կյանքերը:

Ի դեպ՝ դուք գիտե՞ք, որ սեռական հարաբերություններն օգտակար են ձեր առողջության համար: Բացի այն, որ սեռական հարաբերություններն ավելացնում են մտերմությունը ձեր միջև, դրանք խթանում են ձեր իմունային համակարգը, օգնում են առողջ քաշ ունենալ, իջեցնում են արյան ճնշումը, թուլացնում են ցավերը և նվազեցնում են սրտի կաթվածի վտանգը: Իհարկե, սրանք սեռական հարաբերությունների բազմաթիվ առավելություններից ընդամենը մի քանիսն են[2]:

Որոշ եկեղեցական խմբեր խարանել են սեռական մտերմության ցանկությունը՝ համարելով այն անբարո, մարմնական հակում: Այդ պատճառով նույնիսկ ամուսնական սեռական կյանքը սկսել է հանցանք համարվել: Ոմանք ցանկանում են հավատացնել մեզ, որ այն պարտականություն է, որը կինը կատարում է իր ամուսնու հանդեպ: Բայց ճշմարտությունն այն է, որ սեռական հարաբերությունները նախատեսված են ամուսինների վայելքի համար: Ոմանք խարանել են սեռական հարաբերությունները որպես անհրաժեշտ չարիք՝ հանդուրժելով այն որդեծնության համար: Սատանայից եկած նման սխալ պատկերացումը, այս սրբազան գործողության բազմաթիվ աղավաղումների հետ մեկտեղ, դրդել են շատերին՝ վերաբերվել սեռական մտերմությանը վատ կանխազգացմամբ:

Վերարտադրությունը սեռական հարաբերությունների նպատակներից մեկն է, բայց Աստված հենց սկզբից նախատեսել էր այն նաև երանության համար: «Թող քո աղբյուրը օրհնյա՛լ լինի,– ասում է Սուրբ գիրքը,– և ուրախացիր քո երիտասարդության կնոջ հետ. նա քեզ սիրելի եղնիկի և շնորհալի այծյամի պես լինի, նրա ստինքները թող քեզ կշտացնեն ամեն ժամանակ, նրա սիրով միշտ զմայլվես» (Առակ. 5.18,19): Այլ թարգմանությունների մեջ գրված է՝ *«հափշտակվես»* (NKJV), *«գերվես»* (NLT) և *«հարբես»* (ESV):

Ակնհայտ է, որ Աստծո նկարագրությունը համեստ չէ: Նա ստեղծեց սեռական օրգանները և չի ամաչում դրանց գործառույթներից: Նա ստեղծեց սեքսը և լարեց դրա զգացողությունները: Նա բերկրանք է ապրում, երբ մենք հաճույք ենք զգում: Նա ցանկանում է ոչ թե նվազեցնել մեր սեռական ցանկությունները, այլ սրբացնել դրանք:

Սրբացված սեռական հարաբերություններ

Սրբացումը մի ընթացք է, որը տանում է դեպի սրբություն: Այն նույնպես կարելի է անվանել ճանապարհ դեպի լավագույնը, ինչ Աստված պատրաստել է մեզ համար: Պատկերացրեք սա որպես մարդկային բնության անջատում և աստվածայինի ներարկում: Աներևակայելի սեռական կյանք ունենալը (ինչն Աստծո ծրագրի մի մասն է մեզ համար) սկսում է այն բանից, որ մենք ընդունում ենք Աստծո սրբության կոչը մեր ննջասենյակում: Երբ այսպես վարվենք, մենք կբացահայտենք այնպիսի սեռական բավականություն, որը գերազանցում է մարդկային երևակայության սահմանները:

Բայց միայն Աստված կարող է սրբացնել, այսինքն՝ սուրբ դարձնել այն, ինչ մենք տալիս ենք Նրան: Ցավոք, մեզնից շատերը հրաժարվում են ներկայացնել մեր սեռական կյանքը Աստծուն, որովհետև մենք ամաչում ենք մեր անցյալի սխալներից կամ շարունակում ենք մնալ անցյալում կրած բռնությունների գերիները: Այս վերապրումների պատճառով մենք անսուրբ ենք համարում մեր սեռական բնությունը և փորձում ենք ծածկել այս խավար բնագավառը Սուրբ Աստծուց: Զարմանալի է, թե որքա՜ն արագորեն են շատերը մոռանում, որ սեռական կյանքը Ստեղծողը կարող է փրկել և սրբացնել այն:

Ամոթը ցանկանում է կենտրոնացնել մեր ուշադրությունը սեփական անձի վրա և հեռացնել այն Աստծուց: Այն ծուղակի մեջ է գցում մեզ՝ փորձելով համոզել, որ մերժենք Աստծո ողորմությունը և շնորհքը: Այն զգացումը, որն սկզբում նման է ամոթի, ի վերջո կարող է վերածվել հպարտության՝ դրդելով մեզ՝ անարգել Աստծո ողորմությունը, ասես այն, ինչ Նա արել է, բավական չէ մեր կյանքի այս ծածուկ բնագավառը բժշկելու համար: Մենք փոխարեն մեր ցավը բերենք սիրո լույսի մեջ, շարունակում ենք այն պահել: Այն մարդիկ, ում թվում է, թե Աստված չի պաշտպանել իրենց սեռական կյանքն անցյալում, հաճախ վախենում են հրավիրել Աստծուն իրենց ներկայի մեջ: Ճշմարտությունն այն է, որ Աստված չէր լքել ձեզ. այն, ինչ տեղի էր ունեցել, անկում ապրած մարդկային բնության հետևանքն էր: Թույլ մի՛ տվեք, որ մեղքի կամ բռնության ամոթը խանգարի ձեզ լիարժեք կերպով վայելել ամուսնական մտերմությունը և սեռական մտերմության երանությունը: Աստված ցանկանում է բժշկել ամեն մի կոտրված բան ձեր ներսում և առողջացնել ձեզ:

Երբ նոր էինք ամուսնացել, քրիստոնյա զույգերից շատերի պես մենք էլ ենթադրում էինք, որ մեր ամուսնական երդումները սրբելու էին մեր անցյալի սեռական փորձառության հետքերը և առաջնորդելու էին դրախտային ճանապարհով: Մենք հավատում էինք, որ եթե սիրում ենք և նվիրված ենք միմյանց, ոչ մի խավար իրադարձություն մեր անցյալից չի կարող թափանցել մեր ապագան: Մենք կարծում էինք, որ այժմ, երբ կանոնավոր սեռական հարաբերությունների հնարավորություն ունեինք, եսասիրությունը և ամոթը պետք է հեռանային մեզնից: Ցավոք՝ սխալվում էինք: Այս գլխում մենք կպատմենք մեր պատմությունները, որպեսզի կիսվենք ձեզ հետ այն որոշումներով և հայտնություններով, որոնք ազատություն բերեցին մեզ:

Ոչինչ չի կարող արգելել Աստծո զավակներին՝ հիմնել նոր սեռական ժառանգություն. ո՛չ նրանց բնական ժառանգությունը, ո՛չ էլ ձախողումները: Այնուամենայնիվ, միայն Աստված կարող է սրբացնել մեր սեռական կյանքը և ազատել մեզ անցյալի, ներկայի և ապագայի սխալներից: Ամուսնական անկողինը բավականության և սիրո ապաստան է դառնում միայն Նրա շնորհքով:

Ինչպիսի անցյալ էլ ունենաք, Աստված ցանկանում է արմատապես և ամբողջովին վերականգնել ձեր սեռական կյանքը: Նրա շնորհքն ավելի մեծ է, քան ցանկացած բան, որը դուք երբևէ գործել եք կամ կրել եք: Այդուհանդերձ, դուք չեք կարող ստանալ Նրա շնորհքը, քանի դեռ չեք դարձրել Նրան ձեր սեռական կյանքի Տերը: Գիտակցե՛ք, որ կոտրված եք, և հանձնե՛ք ձեր կոտրված վիճակն Աստծուն: Նա կվերափոխի ձեր սեռական մղձավանջը գեղեցիկ երազի:

Պատվել ամուսնական անկողինը

«Ամուսնությունը թող պատվելի լինի բոլորի միջև, և ամուսնական անկողինը թող անապական լինի, որովհետև Աստված կդատի սեռականորեն անբարո և շնացող մարդկանց» (Եբր. 13.4, ESV):

Եթե ձեր ամուսնության մեջ խնդիր կա, առաջին հերթին այն կարտահայտվի ձեր անկողնում: Բուռն սիրո բացակայությունն ամուսնական անկողնում սովորաբար այլ խնդիրների նշան է, և որևէ կապ չունի կողակիցներից մեկի սեռական սառնության հետ: Թաքնված խնդիրները դրսևորվում են այնտեղ, որտեղ մարդը խոցելի է, իսկ մենք ամենից խոցելի ենք հենց սեռական մտերմության պահերին:

Սեռական մտերմության կարևորագույն սկզբունքը պատիվն է: Շատերը սխալմամբ հավատում են, որ ամուսնական անկողինն անկարելի է անպատվել կամ ապականել, ուրեմն, ամեն ինչ թույլատրելի է: Բայց դա մեծ սխալմունք է:

Մենք պատվում ենք մեր ամուսնությունը, երբ ամուրի կամ նշանված ենք՝ անարատ մնալով և պահպանելով մեզ մեր ապագա կողակցի համար: Մենք պատվում ենք մեր ամուսնական անկողինը հարսանիքի օրվանից հետո՝ թույլ չտալով, որ այլ մարդիկ մուտք գործեն այդտեղ (շնություն չգործելով) և թույլ չտալով, որ ինչ-որ բան շեղի մեզ սեռական մտերմության գեղեցկությունից (օրինակ՝ պոռնոգրաֆիան, այլասերությունը կամ պղծությունը)[3]: Ամուսնական անկողինը չի սրբացնում անսուրբ սեռական կամայականությունները: Ընդհակառակը՝ անսուրբ վարքը պղծում է ամուսնական անկողինը և թույլ չի տալիս մեզ ճշմարիտ մտերմություն

վայելել: Ինչպես նշեցինք նախորդ գլխում, մենք նույնպես պատվում ենք մեր անկողինները՝ դիտարկելով դրանք որպես մի վայր, որտեղ մենք ծառայում ենք մեր կնոջ կամ ամուսնու շահերին: Մեր կողակիցներին սեռականորեն ծառայելը նշանակում է՝ պատվել նրանց կարիքները սրբության սահմաններում, որոնք որոշել է Աստված:

Երբեմն մենք ծառայում ենք մեր կողակիցներին այս կերպով, թեև սեռականորեն հրապուրիչ չենք զգում մեզ: Տարիների ընթացքում, սեռականորեն հրապուրիչ զգալը կորցնում է կարևորությունը: Դուք դադարում եք դիտարկել սեքսը՝ որպես ապացույց, որ դուք ֆիզիկապես գրավիչ եք ձեր կողակցի համար: Այն սկսում է ավելի շատ վերաբերվել ծածուկ գրավչությանը: Աստված ստեղծեց սեռական հարաբերությունները՝ որպես շփում ամուսինների և կանանց միջև. թույլ մի՛ տվեք, որ անապահովության զգացումը խանգարի ձեզ, որպեսզի վայելեք այս շփումը (եթե առաջնորդվում եք ձեր կնոջը կամ ամուսնուն ծառայելու ցանկությամբ, դուք չպետք է ճնշում գործադրեք նրա վրա՝ դրդելով կատարել այն, ինչը նա չի ցանկանում, միայն ձեր հաճույքի համար):

Քանի որ մեր ամուսնական անկողինը պատվի վայր ենք դարձրել, մենք ավելի հաճելի սեռական կյանք ունենք այժմ՝ երբ հիսունն անց ենք, քան այն ժամանակ, երբ քսանն անց էինք, թեև այն ժամանակ շատ ավելի լավ տեսք ունեինք, քան հիմա: Հաճելի սեռական կյանքը կախված չէ ձեր արտաքին տեսքից կամ հմտություններից: Այն կախված է մեկ բանից՝ ո՞վ եք դուք միասին:

Երբ մենք սիրով ենք զբաղվում, մենք տոնում ենք մեր ավելի, քան երեսնամյա ամուսնական կյանքը: Մեր ուրախ և դժվարին պահերը, պայքարները և հաղթանակներն իմաստավորում և արժեք են հաղորդում մեր մտերմությանը: Մեր հոգևոր, զգացմունքային և ֆիզիկական մտերմությունը միասին գագաթնակետի են հասնում՝ աստվածային հաճույք և բավականություն պարգևելով: Այն սեռական մշակույթը, որը մենք հաստատել ենք մեր ամուսնության մեջ, Աստծո փրկարար զորության վկայությունն է, որովհետև հիմա մենք շատ հեռու ենք այնտեղից, որտեղից սկսել էինք:

Օր 2

Լիզայի պատմությունը

Ջոնը և ես տարբեր տեսակի սեռական մեղքերով սկսեցինք մեր ամուսնական կյանքը: Իհարկե, Ջոնը վարում էր իր անձնական պայքարները, բայց ես նույնպես ստիպված էի պատերազմել սեռական բնագավառում: Իմ մտքով նույնիսկ չէր կարող անցնել, որ անփույթ թվացող սեռական որոշումները, որոնք ես կայացնում էի, երբ տասնիննամյա ուսանողուհի էի, փորձելու էր խլել իմ ազատությունը քսաներկու տարեկանում, երբ նոր էի ամուսնացել:

Ծնողներս ասում էին ինձ, որ սեռական կյանքը նախատեսված է ամուսնության համար, բայց չէին բացատրում, թե ինչու: Որքան հիշում եմ, հիմնականում նրանք շեշտադրում էին սեռավարակները կամ խայտառակությունը արտաամուսնական հղիության պատճառով:

Ծնողներիս ամուսնությունը շատ անկայուն էր, և ես շատ անհամապատասխանություններ էի տեսնում նրանց խոսքի և կյանքի միջև: Որպես օրինակ կարող եմ ասել, որ իմ տատիկը և հայրը բազմաթիվ արտաամուսնական սեռական կապեր էին ունեցել: Նրանց կյանքում նույնիսկ գաղափար չկար մաքրության կամ առաքինության մասին: Ես եկա այն եզրակացության, որ պետք էր խորամանկել՝ արա այն, ինչ ցանկանում ես, քանի դեռ պատասխանատու վարք ես ցուցաբերում և չես բռնվել:

Ես հետևեցի այս տրամաբանությանը համալսարանում՝ համատեղելով իմ վարքն այն բարոյական տպավորության հետ, որն ստեղծել էի հասակակիցներիս շրջանակում: Ես սեռական կապեր ունեի միայն նրանց հետ, ովքեր ինձ դուր էին գալիս, և ես սեռական պատասխանատվություն էի կրում: Այս «պատասխանատվության» կողմերից մեկը ծնելիության վերահսկողությունն էր: Երբեմն նույնիսկ իմ բժշկի մոտ էի տանում ոչ այնքան պատասխանատու ընկերուհիներիս, ովքեր ապրում էին մեր հանրակացարանում, որպեսզի նրանք էլ սկսեին հակաբեղմնավորիչներ ընդունել:

Ես քսանմեկ տարեկան էի, երբ հանդիպեցի Ջոնին, և մեր առաջին ժամադրությանը նա առաջնորդեց ինձ դեպի Տերը: Այդ երեկո ես վերստին ծնվեցի, լցվեցի Հոգով և բժշկվեցի: Երբ մենք զրուցում

էինք, ես անհեթեթ մի բան ասացի. «Այնքա՜ն ուրախ եմ, որ իմ պահվածքը բարոյական է»:

Զարմանում եմ, թե ինչո՞ւ նման հիմար մեկնաբանություն արեցի: Մինչև օրս ես գաղափար չունեմ այդ մասին, բայց պատասխանը միգուցե այն էր, որ չէի հասկանում տարբերությունը *բարոյական* և *սուրբ* վարքի միջև: Թեև վերստին ծնվեցի, հազիվ թե առաջին մի քանի ժամվա ընթացքում միտքս կարելի էր նորոգված անվանել:

Ավելի ուշ՝ երբ սկսեցինք լրջորեն հանդիպել, ես հույս ունեի, որ Զոնը մոռացած կլիներ այդ մասին: Պատկերացրեք իմ սարսափը, երբ մի անգամ նա ասաց ինձ. «Ես այնքա՜ն ուրախ եմ, որ երկուսս էլ անարատ ենք պահել մեզ»:

Ես ցանկանում էի բղավել. «Չէ՞ որ ես նոր էի ապաշխարել և չգիտեի, թե ինչ էի ասում»: Այդ ժամանակ բացահայտեցի, թե որքա՜ն ցավ կարող էին պատճառել իմ անձնական որոշումներն այլ մարդկանց:

Մոտենում էր այն ժամանակը, երբ ես գիտեի, որ Զոնն առաջարկելու էր կիսել իր կյանքն ինձ հետ: Ես գիտեի, որ պետք է ասեի նրան ճշմարտությունը:

Ինձ թվում էր, թե արժանի չէի Զոնին: Ես կարող էի կառուցել իմ կյանքն այնպիսի տղամարդու հետ, ով սիրում էր Աստծուն և հոգ էր տանում իմ մասին, բայց համոզված էի, որ փոխզիջման էի գնացել՝ կորցնելով այդ թանկ հնարավորությունը: Ես գնացի զբոսանքի և սկսեցի աղաղակել Աստծուն: Գիտեի, որ ներված եմ, բայց զղջում էի իմ սեռական որոշումների հետևանքների համար:

Ես գնացի Զոնի բնակարան, որպեսզի զրուցեմ նրա հետ: Բայց մինչև իմ ամոթալի գաղտնիքը խոստովանելը, նա ասաց:

– Դեմ չե՞ս լինի, եթե մի խոսք կարդամ Աստվածաշնչից: Ես զգացի, որ պետք է կիսվեմ քեզ հետ այս խոսքով:

Ես գլխով արեցի, և Զոնը սկսեց կարդալ.

– «Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5.17):

– Ես գիտեմ, որ սա տարօրինակ է հնչում,– շարունակեց նա,– բայց զգացի, որ Աստված պատվիրեց ասել քեզ, որ հներն անցել են: Դու լիովին նոր ես, և դու ասես… կույս լինես:

Ես զգացի, որ քիչ էր մնում՝ ուշաթափվեի:

– Ես կույս *չեմ*,– ասացի:- Ես հենց դա էի պատրաստվում ասել քեզ:

Զոնը գրկեց ուսերս, նայեց աչքերիս և ասաց.

– Եթե Աստված ասում է, որ դու այդպիսին ես, ո՞վ ենք մենք, որ վիճենք դրա հետ:

Այդ պահին իմ ամոթն ամբողջությամբ մաքրվեց[4]:

Վերականգնել կոտրված սեռական կյանքը

Բայց և այնպես, ես արթնացրել էի իմ սեռական հակումը կրքի, և ոչ թե սիրո ոլորտում: Մեր ամուսնությունից հետո ես ցանկանում էի սիրել, բայց չգիտեի, թե ինչպես: Իմ գիտակցության մեջ սեքսը վատն էր: Այն սխալ էր: Այն արգելված էր: Այժմ, երբ մենք ամուսնացանք, սեքսը հանկարծ լավ, պատվավոր և աստվածահաճո դարձավ: Ես չգիտեի՝ ինչպես կատարել այս անցումը:

Երբեմն Ջոնը և ես մենակ էինք լինում, և հանկարծ ես սարսափում էի՝ հիշելով ինչ-որ տեսարան մի գարշելի պոռնոգրաֆիկ ֆիլմից, որը դիտել էի համալսարանում հինգ տարի առաջ: Այլ դեպքերում, ես փակվում էի սեռական ցանկության համար, քանի որ ամոթ էի զգում նախկին ընկերներիցս մեկի հետ ունեցած սեռական հարաբերությունների պատճառով: Դա անտանելի էր:

Ես պետք է կարողանայի ազատորեն և ամբողջովին տրվել իմ ամուսնուն, բայց զգում էի, որ կաշկանդված էի իմ անցյալից: Ջոնն արժանի էր, որպեսզի ստանար ինձ ամբողջությամբ, իսկ ես չէի կարողանում ազատ լինել իմ սեռական կյանքում՝ անցյալի սխալների պատճառով: Ես պայքարում էի անմաքուր մտքերի, պատկերների, համեմատությունների և ամոթի հետ: Ես հակառակվում էի դրանց, բայց թվում էր՝ իմ ջանքերն ապարդյուն էին: Կյանքիս այս փուլում ես սովորեցի շնչավոր կապերը և սերնդեսերունդ փոխանցվող անեծքները քանդելու զորության մասին:

Նախորդ գլուխներից մեկում մենք խոսեցինք սերնդեսերունդ փոխանցվող անեծքների մասին: Ինչպես նշեցի, իմ ընտանիքի պատմության մեջ եղել էին անբարոյություն և ամուսնական անհավատարմություն, որոնցից ես պետք է հրաժարվեի: Բայց ես նույնպես պետք է քանդեի անձնական կապերն իմ նախկին հարաբերություններից, որպեսզի իմ մասնատված սեռական հակումը վերականգնվեր: Կարդանք այն հատվածն Աստվածաշնչից, որը խոսում է այս մասին.

«Մի՞թե չգիտեք, որ ձեր մարմիններն անձամբ Քրիստոսի անդամներն են: Այդ դեպքում, մի՞թե ես պետք է վերցնեմ Քրիստոսի անդամները և միացնեմ մի մարմնավաճառի հետ: Երբե՛ք: Մի՞թե դուք չգիտեք, որ նա, ով միացնում է իրեն մարմնավաճառի հետ, մեկ է նրա հետ մարմնով: Որովհետև գրված է. «Երկուսը մեկ մարմին կդառնան» (Ա Կորնթ. 6.15,16, NIV):

Ես մարմնավաճառներ չեմ անվանում իմ նախկին ընկերներին, բայց սկզբունքը նույնն է: Մի ժամանակ ես մեկ էի նրանց հետ, բայց հետագայում ուխտ կնքեցի մեկ այլ մարդու հետ: Իմ անձը մասնատվել էր ամեն միացման և բաժանման արդյունքում, մինչև որ ես վերջնականապես կոտրվել էի: Երբ դուք սեռական ոլորտում կոտրված եք, ձեզ համար անհավատալիորեն դժվար է լիովին տրվել ձեր կողակցին, որովհետև դուք այլևս ամբողջական չեք:

Մաքրության մեջ ապրելու և սեռական մտերմության պարգևը վայելելու համար մենք պետք է ամբողջական լինենք, և միայն Աստված կարող է վերականգնել մեզ՝ ամբողջացնելով այն, ինչը կոտրված է: Միայն Աստված կարող է վերականգնել մեր սեռական կյանքի պատիվը, եթե այն արատավորվել է: Միայն Աստված կարող է վերցնել այն, ինչն անմաքուր և ապականված է, և կրկին սուրբ ու մաքուր դարձնել: Միայն Աստված կարող է տալ մեզ փառք այն մոխրի փոխարեն, որը բերում ենք Նրա առջև:

Եթե ձեր սեռական կյանքը կոտրված է ձեր անցյալի անբարո վարքի պատճառով (լինի անկարգ սեռական կյանք, պոռնոգրաֆիա՝ ձեռնաշարժության հետ, կամ ցանկացած այլ պղծություն), մենք ցանկանում ենք առաջարկել ձեզ, որ ևս մեկ անգամ ժամանակ հատկացնեք վերականգնման աղոթքի համար: Կրկին, խնդրում ենք, հոգևորապես պատրաստվեք մինչև աղոթելը, և աղոթեք միայն ձեր կնոջ, մտերիմ ընկերոջ կամ աղոթքի ընկերոջ հետ, կամ էլ՝ պարզապես Աստծո Հոգու ներկայության մեջ: Բարձրաձայն ասե՛ք.

Երկնային Հա՛յր,

Շնորհակալություն, որ ուղարկեցիր Քո Որդուն իմ մեղքի պատիժը կրելու համար: Քանի որ ես Քրիստոսում եմ, բոլոր հին բաներն անցել են իմ կյանքից: Հիմա ամեն ինչ նոր է: Համաձայն Բ Կորնթացիների 5.21-ի՝ Հիսուսը վերցրեց իմ մեղքն Իր վրա, որպեսզի ես դառնամ Քո արդարությունը: Ահա թե ով եմ ես այսօր:

Այժմ խոստովանում և ուրանում եմ իմ մեղքը և իմ հայրերի մեղքերը՝ ամեն ինչ՝ կապված ցանկացած սեռական մեղքի հետ, նաև ամեն պղծության, այլասերվածության և անկարգ սեռական կյանքի հետ (զգայուն եղեք այս պահին. անվանեք այն մեղքերը, որոնք ուրանում եք: Բարձրաձայն անվանեք դրանք Աստծո առջև՝ առանց ամոթի: Աստծուց ոչինչ թաքնված չէ. Նա արդեն գիտի այդ ամենը և ցանկանում է հեռացնել մեղքի զգացումի և ամոթի ծանրությունը ձեզնից: Երբ ավարտեք, շարունակեք):

Հա՛յր, ես վերցնում եմ Քո Հոգու սուրը և խզում եմ ամեն մի անբարո սեռական բնույթ ունեցող շնչավոր կապ իմ և .... միջև (լսե՛ք Սուրբ Հոգուն և բարձրաձայն ասեք ամեն մի անուն, որը լսում եք: Շատ հնարավոր է, որ դուք ասեք այնպիսի մարդկանց անուններ, ում հետ չեք ունեցել սեռական հարաբերություններ, բայց ում հետ ներգրավված եք եղել այն տեսակի սեռական կամ զգացմունքային կապերի մեջ, որոնք պետք է ունենաք միայն ձեր կողակցի հետ, կամ այն տեսակի անձնական կապերի մեջ, որոնք պետք է ունենաք միայն ձեր Փրկչի հետ):

Ամեն մի անունը առանձին ասելուց հետո, աղոթեք հետևյալը.

Հա՛յր, ուղարկի՛ր Քո հրեշտակներին, որպեսզի ետ բերեն իմ անձի բեկորներն այս մարդկանցից: Վերականգնի՛ր դրանք Քո Հոգով, որպեսզի ես լինեմ ամբողջական, սուրբ և առանձնացված՝ Քեզ հաճելի լինելու համար:

Հա՛յր, ես հրաժարվում եմ ամեն մի այլասերված և պիղծ պատկերից: Ների՛ր ինձ, որ գարշելի և պիղծ պատկերներ եմ դրել աչքերիս առջև: Ես ուխտ եմ կնքում՝ համաձայն Սաղմոս 101.3-ի, և կհսկեմ իմ սրտի ելքերը աչքերիս միջոցով: Ես հրաժարվում եմ ամեն մի անմաքուր հոգուց և հրամայում եմ դրանց և դրանց ազդեցությանը հեռանալ իմ կյանքից:

Հա՛յր, լվա՛ ինձ Հիսուսի մաքրող արյամբ, որովհետև միայն այդ արյունը փրկելու և քավելու զորություն ունի: Այժմ ես ընծայում եմ ինձ՝ որպես Քո տաճար. հեռացրո՛ւ Քո Հոգու զորությամբ ամեն հոգևոր, անձնական և մարմնական պղծություն այս սրբարանից: Բերնեբերան լցրո՛ւ ինձ Քո Սուրբ Հոգով, Ով բնակվում է իմ մեջ: Բացի՛ր իմ աչքերը, որ տեսնեմ, իմ ականջները, որ լսեմ, և իմ սիրտը, որ ընդունեմ այն ամենը, ինչ Դու պատրաստել ես ինձ համար: Ես Քոնն եմ: Թող Քո կամքը կատարվի իմ կյանքում:

Սիրով՝ Քո զավակը[5]*:*

Օր 3

Ձոնի պատմությունը

Ես փաստացիորեն պահպանել էի ինձ կնոջս համար, բայց կապված էի պոռնոգրաֆիայով և ձեռնաշարժությամբ: Երբ ամուսնացանք, ես դեռ կախվածություն ունեի: Ես մտածում էի, որ սեռական կյանքն իմ հրաշալի կնոջ հետ կբուժեր ինձ այդ անմաքրությունից, բայց դա տեղի չունեցավ: Մեր ամուսնությունից հետո ես պայքարում էի կրքի հետ տարիներ շարունակ: Իմ կախվածությունը շատ էր խանգարում մեր սեռական կյանքին: Ես ամաչում էի և շփոթված էի: Չէի ցանկանում կապված լինել կրքով, բայց որքան փորձում էի, չէի կարողանում ազատվել դրանից: Ինչ-որ բան պետք է փոխվեր:

1984 թվականին իմ պարտականություններից մեկն էր՝ ուղեկցել այն քարոզիչներին, ովքեր հյուրընկալվում էին մեր եկեղեցում, և մի օր, նրանցից մեկի հետ ես անկեղծացա իմ պայքարների մասին: Այդ մարդը ծառայող էր, ում ես խորապես հարգում էի: Նա հայտնի էր իր ազատագրման ծառայությամբ: Ես մտածում էի, որ նա, միգուցե, միակն էր, ով կարող էր օգնել ինձ: Այնպես որ, ես պատմեցի նրան իմ պայքարների մասին:

Նա չպատասխանեց այնպես, ինչպես ես ակնկալում էի.

– Մի՛ արա դա,– ասաց նա:- Պարզապես մի՛ արա դա:

– Լա՛վ,– ասացի ես:- Բայց կարո՞ղ եք աղոթել ինձ համար:

Նա աղոթեց, բայց ոչինչ տեղի չունեցավ: Ես մտածում էի. *«Միգուցե պետք է գտնեմ այնպիսի մարդու, ով ավելի ուժգին ազատագրման պարգև ունի»:* Բայց ես չգիտեի որևէ մեկին, ով ավելի ազդեցիկ ազատագրման ծառայություն ուներ, քան նա: Այնպես որ, ես զգացի, որ բռնված եմ իմ մեղքով:

Գրեթե ինն ամիս անց մեր ընկերներից մեկը թույլ տվեց ինձ՝ մնալ իր բնակարանում չորս օր: Ես առանձնացա այդտեղ մի նպատակով՝ պայքարել իմ կախվածության դեմ: «Աստված, բավակա՛ն է,– վերջապես ասացի ես:- Սրան պետք է վե՛րջ տալ»: Այդ օրը, 1985 թվականի մայիսի 6-ին, ես հրաշքով լիովին ազատագրվեցի:

Մի քանի ամիս ազատության մեջ ապրելուց հետո հարցրի. «Աստվա՛ծ, ես չեմ հասկանում: Ինչո՞ւ ես չազատագրվեցի, երբ այդ ծառայողն աղոթեց ինձ համար: Ես խոնարհեցրի ինձ՝ կիսվելով նրա

հետ: Ինչո՞ւ այդքան երկար ժամանակ պահանջվեց ազատագրման համար»:

Աստված անմիջապես ուշադրությունս ուղղեց այն փոփոխության վրա, որը տեղի էր ունեցել իմ աղոթքի կյանքում: Երկար ժամանակ աղոթքներս, ընդհանուր առմամբ, հետևյալն էին. «Աստվա՛ծ, օգտագործի՛ր ինձ: Խնդրում եմ, օգտագործի՛ր ինձ»: Իմ աղոթքի կյանքի կենտրոնը ես էի: Բոլոր աղոթքներս պտտվում էին իմ բարեկեցության և կոչման շուրջ: Կրքից ազատվելու ցանկությունը, որը կար իմ ներսում, դրդված չէր ո՛չ Աստծո, և ո՛չ էլ Լիզայի հանդեպ ունեցած սիրուց: Ես վախենում էի, որ մի օր կրքի հետ կապված խնդիրները կխանգարեին ինձ մուտք գործել իմ կոչման մեջ: Իմ եսակենտրոնությունը թույլ չէր տալիս ինձ՝ մտերիմ լինել Աստծո հետ, և քանի որ չկար մտերմություն, ես չէի կարողանում վերապրել Նրա վերափոխող զորությունը:

Որոշ ժամանակ անց իմ սիրտը փոխվեց, և իմ աղոթքների հիմքը դարձավ հետևյալը. «Աստվա՛ծ, ես ցանկանում եմ ճանաչել Քեզ: Թույլ մի՛ տուր, որ մեր միջև որևէ խոչընդոտ լինի»: Ես դադարեցի եսակենտրոն լինելուց և դարձա աստվածակենտրոն: Երբ հեռացրի հայացքս ինձնից դեպի Տերը, կյանքս բացվեց Նրա շնորհքի համար: Նա ազատեց ինձ և բժշկեց սեռական կյանքս: Ես ընդունեցի այն, ինչ Աստվածաշունչն անվանում է *Աստծո ուզած կերպով տրտմություն:*

Աստծո ուզած կերպով տրտմություն

«Որովհետև այն տեսակի տրտմությունը, որն Աստված ցանկանում է, որ վերապրենք, հեռացնում է մեզ մեղքից և փրկության է տանում: Այս տրտմության մեջ զղջում չկա: Բայց աշխարհիկ տրտմությունը, որը չունի ապաշխարություն, հոգևոր մահվան է տանում» (Բ Կորնթ. 7.10, NLT):

Տարիներ շարունակ տրտմություն էի զգում իմ կախվածության պատճառով: Ինչպես արդեն ասացի, ես չէի ցանկանում կապված լինել կրքով և խորշում էի իմ վարքից: Շատերն են տրտմություն զգում իրենց մեղքի պատճառով: Այնուամենայնիվ, կա աստվածային տրտմություն, որն ապաշխարության և վերափոխման է տանում, և կա աշխարհիկ տրտմություն, որը դատապարտություն է առաջացնում՝ առանց որևէ փոփոխության:

Աշխարհիկ տրտմությունը կենտրոնացած է սեփական անձի վրա և սնվում է հպարտությամբ: Այն առաջացնում է հուսահատություն և ատելություն սեփական անձի հանդեպ, քանի որ միակ հնարավոր լուծումները, որոնք այն տեսնում է, մարդկային ուժերի սահմաններում են: Աշխարհիկ տրտմությունը կուրորեն չի նկատում այն հույսը, որը կարելի է գտնել Աստծո զորության և Նրա կամքի գիտության մեջ. այդ պատճառով այն անխուսափելիորեն հոգևոր մահվան է տանելու:

Աստվածային տրտմությունն այլ է. այս տրտմության մեջ չկա ատելություն սեփական անձի հանդեպ. այն եսակենտրոն չէ, այլ՝ աստվածակենտրոն: Թեև այս տրտմությունը ցավոտ է, բայց այն հույս ունի ապագայի համար, քանի որ այս տրտմության մեջ թաքնված է Աստծո սրբացնող, զորացնող և փրկարար կարողությունը: Աստվածային տրտմությունը կարող է մի ակնթարթ ցավ պատճառել, բայց շուտով դրան կհետևեն ուրախությունը և կյանքը:

Աշխարհիկ տրտմությունն ու դատապարտությունն իմ կյանքում ավելի սաստկացրին կրքի գերությունը: Ես կարծում էի, որ աստվածապաշտ վարք էի ցուցաբերում, երբ աղոթում էի, որ Աստված շարունակեր գործածել ինձ, բայց իրականում լցված էի հպարտությամբ: Ես ցանկանում էի ազատ լինել՝ ելնելով իմ շահերից: Ինձ շատ քիչ էր անհանգստացնում այն, թե ինչպիսի՞ ցավ էի պատճառում Աստծո սրտին:

Շատերը ձգտում են ազատ լինել, որովհետև չեն ցանկանում, որ իրենց մեղքերը զղջում առաջացնեն իրենց կյանքում, խափանեն ապագա հաջողությունները կամ կանգնեցնեն դատաստանի առջև: Նման վախով լի և ինքնապաշտպանական դիրքորոշումը չի կարող առաջացնել այն զորությունը, որը կփոխի նրանց:

Մենք չենք կարող դառնալ Աստծո նման, եթե չենք ճանաչում և չենք կիսում այն, ինչ Նրա սրտում է: Մտերմությունը Նրա հետ մշտապես նախորդում է փոփոխությանը: Մենք ձեռք ենք բերում ազատություն և պահպանում այն մեղքից, երբ մշտական հաղորդակցություն ենք ունենում Նրա հետ: Երբ խոնարհաբար մոտենանք Աստծուն, Նա կհայտնի Իրեն և զորություն կտա մեզ՝ սուրբ լինելու համար.

«...Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին շնորհք է տալիս: Արդ հնազանդվե՛ք Աստծուն... Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ [կհայտնի Իրեն ձեզ]... ձեր ծիծաղը թող սուգ դառնա, և ձեր ուրախությունը՝ տրտմություն [Աստծո ուզած կերպով տրտմություն]: Խոնարհվե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (Հակոբ. 4.6-10):

Աստված բարձրացնում է մեզ՝ ազատելով մեր մեղավոր բնության ձգտումներից և ծուղակներից: Նա ազատ է արձակել մեզ, որպեսզի մենք ազատ լինենք: Բայց մենք չենք կարողանա գտնել այդ ազատությունը, քանի դեռ չենք եկել Ազատողի մոտ: Եթե ցանկանում եք ազատ լինել, փնտրե՛ք Աստծուն: Մտերմությունը Նրա հետ՝ կբորբոքի ձեզանում խորը, աստվածային տրտմություն ամեն անգամ, երբ հեռանաք Նրա ճանապարհներից: Այս տրտմությունն ավելի շատ կմոտեցնի ձեզ Աստծուն և ուժ կտա, որ ապրեք ազատության մեջ:

Հիշեք՝ դուք Աստծո զավակ եք, և դատապարտությունը տեղ չունի ձեր կյանքում: Եթե դուք թուլացել եք ճանապարհին և կորցրել եք ձեր ազատությունը, դադարե՛ք անընդհատ մտածել ձեր անկարողության մասին: Մի՛ վախեցեք ձեր սխալի հետևանքներից: Փոխարենը՝ մտածե՛ք Աստծո մեծության և Նրա շնորհքի փրկարար զորության մասին:

«Ուրեմն, հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր պատկանում են Քրիստոս Հիսուսին: Եվ քանի որ դուք պատկանում եք Նրան, կյանք պարգևող Հոգու զորությունն ազատել է ձեզ մեղքի զորությունից, որը մահվան է տանում» (Հռոմ. 8.1,2, NLT):

Պոռնոգրաֆիա և մտերմություն

Թեև ես (Զոնը) մտածում էի, որ իմ կախվածությունը պոռնոգրաֆիայից կկորչեր ամուսնանալուց հետո, կատարվեց ճիշտ հակառակը: Շատ զույգեր վերապրել են այն, ինչ ես հայտնաբերեցի. պոռնոգրաֆիկ նյութեր օգտագործելը բացասաբար է ազդում ոչ միայն ամուրիների այլ նաև ամուսնացած տղամարդկանց և կանանց վրա: Այն միանշանակ վնասակար ազդեցություն է թողնում

ամուսնության մեջ: Պոռնոգրաֆիան զրկում է ամուսիններին ճշմարիտ մտերմություն վայելելու կարողությունից:

Մենք ցնցվել էինք, երբ իմացանք, որ կան քրիստոնյա խորհրդատուներ, ովքեր առաջարկում էին ամուսնացած զույգերին՝ միասին պոռնոգրաֆիկ նյութեր դիտել՝ իրենց սեռական կյանքը խթանելու համար: Դա շատ մեծ սխալ է: Ոչ մի դեպքում չանե՛ք դա: Որոշ ժամանակ անց դուք կբացահայտեք, որ արթնացրել եք քնած վիշապի, որը կկլանի ձեր մտերմությունը կրքի կրակով: Իսկ «մարդու աչքերի [կիրքը] երբեք չի կշտանա» (Առակ. 27.20, AMP): Պոռնոգրաֆիան լուրջ սպառնալիք է ամուսնության համար՝ ինչպես հարսանեկան արարողությունից առաջ, այնպես էլ հետո: Եվ անկախ այն բանից, մենք մեր կողակիցների հետ ենք, թե՝ ոչ, մենք երբեք չպետք է նայենք այլ մարդկանց ամոթին:

Թեև պոռնոգրաֆիան ժամանակավորապես խթանում և բավականություն է տալիս, քանի որ այն գրավիչ է մեր մարմնի համար, այն կքայքայի մեր կողակիցների և Աստծո հետ մտերիմ լինելու կարողությունը: Ի վերջո, պոռնոգրաֆիայի պատճառով մենք բավականություն չենք զգա մեր կողակցից և մեզնից: Պոռնոգրաֆիան կարող է խթանել սեռական փորձառությունը, բայց այն չի լուծի ամուսնական հարաբերությունների ավելի խորը հարցերը: Այս թվացյալ արագ լուծումն ընդամենը ծանր բեռ է ավելացնում արդեն երերուն հիմքի վրա: Թեև կարող է թվալ, որ պոռնոգրաֆիան կյանքի կայծ է վառում, բայց իրականում այն վառում է մահացու ռումբի բռնկիչը, որը կպայթի՝ առաջացնելով շփոթմունք, անվստահություն և անապահովություն:

Աստված նախատեսել է, որ դուք սեռական բավականություն ստանաք՝ տրվելով միմիայն ձեր կողակցին, ում նվիրել եք ձեր կյանքը: Այդ դեպքում մտերմությունը ձեր միջև կտարածվի ամուսնական անկողնուց դեպի ձեր ամուսնության այլ բնագավառները, և կհարստացնի դրանք: Իսկ պոռնոգրաֆիային տրվելու դեպքում մարդը ձգտում է հաճույքի՝ իր անձի սահմաններում: Պոռնոգրաֆիան չի պահանջում մտերմություն, այլ միայն ուժգին ցանկություն և հրապուրանքի առարկա: Պոռնոգրաֆիայի հաճույքն ընդամենը վաղանցիկ շողք է՝ համեմատած այն բերկրանքի հետ, որը մարդն ստանում է Աստծուց տրված մտերմության շնորհիվ:

Երբ ամուսինները թույլ են տալիս, որ պոռնոգրաֆիան մուտք գործի իրենց միության մեջ, նրանք պղծում են ամուսնական անկողինը՝ իրենց մտերիմ հարաբերությունների մեջ ընդգրկելով այլ մարդկանց: Սա Աստծո ծրագիրը չէ: Սեռական փորձառությունը պետք է հիշեցնի այն ուխտը, որը միացնում է երկուսի կյանքերը, իսկ ամուսնական ուխտի մեջ տեղ չկա երրորդ կողմի համար: Այն, ինչ սուրբ է երկուսի միջև, պղծվում է բազմության մեջ: Աստված ցանկանում է, որ մենք պատվենք ամուսնական անկողինը, նաև այն ուխտը, որն այդ անկողինը խորհրդանշում է. Նա ցանկանում է, որ այն սքանչելի բերկրանքի և տևական բավականության վայր լինի:

Օր 4

Հսկելով մեր սրտերը

Մինչև վերջերս, պոռնոգրաֆիկ կայքերն ամենաբարձր հաճախելիությունն ունեին համացանցում (դրանց հաճախելիությանը գերազանցում էին միայն սոցիալական կայքերը): Տասը կայքերից ավելի քան մեկը պոռնոգրաֆիկ բնույթ ունի: Ավելի քան 40 միլիոն ամերիկացի պարբերաբար այցելում են այս էջերը, և ամեն վայրկյան 28.528 օգտվող պոռնոգրաֆիա է դիտում[6]: Սեռական ախորժակը երբեք չի զարգացել և բավարարվել նման այլասերված կերպով:

Քանի որ կեղծված սեռական խթանումն այս աստիճան ավելանում է, սեռական կյանքը մեծ մասամբ փոխարինվում է կրքով: Համակարգչային սեքսը կործանում է մտերմությունը և քանդում ամուսնությունները: Հիմա նույնիսկ կան երիտասարդ տղամարդիկ, ովքեր տառապում են էրեկեցիայի խանգարմամբ, որովհետև նրանց սեռական ցանկությունն աղավաղվել է ինտերնետային պոռնոգրաֆիայից կախված լինելու պատճառով: Նրանք այլևս բավականություն չեն ստանում իրական կանանցից. նրանց հաճախակի վիրտուալ վերապրումները չափազանց տարբերվում է իրական հարաբերություններից:

Պոռնոգրաֆիայի խնդիրը չի վերաբերում միայն տղամարդկանց, և պոռնոգրաֆիկ նյութերը տարածված չեն միայն համացանցում:

Հինգ կանանցից մեկն առցանց պոռնոգրաֆիա է դիտում առնվազն շաբաթը մեկ անգամ[7]: Ե՛վ կանայք, և՛ տղամարդիկ սնուցում են իրենց կախվածությունը նաև համացանցից դուրս տարբեր նյութերի, օրինակ՝ ամսագրերի կամ էրոտիկ գրքերի միջոցով: Վերջիններս հատկապես տարածված են կանանց մոտ:

Պոռնոգրաֆիան և սեռական մեղքի բոլոր տեսակներն առաջարկում են «նոսրացրած» և աղավաղված հաճույք, որը չի համապատասխանում Աստծո սկզբնական ծրագրին: Բայց անթույլատրելի սեռական վարքը, նույնիսկ եթե այն տեղի է ունենում միայն ինչ-որ մեկի մտքում կամ էկրանի առջև, ունի շատ ավելի խորը հետևանքներ, քան բավականություն ստանալու խանգարումը: Հիսուսն ասաց. «Նա, ով մի կնոջ վրա նայի՝ նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ» (Մատթ. 5.28):

Անհավատարմության այս ձևը, որն անբաժան է պոռնոգրաֆիա դիտելուց, սպառնում է ամուսնությանը, որովհետև ցանկացած բան, որն աղավաղում է Աստծո սկզբնական նպատակը սեռական կյանքի համար, վնաս է հասցնում մեր սրտին: «Հսկե՛ք ձեր սիրտը մնացած ամեն ինչից առավել,– պատվիրում է Առակաց գիրքը,– որովհետև այն որոշում է ձեր կյանքի ընթացքը» (4.23, NLT): Սեռական մեղքն ապականում է մեր սիրտը և, հետևաբար, կարող է կործանել մեր կյանքն ու ամուսնությունը: Այս ցավալի ճշմարտությունը հաստատվում է վիճակագրական տվյալներով, ըստ որոնց, ամուսնալուծությունների հիսունվեց տոկոսի դեպքում կողմերից մեկն ունեցել է «կպչուն հետաքրքրություն պոռնոգրաֆիկ կայքէջերի հանդեպ»[8]:

Ցանկացած մեղք, ի վերջո, հարձակում է մեր կենսունակության վրա: Քանի որ մենք քրիստոնյաներ ենք, թշնամին պարտություն է կրել մեր հոգիներն ստանալու պայքարում, այնպես որ, նա պատերազմում է մեր անձերի դեմ: Նա ցանկանում է, որ մենք թաղվենք մեղքի հետևանքների մեջ, և այդպես էլ չվերապրենք կյանքը՝ իր լիությամբ (տե՛ս Հովհ. 10.10):

Քրիստոսն ազատ արձակեց մեզ մեղքից, բայց մենք չենք ապրում այս ազատության մեջ, երբ թույլ ենք տալիս, որ մեղքը վերահսկի մեր կյանքը: Ահա թե ինչու Պողոսը գրեց.

> «Թույլ մի՛ տվեք, որ մեղքը վերահսկի ձեր ապրելակերպը. մեղավոր ցանկություններին տեղիք մի՛ տվեք: Թույլ մի՛ տվեք, որ ձեր մարմնի

> որևէ մասը չարի գործիք դառնա՝ մեղքին ծառայելու համար: Փոխարենը՝ լիովին տրվե՛ք Աստծուն, որովհետև դուք մահացած էիք, բայց այժմ նոր կյանք ունեք: *Այնպես որ,* Աստծո փառքի համար *օգտագործե՛ք ձեր ամբողջ մարմինը* որպես արդարության գործիք» (Հռոմ. 6.12,13, NLT, շեղագիրն ավելացված է):

Մեր *ամբողջ մարմինն* ընդգրկում է նաև մեր սեռական կյանքը: Մենք փառավորում ենք Աստծուն, երբ ամբողջովին տրվում ենք Նրան և թույլ ենք տալիս Նրա Հոգուն առաջնորդել մեր սեռական որոշումները: Աստված կազատի մեզ այն ամենից, ինչը կապում է մեզ և զրկում այն կյանքից, որը Նա նախատեսել է մեզ համար: Նա կառաջնորդի մեզ, որ արտահայտենք մեր սեռական ցանկությունը այնպիսի ձևերով, որոնք ազատություն, մտերմություն և բերկրանք են շնորհում:

Մենք չենք ասում, որ հեշտ է հաղթահարել արդեն սովորական դարձած սեռական մեղքի գերությունը: «Ձա՛նք արեք,– գրում է Պողոսը,– որ ցույց տաք ձեր փրկության արդյունքները՝ հնազանդվելով Աստծուն խորին երկյուղածությամբ և վախով» (Փիլիպ. 2.12, NLT): Թեև մեր կյանքում սրբացումը Աստծո շնորհքի գործն է, այնուամենայնիվ մարմինը խաչելը ցավոտ է: Երբեմն սուրբ և ամբողջական դառնալու համար պահանջվում է աննկուն կերպով հակառակվել գայթակղությանը և հպարտությանը: Բայց եթե թույլ տանք Սուրբ Հոգուն կատարել Իր սրբացնող գործը մեզանում, մենք մուտք կգործենք հոգևոր ուրախության մեջ, որը շատ ավելի գերազանց է, քան ցավը, որը մենք զգում ենք պայքարի ժամանակ:

Տեսիլք մաքրության մասին

> «Որովհետև ես խանդում եմ ձեզ անձամբ Աստծո խանդով: Ես ձեզ՝ որպես անարատ հարսնացուի, խոստացա մեկ ամուսին՝ Քրիստոսին: Բայց վախենում եմ, որ ինչ-որ կերպով ձեր մաքուր և միաբան նվիրումը Քրիստոսին՝ ապականվի, ինչպես որ Եվան խաբվեց օձի խորամանկ ճանապարհներից» (Բ Կորնթ. 11.2,3, NLT):

Մեր ամուսնության մաքրությունն ի վերջո կապ ունի այն մաքրության հետ, որը Քրիստոսը ցանկանում է տեսնել Իր Հարսնացուի մեջ:

Ներկայումս կիրքը տարածված է եկեղեցում: Վերջերս անցկացրած հետազոտությունները ցույց են տալիս, որ քրիստոնյա տղամարդկանց հիսուն տոկոսը և քրիստոնյա կանանց քսան տոկոսը կախվածության մեջ է պոռնոգրաֆիայից[9]: Մարդիկ ձեռնարկում են տարբեր միջոցներ, որպեսզի պայքարեն այս խնդրի դեմ: Նրանք փնտրում են մարդկանց, ում կարող են հաշվետու լինել, կամ դիմում են վարքագծի փոփոխության մեթոդների, որպեսզի զսպեն իրենց սեռական կախվածությունը: Այն, որ մարդիկ ցանկանում են փոխվել, շատ լավ նշան է, և այս միջոցներն իսկապես ունեն իրենց տեղը: Այնուամենայնիվ, միայն ինչ-որ մեկին հաշվետու դառնալով և կարգապահ լինելով անկարելի է հաղթել մեղավոր բնությունը: Եթե մարդը ցանկանում է սեռական անբարոյությամբ զբաղվել, ոչ մի բնական խոչընդոտ չի կարող զսպել նրան: Թեև նրա արտաքուստ դրսևորվող վարքը ժամանակավորապես կվերահսկվի, սակայն նրա ներքին կյանքն առաջնորդվելու է կրքով և դատապարտությամբ:

Մեր վարքը ճշմարտապես կփոխվի, երբ նորոգվի մեր միտքը: «Մի՛ պատճենեք այս աշխարհի վարքը և սովորությունները,– աղերսում է Պողոսը,– այլ թույլ տվեք, որ Աստված վերափոխի ձեզ՝ նոր մարդ դարձնելով, փոխելով այն, թե ինչպես եք մտածում» (Հռոմ. 12.2): Որպես Աստծո զավակներ՝ մենք ազատված ենք մեղքի իշխանությունից (տե՛ս Հռոմ. 6.19-23): Այնուամենայնիվ, այս ազատությունը վայելելու համար մենք նախ պետք է թույլ տանք, որ Աստված սրբացնի մեր վարքը՝ նորոգելով մեր միտքը:

Մեր միտքը նորոգվում է, երբ ժամանակ ենք անցկացնում Աստծո Խոսքի և Նրա ներկայության մեջ: Այլ միջոց չկա: Աստծո Խոսքը, որը տնկվում է մեր սրտերում և հաստատվում է Նրա Հոգով, տալիս է ազատություն մեղքից (տե՛ս Սաղմ. 119.11 և Հակոբ. 1.21): Շատ քրիստոնյաներ տանջվում են իրենց ամոթալի սեռական մեղքերից, բայց չեն բերում այդ ամոթը Նրա ներկայության մեջ, քանի որ միայն Նա կարող է առաջնորդել մեզ դեպի ազատությունը:

Շատ կրոնական հաստատություններ փորձել են վախ ներշնչել կամ վերահսկել մարդկանց՝ անբարոյությունն ուղղելու համար: Այս մեթոդները չեն գործել. փոխարենը՝ դրանք հանգեցրել են համատարած կեղծավորության և մեղքի: Ամոթի պատճառով մեղքը թաքնվում է ստվերում, որտեղ այն սկսում է զարգանալ:

Կրոնական օրենքները և մարդկային կանոնները չեն կարող ազատել մեզ մեղքից: Իրականում, օրենքները և կանոնները բարենպաստ միջավայր են ստեղծում անօրինության համար (տե՛ս Հռոմ. 7 և Բ Կորնթ. 3.6): Աստված չի ցանկանում, որ մենք նախանձավոր լինենք կանոնների համար. Նա ցանկանում է, որ մենք նախանձավոր լինենք Իր համար: Մենք կատարյալ ենք դառնում, երբ վերապրում ենք մեր Հոր սերը և բժշկություն ենք ստանում՝ շփվելով Նրա հետ: Սուրբ գրքում գրված է.

> «Եվ դուք գիտեք, որ Հիսուսը եկավ մեր մեղքերը վերցնելու համար, և Նրանում մեղք չկա: Ցանկացած մարդ, ով շարունակում է ապրել Նրանում, չի մեղանչի: Բայց ցանկացած մարդ, ով շարունակում է մեղանչել, չի *ճանաչում կամ չի հասկանում*, թե ով է Նա» (Ա Հովհ. 3.5,6, NLT, շեղագիրն ավելացված է):

Հունարեն «գինոսկո» բառը, որը թարգմանված է այս խոսքում «հասկանալ» բառով, նշանակում է «ճանաչել որևէ մեկին անձնական փորձառությամբ, ինչը ենթադրում է շարունակական փոխհարաբերություններ»[10]: Մեղավոր բնությունից ազատ լինելու համար անհրաժեշտ է անձնական շփում ունենալ Աստծո հետ, ոչ թե Նրա մասին իմանալ այլ մարդկանցից:

Հովհաննես առաքյալը, Սուրբ Հոգու ոգեշնչմամբ, հայտարարեց, որ այն քրիստոնյան, ով շարունակաբար մեղք է գործում, չունի մտերիմ, անձնական շփում Քրիստոսի հետ: Ուրեմն, այն դժվարությունները և մեղքերը, որոնք խաթարում են մտերմությունն ամուսնության մեջ, կարելի է հաղթահարել՝ Տիրոջ հետ ավելի մտերիմ դառնալով:

Եթե մեղքը վերահսկում է ձեր կյանքը, վազե՛ք Աստծո մոտ: Դուք ազատ կլինեք մեղքից, միայն եթե ունենաք փորձառաբար ձեռք բերած գիտություն Քրիստոսի սիրո և շնորհքի մասին: Երբ դուք խոնարհաբար դառնաք Աստծուն, Նա կնորոգի ձեր միտքը և կհեռացնի այն քողը, որը թույլ չի տալիս ձեզ՝ ճանաչել ձեր ազատությունը Քրիստոսի մեջ:

> «Բայց երբ ինչ-որ մեկն ընդունում է Տիրոջը, այդ քողը հեռացվում է: Որովհետև Տերը՝ Հոգին է, և որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է: Այնպես որ, ում վրայից այդ քողը հեռացվել է, կա-

> րող է տեսնել և արտացոլել Տիրոջ փառքը: Եվ Տերը, Ով Հոգին է, մեզ դարձնում է Իրեն ավելի նման, երբ մենք փոխվում ենք Նրա փառավոր պատկերով» (Բ Կորնթ. 3.16-18, NLT):

Աստված չի ցանկանում, որ շարունակ պայքարեք սեռական մեղքի կամ ցանկացած այլ մեղքի դեմ: Նա ցանկանում է, որ դուք կատարյալ և սուրբ լինեք: Երբ ձեր սերն Աստծո հանդեպ ավելանա՝ այն պատասխան սերը, որը ծագում է, երբ բացահայտում եք Աստծո սերը ձեր հանդեպ, դուք նորովի կնայեք կյանքին և կլցվեք Նրան պատվելու ցանկությամբ: Հնազանդվելով Նրա կամքին և ճանապարհներին՝ կհայտնաբերեք այն զորությունը, որով կարող եք ապրել Հիսուսի նման: Մենք աղոթում ենք ձեզ համար այն, ինչ Պողոսն աղոթեց Փիլիպեի եկեղեցու համար.

> «…որ դուք ավելի ու ավելի լցվեք սիրով և շարունակ աճեք գիտությամբ և հասկացողությամբ: Որովհետև ես ցանկանում եմ, որ դուք հասկանաք, թե ինչն է իրականում կարևոր, որպեսզի դուք կարողանաք ապրել մաքուր և անմեղ կյանքով: Թող որ դուք մշտապես լցված լինեք ձեր փրկության պտղով՝ արդար բնավորությամբ, որը ձևավորվում է ձեր կյանքում Հիսուս Քրիստոսի կողմից, որովհետև սա մեծ փառք և գովասանք կբերի Աստծուն» (Փիլիպ. 1.9-11, NLT):

Երբ մենք մոտենում ենք սեռական շփմանը Քրիստոսին հաճեցնելու ձգտումով, մենք կարող ենք սովորել, թե ինչպես վայելել մտերմությունը մեր կողակիցների հետ կյանքի ամեն եղանակին:

Օր 5

Սեռական կյանքի «եղանակները»

> «Ամեն բանի համար եղանակ կա, և ժամանակ՝ ամեն ձեռնարկության համար երկնքի տակ…» (Ժողով. 3.1, KJV):

Կյանքի բազմաթիվ բնագավառներում ժամանակը պարզապես կարևոր չէ. այն՝ ամեն ինչ է: Եթե ամեն ինչ կյանքում կապված է եղանակների հետ, և ամեն ձեռնարկության համար ժամանակ կա,

ուրեմն մեր սեռական կյանքը բացառություն չէ: Տարին բաղկացած է չորս եղանակներից, և մենք հավատում ենք, որ նույնը վերաբերում է ամուսնությանը: Այնպես որ, եկեք խոսենք սեռական կյանքի մասին այս լույսի ներքո:

Գարուն. առաջին տասնամյակը

Որպեսզի պատկերավոր ներկայացնենք այս օրինակը, մենք կհամեմատենք սեռական կյանքի ամեն մի եղանակը ամուսնության մի տասնամյակի հետ: Եկեք խոսենք մի զույգի մասին, որն ամուսնացել է մոտավորապես քսանութ տարեկանում, ինչը ներկայումս ամուսնության միջին տարիքն է: Մենք կանվանենք այս ամուսնության առաջին տասը տարին (28-38 տարեկանը) անմեղության և նոր նախաձեռնությունների եղանակ, այսինքն՝ գարուն: Սա այն ժամանակն է, երբ, ինչպես գրում է բանաստեղծ Ալեքսանդր Փոուփը, «…հույսը ծագում է հավերժական»: Գարնանը ձեր կյանքը լի է հնարավորություններով:

Առաջին տասնամյակը՝ սպասման և հայտնագործությունների ժամանակ է, երբ դուք մուտք եք գործում նոր սեռական հեռանկար ունեցող կյանք: Այն, ինչ քնած էր եռանդուն սպասման շրջանում, հիմա՝ ձեր ամուսնության գարնանը, արթնացել է: Երկուսդ էլ դեռ բացահայտում եք, թե ով եք դուք՝ որպես անհատներ, և ինչպիսին է ձեր միասնական կյանքը: Ամեն ինչ ձեր միացյալ սեռական կյանքի մեջ թարմ և նոր է:

Եթե դուք ծրագրում եք երեխաներ ունենալ, ավելի քան հավանական է, որ դուք վերապրելու եք հղիության հետ կապված երջանիկ պահերը և դժվարությունները հենց այս ժամանակ: Ձեր սեռական կյանքը կենթարկվի փոփոխությունների, երբ ձեր կյանքում երեխաներ հայտնվեն: Դուք արդեն միայն սիրեկաններ չեք լինի, այլ նույնպես՝ հայր և մայր: Միգուցե երեխաները խանգարեն ձեր հանգիստը կամ, նույնիսկ, քնեն ձեր սենյակում:

Այս ժամանակը կարող է իսկապես ոգեշնչող լինել: Ինձ (Լիզայի) շատ էր դուր գալիս երիտասարդ մայր լինելը: Ես կրծքով կերակրել եմ իմ չորս տղաներից ամեն մեկին մոտավորապես մեկից երկու

տարի: Այնուամենայնիվ, ես հայտնաբերեցի, որ հոգալով նրանց մասին՝ շատ ավելի հեշտ էր անտեսել Ջոնին: Երիտասարդ մայրերին ոչ մի դեպքում պետք չէ ստիպել, որ ընտրություն կատարեն իրենց երեխաների և ամուսինների միջև, բայց զգույշ եղեք, որ այն փոքրիկը, ով ձեր գրկում է, չգրավի ձեր ամուսնու տեղը:

Ես այնպիսի՞ բավականություն էի զգում իմ սիրելի երեխաներին սնուցելիս և գուրգուրելիս, որ բավականաչափ ժամանակ չէի հատկացնում ամուսնուս: Ես մոռանում էի, որ թեև նա սիրում էր մեր որդիներին, սակայն չուներ նույն մտերիմ կապը նրանց հետ, որն ունեի ես: Նա ուներ իմ կարիքը, բայց այն երեխաների կարիքները, որոնք ծնվել էին մեր սիրուց, շատ ավելի ակնհայտ էին ինձ համար: Լինում են նաև ընտանիքներ, որոնցում հայրերը շատ ժամանակ են տրամադրում իրենց դուստրերին և շռայլում են իրենց հաճոյախոսությունները նրանց, բայց չեն ցուցաբերում միևնույն վերաբերմունքն իրենց կանանց:

Հոգ տարեք ձեր երեխաների մասին, բայց միևնույն ժամանակ կառուցեք ձեր մտերմությունը միմյանց հետ: Ներդրումներ արեք մեկդ մյուսի մեջ: Վաղ պառկեցրեք ձեր երեխաներին, որպեսզի կարողանաք ժամանակ անցկացնել իրար հետ: Կիսե՛ք երեխաներին խնամելու բեռը, որպեսզի կարողանաք կիսել ավելին, քան քունը, երբ անկողնում եք: Խոսե՛ք ձեր կնոջ կամ ամուսնու հետ ձեր կարիքների և մտահոգությունների մասին՝ առանց որևէ բան թաքցնելու: Երբեմն, պարզապես ասելով. «Ես կարոտել եմ մեր մտերիմ շփմանը: Ի՞նչ կարող ենք անել», դուք կքանդեք ցանկացած հիասթափություն:

Առաջին տասնամյակի ընթացքում ձգտեք հայտնաբերել մեկդ մյուսի սեռական կարիքները: Թույլ մի՛ տվեք, որ զարգանան այնպիսի սեռական սովորություններ, որոնք հետագայում կարող են տհաճություն և վրդովմունք պատճառել ձեզնից մեկի մոտ: Զրուցե՛ք միմյանց հետ: Ամուսնության առաջին տասնամյակի կամ եղանակի ընթացքում կարևոր է պատկերացնել ձեր սեռական կյանքը՝ որպես գարնանային պարտեզ, որտեղ դուք խնամքով տնկիներ եք դնում, որպեսզի վայելեք դրանց պտուղներն ամռան և աշնան ընթացքում:

Ամառ. երկրորդ տասնամյակը

Ամառը միշտ լավագույն ժամանակն է ամեն ինչի համար:
— Չարլզ Բաուդեն

Եթե գարունը լի է հույսով, ամռանը դուք ունեք կենդանի և զարգացող տեսիլք: Կյանքն այնքա՜ն հագեցած է այս ընթացքում: Մինչ այս ժամանակը, դուք արդեն ընտրել եք ձեր մասնագիտական ճանապարհը և, հավանաբար, արդեն որոշել եք՝ արդյո՞ք պատրատվում եք երեխաներ ունենալ: Այն երեխաները, ովքեր արդեն ծնվել են, մեծանում են՝ ավելի ձևավորվելով որպես անհատներ: Եվ մինչ երեխաները մեծանում են, ծնողները նույնպես սկսում են ավելի լավ ճանաչել մեկը մյուսին:

Հազիվ թե ցանկանաք բաց թողնել ամառվա անգնահատելի պահերից թեկուզ մեկը: Դուք ստիպված կլինեք ժամանակ հատկացնել մտերմության համար արևոտ դպրոցական ժամերին, երեխաների արտադպրոցական գործունեության կամ աշխատանքի ընթացքում: Եթե ձեր գարնանային տասնամյակի ցանքը հաջող էր, դուք կվայելեք այս տասնամյակն ավելի շատ, քան նախորդը: Եթե ձեր պարտեզը լավ մշակված չէր առաջին եղանակի ժամանակ, դեռ ուշ չէ անել դա:

Ամառն այնպիսի եղանակ է, երբ ամեն ինչ կարող է արագորեն աճել, ներառյալ մոլախոտերը: Դուք պետք է աշխատեք մաքուր պահել ձեր պարտեզը գերաճած մոլախոտերից, որոնք կարող են առաջանալ ամեն ինչին սովորականի պես վերաբերվելուց: Շարունակեք ջրել այն ամենը, ինչն առողջ է ձեր մտերմության մեջ, և ամեն ինչ ավելի արագ կաճի, քանի որ ձեր պարտեզի հողը պարարտված է մեկ տասնամյակում ձևավորված վստահությամբ:

Ամառը նշանակում է՝ երկար օրեր, ծիծաղ, զբոսախնջույքներ և կեսօրյա ամպրոպներ: Մեր ամառվա ընթացքում մենք համոզվեցինք, որ ավելի լավ է սեռական մտերմություն ունենալ ցերեկով: Մենք միշտ շատ հոգնած էինք լինում երեկոյան, և ավելի լավ էր օգտագործել ցերեկը, երբ մեր տղաները կա՛մ դրսում էին, կա՛մ դպրոցում, քան սպասել երեկոյին, երբ մտերմության հավանականությունն այնքան էլ մեծ չէր:

Աշուն. երրորդ տասնամյակը

Հաջորդ տասնամյակը մենք անվանում ենք աշուն: Մինչև այժմ էլ այն մեր ամենասիրելի եղանակն է: Մեզ դուր է գալիս հովասուն արևոտ օրերի և ցուրտ գիշերների համադրությունը: Մենք շատ ավելի հանգիստ վիճակում ենք մեր հանդարտ մարմիններով:

Աշունը՝ երկրորդ գարունն է, երբ ամեն տերև ծաղիկ է դարձել:
— Ալբերտ Կամյու

Մեզ դուր է գալիս այս գաղափարը: Փոխարենը փորձեք վերադարձնել ձեր երիտասարդությունը, վայելե՛ք ձեր աշունը: Մենք պարզել ենք, որ այս եղանակին մտերմությունը ևս մեկ անգամ զբաղեցնում է մեր կյանքի մեծ մասը: Այժմ, երբ մենք հիսունն անց ենք, մեր կյանքի ռիթմը փոխվել է: Մենք այլևս տնային աշխատանքներ չենք կատարում մեր երեխաների հետ և չենք գնում դպրոցական ժողովների կամ սպորտային միջոցառումների: Մենք ավելի շատ ժամանակ ենք անցկացնում միասին:

Նույնիսկ հիմա մենք գրի ենք առնում այն ամենը, ինչ ցանկանում ենք անել այս աշնանային տասնամյակի ընթացքում, որպեսզի ձմեռը հանկարծակի վրա չհասնի մեզ վրա: Այդ ծրագրերից մեկն է՝ մեր սեռական առողջության մասին հոգալը. մենք հոգ ենք տանում մեր մարմինների մասին առողջ սննդակարգի, զբոսանքների և մարմնամարզությունների միջոցով: Մենք այնպես ենք ծրագրում մեր ժամանակը, որ ավելի շատ զբոսնենք միասին: Մենք սիրում էինք անել սա, երբ դեռ նոր էինք հանդիպում:

Բազմաթիվ զույգեր առանձնանում են իրարից աշնանային շրջանում: Երբ նրանց երեխաները տեղափոխվում են, նրանք հասկանում են, որ ապրում են օտար մարդու հետ: Այս տասնամյակում մենք ընտրության հնարավորություն ունենք: Մենք կարող ենք ափսոսանքով լցվել այն ամենի պատճառով, ինչն անցել է, կամ խանդավառությամբ շարժվենք դեպի այն, ինչ առջևում է: Մենք խրախուսում ենք ձեզ՝ նայել այս եղանակին որպես ձեր ամուսնությունը նորոգելու հնարավորության: Դուք կարող եք ևս մեկ անգամ դառնալ նորապսակների պես, միայն թե այս անգամ դուք ավելի տարեց և ավելի իմաստուն կլինեք:

Ձմեռ. մնացած տարիները

Հասնելով խորը ձմռանը՝ ես ի վերջո իմացա,
որ իմ ներսում անպարտելի ամառ կա:
— Ալբերտ Կամյու

Մենք չենք ստելու. ծերանալը դաժան և շատ անարդար է թվում: Ջոնի ծնողները կարողացան լավ կազմակերպել այս եղանակը: Թեև նրանք ունեցան որոշ առողջական խնդիրներ, նրանց կանոնավոր զբոսանքները, մարմնամարզությունը և մշտական ճաշկերույթներն ընկերների հետ օգնեցին նրանց՝ աշխույժ մնալ, և նրանք դեռ քնում են երկտեղանի անկողնում անուշիկ սիրահարների պես: Ավելի լավ է միասին ծերանալ, իսկ սեռական մտերմությունը աննկարագրելի գեղեցիկ է ամեն եղանակին:

Ժողովող գրքի հեղինակը, գրելով ժամանակների և եղանակների մասին, շարունակում է. «Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին» (Ժողով. 3.11): Ճիշտ բանը ճիշտ ժամանակին գեղեցիկ է: Մենք ցանկանում ենք միասին բարի ծերություն ունենալ և պարել մեր եղանակի ռիթմով:

Եվս մեկ օրինակ, որի շուրջ արժե մտածել: Ձիգ լողազգեստները սազում են Օլիմպիական խաղերի մասնակիցներին, բայց ես (Լիզան) մի կողմ եմ շրջվում, երբ տեսնում եմ տարեց տղամարդկանց դրանցով: Այն, ինչ մի ժամանակ ծառայում էր ձեզ արագ լողալու համար, անհրաժեշտ չէ հանդարտ լողի և ջրի վրա պառկելու եղանակին: Դուք երբեք չպետք է դադարեք լողալ: Դուք չպետք է դադարեք սիրել ջուրն այն պատճառով, որ այլևս գեղեցիկ տեսք չունեք լողազգեստով: Լողալը և սեռական կյանքը հաճելի են կյանքի ամեն եղանակին. պարզապես ժամանակի ընթացքում դրանք արվում են տարբեր ձևերով:

Մեր ամուսնության գարնանային շրջանում ես լողում էի բաց լողազգեստով: Անցնելով մեր ամուսնության ամառային շրջանը և մայրանալով՝ սկսեցի ամբողջական լողազգեստ կրել: Մեր ներկա աշնանային եղանակին ես կրում եմ սպորտային կիսատաբատ և տանկինի: Ո՞վ գիտի, միգուցե ավելի մոտենալով հաջորդ եղանակին՝ կկրեմ կիսաշրջազգեստ ունեցող լողազգեստ: Բայց ես չեմ դադարի լողալ:

Միգուցե մենք չլողանք այնքան հաճախ, որքան գարնանը, ո՛չ էլ լողանք՝ մտապահելով, որ մեր երեխաները տանն են, ինչպես ամռանը: Բայց մենք լողալու ենք մեր աշնան և ձմռան եղանակներին: Շատ առումներով, սեռական շփումը՝ մեր հավերժական ամառն է:

Գործնական առաջարկներ

Անկախ այն բանից, թե որ եղանակի մեջ եք հիմա, խոսե՛ք միմյանց հետ: Եթե դուք ամուրի եք, Աստծո հետ կիսվեք ձեր ցանկություններով և ձգտումներով: Խոսեք ձեր ընկերներից մեկի հետ, ով կիսում է ձեր ձգտումները, և խրախուսեք իրար: Եթե դուք ամուսնացած եք, զրուցեք մեկդ մյուսի հետ: Կիսվեք ձեր մտահոգություններով:

Իրականում, յուրաքանչյուրը կարող է ավելի լավ սիրեկան դառնալ, բայց միայն եթե սովորի դա: Տղամարդիկ կարող են մեթոդաբանական մտածելակերպ ունենալ: Նրանք մտածում են. *«Եթե այս մոտեցումը վերջին տասն անգամներին գործել է, արժե՞ որևէ բան փոխել»:* Կանայք, եթե ցանկանում եք, որ ձեր ամուսինները փոխեն ինչ-որ բան, ասե՛ք նրանց այդ մասին: Օրինակ՝ դուք կարող եք ասել ձեր ամուսնուն.. «Ինձ դուր է գալիս, երբ դու համբուրում ես իմ պարանոցը»: Մի՛ ստիպեք ձեր ամուսնուն՝ գուշակել ձեր ցանկությունները: Պատմեք նրան ձեր ցանկությունների մասին:

Գրկե՛ք միմյանց օրվա ընթացքում, երբ չեք կարող սեռական մտերմություն ունենալ, որպեսզի անկաշկանդ լինեք, երբ հնարավորություն ունենաք: Շոյե՛ք իրար: Գնացեք զբոսնելու՝ երբ կարիք ունեք խոսելու ձեր սեռական հարաբերությունների մասին, որպեսզի ձեզնից ոչ մեկը չզգա, որ ինչ-որ բան սխալ է անում: Մի՛ հավատացեք այն ամենին, ինչ գրված է ամսագրերում. դուք իրավունք ունեք հարմարեցնելու ձեր սեռական կյանքը ձեր ցանկություններին ճիշտ այնպես, ինչպես ձեր կյանքի այլ բնագավառները:

Եթե դուք օգնության կարիք ունեք, փնտրե՛ք այն: Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքի այս սրբազան բնագավառը բարձիթողի վիճակում լինի: Գրքի վերջում մենք ընդգրկել ենք գրականության ցանկ. ձեր եկեղեցին նույնպես կարող է հավելյալ օգնություն առաջարկել ձեզ:

Քանի որ այս հարցում չունենք մասնագիտական որակավորում, այլ պարզապես նեղ անձնական փորձառություն, մեր գաղափարները մեծ մասամբ վերաբերում են այն զույգերին, ովքեր ցանկանում են մտերիմ լինել միմյանց հետ, ոչ թե պարզապես բավականություն ստանալ մեկը մյուսից: Մենք հասկանում ենք, որ կան ժամանակներ, երբ ամուսինները բոլորովին հետաքրքրված չեն մեկը մյուսով: Մենք գիտենք, որ այս տեսակի սեռական մերժումը խիստ ցավոտ է: Մի՛ դիմեք մեկ այլ մարդու. դիմե՛ք Աստծուն: Բացե՛ք ձեր սիրտը Նրա առջև և հավատացե՛ք, որ Նա կբժշկի ձեր միությունը: Ձեր կողակցից սեռական հարաբերություններ պահանջելը ոչ մի դեպքում դրական արդյունք չի տա:

Մենք նույնպես գիտենք, որ կան դժվարին պահեր, երբ ձեր կողակիցը հիվանդ է, հիասթափված է կամ այնպիսի առողջական վիճակում է, որը խանգարում կամ թույլ չի տալիս նրան մտերիմ հարաբերություններ ունենալ: Խոսե՛ք ձեր բժշկի հետ, որպեսզի իմանաք, թե ինչ կարելի է անել:

Մենք աղոթում ենք, որ ամբողջ կյանքում ձգտեք մեկդ մյուսին և ստեղծեք ձեր սեռական ժառանգությունը՝ հաստատված Աստծո սուրբ ծրագրով և անցյալի վերքերից ու ձախողումներից ազատ: «Մշտապես հարբած եղեք» միմյանց սիրով:

Սերտողություն. Օր 1

ՎԱՅԵԼԵԼ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«...Վայելի՛ր քո կնոջը, ում հետ ամուսնացար, երբ երիտասարդ էիր: Հաճելի՝ հրեշտակի պես, գեղեցիկ՝ վարդի պես. երբեք մի՛ դադարիր զմայլվել նրա մարմնով: Երբեք մի՛ ընդունիր նրա սերը՝ սովորականի պես»:

— Առակաց 5.19,20, MSG

Աստված ստեղծեց սեռական հարաբերությունները *մինչև* մարդու անկումը: Սեռական մտերմությունը շատ լավ է ամուսնության սահմաններում: Իրականում, այն արտասովո՞ր է: Չկա սիրո և մտերմության ավելի սերտ կապ տղամարդու և կնոջ միջև:

Սեքսի մասին ինչպիսի՞ վերաբերմունք եք բերել ձեր ամուսնության մեջ: Արդյո՞ք այն համարում եք մաքուր և լավ, ինչպես Աստված նախատեսել է: Ինչո՞ւ կամ՝ ինչո՞ւ ոչ:

_____

_____

_____

_____

Անկախ այն բանից, թե ինչ է ձեր անցյալը սովորեցրել ձեզ սեքսի մասին՝ ձեր երկնային Հայրը ցանկանում է, որ դուք իմանաք՝ Նա լիովին հավանություն է տալիս ձեր սեռական մտերմությանը ձեր կողակցի հետ և օրհնում է այն: Ժամանակ հատկացրեք, որպեսզի մտորեք Աստծո Խոսքի այս հրահանգների շուրջ, որոնք վերաբերում են սեռական հարաբերություններին:

«Թող որ քո կինը օրհնության աղբյուր լինի քեզ համար: Ցնծա՛ քո երիտասարդության կնոջ հետ: Նա գեղեցիկ եղնիկ է, շնորհալի այծյամ է: Թող որ նրա կրծքերը միշտ կշտացնեն քեզ: Թող որ դու միշտ զմայլվես նրա սիրով»:

— Առակաց 5.18,19, NLT

«Ամուսինները և կանայք պետք է բավարարեն միմյանց սեռական կարիքները»:

— Ա Կորնթացիների 7.3, GW

«Թող որ ամուսնությունը պատվավոր համարվի (գնահատվի որպես արժանավոր, թանկ, մեծ արժեք ունեցող և հատկապես՝ սիրելի) բոլոր բաներում: Եվ այսպիսով, թող ամուսնական անկողինն անարատ լինի (պահվի անպատվությունից)...»:

— Եբրայեցիների 13.4, AMP

Անկե՛ղծ եղեք: Ի՞նչ տեղ ունեն սեռական հարաբերությունները ձեր ամուսնության մեջ: Դուք հանդուրժո՞ւմ եք դրանք, թե՞ վայելում: Արդյո՞ք այս խոսքերն օգնում են ձեզ դիտարկել սեռական հարաբերություններն ավելի դրական լույսի ներքո:

_____

_____

_____

Աստված մանրամասն նկարագրում է առողջ սեռական մտերմությունը Երգ երգոց գրքում: Ուսումնասիրե՛ք այս ոգեշնչող հարաբերությունը, հատկապես 4-րդ և 7-րդ գլուխներում և խնդրե՛ք Տիրոջը՝ սեռական հարաբերությունների մասին ձեր տեսիլքն ու սպասումները համապատասխանեցնել Իր տեսիլքի և սպասումների հետ:

Ամենակարևոր սկզբունքը սեռական մտերմության մեջ՝ *պատիվն* է: Կա՞ արդյոք որևէ բան ձեր ներկա վարքի մեջ, որն անպատվում է ձեր ամուսնական անկողինը:

_____

_____

_____

Եբրայեցիների 13.4-ն Աստվածաշնչի «Էմփլիֆայդ» թարգմանության մեջ ցույց է տալիս, որ *պատիվը* ոչ միայն նշանակում է՝ անարատ պահել ամուսնական անկողինը, այլև ամուսնությունը համարել արժանավոր, թանկ, մեծ արժեք ունեցող և հատկապես՝ սիրելի:

_____

_____

_____

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՏՐՎԱԾ ՍՐՏԵՐԻ ՀԱՄԱՐ

«[Աստված] բժշկում է կոտրված սրտեր ունեցողներին և կապում է նրանց վերքերը [բժշկելով նրանց ցավերը և վշտերը]»:

— Սաղմոս 147.3, AMP

Մեզնից շատերը վիրավորանքներ և ցավեր ունեն այն սխալ որոշումների պատճառով, որոնք կայացրել են անցյալում՝ ներառյալ մեղսալի սեռական որոշումները: Բայց քանի որ մեր երկնային Հայրը ջերմեռանդորեն ցանկանում էր հաղորդություն ունենալ մեզ հետ, Նա, Իր անհավատալի իմաստությամբ, մեր կյանքերը բժշկելու և վերականգնելու ծրագիր մշակեց Իր Որդու՝ Հիսուսի միջոցով: Պողոսը սեղմ ներկայացնում է Աստծո սիրո պատմությունը Տիտոսին ուղղված նամակում.

> «Բոլորովին վերջերս մենք ինքներս հիմար և համառ էինք՝ խաբված մեղքով, որ վարվում էինք մեր կրքերի թելադրանքով, և պատրաստ էինք կռվի, ատելի էինք և ատում էինք միմյանց: Բայց երբ մեր բարի և ողորմած Փրկիչ Աստված միջամտեց, Նա փրկեց մեզ այդ ամենից: Այս փրկությունը լիովին Նրա գործն էր. մենք ոչ մի մաս չունեինք սրանում: Նա մի լավ «բաղնիք» սարքեց մեզ համար, և մենք դուրս եկանք այնտեղից՝ որպես նոր մարդ՝ ներսից և դրսից լվացված Սուրբ Հոգով: Մեր Փրկիչ Հիսուսն առատորեն լցրեց այս նոր կյանքը: *Աստծո պարգևը վերականգնեց մեր շփումը Նրա հետ և ետ տվեց մեր կյանքերը»:*
>
> — Տիտոս 3.3-7, MSG, շեղագիրն ավելացված է

Արդյո՞ք ձեր կամ ձեր կողակցի անցյալում եղել են ինչ-որ փորձառություններ, որոնց պատճառով ձեզնից մեկն զգում է, որ արժանի չէ մյուսին կամ արժանի չէ հաճույք ստանալ սեռական հարաբերություններից: Մի քանի րոպե լուռ մնացեք, աղոթեք և մտածեք այս մասին: Եթե Սուրբ Հոգին ինչ-որ բան հիշեցնի ձեզ, գրի առեք և աղոթքով հանձնեք Նրան:

Զրուցե՛ք միմյանց հետ և կիսվե՛ք այն ամենով, ինչ կա ձեր սրտում այս հարցի վերաբերյալ: Աղոթե՛ք և խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ բժշկել ձեր սրտերը և վերականգնել այն, ինչ կորսված է:

Աստված չի կարող սրբացնել այն, ինչը մենք չենք տալիս Նրան: Անկեղծ եղեք: Արդյո՞ք Նրանից թաքցնում եք ձեր սեռական կյանքի որևէ բնագավառը: Արդյո՞ք դա ձեր սեռական կյանքի այն մասն է, որտեղ դուք *անցել եք թույլատրելի սահմանները:* Եթե այո, ի՞նչ է դա: Աղոթե՛ք և խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ ցույց տալ, թե ինչու եք թաքցնում դա: Գրի առեք, թե ինչ է Նա հայտնում:

«...Ցանկացած մարդ, ով միավորվել է Մեսիայի հետ, նոր սկիզբ է ստանում և նորովի ստեղծված է: Հին կյանքն անցել է. նոր կյանքը փիքքում է: Ահա՛ այն»:

— Բ Կորնթացիների 5.17, MSG

Մեր սրտերը բժշկվում և կրկին առողջանում են, երբ մենք *ամբողջությամբ* տալիս ենք դրանք Տիրոջը: Ահա թե ինչ արեցիք՝ աղոթելով և հանձնելով ձեր անցյալը Աստծուն: Իսկ հիմա ուշադրությամբ մտորեք հետևյալ խոսքերի շուրջ. Երկրորդ Օրինաց 6.5, Սաղմոս 119.2, Առակաց 3.5-8, Երեմիա 29.11-14, Մարկոս 12.29,30: Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ ամուսնության և սեռական կյանքի մասին այս խոսքերի միջոցով:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՏԵՐԻՄ ՇՓՄԱՆ ՄԵՋ

«...Նա, ով միացած է Քրիստոսի հետ, շարունակաբար մեղք չի գործում...»:

— Ա Հովհաննես 3.6, GNT

Մտերմությունը Քրիստոսի հետ, որը կարելի է հայտնաբերել Սուրբ Հոգու հետ շփման միջոցով, բոլոր մեղքերից ազատվելու հիմքն է: Մտերմությունը *սերտ շփում* է: Դավիթ թագավորը, Պողոս առաքյալը և Մարիամը ձգտում էին սրան[11]: Մտերիմ շփում ունենալը նշանակում է՝ լինել *Քրիստոսի մեջ*. այս արտահայտությունը Նոր կտակարանում օգտագործվում է ավելի քան 100 անգամ: Հիսուսը նկարագրեց մտերմությունը՝ որպես Իր մեջ *բնակվող:* Ինչպե՞ս ենք մենք ստանում և պահպանում մտերիմ փոխհարաբերությունները Քրիստոսի հետ: Մշտապես տալով Նրան մեր ժամանակը և ուշադրությունը:

> «Մեր օրացույցերի և օրակարգերի մեջ ծածուկ վայրը պետք է լինի առաջին տեղում, որովհետև հենց այս վայրում է զարգանում մտերմությունը... Այն մարդիկ, ովքեր ճշմարտապես բոցավառվում և լցվում են ուժով՝ Տեր Հիսուսի հետ ունեցած իրենց *անձնական սիրային հարաբերությունների* շնորհիվ, կհպվեն արքայության մեծագույն հարթություններին»:
>
> — Բոբ Սորջ[12]

Անկասկած՝ մեղքից ազատ լինելը Հիսուսի հետ մտերիմ շփման մեջ է: Ուրեմն, ինչպե՞ս կնկարագրեիք ձեր փոխհարաբերությունները Նրա հետ: Որքա՞ն հաճախ եք դուք տալիս ձեր ժամանակը և ուշադրությունը միայն Նրան: Ի՞նչն է դրդում ձեզ՝ փնտրել Նրա ներկայությունը: Ի՞նչն է ձեր աղոթքների մեծ մասի թեման՝ ձեր ցանկությունն այլ բաների հանդե՞պ, թե՞ Աստծուն ճանաչելու ցանկությունը:

_____

_____

_____

Եթե մտերմությունը Հիսուսի հետ ձեր գլխավոր առաջնահերթությունը չէ, դատապարտություն մի՛ զգացեք: Պարզապես անկեղծ եղեք Նրա հետ և խնդրեք Նրա շնորհքը: Աղոթե՛ք. «Տե՛ր, ես սիրում եմ Քեզ

և ցանկանում եմ ճանաչել Քեզ, բայց գիտեմ, որ հիմա իմ փոխհարաբերությունները Քեզ հետ այնպիսին չեն, ինչպիսին Դու ես ցանկանում: Ես Քո օգնության կարիքն ունեմ: Բացի՛ր իմ աչքերը, որպեսզի տեսնեմ Քեզ ճանաչելու անհամեմատելի արժեքը: Ցո՛ւյց տուր ինձ իմ սիրտը: Ի՞նչն է խանգարում ինձ, որ Դու լինես առաջին տեղում: Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի օգնեմ բորբոքել սիրո կրակը Քո հանդեպ: Ես խնդրում եմ Քո իմաստությունը և շնորհքը, Հիսուսի անունով»:

Լուռ եղեք և լսեք, թե ինչ է Նրա Հոգին հայտնում ձեզ: Գրի առեք դա և խնդրե՛ք Նրա շնորհքը, որպեսզի կատարեք այն, ինչ Նա ասում է:

Այն բաները, որոնք խանգարում են ինձ, որ Աստված առաջին տեղում լինի.

_____

_____

_____

Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի մտերիմ փոխհարաբերություններ կառուցեմ Նրա հետ.

_____

_____

_____

ԱՌԱՆՁՆԱՑԵ՛Ք ԱՍՏԾՈ ՀԵՏ

Հիսուսի հետ մտերիմ շփում ունենալու, Նրա սիրտը ճանաչելու և ազատության նոր մակարդակներ վերապրելու լավագույն միջոցներից մեկը՝ որոշված ժամանակով առանձնանալն է աղոթքի և Նրա հետ հաղորդակցվելու համար: Դուք կարող եք քաղաքից դուրս գնալ ձեր եկեղեցու հետ, կամ ճանապարհորդություն կազմակերպել միայն ձեր և ձեր կողակցի համար: Մի քանի օր Աստծո հետ առանձնանալը, առօրյայում ձեր ուշադրությունը շեղող բաներից հեռու լինելը, կարող է հավիտյան փոխել ձեր կյանքը և ամուսնությունը:

Ժամանակ գտեք և առանձնացեք Աստծո հետ: Նշեք դա ձեր օրացույցի մեջ և դարձրեք ձեր առաջնահերթությունը: Մի՛ որոշեք, թե ինչպես եք անցկացնելու այդ ժամանակը, և մի՛ վերցրեք ձեզ հետ այնպիսի բաներ, որոնք կարող են շեղել ձեր ուշադրությունը: Ունեցեք միայն Աստվածաշունչ, տետր և գրիչ: Պատրա՛ստ եղեք առատորեն ստանալ այն բարությունից, որը Նրա սրտում է:

Բացահայատե՛ք ծածուկ վայրի սքանչելիքները. կարդացե՛ք ավելին հետևյալ խոսքերում. Ա Մնացորդաց 16.27, Սաղմոս 16.11, 27.4-6, 31.19,20, 91.1-16, Եսայի 40.31, Հովհաննես 15.4-8, Եբրայեցիների 4.16:

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՃԻՇՏ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բայց ես ասում եմ. [սովորության համաձայն] քայլե՛ք և ապրե՛ք [Սուրբ] Հոգու մեջ [լինելով արդյունավետ Հոգուն, վերահսկվող և առաջնորդվող Հոգու կողմից]. այդ դեպքում դուք, անկասկած, չեք գոհացնի մարմնի (մարդկային բնության՝ առանց Աստծո) փափագները և ցանկությունները»:

— Գաղատացիների 5.16, AMP

Ձեր ամուսնության մաքրությունն, ի վերջո, կապ ունի այն մաքրության հետ, որը Քրիստոսը ցանկանում է տեսնել Իր Հարսնացուի մեջ: Սեռական ցանկությունները վատ չեն. Աստված է ստեղծել այդ ցանկությունները, և դրանք հաճելի են Նրան: Այնուամենայնիվ, սխալ գործողությունները կամ ազդեցությունները կարող են ապականել մեր միությունը: Երբ տեղի ենք տալիս, դրանք պայքարում են մտերմության դեմ և աղավաղում այն, ինչ Աստված *բարի* է կոչել: Ճիշտ ցանկություններ զարգացնելու բանալին՝ *ձեր մարդկային բնությունը սովատանջ անելն ու ձեր հոգին սնուցելն է:*

> «Թեև ակնհայտ է, որ Աստվածաշունչը բարյացակամորեն և դրականորեն է դիտարկում սեռական հարաբերությունները,– կարդացե՛ք երգ երգոցը,– սակայն աստվածաշնչյան հեղինակները նույնպես լավ գիտեն սեռական մեղքի ծուղակի մասին և այն մասին, որ մենք կարող ենք փչացնել Աստծո պարգևը, որը Նա տվել է մեզ... Ահա թե ինչու է ամուսնության հաստատությունն էապես կարևոր մեզ համար՝ այն մարդկանց, ովքեր ձգտում են ճիշտ կերպով նավարկել սեռական ցանկության ծովում: Սա միակ միջավայրն է, որտեղ սեռական ցանկությունը հոգևորապես իմաստալից և օգտակար է դառնում»:
>
> — Գերի Թոմաս

Այն, ինչ ներս եք թողնում ձեր աչքերի և ականջների միջոցով, ի վերջո հայտնվում է ձեր մտքում և սրտում: Ձեր աչքերը և ականջները՝ անցուղիներ են դեպի ձեր անձը և հոգին: Այն ամենը, ինչ տեսնում և լսում եք, սնուցում է կա՛մ ձեր մարդկային բնությունը, կա՛մ ձեր հոգին:

Կա՛նգ առեք և մտածե՛ք: Ինչպե՞ս եք սնուցում ձեր *մարդկային բնությունը:* Արդյո՞ք դուք դիտում եք ֆիլմեր և հեռուստահաղորդումներ կամ լսում եք երաժշտություն, որոնք բորբոքում են անմաքուր ցանկությունների կրակը: Արդյո՞ք դուք «սնվում եք» այնպիսի գրքերով, ամսագրերով կամ կայքէջերով, որոնք աղտոտում են ձեր միտքը և սիրտը: Ի՞նչ կասեք ձեր ընկերների և այլ ազդեցությունների մասին. արդյո՞ք դրանց ինչ-որ մասը խրախուսում է մարդկային բնության սխալ դիրքորոշումները կամ գործողությունները:

_____

_____

_____

_____

_____

Խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ հայտնել ցանկացած անառողջ ազդեցություն: Ինչի՞ց կամ ումի՞ց է Նա դրդում ձեզ հեռու մնալ:

Վարքի փոփոխությունը տեղի է ունենում, երբ մենք նորոգում ենք մեր միտքն Աստծո Խոսքով: Մտորե՛ք այս խոսքերի շուրջ:

> «...Որովհետև այն Խոսքը, որն Աստված խոսում է, կենդանի և գործուն է. այն կտրում է ավելի խորը, քան ցանկացած երկսայրի սուր. այն թափանցում է այնտեղ, որտեղ անձը և հոգին հանդիպում են՝ դեպի մարդու էության ներքին ծածուկ տեղերը. այն բացահայտում է մարդու սրտի մտքերը և դրդապատճառները...»:
>
> — Եբրայեցիների 4.12, Phillips

> «Այնպես որ, ազատվե՛ք ամեն անմաքրությունից և ամբարշտության տարածված գերաճից և խոնարհ (հեզ, համեստ) հոգով ընդունեք *ու* ողջունեք այն Խոսքը, որը, լինելով տնկված *և* արմատացած [ձեր սրտերում]՝ պարունակում է այն զորությունը, որը կարող է փրկել ձեր անձերը»:
>
> — Հակոբոս 1.21, AMP

> «Մի՞թե Իմ Խոսքը կրակի պես չէ [որն սպառում է այն ամենը, ինչը չի կարող դիմանալ դրա փորձությանը],– ասում է Տերը,– և մուրճի պես, որը փշրում է [ամենահամառ հակառակության] ժայռը»:
>
> — Երեմիա 23.29, AMP

ԿԱՐԴԱՑԵ՛Ք ՆԱԵՎ. Հեսու 1.8, Սաղմոս 1.1-3, 119.103, Երեմիա 15.16, Հռոմեացիների 12.1,2, Կողոսացիների 3.1-5, Ա Պետրոս 2.2:

Ինչպե՞ս եք սնուցում ձեր *հոգին* այն ճշմարտությամբ, որը կա Աստծո Խոսքում սեռական հարաբերությունների, մտերմության և սրբության մասին: Ինչպե՞ս կարող եք ավելի շատ «սնվել» ճշմարտությամբ: Աղոթե՛ք և խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ ցույց տալ գործնական և ստեղծարար միջոցներ ձեր հոգին սնուցելու և ձեզանում ճիշտ ցանկություններ առաջացնելու համար:

_____

_____

_____

Եթե խնդրեք Սուրբ Հոգուն, Նա ցույց կտա ձեզ, թե ինչպես ձեր ներսում առաջացնեք սրբության ձգտում և ինչպես ավելի խորացնեք մտերմությունը ամուսնության մեջ:

ՇՓՈՒՄԸ ԵՎ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«...Երբ մենք սիրով խոսենք ճշմարտությունը, մենք կատարելապես կաճենք մեր փոխհարաբերությունների մեջ Քրիստոսի հետ, Ով գլուխն է»:

— Եփեսացիների 4.15, GW

Անզուգական սեռական հարաբերությունների բանալին ամուսնության ցանկացած եղանակին՝ շփումն է: Շատ ընտանիքներում սեռական մտերմությունը «կործանվում է գիտություն չլինելու պատճառով» (Ովսե 4.6, NKJV): Եթե ամուսինները մշտապես չեն կիսվում իրենց սպասումներով և ցանկություններով, նրանց միջև խնդիրներ են առաջանում: Երբ դուք և ձեր կողակիցը սիրով խոսում եք ճշմարտությունը ձեր սեռական ցանկությունների մասին, դուք կհասնեք ամուսնության մեծությանը, որն Աստված նախատեսել է: Հեղինակներ և քարոզիչներ **Բոբ և Օդրի Մեյսներները** կիսվում են ուխտի մասին իրենց գաղափարներով.

> «Ընկերներ լինելը և թափանցիկ փոխհարաբերություններ ունենալը անգնահատելի առավելություններ են ձեր սեռական վայելքի համար... Բաց խոսակցությունն այն մասին, թե ինչ սպասումներ ունեք միմյանցից, ինչ պայքարներ ու դժվարություններ ունեք, ջերմության և ընդունելության զգացում կհաղորդի ձեր սեռական հարաբերություններին: Առաջնահերթ համարեք ձեր կողակցին հասկանալը, քանի որ նա տարբերվում է ձեզնից սեռական ցանկության չափով և արտահայտմամբ: Եվ համբերատար եղեք. կպահանջվի մի ամբողջ կյանք, մինչև դուք կիմանաք բոլոր սեռական մանրամասները մեկդ մյուսի մասին»[14]:

Ավարտե՛ք այս նախադասությունները.

«Ես հասկանում եմ, որ օրվա ամենահարմար ժամանակը սեռական մտերմության համար մեր ամուսնության այս եղանակում...»:

_____

«Իմ կողակիցն իրեն ապահով է զգում և ավելի բաց է սեռական մտերմության համար, երբ...»:

_____

«Կարծում եմ՝ մեր ամուսնության այս եղանակին պարբերաբար սիրով զբաղվելու ամենամեծ խոչընդոտը...»:

_____

«Ամենակարևոր բանը, ինչը ես ցանկանում եմ ասել իմ կողակցին մեր սեռական մտերմության մասին հենց հիմա, հետևյալն է...»:

Մեր սեռական կյանքում ի՞նչն է ամենից շատ ինձ *դուր գալիս:*

Մեր սեռական կյանքում ի՞նչը ամենից շատ ինձ *դուր չի գալիս:*

Արդյո՞ք երբևէ բացահայտ կերպով և անկեղծորեն կիսվել եք ձեր կողակցի հետ այն բաների մասին, որոնք ձեզ դուր են գալիս կամ դուր չեն գալիս: Քանի որ ձեր դիմացինը չի կարող իմանալ, թե ինչ կա ձեր մտքում, մենք խրախուսում ենք որոշել հատուկ ժամանակ և վայր, որտեղ երկուսով կարող եք կիսվել ապահով միջավայրում: Հիշեք՝ խոսեք ճշմարտությունը սիրով, և խնդրեք Աստծո շնորհքը, որպեսզի հասկանաք և գնահատեք ձեր կողակցի կարիքները և ցանկությունները:

Ամուսին, արդյո՞ք դուք ավելի շատ ժամանակ և ուշադրություն եք հատկացնում ձեր աշխատանքին կամ երեխաներին, քան ձեր կնոջը: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի լավ ծառայեք նրա սեռական կարիքներին: Խոնարհվե՛ք ձեր կնոջ առջև և հարցրե՛ք նրա կարծիքը, իսկ հետո միասին աղոթեք:

Կին, արդյո՞ք ձեր ընտանիքը կամ աշխատանքն ավելի կարևոր է ձեզ համար, քան ձեր ամուսնու հետ սեռական մտերմություն զարգացնելը: Ինչպե՞ս կարող եք ավելի լավ ծառայել նրա սեռական կարիքներին: Խոնարհվե՛ք նրա առջև և հարցրե՛ք նրա կարծիքը, իսկ հետո միասին աղոթեք:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 5-ը:

1 | Համաձայն Ծննդոց գրքի՝ Աստված ստեղծեց տղամարդուն հողի փոշուց, իսկ հետո ստեղծեց կնոջը և բերեց տղամարդու մոտ: Ուշադրությամբ կարդացե՛ք Ծննդոց 2.21-25-ը: Ի՞նչն է տպավորվում ձեր մեջ այս պատմությունից, որտեղ նկարագրված է տղամարդու արձագանքն իր կնոջն առաջին անգամ տեսնելուն: Ինչպե՞ս ամեն ինչ փոխվեց նրանց անհնազանդությունից հետո (կարդացե՛ք Ծննդոց 3.6-8):

2 | Արդյո՞ք հավատում եք, որ Աստծո ողորմությունը, ներումը և շնորհքը հասանելի են ցանկացած մեղքի համար և կարող են հաղթահարել ցանկացած մեղք: Եթե այդպես է, ուրեմն ինչո՞ւ է, ձեր կարծիքով, շատերի համար խիստ դժվար ազատություն ստանալ իրենց սեռական մեղքերից: Եթե խոսեիք ինչ-որ մեկի հետ, ով նման պայքարի մեջ է, ինչպե՞ս կխրախուսեիք նրան՝ թողնել անցյալի մեղքերը և ընդունել Աստծո ողորմությունն ու շնորհքը:

3 | Ասե՛ք ձեր բառերով, թե ի՞նչ է նշանակում՝ *պատվել* ձեր ամուսնական անկողինը: Ինչպե՞ս է դա գործնականորեն դրսևորվում: Ինչպե՞ս են *անպատվում* ամուսնական անկողինը:

4 | Աստծո Խոսքում գրված է երկու տեսակի տրտմության մասին, որը մենք զգում ենք՝ աշխարհիկ տրտմության և Աստծո ուզած կերպով տրտմության: Քննարկե՛ք տարբերություններն այս երկուսի միջև. ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն դրանք և ինչպիսի՞ն է ամեն մեկի արդյունքը:

ԱՇԽԱՐՀԻԿ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ	ԱՍՏԾՈ ՈՒԶԱԾ ԿԵՐՊՈՎ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ
_____	_____
_____	_____

5 | Մտերմությունն Աստծո հետ՝ ամեն տեսակի մեղքից ազատվելու նախապայմանն է, ներառյալ սեռական մեղքը: Կա՛նգ առեք և մտածե՛ք: Ի՞նչ տեղի կունենար, եթե կարողանայինք ունենալ տևական ազատություն մեղքից *մեր* կարողությամբ: Ինչպե՞ս դա կփոխեր մեր փոխհարաբերություններն Աստծո և այլ մարդկանց հետ:

Մտածե՛ք այս մասին. արդյո՞ք մեր մարմնական կարողությունը որևէ արժեք ունի: Կարդացե՛ք Հռոմեացիների 7.18, Հովհաննես 15.5, Փիլիպեցիների 3.3 և Ա Կորնթացիների 10.12 խոսքերը:

6 | Աստծո հետ անձնական մտերմության հետ մեկտեղ, ինչպիսի՞ գործնական քայլեր կարող ենք ձեռնարկել, որպեսզի պաշտպանենք մեր աչքերը և ականջները, ինչպես և մեր միտքն ու սիրտը այն այլասերություններից, պիղծ պատկերներից, չափանիշներից և վարքագծերից, որոնց մեր հասարակությունը հավանություն է տալիս:

Մտածե՛ք այս խոսքերի մասին.
«Ես հրաժարվում եմ նայել ցանկացած պիղծ և անպարկեշտ բանի» (Սաղմ. 101.3, NLT):
«Ես ուխտ եմ կնքել իմ աչքերի հետ, որ կրքոտ չնայեմ ոչ մի երիտասարդ կնոջ» (Հոբ 31.1, NLT):

7 | Սեռական կյանքում մաքուր մնալու բանալիներից մեկը՝ ապահով ամուսնական մթնոլորտում *սեռական բավականություն* ստանալն է: Կորնթացիների առաջին թղթի 7.2-5-ում ուշադրությամբ կարդացե՛ք այն պարզ ցուցումը, որն Աստված տալիս է մեզ Պողոս առաքյալի գրչով: Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այս խոսքերից յուրաքանչյուրում: Ինչպե՞ս է այս հատվածը փոխում ձեր պատկերացումն ընդհանրապես սեռական հարաբերությունների և մասնավորապես՝ ձեր կողակցին ծառայելու մասին:

Ավագներ. հանձնարարե՛ք խմբակի անդամներին՝ կարդալ նույն աստվածաշնչյան հատվածը «Մեսիջ» (The Message) թարգմանությունից:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Աստված ցանկանում է, որ դուք և ձեր ամուսինը աներևակայելի սեռական կյանք կառուցեք: Նրա պատվիրանը պատվի և մաքրության մասին ձեր ննջասենյակում՝ այս կյանքի սկիզբն է:
- Թույլ մի՛ տվեք, որ մեղքի կամ բռնության ամոթը խանգարի ձեզ լիարժեք կերպով վայելել ամուսնական մտերմությունը և սեռական հարաբերությունների երանությունը: Աստված փափագում է բժշկել և առողջացնել այն ամենը, ինչը վնասված է:
- Հրաշալի սեռական շփումը տեղի է ունենում, երբ ամուսինները ձգտում են հաճեցնել միմյանց: Սեռական մտերմությունը ֆիզիկական, զգացմունքային, մտավոր և հոգևոր կապ է ստեղծում ձեր կողակցի հետ՝ պարգևելով հաճույք և բավականություն:
- Եսակենտրոնությունը թույլ չի տալիս մեզ մտերմանալ Աստծո հետ և վերապրել Նրա վերափոխող զորությունը: Աստվածակենտրոնությունը և մտերմությունը Նրա հետ գործի են դնում Նրա զորությունը մեր կյանքերում:
- Մեր մտքերը նորոգվում են, և մեր սրտերը մաքրվում են, երբ ժամանակ ենք անցկացնում Աստծո Խոսքի և Նրա ներկայության մեջ: Սերմվելով մեր սրտում և հաստատվելով Նրա Հոգով՝ Աստծո Խոսքն ազատություն է տալիս սեռական մեղքից:
- Ամուսնության ամեն եղանակը տարբեր է, ինչը նշանակում է, որ ձեր սեռական կյանքում նույնպես տարբեր եղանակներ կլինեն: Ամեն եղանակ ունի իր ուրախ և դժվարին պահերը: Մշտապես և անկեղծորեն խոսեք սեռական հարաբերությունների մասին ձեր սեռական կյանքի ցանկացած եղանակին, և ավելի զարգացրեք ձեր սեռական մտերմությունը:

ՎԵՑ

Կրկին սկսեք

Հնարավոր է երկարատև և երջանիկ կյանք ունենալ,
միայն եթե ապրեք այդպես ամեն օր:

— Մարգարետ Բոնանո

Օր 1

Երբ մեր որդիները փոքր էին, ես (Լիզան) մի ժողովրդական հեքիաթ էի կարդում նրանց համար: Այդ հեքիաթը աղքատ մարդու մասին էր, ով շատ տպավորիչ երազ էր տեսել: Երազում նա թաղված գանձ էր գտել խնձորենու տակ: Թեև այդ խնձորենու տեղը պարզ չէր, բայց այդ երազը հույսով լցրեց նրա սիրտը:

Այս մարդը մեծ և հին պարտեզ ուներ, բայց աղքատացել էր, քանի որ պարտեզի ծառերն այլևս պտուղ չէին տալիս: Մինչ այդ նա որոշել էր վաճառել իր պարտեզը, բայց այդ երազից հետո սկսեց վճռականորեն և առույգորեն աշխատել: Նա հասկացավ, որ ճիշտ ծառը գտնելու համար պահանջվելու էին ծանր աշխատանքի անհաշիվ ժամեր: Առանց վարանելու սկսեց պարբերաբար փորել իր ծառերից ամեն մեկի շուրջը: Այն, որ նա գանձ չէր գտնում հերթական ծառի տակ, ընդամենը նշանակում էր, որ գանձը մնացած ծառերից ինչ-որ մեկի տակ էր: Ի վերջո, նա փոս փորեց

վերջին ծառի շուրջը, բայց այն գանձը, որը տեսել էր երազում, այդտեղ էլ չէր: Նա ընկավ գետնին՝ հոգնած և հուսահատված:

Այդ մարդը գտավ իր գանձը միայն հաջորդ գարնանը: Նա քայլում էր իր պարտեզում և խորը շունչ էր քաշում՝ զգալով խնձորենիների ծաղիկների թունդ բուրմունքը: Նրա բոլոր հին ծառերը պատվել էին ծաղիկներով: Ամեն բուրումնավետ բողբոջ աշնանային խնձորներ էր խոստանում:

Այդ աղքատ մարդը բացահայտեց, որ իր գանձն էր՝ հոգալ այն ամենի մասին, ինչը միշտ իր խնամքի տակ էր: Փորելով ծառերի շուրջը՝ նա անգիտակցաբար հագեցրեց ծառերի արմատներն օդով և փխրեցրեց հողը, ինչը նոր պտղաբերություն հաղորդեց ծառերին: Այդ տարի և հաջորդ տարիների ընթացքում նա իր ընտանիքով այնպիսի հունձք վայելեցին, որը գերազանցեց նրանց ամենամեծ սպասումները:

Այս գրքի սկզբում մենք ամուսնությունը համեմատեցինք ծառի հետ: Երբ ծառի հողը պնդանում է, արմատները չեն կարողանում տարածվել, որպեսզի ստանան ջուր և սննդարար նյութեր, որոնք անհրաժեշտ են ծառին աճելու համար: Այս գրքի առաջին հինգ գլուխների նպատակն էր՝ օգնել ձեզ, որ փխրեցնեիք ձեր ամուսնության հողը: Հեռացնելով վիրավորանքի, վախի և եսասիրության տկարացնող և զսպող հետևանքները՝ դուք հագեցրիք արմատներն օդով: Քանի որ համարձակվեցինք երազել և որոշեցիք հաստատել ճիշտ արժեքներ, դերեր և նպատակներ, դուք կտեսնեք հույսի խոստումը ձեր ճյուղերի վրա և ցանկալի գանձը՝ ձեր ապագայում:

Ամեն ամուսնություն հունձքի խոստում ունի, որը դեռ չի իրականացել: Մենք կատարում ենք մեր մասը՝ հսկելով մեր սրտերը և ընտանիքները, իսկ Աստված կատարում է իր մասը՝ պատվիրելով Իր օրհնությունը մեր միության մեջ: Նորատունկ ծառն իր մատղաշ ճյուղերով, հաստաբուն ծառը, որի ճյուղերը դիմացել են տարբեր եղանակների, և նույնիսկ փոքրիկ սերմը, որը դեռ պետք է ծիլ տա՝ բոլորն էլ մեծ ներուժ ունեն: Մեր Աստված վերցնում է այն, ինչը ամուլ է, և պտղաբեր է դարձնում: Նա նոր է դարձնում հինը և կյանք է տալիս մեռածին:

ԱՄԵՆ ԲԱՆ ՆՈՐ Է

Մերը չի ջնջում անցյալը. այն փոխում է ապագան

— Գերի Չեպմեն[1]

Եկեք վերջին անգամ վերադառնանք այն պարտեզին, որտեղ սկսվեց ամեն ինչ.

> «Աստված ստեղծեց մարդ արարածներին. Նա ստեղծեց նրանց աստվածանման, Աստծո բնությունն արտացոլող: Նա ստեղծեց նրանց արու և էգ: Աստված օրհնեց նրանց. «Բարգավաճե՛ք: Բազմացե՛ք: Լցրե՛ք երկիրը: Իշխե՛ք: Պատասխանատո՛ւ եղեք ծովի ձկների և երկնքի թռչունների համար, ամեն կենդանի էակի համար, որը շարժվում է երկրի երեսի վրա»» (Ծննդ. 1.27,28, MSG):

Աստծո ծրագիրը մեզ համար միշտ այսպիսին է եղել: Մեր անցյալը, մեր վախերը և մեզ շրջապատող աշխարհից եկող ճնշումներն ու աղավաղումները գալիս են, որպեսզի թունավորեն Արարչի սկզբնական մտադրությունը կամ զրկեն այն իր ամբողջական ազդեցությունից: Միգուցե ձեզ թվացել է, որ դուք չափազանց հեռացել եք Եդեմի հանձնարարականից՝ հավատալու համար, որ այն իրավամբ ձեզ է պատկանում: Սրտապնդվե՛ք: Ամեն մի կյանք և ամուսնություն կարող է վերածնվել և նոր սկիզբ ունենալ:

> «Եվ աթոռի վրա նստողն ասաց. «Ահա ամեն բան նոր եմ անում…»» (Հայտն. 21.5):

Աստված պարզապես չի նորացնում անցյալը: Նա ամեն ինչ նոր է դարձնում: Նա վերցրեց Եդեմի ծառերը, որոնք հիշեցնում էին մեր անկման մասին, և վերաիմաստավորեց դրանք: Նա գամեց Իր Որդուն մահվան ծառին, որպեսզի կարողանար ընդունել մեզ Իր հավիտենական քաղաքում, քանի որ այդտեղ է կյանքի ծառը, որի տերևները ազգերի բժշկության համար են: Չկա այնպիսի կորսված բան, ինչը Նա անկարող է փրկել: Սա նաև վերաբերում է մեր ամուսնություններին: Նա նորոգում է ամեն ինչ, որպեսզի նոր սկիզբ տա մեզ:

Ձեր անցյալն այլևս գոյություն չունի: Այն ամփոփված է ժամանակվա մատյանների մեջ և անհասանելի է մարդկային ջանքերի

համար: Այնուամենայնիվ, կա Մեկը, Ով ապրում է ժամանակից դուրս, և Նա ենթակա չէ դրա սահմանափակումներին: Նա «Բարձրը և Բարձրյալն» է և «հավիտենության մեջ Բնակվողը» (Եսայի 57.15): Աստված կազատի ձեզ անցյալի ձախողումներից՝ գրելով ձեր ապագայի պատմությունը: Աստծո թագավորության մեջ երեկվա ցավը չի խոչընդոտում վաղվա ներուժին: Ամեն օր Նրա ողորմությունները նորոգվում են, և Նրա խոստումներն սպասում են ձեզ: Նա ցանկանում ու փափագում է անհնարինը հնարավոր դարձնել ձեզ համար:

> «[Նա] կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում գործում է…» (Եփես. 3.20):

Այն պտղաբերությունը, արդյունավետությունը և բավականությունը, որոնք Աստված կարող է բերել ձեր կյանքում և ձեր ամուսնության մեջ, ավելին են, քան դուք կարող եք պատկերացնել: Հիշե՛ք այն երազանքները, նպատակները և ցանկությունները ձեր ամուսնության մասին, որոնք դուք գրի եք առել անցած օրերի կամ շաբաթների ընթացքում: Աստված չի ցանկանում պարզապես տալ ձեզ այդ տեսիլքը: Նա ցանկանում է առատորեն գերազանցել այն: Նա ցանկանում է ավելի խորը մտերմություն պարգևել ձեզ և լայնացնել ձեր ազդեցության սահմանները, որպեսզի ձեր միությունը հաստատի Նրա երկնային թագավորությունն այս երկրի վրա: Նա ցանկանում է արմատապես և աննախադեպ գործել ձեզանում և ձեր միջոցով: Միգուցե դուք չէիք համարձակվում երազել, երբ կարդում էիք նախորդ գլուխները: Համարձակվեք հիմա՛:

Աստծո հետ կյանքի հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ թեև Նա մեր օգնության կարիքը չունի որևէ բան իրականացնելու համար, բայց սիրով ընդունում է մեր համագործակցությունը: Նա չունի մեր օգնության կարիքը, բայց ցանկանում է, որ մենք ներգրավված լինենք: Մենք համագործակցում ենք՝ իրականացնելով այնպիսի բաներ, որոնք անհնարին են թվում: Մենք հենց սա՛ ենք խնդրում ձեզնից ձեր նոր սկզբի համար. ունեցեք այնպիսի նպատակներ, որոնք այս պահին կարող են անհնարին թվալ:

Կա մի պատմություն, որը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է անհնարին բաների հասնել: Խոսքը մարդկության պատմության բավականին անհրապույր դրվագներից մեկի մասին է, երբ մարդիկ

ապստամբեցին Աստծո պատվիրանի դեմ՝ հրաժարվելով լցնել երկիրը: Աշխարհով մեկ տարածվելու փոխարեն, մեր նախահայրերը միացան իրար և սկսեցին մեծ աշտարակ կառուցել՝ ձգտելով դիրք զբաղեցնել Երկնքում, նման այն դիրքին, որն Ադամը և Եվան ունեին Եդեմում: Հավանաբար, դուք արդեն գիտեք, թե ինչպես Աստված միջամտեց Բաբելոնի աշտարակաշինությանը:

> «…Տերն իջավ, որ տեսնի այն քաղաքը և այն աշտարակը, որը մարդու որդիները կառուցել էին: Եվ Տերն ասաց. «Ահա *նրանք մեկ ժողովուրդ են,* և *բոլորը մեկ լեզու ունեն*, և սա միայն սկիզբն է այն բանի, ինչ նրանք կանեն: Եվ *այն, ինչ նրանք մտադիր են անելու, անհնարին չի լինի նրանց համար:* Դե՛, եկեք իջնենք և այդտեղ խառնենք նրանց լեզուն, որպեսզի մեկը մյուսի խոսքը չհասկանան»: Եվ Տերը ցրեց նրանց այդտեղից երկրի երեսով մեկ, և նրանք դադարեցին կառուցել այդ քաղաքը» (Ծննդ. 11.5-8, ESV, շեղագիրն ավելացված է):

Այս նախաձեռնությունն Աստծուց չէր, բայց եթե Նա չընդհատեր նրանց գործը, այն կհաջողվեր երկու գործոնների պատճառով՝ *ընդհանուր լեզվի* և *մարդկանց միաբանության*[2]: Եթե այս երկու գործոնները հնարավորություն ունեին կատարելու անհնազանդ մարդկանց անհնարին թվացող նախաձեռնությունը, ապա որքա՞ն ավելի դրանք կզորացնեն այն մարդկանց, ովքեր մեկ մարմին են Քրիստոսի հետ:

Մեկ լեզու և մեկ նպատակ ունենալը էապես կարևոր կլինի ձեզ համար, երբ դուք կրկին սկսեք ամեն ինչ՝ ընդունելով «ամեն բաներից ավելին», որն Աստված պատրաստել է ձեր միության համար: Դիտարկենք այս երկու գործոնները՝ սկսելով լեզվից:

Օր 2

Երկնքի լեզուն

«…սրտի ավելացածից խոսում է բերանը» (Ղուկ. 6.45):

Այս գրքի ընթացքում մենք շարունակաբար ընդգծել ենք, թե որքան կարևոր է թույլ տալ, որ առաջին հերթին Աստված գործի

մեր կյանքում: Փոփոխությունը տեղի է ունենում, երբ մենք տրվում ենք Նրա Հոգուն և հնազանդվում ենք Նրա Խոսքին: Ինչպես նշեցինք, վարքի փոփոխությունը չի կարելի հավասարեցնել ներքին վերափոխմանը: Երբ դուք սկսեք վերափոխվել ներսից, ձեր վարքն այլ կդառնա: Առաջին վկայությունն այն աշխատանքի մասին, որն Աստված կատարում է ձեր սրտում՝ ձեր բերանի խոսքերն են:

Ամեն իրավիճակում, որին մենք բախվում ենք, պետք է ընտրենք՝ խոսել երկնքի՞, թե՞ այս երկրի լեզվով: Երկուսն էլ ակնհայտ իրականություն են արտաբերում: Երկինքը խոսում է համաձայն ճշմարտության վերին Աղբյուրի.

> «Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհներն Իմ ճանապարհները չեն,– ասում է Տերը.- այլ՝ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից և Իմ խորհուրդները ձեր խորհուրդներից:
> Որովհետև՝ ինչպես որ իջնում են անձրևը և ձյունը երկնքից և ետ չեն դառնում այնտեղ, այլ ոռոգում են երկիրը և այն արգասավոր անում և բողբոջեցնում այն, և տալիս են սերմ սերմնացանին և հաց՝ ուտողին, այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած խոսքը. այն չպիտի պարապ ետ դառնա Ինձ մոտ, այլ կատարի Իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար որ ես այն ուղարկեցի» (Եսայի 55.8-11):

Աստծո լեզվով խոսելու համար մենք պետք է իմանանք Նրա Խոսքը: Աստծո Խոսքը կվերափոխի մեր տեսիլքն այնպես, որ մենք կտեսնենք անտեսանելին և կխոսենք այն, ինչ դեռ պետք է լինի: Այն կվերափոխի մեր խոսքը հավատքի լեզվի, որը շատ ավելին է, քան դրական բառապաշարը կամ զգացմունքային լավատեսությունը: Այն հաստատ հավատք կառաջացնի Աստծո բոլոր խոստումների հանդեպ:

Ահա մի քանի օրինակ այն մասին, թե որքանով են տարբերվում երկնքի և երկրի լեզուները:

> Մեր երկիրն ասում է. «Ամուսնալուծություն»: Երկինքն ասում է. «Միություն»:
>
> Մեր երկիրն ասում է. «Իրավիճակն անհույս է»: Երկինքն ասում է. «Ամեն բան հնարավոր է»:
>
> Մեր երկիրն ասում է. «Մերժվածություն»: Երկինքն ասում է. «Ընդունելություն»:
>
> Մեր երկիրն ասում է. «Դու պա՛րտք ես ինձ»: Երկինքն ասում է. «Ես ձրիաբար տալիս եմ»:

Մեր երկիրն ասում է. «Վրեժ»: Երկինքն ասում է. «Ներում»:

Մեր երկիրն ասում է. «Ես չե՛մ լինի քո ստրուկը»: Երկինքն ասում է. «Ես կլինեմ քո ծառան»:

Մեր երկիրն ասում է. «Ես ատում եմ քո թուլությունը»: Երկինքն ասում է. «Ես տեսնում եմ քո ներուժը, և իմ սերը ծածկում է քո թուլությունը»:

Մեր երկիրն ասում է. «Դու չես հոգում իմ կարիքները»: Երկինքն ասում է. «Ես ցանկանում եմ հոգալ քո կարիքները»:

Այս արտահայտություններն ինքնին ոգեշնչող են, բայց դրանք տևական և ազդեցիկ կլինեն, եթե արմատացած լինեն Աստծո Խոսքի խորը ճշմարտության մեջ: Մենք խրախուսում ենք ձեզ յուրացնել երկնային լեզուն՝ սովորելով՝ ամուսնության մեջ ձեր բոլոր դիրքորոշումներն ու խոսքերը հիմնել Աստծո Խոսքի վրա: Որպես Աստծո մարդիկ՝ մենք գիտենք, որ «մեր ներկա նեղությունները փոքր են և շատ երկար չեն տևելու: Այնուամենայնիվ, այդ նեղություններն այնպիսի՞ փառք են պատրաստում մեզ համար, որը մեծապես գերազանցում է դրանք և տևելու է հավիտյան: Այնպես որ, մենք չենք նայում այն նեղություններին, որոնք կարող ենք տեսնել հիմա. փոխարենը՝ ուղղում ենք մեր հայացքն այն բաների վրա, որոնք անկարելի է տեսնել: Որովհետև այն բաները, որոնք մենք հիմա տեսնում ենք, շուտով անցնելու են (տե՛ս Բ Կորնթ. 4.17,18, NLT):

Լեզուն ունի կյանքի և մահվան զորությունը, և հավատքով մենք կարող ենք կանչել չերևացողները երևացողների պես (տե՛ս Առակ. 18.21 և Հռոմ. 4.17): Թույլ տվեք, որ Աստծո Խոսքը ձևավորի ձեր կյանքը:

Խոսել ճշմարտությունը

«…Խոսե՛ք ճշմարտությունը սիրով՝ ամեն կերպով ավելի ու ավելի նմանվելով Քրիստոսին» (Եփես. 4.15, NLT):

Երկնային լեզվով խոսելը մշտապես նշանակում է՝ խոսել ճշմարտությունը: Բայց ամեն կերպով ճշմարտությունը խոսելը չէ, որ ճիշտ է: Աստծո լեզվով խոսելը նշանակում է՝ խոսել ճշմարտությունը *սիրով:*

Շատ զույգեր սխալվում են՝ ունենալով մեկ կամ երկու ծայրահեղ մոտեցում: Ոմանք օգտագործում են Աստծո Խոսքը՝ իրենց կողակցի վրա հարձակվելու և նրան նսեմացնելու համար: Նրանք խոսում են ճշմարտությունը, բայց անում են դա՝ լցված հիասթափությամբ, զայրույթով, վրիժառությամբ կամ վիրավորանքով: Մյուսները չեն ցանկանում ցավ պատճառել կամ կոնֆլիկտ առաջացնել, այնպես որ, նրանք թաքցնում են այն ճշմարտությունը, որը պետք է ասեին, և ցուցաբերում են մակերեսային, կեղծված սեր իրենց կողակցի հանդեպ: Ժամանակի ընթացքում այս վերաբերմունքն անխուսափելիորեն հիասթափություն և վիրավորանք է առաջացնում, և ինչ-որ պահի պոռթկում է տեղի ունենում: Այս մոտեցումներից ոչ մեկը չի իրականացնում Աստծո նպատակը, այսինքն՝ որ մենք ավելի ու ավելի նմանվենք Քրիստոսին:

Դուք գիտեք ձեր կնոջ կամ ամուսնու թուլություններն ավելի լավ, քան ցանկացած մարդ, և կարող եք հեշտորեն օգտագործել դա, որպեսզի ցավ պատճառեք, ամաչեցնեք կամ դատապարտեք նրան: Բայց մենք ընդունել ենք ավելի բարձր կոչում, այնպես չէ՞: Մենք նվիրվել ենք մեր կողակցին, որպեսզի դառնանք նրա մեծագույն ծառան և ձգտենք նրա շահերին: Խոսելով ճշմարտությունը՝ մենք կարող ենք օգնել, որ մեր կողակիցն ավելի նմանվի Քրիստոսին, բայց երբեք չենք խոսի հավիտենական արժեք ունեցող բառեր, եթե մեր լեզուները նման լինեն զենքերի, որոնք վերքեր են հասցնում:

Եթե մենք ցանկանում ենք, որ մեր ամուսնությունն առողջ լինի, պետք է միջոցներ ձեռնարկենք կործանարար և անարդարացի վարքի դեմ, բայց դրա համար կա ճիշտ ժամանակ և ճիշտ վայր: Դուք նկատե՞լ եք, որ վիճելու ընթացքում ձեր կնոջ կամ ամուսնու սխալները հիշատակելը ոչ մի անգամ դրական փոփոխություն չի բերել: Փոխարենը՝ սովորաբար դա հանգեցնում է ավելի վատ վարքի և կարող է վնասակար հետևանքներ ունենալ: Եթե դուք զգում եք, որ պետք է խոսել ինչ-որ խնդրի մասին, սպասեք, մինչև որ ձեր կինը կամ ամուսինը հանդարտվի: Եթե խնդիրը լուրջ է, կարելի է ծրագրել որևէ օր կամ ժամ խոսակցության համար, որպեսզի դուք կարողանաք անել դա ավելի մտերմիկ մթնոլորտում: Այս դեպքում ավելի հավանական է, որ ձեր կողակիցը կլսի ձեզ:

Ես (Լիզան) պարզ հիշում եմ, թե ինչպես մեկ անգամ Աստված ասաց ինձ. «Լի՛զա, եթե ցանկանում ես լսված լինել, խոսի՛ր այնպես,

ինչպես ինքդ կցանկանայիր լսել քո ասածը»: Կարելի է ավելացնել հետևյալը. «Խոսի՛ր *այն ժամանակ*, երբ դու կցանկանայիր լսել քո ասածը»: Վեճի ամենաթեժ պահը սովորաբար ճիշտ ժամանակը չէ կառուցողական քննադատության համար: Ավելի լավ է շտկումներ անել, երբ ձեր կողակիցը հանդարտ և ընկալունակ է: Երբ դուք հոգնած եք, ավելի լավ է՝ հանգստանաք: Ներե՛ք իրար, գրկախառնվե՛ք և որոշե՛ք, որ կխոսեք այդ մասին հաջորդ առավոտյան:

Շատ կարևոր է, որ մենք պարուրենք սիրով այն ճշմարտությունները, որոնք կարող են ցավոտ լինել: Ոչ ոք չի ցանկանում լսել սեփական ձախողումների կամ սխալների մասին, բայց ուսանելի մարդիկ օգուտ են քաղում, երբ նրանց տեղեկացնում են այն բնագավառների մասին, որնցում նրանք աճելու տեղ ունեն:

Մինչև որևէ խորհուրդ տալը, ստուգեք ձեր շարժառիթները: Հարցրեք ինքներդ ձեզ. *«Արդյո՞ք ասում եմ սա՝ սիրուց դրդված, թե՞ իմ շահերից ելնելով: Արդյո՞ք ես իրականում մտահոգված եմ իմ կողակցի բարեկեցությամբ, թե՞ ձգտում եմ վրեժ լուծել այն վիրավորանքի համար, որը նա հասցրել է ինձ»:* Եթե վիճաբանության ժամանակ դուք առաջարկում եք ձեր կողակցին՝ փոխել իր վարքը, հնարավոր է, որ այդ առաջարկի արմատը եսասիրությունն է: Չէ՞ որ այդ պահին դուք հակազդում եք այն զգացմունքներին, որոնք նա առաջացնում է *ձեզանում:*

Շատ դժվար է խոսել ճշմարտությունը սիրով, երբ դուք զգացմունքորեն անկայուն վիճակում եք: Այնուամենայնիվ, եթե զսպեք ձեր լեզուն, տեղի կունենա հետևյալ երկու տարբերակներից մեկը. կա՛մ դուք կհասկանաք, որ սխալ էիք և շնորհակալ կլինեք, որ ոչինչ չասացիք, կա՛մ որոշ ժամանակ անց կկարողանաք անվրդով և հստակ ասել այն, ինչը ձեր կողակիցը պետք է լսի:

Մենք սովորել ենք, որ միշտ ավելի լավ է անտեսել փոքր վիրավորանքները՝ վստահելով դրանք Աստծուն, բայց մենք հասկանում ենք, որ որոշ վիրավորանքներ դժվար է մոռանալ: Իրականում, լռելը այն դեպքում, երբ դուք շարունակ վիրավորանքներ եք ստանում՝ անառողջ դիրքորոշում է: Բայց և այնպես, սխալին հակառակվելու անհրաժեշտությունը, մեր կողակցին վիրավորելու իրավունք չի տալիս: Դուք կարող եք խոսել ճշմարտությունը սիրով, երբ.

- Ստուգեք ձեր շարժառիթներն Աստծո Խոսքի լույսով,
- Լուծեք խնդիրը՝ հարձակվելով խնդրի, ոչ թե ձեր կողակցի վրա,

- Վերահսկեք ձեր լեզուն՝ չխոսելով բացասականորեն,
- Ողորմած լինեք,
- Ազնիվ լինեք,
- Մեղմորեն պատասխանեք,
- Մշտապես հույս տաք,
- Խոսեք այնպես, ինչպես կցանկանայիք, որ խոսեին ձեզ հետ,
- Իմաստությամբ ընտրեք բառերը, ժամանակը և վայրը՝ ձեր կողակցի հետ խոսելու համար[3]:

Սողոմոնն ասաց. «Ինչպես երկաթն է սրում երկաթը, այնպես էլ ընկերը սրում է ընկերոջը» (Առակ. 27.17, NLT): Մեր փոխհարաբերությունների մեջ լինելու են այսպիսի բախումներ և նույնիսկ անհամաձայնություններ: Եթե ճիշտ կերպով վարվենք այս բախումների ժամանակ, դրանք կարող են կռել մեր բնավորությունը՝ Աստծուն հաճելի դարձնելով:

Կարևոր է զբաղվել այն խնդիրներով, որոնք կարող են խաթարել ձեր ամուսնական միությունը: Փոքր վիրավորանքները կարող են խորը վերքեր դառնալ, եթե ճիշտ կերպով չբուժեք դրանք, քանի որ հաճախ մեր կողակիցները չեն պատկերացնում, թե ինչպիսի ցավ են պատճառում մեզ: Երբ մենք քննարկում ենք մեր մտահոգությունները՝ ելնելով Աստծո և մեկս մյուսի հանդեպ սիրուց, մենք օգնում ենք միմյանց՝ դառնալ ավելի լավ և ավելի միաբան ամուսիններ:

Օր 3

Սիրո լեզուները

Մինչև այժմ, մենք քննարկել ենք լեզուն քիչ թե շատ ուղիղ իմաստով՝ անդրադառնալով մեր խոսքին և խոսելաձևին: Այժմ մենք ցանկանում ենք խոսել այնպիսի երևույթի մասին, որը կարելի է անվանել *ընդհանուր լեզու*: Չորրորդ գլխում նշեցինք, որ մեր ամուսնություններն ավելի ամուր կլինեն, եթե մենք հասկանանք, որ միգուցե մեր կողակիցը չծառայի մեզ նույն կերպով, ինչպես մենք ենք ծառայում նրան: Հավասարապես կարելի է ասել, որ

մարդիկ տարբեր կերպերով են ցուցաբերում և ստանում սերը: Կա մի գերազանց գիրք, որը կօգնի ձեզ հասկանալ սիրո տարբեր լեզուները. այն կոչվում է *«Սիրո հինգ լեզուները. ինչպե՞ս ի սրտե նվիրվածություն ցուցաբերել ձեր սիրելիին»,* հեղինակը Գերի Չեպմենն է: Այս գիրքը շատ է օգնել մեզ:

Մեր ամուսնության օրինակով կօգնենք ձեզ հասկանալ, թե ինչու է սա կարևոր: Ես (Լիզան) հիմնականում սեր էի ցուցաբերում որակյալ ժամանակ տրամադրելու և ծառայելու միջոցով: Մեր ամուսնության առաջին տարիներին ես մշտապես զբաղված էի տարբեր գործերով (լվացքով, սալիկներ շարելով, կերակուր պատրաստելով, մաքրությամբ, երեխաների մասին հոգ տանելով, պատերը ներկելով և տան առջևի սիզամարգն ու ծաղիկները խնամելով), որպեսզի ցույց տայի իմ մեծ սերը Ջոնի հանդեպ: Ես նույնպես փորձում էի խորը, իմաստալից խոսակցություններ վարել նրա հետ՝ որպես որակյալ ժամանակ անցկացնելու միջոց, մինչ կատարում էի այն գործերը, որոնք, իմ կարծիքով, խոսում էին *սիրո* մասին:

Ես չէի մտածում Լիզայի պես: Ես այլ կերպով եմ սեր ցուցաբերում՝ հպումների և խրախուսական խոսքերի միջոցով: Լիզան հրաշալի ուտեստներ էր պատրաստում, կարպետ էր փռում հատակին և սալիկներ էր շարում, բայց չէի լսում «Ես սիրում եմ քեզ» բառերը: Եվ երբ ես ջանասիրաբար խրախուսական խոսքեր էի ասում և ջերմություն էի ցուցաբերում նրան հպումների միջոցով, նա նույնպես չէր լսում «Ես սիրում եմ քեզ» բառերը: Այնպիսի տպավորություն էր, որ երկուսս էլ օտար լեզվով էինք խոսում:

Առողջ ամուսնություն ունենալու համար երկուսն էլ պետք է երջանիկ և սիրված զգան իրենց, և յուրաքանչյուրն արժանի է սիրված լինել այնպես, ինչպես ինքը կարող է հասկանալ դա: Այնպես որ, սխալ չէ պատմել մեկդ մյուսին, թե ինչպես եք դուք «լսում» սերը: Մենք խրախուսում ենք ձեզ և ձեր կողակցին՝ սովորել, թե ինչպես եք սեր ցուցաբերում՝ ընթերցելով դոկտոր Չեպմենի գիրքը, կամ լրացնելով «5lovelanguages.com» կայքէջի անվճար տեստը: Քննարկե՛ք ձեր արդյունքները: Ինչպիսի՞ն կդառնան ձեր հարաբերությունները, երբ դուք խոսեք մեկդ մյուսի լեզուներով: Խոսեք այս մասին սիրալիր, ոչ մեղադրական: Սկսեք խոսակցությունը՝ ասելով. «Ես սիրված եմ զգում ինձ, երբ դու…», և շարունակեք[4]:

Երբ գիտակցաբար խոսեք և վարվեք համաձայն ձեր կողակցի սիրո լեզվի, դուք կընդարձակեք ձեր ամուսնության սիրո բառապաշարը: Դուք կամրացնեք ձեր միության հիմքերը, երբ խոսեք երկնային լեզվով և ասեք ճշմարտությունը սիրով: Այս երկուսը միասին ընդհանուր լեզու են ձևավորում ձեր միության մեջ:

Այժմ կխոսենք այն մասին, թե ինչպես կարող եք կառուցել երկրորդ գործոնը՝ միաբանությունը, որն անհնարինը հնարավոր է դարձնում:

Մեր առաքելությունը

Այն բաներից մեկը, որոնք Հիսուսը հաճախ էր ընդգծում Իր ծառայության ընթացքում, միաբան լինելու կարևորությունն էր: Հիշեք այն պատմությունը, որը գրված է Հովհաննեսի Ավետարանում: Այն երեկո, երբ Հիսուսը մատնվեց, Նա աղոթեց, որ մենք միաբան լինենք.

> «Ես աղոթում եմ ոչ միայն [Իմ աշակերտների] համար,
> Այլև նրանց համար, ովքեր կհավատան Ինձ:
> Նրանց պատճառով և այն վկայության պատճառով, որը նրանք կտան Իմ մասին:
> Վերջնական նպատակն այն է, որ բոլորը մեկ դառնան սրտով և մտքով,
> Ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում ես, և Ես՝ Քեզանում,
> Որպեսզի նրանք սրտով և մտքով մեկ լինեն Մեզ հետ:
> Այդ ժամանակ աշխարհը կհավատա, որ իրականում Դու ուղարկեցիր Ինձ:
> Նույն փառքը, որը տվեցիր Ինձ, Ես տվեցի նրանց,
> Որպեսզի նրանք նույնքան միաբան լինեն, որքան Մենք ենք՝
> Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում:
> *Այդ ժամանակ նրանք հասուն կլինեն այս միասնության մեջ,*
> *Եվ վկայություն կտան անաստված աշխարհին,*
> *Որ Դու ուղարկեցիր Ինձ և սիրեցիր նրանց*
> *Նույն կերպով, ինչպես սիրեցիր Ինձ»* (Հովհ. 17.20-23, MSG, շեղագիրն ավելացված է):

Միաբանությունը հայտնում է Աստծո փառքը և վկայում Նրա Որդու հաշտության աշխատանքի մասին: Թեև շատերն են փորձել ապացուցել Ավետարանը դատողություններով կամ ազդեցիկ փաստարկներով, սակայն մեծագույն վկայությունն այն մասին, որ

Աստված սիրում է աշխարհը, այն է, թե ինչպես է Նրա սերն արտահայտվում Իր ժողովրդի մեջ:

Միաբանությունը ոչ միայն վկայում է նրանց, ովքեր դեռ Աստծո արքայության մեջ չեն, այլև օգուտ է բերում մեզ, քանի որ Աստված պատվիրում է Իր օրհնությունը հենց միաբանության մեջ (տե՛ս Սաղմ. 133): Այսպիսով, միաբանությունը կրկնակի սպառնալիք է խավարի թագավորությանը. այն բարեհաճություն է բերում Աստծո ժողովրդին, և միևնույն ժամանակ դրդում է կորածներին՝ մտածել, որ Աստված սիրում է իրենց:

Այդ իսկ պատճառով, զարմանալի չէ, որ թշնամին անում է ամեն ինչ, որպեսզի պառակտում բերի ձեր ամուսնության մեջ, և ցանկացած եսասիրություն կամ վախ, որը դուք պահում եք ձեր ներսում, միայն օգնում է նրա գործին: Միաբանությունը պահպանելը ծանր աշխատանք է, քանի որ դրա համար անհրաժեշտ է պայքարել թե՛ թշնամու, թե՛ մեր մարդկային բնության դեմ: Միաբան լինելու համար անհրաժեշտ է ունենալ Աստծո Հոգու շնորհքը և պարզորեն տեսնել այն նպատակը, որը գերազանցում է ներկայի դժվարությունները: Եվս մեկ անգամ կարդանք Եփեսացիների 5.21-ը՝ մտապահելով սա.

> «Եվ ավելին՝ հնազանդվե՛ք մեկդ մյուսին՝ Քրիստոսի հանդեպ ունեցած երկյուղածությունից ելնելով» (Եփես. 5.21, NLT):

Նախորդ գլուխներից մեկում մենք քննարկեցինք, թե ինչպես ամուսինները պետք է հնազանդվեն և անձնուրաց ծառայեն իրար: Այժմ ցանկանում ենք ընդլայնել ձեր պատկերացումը հնազանդության մասին և՝ թե ինչպես է այն օգնում մեզ միաբան դառնալ:

Դուք արդեն բավականին ժամանակ եք անցկացրել՝ գրի առնելով ձեր ամուսնական ծրագրերը և որոշելով այն քայլերը, որոնք անհրաժեշտ են դրանք իրականացնելու համար: Թող դրանք օգնեն ձեզ, որ հնազանդվեք իրար, և հիշեցնեն այն մասին, որ ամեն նպատակ, որը որոշել եք ձեր ամուսնության մեջ, ծառայում է ձեր կյանքի կարևորագույն նպատակին կամ առաքելությանը, որն է՝ հայտնել Աստծո սերը և փառքը: Ամուսինները պետք է հնազանդվեն այս առաքելությանը, և հենց սա՛ է դրդում մեզ միաբան լինել:

Գիտակցելով սա՝ երկուսն էլ կարող են ուժեղ լինել իրենց ամուսնության մեջ: Հնազանդության համար պարտադիր չէ, որ ամուսիններից մեկն ուժեղ լինի, իսկ մյուսը՝ թույլ: Քանի որ ամուս-

նական առաքելությունը շատ մեծ է՝ մեկ մարդու համար, պահանջվում է երկու ուժեղ անհատ՝ ամուր միություն կառուցելու համար: Խնդրում ենք, հասկացե՛ք, որ օգտագործելով *ուժեղ* բառը՝ նկատի չունենք մարդու ազդեցիկ անհատականությունը կամ ֆիզիկական ուժը, այլ՝ թե ինչ ներդրում է նա անում ընդհանուր գործի մեջ: Ինչպես արդեն նշել ենք՝ ամուսնության մեջ պետք է տիրել, ոչ թե տիրապետել: Ամուսնության մեջ պետք է տարածքներ գրավել, ոչ թե տարածքային մտածելակերպ ունենալ:

Կան բնագավառներ մեր ամուսնության մեջ, մեր ընտանիքում և մեր ընտանիքից դուրս, որոնցում ես ավելի հմուտ եմ, քան Լիզան: Նա սիրով վստահում է այդ բնագավառներն ինձ: Կան այլ բնագավառներ, որոնցում Լիզան շատ ավելի հմուտ է, քան ես: Այդ բնագավառներում ես ուրախությամբ վստահում եմ Լիզայի իմաստությանը և փորձին: Մենք միաբան ենք՝ միևնույն առաքելության ներքո, և մեր առաքելությունը պահանջում է լավագույնը, որն ամեն մեկս կարող է առաջարկել:

Ջոնը միշտ գերազանց է տնօրինել մեր ֆինանսները: Նրա համար երբեք դժվար չի եղել հավատալ, որ Աստված կհոգա մեր կարիքները և կօրհնի մեզ: Նա է գտել այն բոլոր տները, որոնք ձեռք ենք բերել: Երբ նա սկսեց անձամբ զբաղվել մեր հաշիվների վճարմամբ, այնպիսի տպավորություն էր, ասես իմ ուսերից մի մեծ բեռ ընկավ: Ես ստիպված էի ինքս անել դա, քանի որ Ջոնը խիտ ճանապարհորդական և աշխատանքային գրաֆիկ ուներ: Այնուամենայնիվ, տեսնելով, թե որքան էր դա վիատեցնում ինձ՝ նա առաջարկեց անձամբ զբաղվել դրանով: Այն, ինչը ճնշող էր ինձ համար, հեշտորեն տրվում էր նրան: Նա կարողանում էր ձեռնտու պայմաններով ձեռք բերել տներ, մեքենաներ և այլ խոշոր գնումներ կատարել: Բացի այդ, նա հրաշալիորեն շփվում էր մեր որդիների հետ սպորտի, խաղերի և այլ զբաղմունքների միջոցով:

Իմ հերթին, ես միշտ տնօրինել եմ մեր տունը: Ես միշտ ցանկացել եմ, որ մեր տունն այնպիսի վայր լինի, որտեղ ընտանիքը հավաքվում է ճաշի սեղանի շուրջ: Ես սիրում եմ կերակրել իմ ընտանիքի անդամներին, և միշտ առաջարկում էի որդիներիս ճաշի հրավիրել իրենց ընկերներին: Բացի այդ՝ ես ցանկանում էի, որ մեր տանն այնպիսի մթնոլորտ լիներ, որ Ջոնը կարողանար հանգստանալ, երբ վերադառնում էր ուղևորություններից:

Պարզե՛ք, թե որ բնագավառները դուք և ձեր կողակիցը կարող եք տնօրինել ձեր կարողությունների շնորհիվ: Սովորե՛ք վստահել մեկդ մյուսին այն բնագավառները, որոնք կապված են ձեր ուժեղ կողմերի հետ: Երբ սիրով անեք սա, դուք կկարողանաք կատարել ձեր միացյալ առաքելությունը:

Օր 4

Առաջնահերթություններ

«Երկուսը շատ ավելի լավ է, քան մեկը, որովհետև նրանք կարող են օգնել միմյամց, որ հաջողության հասնեն» (Ժողով. 4.9, NLT):

Առաքելությունը և առաջնահերթությունները միևնույն բաները չեն, բայց դրանք անբաժան են իրարից: Միությունը պահպանելու համար անչափ կարևոր է ունենալ նույն առաջնահերթությունները:

Մեր առաջնահերթությունները թելադրված են մեր մեծագույն նպատակով, որն է՝ ճանաչել և հայտնել Աստծո սերը: Քանի որ սա յուրաքանչյուր հավատացյալի առաքելությունն է, բոլորս կարող ենք ունենալ միևնույն առաջնահերթությունները, թեև այս առաքելությունն իրականացնելու ձևերը տարբեր կլինեն տարբեր զույգերի համար և ամուսնության տարբեր եղանակներին: Մենք առաջարկում ենք առաջնահերթությունների այսպիսի հերթականություն.

1. *Աստված*. իրականում, Աստված «առաջինը» չէ. Նա վեր է ամեն ինչից, և փոխհարաբերությունները Նրա հետ էապես կարևոր են՝ կյանքի ցանկացած բնագավառում հաջողակ և հավատարիմ լինելու համար: Նա պետք է պարփակի մեր բոլոր առաջնահերթությունները և բնակվի դրանցում: Բայց պարզության համար, մենք կհատկացնենք Նրան առաջին տեղն այս ցուցակում: Կարելի է ասել, որ Աստված ամենաառաջինն է:

   Այնուամենայնիվ, մեր փոխհարաբերություններն Աստծո հետ և այն աշխատանքը, որը կատարում ենք Նրա համար, նույնը չեն: Հատկապես ծառայողները և այն մարդիկ, ովքեր ծառայություն ունեն եկեղեցում, գայթակղություն ունեն՝ կարևորելու ծա-

ռայության գործն ավելի, քան իրենց ընտանիքները: Խնդրում ենք, թույլ մի՛ տվեք, որ ձեր ընտանիքը դառնա այս խեղաթյուրման զոհը:

2. *Կինը կամ ամուսինը.* այստեղ նույնպես հնարավոր է աննկատելի խեղաթյուրման զոհ դառնալ, որը կարող է շատ թանկ նստել ձեզ վրա: Ձեր երեխաները շատ կարևոր են, բայց դուք չպետք է հոգ տանեք նրանց մասին՝ անտեսելով ձեր կողակցին: Մի օր ձեր երեխաները կհասունանան և կլքեն ձեր տունը, բայց ձեր ուխտը ձեր կողակցի հետ ամբողջ կյանքի համար է: Կառուցե՛ք ձեր կյանքն այնպես, որ երբ ձեր երեխաները հեռանան ձեր տնից, դուք դեռ լավագույն ընկերները լինեք:

3. *Երեխաները.* ամուսինների մասնակցությունը և դերերը երեխաներին դաստիարակելու մեջ տարբերվելու են ամուսնության տարբեր եղանակների ընթացքում: Սա հատկապես կախված է հաջորդ առաջնահերթությունից՝ ձեր կոչումից: Եթե ձեզնից մեկը կամ երկուսդ էլ աշխատում եք տնից դուրս, դուք հավելյալ պատասխանատվություն կունենաք աշխատանքի կամ ծառայության բնագավառում: Եթե ձեր կոչումը կատարելը ներկայումս նշանակում է՝ մնալ տանը ձեր երեխաների հետ, մեր տարբերակումը այս և հաջորդ առաջնահերթության միջև այնքան էլ չի վերաբերում ձեզ: Բայց ինչպես ասաց Կ. Ս. Լյուիսը, «Տնային տնտեսությամբ զբաղվելը՝ ամենամեծ կարիերան է»:

4. *Կոչումը.* իրականում, ձեր կոչման մեջ են մտնում այս ցուցակի բոլոր կետերը և ամեն ինչ ձեր կյանքում: Բայց կրկին՝ պարզության համար մենք կսահմանափակենք այս հասկացության շրջանակը: Օգտագործելով «կոչում» բառը՝ մենք նկատի ունենք այն գործը, որի համար Աստված անհատապես կանչել է ձեզ և ձեր կողակցին՝ կառավարական, գործարար, առողջապահական, կրթական, ծառայողական, արվեստի, գիտության կամ այլ բնագավառում:

Մեր ամուսնության դեպքում, մենք նույն կոչման մեջ ենք, սակայն շատ ամուսիններ չեն աշխատում կամ ծառայում միևնույն բնագավառում: Եթե ձեր ամուսնությունն այդպիսին է, դուք, միևնույն է, կարող եք հետաքրքրվել մեկդ մյուսի զբաղ-

վածությամբ և հնարավորինս աջակցել միմյանց: Ինչպես ասաց Սողոմոնը՝ երբ երկուսը համագործակցում են, նրանք կարող են օգնել իրար, որ հաջողության հասնեն:

5. *Հանգիստը.* շաբաթը սահմանված է Աստծո կողմից, ոչ թե մարդկանց: Երբ մենք հանգստանում ենք, մնացած բոլոր առաջնահերթությունները զարգացում են ապրում: Աստված ցանկանում է, որ մեր կյանքում տեղ լինի հանգստի և ուժերի վերականգնման համար (ինչը չի նշանակում՝ անգործություն): Մենք հանգստանում ենք՝ ժամանակ հատկացնելով այն բաների համար, որոնք վերականգնում են մեզ հոգևորապես, ֆիզիկապես և զգացմունքորեն: Ամուսնության մեջ կարևոր է, որ մենք միասին հանգստանալու հնարավորություններ գտնենք, ոչ թե պարզապես մենակ հանգստանանք: Մեզ համար սա նշանակում է՝ գտնել ընդհանուր թեմաներ և հետաքրքրություններ, որոնք կարող ենք միասին վայելել, օրինակ՝ ժամանակ անցկացնել բնության գրկում և խոսել մեր երազանքների մասին՝ կապված մեր ընտանիքի և ծառայության հետ: Սովորե՛ք միասին հանգստանալ և վերականգնել ձեր ուժերը. սա երկու կյանքերը մեկ դարձնելու մասերից մեկն է:

6. *Հասարակական կյանքը.* չափազանց շատ ընտանիքներում ամուսինները և կանայք բոլորովին առանձին հասարակական կյանք են վարում: Թեև կարևոր է, որ տղամարդիկ առանձին ժամանակ անցկացնեն տղամարդկանց հետ, իսկ կանայք՝ կանանց, և որ մենք, մեր կողակիցներից բացի, ընկերական շփում կառուցենք այլ մարդկանց հետ, բայց առողջ ամուսնության մեջ կողակիցների հասարակական կյանքերը պետք է հատվեն: Մեր ընկերները կարևոր դեր են խաղում մեզ խրախուսելու, աջակցելու և զորացնելու մեջ: Քանի որ մենք մեկ մարմին ենք, պետք է շատ ընկերներ ունենանք, ովքեր ճանաչում և սիրում են երկուսիս:

Մենք չենք կարող չափից ավելի շեշտադրել, թե որքա՜ն կարևոր է ունենալ այնպիսի ընկերներ, ովքեր ձգտում են օրհնել ձեր միությունը: Մենք ունենք ընկերներ, ովքեր շատ տարբեր դերեր ունեն մեր կյանքերում: Ես ունեմ գոլֆի խաղընկերներ, որոնց հետ ես միայն կարող եմ կիսել իմ հանգիստը: Ես ունեմ այլ ընկերներ, որոնց

հետ գոլֆ եմ խաղում, բայց որոնց առջև կարող եմ բացել իմ սիրտը և անձը: Այս մարդիկ կիսում են իմ դժվարությունները և տկարությունները այն սիրով, որ ունեն և՛ Լիզայի, և՛ իմ հանդեպ:

Քանի որ իմ (Լիզայի) կյանքը խիստ հագեցած է, և ես գոլֆ չեմ խաղում, ես միայն սրտակից ընկերներ ունեմ, ովքեր ավելի են մղում ինձ սիրո ճանաչողության մեջ: Այս կանայք հասկանում են այն յուրահատուկ դժվարությունները, որոնք կան իմ կյանքում և ամուսնության մեջ: Նրանցից ոմանք իմ լավագույն ընկերուհիներն են ծառայողական դժվարությունների ժամանակ, իսկ մյուսները լավագույն խորհրդատուներն են կոնֆլիկտային իրավիճակների դեպքում: Այս մարդիկ ոսկուց էլ թանկ են մեզ համար:

Կային մարդիկ, ովքեր անցյալում մեր ընկերներն էին, բայց, ի վերջո, մենք ստիպված եղանք հեռանալ նրանցից: Նրանք գնահատում էին մեզնից մեկին ավելի, քան մյուսին, և չէին նպաստում միաբանությանը մեր ամուսնության մեջ: Եթե դուք այնպիսի ընկեր ունեք, ով ձեր երկուսի ընկերը չէ, մի՛ շփվեք նրա հետ: Այդ մարդն, ի վերջո, բաժանություն կստեղծի ձեր միության մեջ:

Ընտրել սերը

«Ուրեմն, հագե՛ք, ինչպես Աստծո ընտրվածներ, սուրբեր և սիրելիներ, ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, երկայնամտություն՝ իրար համբերելով և իրար ներելով, եթե մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա, ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպես էլ դուք: Եվ այս ամենի վրա հագեք սերը, *որ կատարելության կապն է*» (Կողոս. 3.12-14, շեղագիրն ավելացված է):

Սերը միացնում է մեզ կատարյալ ներդաշնակությամբ: Այն միաբանության հիմքն է և ճշմարիտ բանալին՝ անհնարինը հնարավոր դարձնելու համար:

Եփեսացիների 5.28-ում Պողոսը գրում է, որ «ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց» (NLT): «Պետք է» բառը շեշտում է, որ սա շատ խիստ պարտավորություն է: Այս խոսքը փոխանցում է մի վեհ սկզբունք, որը վերաբերում է թե՛ ամուսիններին, թե՛ կանանց. մենք պետք է սիրենք իրար՝ անկախ մեր զգացմունքներից:

Մեր մշակույթը պատկերում է սերը որպես զգացմունք, որն ան-

կարելի է վերահսկել, և որին մարդը կարող է միայն հակազդել, բայց սերը մշտապես որոշում է: Աստված *որոշեց* սիրել մեզ: Եթե մենք որոշենք սիրել, ի վերջո զգացմունքները կհետևեն մեր գործերին: Հավատքի գործերը (օրինակ՝ սեր ցուցաբերելն այն դեպքում, երբ մենք չունենք ակնհայտ զգացմունքներ) կարող են սարեր շարժել: Աստված փափագում է օրհնել մեր գործերը:

Դիտրիխ Բոնհոֆֆերն ասել է.

> «Ձեր սերը չէ, որ սատարում է ամուսնությունը. ամուսնությունն է, որ սատարում է ձեր սերը»:

Ձեր ամուսնությունը կարող է սատարել ձեր սերը միայն մի դեպքում. եթե ձեր զգացմունքային և հոգևոր բավականության աղբյուրը՝ շփումն է Աստծո Հոգու հետ: Մենք կարող ենք ապավինել սխալ աղբյուրի, այսինքն՝ մեր զորության աղբյուրին, բայց այդ դեպքում մեր սերը չի դիմանա, երբ փորձվի զգացմունքների բացակայության ժամանակ: Այնուամենայնիվ, եթե մենք հաստատված ենք Աստծո սիրո մեջ, մեր սիրո գործերը կպահպանեն մեր միությունն այն ժամանակ, երբ մեր զգացմունքները թուլանան:

Իհարկե, ամուսնությունը ոչ մի դեպքում չպետք է զուրկ լինի զգացմունքներից, բայց ինչպես ասաց Կ.Ս. Լյուիսը.

> «Բոլորիս համար կա մի կատարելապես պարզ կանոն. մի՛ վատնեք ձեր ժամանակը՝ մտածելով, թե արդյո՞ք դուք սիրում եք ձեր մերձավորին. վարվե՛ք այնպես, ասես դա ճշմարիտ է: Հենց որ անում ենք դա, մենք բացահայտում ենք մեծագույն գաղտնիքներից մեկը: Երբ վարվում եք այնպես, ասես սիրում եք ինչ-որ մեկին, դուք անխուսափելիորեն սկսում եք սիրել նրան»[5]:

Դուք կարող եք շարունակել սեր ցուցաբերել ձեր կողակցին, նույնիսկ եթե չունեք սիրո զգացմունքներ: Դուք կարող եք որոշում կայացնել, որ կծառայեք, կխրախուսեք և կաջակցեք ձեր կողակցին: Երբ սիրով վարվեք, ձեր զգացմունքներն, ի վերջո, կհետևեն ձեր գործերին:

Օր 5

Դուրս բերել լավագույնը

«Քրիստոսի սերն ամբողջական է դարձնում եկեղեցին: Նրա խոսքերը զարթնեցնում են նրա գեղեցկությունը: Այն ամենը, ինչ Նա անում և ասում է, ունի մեկ նպատակ՝ դուրս բերել լավագույնը, որը Նրա ներսում է…» (Եփես. 5.26,27, MSG):

«Իմաստուն կինը,– գրում էր Սողոմոնը,– շինում է իր տունը» (Առակ. 14.1, NLT): Քանի որ իմաստուն կանայք շինում են իրենց տները, իմաստուն տղամարդիկ շինություն են տալիս իրենց կանանց: Մեկս մյուսին շինություն տալով՝ մենք քրիստոսանման վարք ենք ցուցաբերում մեր կողակիցների հանդեպ: Եթե ցանկանում ենք բացահայտել լավագույնը, ինչ Աստված պատրաստել է մեզ համար, ուրեմն պետք է դուրս բերենք լավագույնը մեկս մյուսից:

Սիրելով մեր կողակցին՝ մենք համագործակցում ենք երկնքի հետ և համաձայնում ենք Աստծո սիրո հետ: Աստված նայում է ձեր կողակցին ոչ թե ըստ նրա թուլությունների, այլ համաձայն Իր շնորհքի և սիրո: Աստված ուշադրություն է դարձնում ձեր կողակցի ներուժին և առաջարկում է ձեզ՝ անել նույնը:

Ինչպես արդեն նշեցինք, Լիզան կորցրել էր իր աչքը, քանի որ մանուկ հասակում քաղցկեղ էր ունեցել: Այդ պատճառով նա շատ էր վախենում մարդկանց առջև խոսելուց: Ես գիտեի Լիզայի վախի մասին, բայց նույնպես գիտեի, որ Աստված արտասովոր իմաստությամբ էր օժտել նրան:

Երբ ես երիտասարդական ծառայության հովիվ էի, երբեմն առաջարկում էի Լիզային՝ քարոզել մեր երիտասարդական խմբի աղջիկներին: «Ո՛չ մի դեպքում,– հակառակվում էր նա:- Դա իմ գործը չէ՛: Եկեղեցին քեզ է վերցրել աշխատանքի՝ որպես երիտասարդական ծառայության հովվի, ոչ թե ինձ»:

Ես լսում էի նրա առարկությունները՝ հասկանալով, որ դրանց հիմքը վախն էր, ոչ թե ապստամբությունն Աստծո պարգևի դեմ: Լիզան շատ էր վախենում քարոզելուց, բայց երբ նա քարոզում էր, ծառայությունից հետո մարդիկ մոտենում էին ինձ, որպեսզի ասեին, թե նրա ուղերձը որքա՜ն խորը ազդեց իրենց վրա: Այնպես որ, երբ նա հակառակվում էր, ես պատասխանում էի. «Ուղղակի պատրա՛ստ եղիր երեկոյան. ես կզանգահարեմ քեզ»:

Ես (Լիզան) կարծում էի, որ Ջոնը փորձում էր դարձնել ինձ այնպիսին, ինչպիսին ես չէի: Նա գիտեր, որ երիտասարդական խմբի աղջիկները կարիք ունեին խոսք լսելու որևէ կնոջից, բայց ես բոլորովին անհամապատասխան էի զգում ինձ դրա համար: Ես չէի հասկանում, որ նրանց համար օրինակ փնտրելու հետ մեկտեղ, նա փորձում էր ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ իմ պարգևները կարող էին զարգանալ: Նա իմ մեջ տեսավ այնպիսի բան, ինչը ինքս չէի կարողանում տեսնել: Թեև երբեմն ամբողջ գիշեր արթուն էի մնում՝ աղաչելով Ջոնին, որ չհամոզեր ինձ քարոզել, բայց նա երբեք չէր դադարում այնպես անել, որ Աստված կարողանար դուրս բերել Իր լավագույնը իմ ներսից: Այդ ժամանակ ես խիստ դժկամությամբ էի անում դա, բայց ետ նայելով՝ տեսնում էի, որ Ջոնը սիրով դուրս էր մղում ինձ իմ վախերից և սահմանափակումներից:

Ինչպես որ Ջոնն էր օգնում ինձ, ես նույնպես ներդնում էի ուժերս նրա համար: Մեր ամուսնության վաղ տարիներին ես եռանդուն կերպով խմբագրում էի նրա գրքերը՝ ուշադրություն դարձնելով, որ դրանք ճշգրտորեն փոխանցեին այն, ինչ նրա սրտում էր: Մեծ մասամբ, այն ամենը, ինչ միասին իրականացրել ենք ծառայության մեջ, տեղի է ունեցել, քանի որ մենք սիրով դրդում էինք միմյանց աճել և զարգանալ:

Միգուցե դուք և ձեր կողակիցը չեք սովորել, թե ինչպես դուրս բերել լավագույնը մեկդ մյուսից: Միգուցե դուք նույնիսկ անում եք հակառակը, այսինքն՝ օգտագործում եք ձեր մտերիմ դիրքը, որպեսզի ցավ պատճառեք մեկդ մյուսին: Այսօր կարող եք կրկին սկսել: Դուք կարող եք նոր չափանիշ սահմանել:

Երբեք ուշ չէ կրկին սկսելը: Եթե դուք ցանկանում եք սովորել, թե ինչպես դուրս բերել լավագույնը ձեր կողակցից, հանգիստ, մեկուսի վայր գտեք և ժամանակ առանձնացրեք, որպեսզի աղոթեք ձեր կնոջ կամ ամուսնու հետ: Աղոթե՛ք Աստծուն այսպես.

Երկնային Հա՛յր, մենք ապաշխարում ենք, որ սխալ ենք վերաբերվել այն միությանը, որը Դու հաստատել ես մեր միջև, և որ չենք տնտեսել Քո գլուխգործոցը դրան արժանի պատվով: Մենք շնորհակա՛լ ենք Քեզնից նոր ողորմությունների համար, որոնք օգնում են մեզ՝ կրկին սկսել: Սուրբ Հոգի, մենք խնդրում ենք, որ տաս մեզ այն շնորհքը, որի կարիքն ունենք, որպեսզի տեսնենք մեկս մյուսին Քո

սիրով: Տո՛ւր մեզ ավելի մեծ իմաստություն այն մասին, թե ինչպես կարող ենք բարձրացնել մեկս մյուսին և ծառայել իրար: Տո՛ւր մեզ աչքեր, որպեսզի տեսնենք այն պարգևները և ուժեղ կողմերը, որոնք Դու ցանկանում ես ընդլայնել ամեն մեկիս մեջ, և ցո՛ւյց տուր մեզ, թե ինչպես կարող ենք գերազանց լինել Քո գործի մեջ: Մենք հավատում ենք, որ միասին մենք ավելի լավ ենք, քան առանձին: Մենք ցանկանում ենք աճել այն լիության մեջ, որը Դու նախատեսել ես մեր կյանքերի և մեր միության համար, որպեսզի փառք բերենք Քեզ, Հիսուսի անունով, ամե՛ն:

Մենք նաև ընդգրկել ենք հռչակագրեր, որոնք կարող եք կարդալ ձեր կողակցի համար: Նայե՛ք նրա աչքերի մեջ և ասե՛ք հետևյալը.

Ամուսին.
Ների՛ր ինձ, որ օգտագործել եմ իմ ուժեղ կողմերը՝ քեզ ճնշելու և ենթարկելու համար: Ների՛ր ինձ, որ չեմ ընդգծել քո առաքինությունը, քո գեղեցկությունը, քո իմաստությունը և քո բարությունը: Ների՛ր ինձ, որ չեմ ստեղծել այնպիսի մթնոլորտ, որում դու կարող ես ծաղկել: Ների՛ր իմ եսասիրությունը մեր խոսակցությունների մեջ, մեր առօրյայում և մեր անկողնում: Ես հավատում եմ, որ Աստված կարող է բժշկել, վերականգնել և փառավորել մեր միությունը: Ես հավատում եմ, որ դու և ես կարող ենք անել ամեն ինչ Նրա միջոցով, Ով զորացնում է մեզ: Մենք կիշխենք, կշատանանք և շատ պտղաբեր կլինենք միասին, Հիսուսի անունով:

Կին.
Ների՛ր ինձ, որ օգտագործել եմ իմ ուժեղ կողմերը՝ քո թուլությունները մատնացույց անելու համար: Ների՛ր ինձ, որ անարգել եմ քեզ և եսասեր եմ եղել մեր շփման մեջ: Այս պահից ի վեր ես օգտագործելու եմ իմ խոսքերը, որպեսզի կառուցեմ քո կյանքը: Ների՛ր ինձ այն դեպքերի համար, երբ ես չեմ եղել քո սրտի պահապանը: Ես հավատում եմ քեզ: Ես հավատում եմ, որ Աստված կարող է ամեն ինչ նորը դարձնել: Ես որոշում եմ սիրել և ներել քեզ: Այսօր նոր օր է՝ լի ողորմությամբ և ճշմարտությամբ: Ե՛կ կրկին սիրենք և երազենք:

Թանկագին ընկերնե՛ր, մենք հավատում ենք, որ լավագույնը դեռ ձեր առջևում է: Աստծո շնորհքով ձեր ժառանգությունը, ձեր մտերմությունը և ձեր ազդեցությունը կարող են գերազանցել ձեր բոլոր հույսերը և սպասումները: Իրար հետ միաբանված և Աստծո Հոգու զորությամբ ու ոգեշնչմամբ դուք կգրեք պատմություն այնպիսի

ամուսնության մասին, որը հայտնում է Քրիստոսի սերն այս երկրին և բերկրանք է ապրում Նրանով, Ով նստած է գահի վրա:

Կրկին սկսելու որոշումը ցույց է տալիս ձեր վստահությունը միմյանց հանդեպ: Սա մեկանգամյա հնարավորություն չէ. դուք մշտապես ունեք այս հնարավորությունը, քանի դեռ ապրում եք: *Կրկին սկսելը* նշանակում է, որ մենք ապրում ենք ներկայում՝ թողնելով մեր անցյալը և ուղղելով մեր սրտերը դեպի այն, ինչ առջևում է:

Այն ամենը, ինչի մասին պատմեցինք այս գրքում, ընդամենը լավ գաղափարներ կլինեն, եթե մենք չհանձնենք մեր միությունը Նրան, Ում պատկանում է ամբողջ կարողությունը: Հուդայի թղթի 24 և 25 խոսքերը հայտնություն են տալիս մեզ այն մասին, թե ինչպես կարող է ամեն ինչ լինել.

> «Եվ Նրան, Ով կարող է պահել ձեզ սայթաքելուց և անարատ ու մեծ ուրախությամբ ներկայացնել ձեզ Իր փառքի ներկայության առջև, միակ Աստծուն՝ մեր Փրկչին, Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով, լինի փառք, մեծություն, տիրապետություն և իշխանություն, բոլոր ժամանակներից առաջ և՛ այժմ, և՛ հավիտյան: Ամե՛ն» (ESV):

Աստված է մեր պահապանը: Միայն Նա կարող է դուրս բերել մեր ամուսնությունը ցանկացած խավարից: Նա վստահել է մեզ ամուսնության ուրախությունը և փառքը, որպեսզի մենք կարողանանք փառավորել Նրան: Մեր կյանքերը կենդանի ուղերձներ են՝ ուղղված այն մարդկանց, ովքեր դիտում են, թե ինչպես ենք մենք սիրում միմյանց և աճում ու զարգանում միասին:

Ամեն գարուն՝ նոր սկիզբ է:

> «Որովհետև ահա ձմեռն անցել է,
> անձրևն անցել, գնացել է:
> Ծաղիկները երևում են տափի վրա,
> երգելու ժամանակը հասել է…»:
> (Երգ երգոց 2.11,12)

ՍՊԱՍԵ՛Ք ՄԵԾ ԲԱՆԵՐԻ

«[Ի՞նչ, ի՞նչ կլիներ ինձ հետ], եթե ես չհավատայի, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը կենդանիների երկրում: Սպասի՛ր և հուսա՛ և ակնկալի՛ր Տիրոջը. համարձա՛կ և խիզա՛խ եղիր, և թող որ քո սիրտը հաստատ և տոկուն լինի: Այո՛, սպասի՛ր և հուսա՛ և ակնկալի՛ր Տիրոջը»:

— Սաղմոս 27.13,14, AMP

«Ձեր երկնային Հայրն անչափ սիրում է ձեզ: Նա ցանկանում է, որ ձեր ամուսնությունը հաջողակ լինի: Իրականում, Նա [ակնկալում, փնտրում և ձգտում] է ողորմած լինել ձեր հանդեպ» (Եսայի 30.18, AMP):

Հարցն այն է, թե ի՞նչ սպասումներ ունեք ձեր ամուսնությունից: Ինչպիսի՞ աստվածային հնարավորությունների համար եք դուք աղոթում և հավատում:

_____

_____

_____

Ժամանակ հատկացրե՛ք, որպեսզի մտորեք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը սպասումների մասին:

«…Որովհետև Դու զարմանալի բաներ արեցիր, որոնք *վեր էին մեր ամենաբարձր սպասումներից*, և ինչպե՞ս էին դողում սարերը: Որովհետև աշխարհի սկզբից ի վեր ոչ ոք չէր տեսել կամ լսել այսպիսի Աստծո մասին, ինչպիսին մեր Աստվածն է, Ով գործում է նրանց համար, ովքեր սպասում են Իրեն»:

— Եսայի 64.3,4, TLB

«Քո խոսքի ուսմունքը լույս է տալիս, որպեսզի նույնիսկ պարզամիտները կարողանան հասկանալ: *Ես հևում եմ սպասումից*՝ փափագելով Քո պատվիրաններին: Ե՛կ և ցո՛ւյց տուր Քո ողորմությունը՝ ինչպես անում ես նրանց, ովքեր սիրում են Քո անունը»:

— Սաղմոս 119.130-132, NLT

«Ամբողջ գովասանքն Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորը: Նրա մեծ ողորմությամբ է, որ մենք վերստին ծնվել ենք, որովհետև Աստված հարություն տվեց Հիսուս Քրիստոսին մեռելներից: Այժմ մենք *ապրում ենք մեծ սպասումով*, և անգին ժառանգություն ունենք՝ այնպիսի ժառանգություն, որը պահված է Երկնքում ձեզ համար, մաքուր և անեղծ, անմատչելի փոփոխության և ապականության համար»:

— Ա Պետրոս 1.3,4, NLT

«...Որովհետև Տերը արդարության Աստված է: Օրհնված (երջանիկ, բախտավոր, նախանձելի) են նրանք, ովքեր [փափագով] սպասում են Նրան, ովքեր *ակնկալում, փնտրում և ծգտում են Նրան* [Նրա հաղթանակին, Նրա բարեհաճությանը, Նրա սիրուն, Նրա խաղաղությանը, Նրա ուրախությանը և Նրա աննման, անխախտ ընկերակցությանը]»:

— Եսայի 30.18, AMP
(շեղագրերն ավելացված են խոսքերին)

Ավելի վաղ այս գրքում մենք խոսում էինք անիրատեսական սպասումներից բխող վտանգների մասին: Ասեք, թե ինչպիսի՞ առավելություններ ունեն իրատեսական սպասումները՝ հիմնվելով այս խոսքերի վրա:

Մեծագույն սպասումները ձևավորվում են, երբ մենք իմանում ենք Աստծո խոստումներն ու ծրագրերը, և ճանաչում ենք Նրա բնավորությունը:

Աստծո համար ոչինչ չափազանց դժվար կամ անհնարին չէ: Կարդացե՛ք Ծննդոց 18.13,14, Մատթեոս 19.26, Մարկոս 98.23,24, Ղուկաս 1.36,37, Եփեսացիների 3.20 խոսքերը: Ի՞նչ է Տերը ցույց տալիս ձեզ Իր անսահման զորության և կարողության մասին:

«Տեսե՛ք, ես նոր բան եմ անում: Հիմա դա հայտնվում է. մի՞թե չեք ըմբռնում»:

— Եսայի 43.19, NLT

Մենք ծառայում ենք այնպիսի Աստծո, Ով ամեն բան նոր է անում: Դուք ցանկանո՞ւմ եք, որ ինչ-որ բան ձեր ամուսնության մեջ նորոգվի: Արդյոք ունե՞ք նոր սիրո, նոր երազանքների, նոր միաբանության կամ նոր մտերմության կարիք: Դուք կարող եք *սպասել*, որ ձեր Հայրը նոր բան կանի, երբ խնդրեք Նրանից: Գրի՛ առեք, թե ինչն եք ցանկանում նորոգված տեսնել, իսկ հետո աղոթե՛ք և հանձնե՛ք դա Աստծուն:

ԿՅԱՆՔ ԽՈՍԵՔ

«Բառերը հագեցնում են միտքն այնպես, ինչպես կերակուրը՝ ստամոքսը. լավ զրույցը նույնքան բավականություն է պատճառում, որքան լավ հունձքը: Բառերն սպանում են, բառերը կյանք են տալիս. դրանք կա՛մ թույն են, կա՛մ համեղ մրգեր. դուք եք ընտրում»:

— Առակաց 18.20,21, MSG

Ո՞ր լեզվով եք ավելի շատ խոսում՝ այս երկրի՞, թե՞ Երկնքի: Առաջինը մահ է բերում, իսկ երկրորդը՝ կյանք: Ամեն իրավիճակում, որին բախվում եք, դուք որոշում եք կայացնում խոսել մեկը կամ մյուսը: Հովիվ **Ջիմմի Էվանսը** գրում է.

> «Հաղորդակցությունը նման է կամրջի, որը կապում է երկու մարդկանց և հնարավոր է դարձնում ազատ մուտքը դեպի դիմացինի սիրտը և միտքը: Հաղորդակցությունը ոչ միայն կարևոր է, այլև անհրաժեշտ է ամուսնության համար... Բառերն անհավատալի զորություն ունեն... զորություն՝ խոցելու կամ բժշկելու, կործանելու կամ շինություն տալու: Մենք պետք է վերահսկենք ինքներս մեզ, որպեսզի օգտագործենք կառուցող, զորացնող, խրախուսող և բժշկող բառեր»[6]:

Ինչպես իմացանք, կա ժամանակ ամեն ինչի համար՝ խոսելու ժամանակ և լռելու ժամանակ: Կա՛նգ առեք և մտածե՛ք. ո՞րն է ամենից անհամապատասխան ժամանակը ձեր կողակցի խնդիրներին անդրադառնալու համար: Ո՞րն է ամենից համապատասխան ժամանակը: Ինչո՞ւ:

_____

_____

_____

Կարճ նկարագրե՛ք ամենամեծ դժվարությունը, որը ներկայումս կա ձեր ամուսնության մեջ: Ինչպիսի՞ բացասական բառեր և արտահայտություններ են հաճախ դուրս պրծնում ձեր բերանից, երբ խոսում եք այդ խնդրի մասին:

_____

_____

_____

Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Սո՛ւրբ Հոգի, ես այլևս չեմ ցանկանում բացասական բառեր օգտագործել: Խնդրում եմ, օգնի՛ր ինձ՝ հեռացնել վախը և բարկությունը իմ բառապաշարից: Տո՛ւր ինձ կյանքի խոսքեր՝ դրական խոսքեր երկնային լեզվով, որոնք հավատքով կխոսեմ մեր ամուսնության մասին, Հիսուսի անունով»:

Դուք կարող եք ընդլայնել ձեր երկնային լեզվի բառապաշարը՝ ավելի ճանաչելով Աստծո Խոսքը: Ուշադրությամբ կարդացե՛ք հետևյալ հատվածները, իսկ հետո գրի՛ առեք մեկ կամ ավելի դրական հռչակումներ դրանց հիման վրա՝ այնպիսի հռչակումներ, որոնք կարող եք մշտապես անել ձեր ամուսնության մասին: Մենք լրացրել ենք առաջինը՝ որպես օրինակ:

Աստվածաշնչյան հատված	**Ի՞ՆՉ է ԱՍՈՒՄ ԵՐԿՆԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ**
Առակաց 5.18,19	«Իմ կողակիցը և ես կվայելենք սեռական շփումն իրար հետ և կկշտանանք մեկս մյուսով մեր կյանքի բոլոր օրերում»:
Եփեսացիների 4.15, 29	_____
Եփեսացիների 4.26,27	_____
Եփեսացիների 5.21-33	_____
Փիլիպեցիների 2.3-5	_____
Սաղմոս 133	_____
Ա Կորնթացիների 13.4-8	_____

ԽՈՍԵԼ ՁԵՐ ԿՈՂԱԿՑԻ ԼԵԶՎՈՎ

«Հետևե՛ք սիրով լի կյանքին այնպես, ասես ձեր կյանքը կախված է դրանից, որովհետև ձեր կյանքն իրականում կախված է դրանից...»:

— Ա Կորնթացիների 14.1, MSG

Սերը շատ լեզուներ ունի: Ձեր կինը կամ ամուսինը սահուն խոսում է այդ լեզուներից մեկով, իսկ դուք, հավանաբար, վարժ տիրապետում եք մեկ այլ լեզվի: «Սիրո հինգ լեզուները» գրքի հեղինակ **դոկտոր Գերի Չեպմենը** բացատրում է.

> «Ձեր սիրո լեզուն կարող է տարբերվել ձեր կողակցի սիրո լեզվից, ինչպես անգլերենը՝ չինարենից: Որքան էլ ջանք թափեք՝ փորձելով արտահայտել ձեր սերն անգլերենով, եթե ձեր կողակիցը միայն չինարեն գիտի, դուք երբեք չեք կարող հասկանալ՝ ինչպես սիրել միմյանց... Մենք պետք է պատրաստ լինենք սովորել մեր կողակիցների գլխավոր սիրո լեզուն, եթե ցանկանում ենք արդյունավետ կերպով փոխանցել մեր սերը: Իմ եզրակացությունն է... որ գոյություն ունի սիրո հինգ հիմնական լեզու՝ հինգ միջոց, որոնցով մարդիկ արտահայտում և հասկանում են սերը»[7]:

Գերի Չեպմենը գրում է, որ սիրո հինգ լեզուներն են՝ հավանության խոսքերը, որակյալ ժամանակը, նվերները, գործնական օգնությունը և հպումները: Շատ մարդիկ, որոնց թվում նաև մենք ենք, հայտնաբերել են, որ նրանք ունեն գլխավոր և երկրորդական սիրո լեզուներ: Ինչպես նշեցինք, ձեր սիրո լեզուների մասին կարող եք իմանալ ավելին դոկտոր Չեպմենի գրքից կամ նրա ինտերնետային կայքում եղող այլ նյութերից:

Դուք կարող եք հասկանալ ձեր սիրո լեզուների դերը ձեր ամուսնության մեջ՝ պատասխանելով հետևյալ հարցերին. *Արդյոք կա՞ն այնպիսի բաներ, որոնք իմ կողակիցն անում է, որոնց պատճառով ես անչափ սիրված եմ զգում ինձ: Արդյոք կա՞ն այնպիսի բաներ, որոնք իմ կողակիցը չի անում, ինչը խորը ցավ է պատճառում ինձ: Ի՞նչ եմ ես ամենից հաճախ խնդրել իմ կողակցից՝ խրախուսական*

կամ հավանության խոսքե՞ր, ժամանա՞կ, որը մենք կանցկացնենք միասին, հատուկ նվերնե՞ր, գուրգուրա՞նք, թե՞ օգնություն տնային գործերի մեջ: Ինչպե՞ս եմ ես պարբերաբար արտահայտում իմ սերը կողակցիս հանդեպ: Գրի՛ առեք ձեր մտքերը և տպավորությունները:

Լսե՛ք ձեր կողակցի պատասխանները նույն հարցերին: Որտե՞ղ են տարբերություններն ամենից ակնհայտ:

Արդյո՞ք տեղյակ էիք, որ դուք և ձեր կողակիցը տարբեր ձևով եք արտահայտում ձեր սերը: Եթե այո, ինչպե՞ս է դա օգնել ձեր ամուսնությանը: Եթե ոչ, կարո՞ղ եք ասել, որ դա խնդիրների կամ թյուրըմբռնումների պատճառ է դարձել:

Ձեր կողակցի հետ քննարկե՛ք այն, թե ինչպես եք երկուսով ցուցաբերում և ընդունում սերը: Հարցրե՛ք նրան. *«Ի՞նչ երեք գործնական քայլ կարող եմ անել, որպեսզի ցուցաբերեմ իմ սերը քո հանդեպ՝ քո լեզվով»:* Գրե՛ք նրա պատասխանն այստեղ:

Ժամանակ հատկացրե՛ք այսօր, որպեսզի հարցնեք Սուրբ Հոգուն, թե ինչպե՞ս լավագույնս սեր ցուցաբերեք ձեր կողակցին: Ոչ ոք չի ճանաչում ձեր կողակցին ավելի լավ, քան Նա:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՈՇԵՔ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

«Աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի իշխանությամբ, որ ներդաշնակությամբ ապրեք իրար հետ... Համակարծիք եղեք՝ միաբանված մտքով և նպատակով»:

— Ա Կորնթացիների 1.10, NLT

Միաբանության մեջ անասելի զորություն կա: Աստված օգտագործում է մեր միությունը, որպեսզի Իր սերը հայտնի այն մարդկանց, ովքեր դեռ չեն ճանաչում Իրեն: Ոչ մի տեսակի հարաբերությունների մեջ հնարավոր չէ հասնել միաբանության այն մակարդակին, որը կարելի է ունենալ ամուսնության մեջ: Կարդալով այս գրքի երկրորդ գլուխը՝ դուք որոշեցիք ձեր ամուսնության տեսիլքը և նպատակները: Այժմ՝ մոտենալով գրքի ավարտին, խրախուսում ենք ձեզ՝ մտածել ձեր ամենօրյա առաջնահերթությունների մասին, որոնք կօգնեն իրականացնել ձեր առաքելությունը:

«Առաջին» և մեծագույն առաջնահերթությունը ձեր կյանքում՝ ձեր փոխհարաբերություններն են Աստծո հետ: Ինչո՞ւ է կենսականորեն կարևոր, որ Նա լինի առաջինը ձեր կյանքում, և ի՞նչ է նշանակում պատվել Նրան ամեն ինչում: Ինչպե՞ս է առողջ շփումն Աստծո հետ ազդում ձեր ամուսնության, ընտանիքի, աշխատանքի և մյուս բնագավառների վրա:

Որպեսզի իրականացնեք այն առաքելությունը և նպատակները, որոնք Աստված որոշել է ձեզ համար, դուք պետք է առաջնահերթությունը տաք ձեր կողակցին, երեխաներին, կոչմանը, հանգստին և ձեզ շրջապատող մարդկանց՝ ճիշտ այս հերթականությամբ: Կա՛նգ առեք և աղոթե՛ք. «Տե՛ր, արդյո՞ք իմ առաջնահերթությունները սխալ հերթականություն ունեն: Եթե այո, որտե՞ղ է այդ սխալը: Ո՞ւմ կամ ինչի՞ն եմ ես չափից շատ ուշադրություն դարձնում: Ո՞ւմ կամ ի՞նչն եմ

ես անտեսում: Ի՞նչ գործնական քայլեր կարող եմ ձեռնարկել՝ ճիշտ հերթականությունը ձեռք բերելու և պահպանելու համար: Գրի՛ առեք այն գաղափարները և քայլերը, որոնք Նա հայտնում է ձեզ:

Դուք որոշում եք կայացրել, որ սիրելու և աջակցելու եք ձեր կողակցին ամբողջ կյանքի ընթացքում: Երեխաները հեռանում են տնից, աշխատանքները փոխվում են, իսկ ընկերություններն սկսվում և ավարտվում են, բայց ձեր ամուսնական ուխտն ընդգրկում է ձեր կյանքի բոլոր եղանակները:

Դատելով ձեր ներկա հարաբերություններից՝ արդյո՞ք դուք և ձեր կողակիցը պատրաստ եք լավագույն ընկերներ մնալ մինչև կյանքի ավարտը: Արդյո՞ք դուք ներդրումներ եք կատարել մեկդ մյուսի կոչման և աշխատանքի մեջ:

Ի՞նչն է ձեր ամուսնության մեջ խրախուսում և ամրապնդում ձեր միաբանությունը: Ի՞նչն է խարխլում այն:

Կարդացե՛ք Ժողովող 4.9 և Կողոսացիների 3.12-14 խոսքերը, իսկ հետո աղոթե՛ք հետևյալը.

Աստվա՛ծ, Դու ընտրեցիր իմ կողակցին և ինձ՝ որպես սրբեր և սիրելիներ: Տո՛ւր ինձ շնորհք Քո Հոգով, որպեսզի վերաբերվեմ իմ կողակցին ողորմությամբ, բարությամբ, խոնարհությամբ, հեզությամբ և համբերությամբ: Օգնի՛ր ինձ՝ օրհնել կողակցիս իմ խոսքերով և գործերով: Ես հավատում եմ, որ միասին մեզ համար ավելի լավ է, քան առանձին, որովհետև մենք կարող ենք օգնել մեկս մյուսին, որ հաջողության հասնենք: Տո՛ւր մեզ իմաստություն, որ ճիշտ կերպով որոշենք մեր առաջնահերթությունները, որպեսզի ավելի լավ ճանաչենք Քեզ և ավելի լավ ծառայենք մեկս մյուսին, Հիսուսի անունով, ամե՛ն:

ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

«...Առավելագույնս օգտագործե՛ք ամեն մի հնարավորություն: Թող ձեր խոսքը շնորհալի լինի: Նպատակն այն է, որ խոսակցության մեջ ***մարդկանցից դուրս բերեք լավագույնը****, ոչ թե ճնշում գործադրեք նրանց վրա, ոչ թե կտրեք-հեռացնեք նրանց»:*

— Կողոսացիների 4.5,6, MSG

Որպես ամուսին և կին՝ դուք մեկ եք: Սա նշանակում է, որ դուք կիսում եք ամեն ինչ: Երբ ձեր կողակիցը հաջողության է հասնում, դուք եք հաջողության հասնում: Երբ ձեր կողակիցը բավականություն է ստանում կյանքից և արդյունավետ է, դուք կարող եք ավելի շատ բավականություն ստանալ և ավելի արդյունավետ լինել: Դուրս բերելով լավագույնը ձեր կողակցից՝ դուք դուրս եք բերում լավագույնը ձեզնից: Ահա թե ինչպես է Հիսուսը վարվում մեզ հետ՝ Իր Հարսնացուի հետ: Աստվածաշնչում գրված է. «Քրիստոսի սերն ամբողջական է դարձնում եկեղեցին: Նրա խոսքերը զարթնեցնում են Նրա գեղեցկությունը: Այն ամենը, ինչ Նա անում և ասում է, ունի մեկ նպատակ՝ **դուրս բերել լավագույնը, որը նրա ներսում է**...» (Եփես. 5.26,27, MSG):

Այսպիսով, ինչպիսի՞ պարգևներ, տաղանդներ և ուժեղ կողմեր ունի ձեր կողակիցը: Մտածե՛ք, թե ի՞նչն է նրա մոտ իսկապես լավ ստացվում, ի՞նչն է բավականություն պատճառում նրան: Ինչի՞ համար են մարդիկ գովում նրան և ինչի՞ համար են մարդիկ շնորհակալ նրանից:

Իմ կողակիցն ունի հետևյալ պարգևները, տաղանդները և ուժեղ կողմերը.

_____

_____

_____

_____

Եթե ձեր կողակցի ուժեղ կողմերն արդեն օգուտ են տալիս մարդկանց նրա աշխատանքի կամ ծառայության մեջ, ինչպե՞ս դուք կարող եք օգնել, որ նրա պարգևներն ավելի զարգանան: Եթե տեսնում եք, որ ձեր կողակիցը որևէ տաղանդ ունի, որը դեռ չի գործածում, կարո՞ղ եք մտաբերել արդեն գոյություն ունեցող միջավայր կամ ստեղծել այնպիսի միջավայր, որում այդ տաղանդը կզարգանա:

«Եկեք մտածենք և ուշադրությամբ ու շարունակաբար հոգ տանենք մեկս մյուսին հսկելու մասին՝ *ուսումնասիրելով*, թե ինչպես կարող ենք դրդել (խթանել և խրախուսել) միմյանց սիրո, օգնության *և* ազնվաբարո գործերի…»:

— Եբրայեցիների 10.24, AMP,
շեղագիրն ավելացված է

«Ուրեմն, քանի որ մենք առիթ և հնարավորություն ունենք, եկեք [բառոյապես] բարի գործենք բոլոր մարդկանց համար [ոչ միայն օգտակար կամ ձեռնտու լինենք նրանց, այլև գործենք նրանց հոգևոր օգուտի և շահի համար]: *Զգանք արեք, որ օրհնություն լինեք*, հատկապես նրանց համար, ովքեր հավատքի ընտանիքից են [նրանց համար, ովքեր պատկանում են Աստծո ընտանիքին՝ հավատացյալներին]»:

— Գաղատացիների 6.10, AMP,
շեղագիրն ավելացված է

Ուշադրությամբ մտորե՛ք Եբրայեցիների 10.24, Գաղատացիների 6.10 և Կողոսացիների 4.5,6 (որը գրված է այսօրվա սերտողության սկզբում) խոսքերի շուրջ: Ինչպե՞ս կարող եք գործնականորեն խթանել և դուրս բերել լավագույնը ձեր կողակցից: Այսինքն, ի՞նչ կարող եք *ասել* կամ *անել*, որպեսզի խրախուսեք նրան՝ օգտագործել իր պարգևները և ուժեղ կողմերը: Ինչպե՞ս կարող եք օրհնել ձեր կողակցին և օգնել, որ զարգանա:

Ժամանակ հատկացրեք, որպեսզի պատմեք ձեր կողակցին ձեր բոլոր պատասխանները: Հարցրե՛ք նրա կարծիքը և թույլ տվեք, որ նա սիրտը բացի ձեր առջև: Ո՞ր հարցերում եք դուք համաձայն: Ի՞նչ նոր բաներ սովորեցիք ձեր կողակցի կամ ձեր մասին: Կա՛նգ առեք և օրհնության աղոթք բարձրացրեք ձեր կողակցի համար:

«Ուսումնասիրե՛ք ձեր կողակցին: Ուսումնասիրե՛ք ինքներդ ձեզ… Դուք կարող եք զարմանալ և անակնկալի գալ այն բանից, ինչ կբացահայտեք… Ամուսնական կյանքն արկածային է դառնում, երբ բացահայտում եք, թե իրականում ո՛վ է ձեր կողակիցը: Ամուսնական կյանքը ոգեշնչող է դառնում, երբ պարզում եք, թե ո՛վ է նա դառնալու:

— Հ. Նորման Ռայթ[8]

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք այս գիրքը «Մեսինջեր Հավաքածու»-ի «Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացի սահմաններում, դիտե՛ք ուսումնական տեսանյութ 6-ը:

1 | Աստված պատվիրել էր Ադամին և Եվային բազմանալ և լցնել ամբողջ երկիրը: Սերունդներ անց բարձրացավ մի ժողովուրդ, որը չհնազանդվեց այս պատվիրանին: Ուշադրությամբ կարդացե՛ք Ծննդոց 11.1-6-ը: Ո՞ր հարցերում էին այս մարդիկ միաբան: Եթե անհնազանդ մարդիկ հաջողության հասան միաբանության շնորհիվ, ի՞նչ է սա նշանակում մեզ համար, ովքեր մեկ են և՛ ամուսնության մեջ, և՛ Քրիստոսի մեջ, և ցանկանում են հնազանդվել Աստծուն:

2 | Միաբանությունը մեծ զորություն և մեծ վարձք ունի: Ուսումնասիրե՛ք այս հատվածները և կիրառե՛ք ձեր ամուսնության մեջ. Սաղմոս 133, Մատթեոս 18.19,20, Հովհաննես 17.21,23, Բ Կորնթացիների 13.11: Ինչպիսի՞ օրհնություններ կարող են հայտնվել ձեր կյանքում, եթե միաբան լինեք ձեր կնոջ կամ ամուսնու հետ:

3 | Մարդու վերջին խոսքերը կարևոր են, իսկ Հիսուսի վերջին խոսքերը նաև մարգարեական զորություն ունեին: Կարդացե՛ք Հովհաննես 17.9-11,20-23 խոսքերը: Այս հատվածում Նա աղոթում է մեզ համար անմիջապես խաչ բարձրանալուց առաջ: Ուշադրություն դարձրե՛ք Նրա և Հոր *միասնությանը:* Ի՞նչ է Սուրբ Հոգին հայտնում ձեզ այս հատվածի միջոցով: Ինչպե՞ս է այն դրդում, որպեսզի ձեր կողակցի հետ ձգտեք միասնության:

4 | Աստված՝ նոր սկզբի Աստված է: Նա հայտարարում է, որ ամեն բան նոր է անում (տե՛ս Հայտն. 21.5): Նա ցանկանում է, որ մենք մեր ամուսնության տարիների ընթացքում ունենանք նորոգված հարաբերություններ, հույս, հավատք, սեռական մտերմություն և երազանքներ: Որպես ամուսին և կին՝ ի՞նչ գործնական ձևերով կարող ենք նորոգել մեր հարաբերությունները:

5 | Առակաց 14.1-ում գրված է, որ իմաստուն կինը շինում է իր տունը: Սա նշանակում է, որ իմաստուն տղամարդը շինություն է տալիս իր կնոջը: Կանա՛յք, ի՞նչ գործնական ձևերով կարող եք կառուցել ձեր տունը: Տղամարդի՛կ, ի՞նչ գործնական ձևերով կարող եք նպաստել ձեր կնոջ զարգացմանը:

6 | Թեև որոշ ամուսնական զույգեր միասին են աշխատում կամ ծառայում, շատերի կյանքն այդպիսին չէ: Այդ դեպքում, ավելի կարևոր է պահպանել փոխադարձ շփումը և խրախուսել միմյանց անհատական կոչումներն ու հետաքրքրությունները: Ինչպիսի՞ գործնական միջոցներ կարող են ձեռնարկել ամուսիններ-ը և կանայք, որպեսզի աջակցեն իրար և պահպանեն իրենց շփումը:

ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Քրիստոսի մեջ ամեն ամուսնություն կարող է նորոգվել: Նրա Հոգին մշտապես հնարավորություններ է ընձեռում նոր սկզբի համար ամեն բնագավառում:
- Ամեն իրավիճակում ընտրում ենք՝ խոսել այս երկրի՞, թե՞ Երկնքի լեզվով: Մենք կարող ենք հավատքով համաձայնել Երկնքի հետ, երբ խոսենք Աստծո Խոսքի խոստումների համաձայն:
- Ամուսնության նպատակը՝ միաբանությունն է: Մենք պետք է ջանք գործադրենք, որպեսզի միաբան լինենք կյանքի բոլոր բնագավառներում:
- Երբ ձգտենք միաբան լինել մեր կողակցի հետ, երբ խոսենք միևնույն լեզվով և իրականացնենք միևնույն առաքելությունը, Աստծո օրհնությունները կգան մեր կյանք, և անհնարինը հնարավոր կդառնա:
- Անկեղծ սերն ամուսնու և կնոջ միջև հայտնում է Աստծո փառքը և սերը այս աշխարհին: Մեր միաբանությունը՝ մարդկանց մոտեցնում է Հիսուսին:
- Իմաստուն կինը շինում է իր տունը, իսկ իմաստուն մարդը շինություն է տալիս իր կնոջը: Երբ ամուսիններից յուրաքանչյուրը կյանք է խոսում մյուսի ուժեղ կողմերին, նրանք ընդլայնում են միմյանց սահմանները և կատարում են Աստծո կամքն այս երկրի վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ինչպե՞ս փրկություն ստանալ

«Եթե քո բերանով դավանես, որ Հիսուսը Տեր է, և քո սրտում հավատաս, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կփրկվես: Որովհետև քո սրտի հավատքով է, որ արդարանում ես Աստծո առջև, և քո բերանի դավանանքով է, որ փրկվում ես»:

— Հռոմեացիների 10.9,10, NLT

Աստծո սերը ձեր կողակցին պարգևելու համար դուք պետք է նախ՝ ընդունեք Նրա սերը և փրկությունը Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Հիսուսի մահվան և հարության միջոցով Աստված ճանապարհ բացեց, որպեսզի դուք մուտք գործեք Նրա թագավորության մեջ՝ որպես սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա ձրիաբար շնորհեց ձեզ հավիտենական և առատ կյանքը: Փրկությունը՝ Աստծո պարգևն է ձեզ: Դուք չեք կարող որևէ բան անել՝ փրկությունը վաստակելու կամ դրան արժանանալու համար:

Այս թանկ պարգևն ստանալու համար նախ՝ խոստովանեք, որ մեղավոր եք՝ ձեր Արարչից անկախ ապրելու մեջ (քանի որ սա բոլոր մեղքերի պատճառն է, որոնք երբևէ գործել եք): Մեղքերից ապաշխարելը՝ փրկությունն ստանալու կարևորագույն պայմանն է: Պետրոսը պարզ ասաց սա Գործք առաքելոց գրքում, այն օրը, երբ 5.000 մարդ փրկվեց. «Ուրեմն, ապաշխարե՛ք և դարձի՛ եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19, NKJV): Սուրբ գիրքը հայտարարում է, որ մեզնից յուրաքանչյուրը ծնվել է՝ որպես մեղքի ստրուկ: Այդ ստրկության արմատը՝ Ադամի մեղքն է, ով առաջինը համառորեն չհնազանդվեց Աստծուն: Ապաշխարությունը որոշում է՝ հրաժարվել սեփական անձին և սատանային հնազանդվելուց, ով ստի հայրն է, և հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով տվեց Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է Հիսուսին հանձնեք ձեր կյանքի իշխանությունը: Հիսուսին Տեր դավանել նշանակում է՝ ձեր կյանքը (հոգին, անձը և մարմինը) և այն ամենը, ինչ ունեք, դարձնել Նրա սեփականությունը: Նրա իշխանությունը ձեր կյանքում բացառիկ է դառնում: Այն պահին, երբ անում եք սա, Աստված ազատում է ձեզ խավարից և տեղափոխում է Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցնում եք մահից դեպի կյանք. դուք դառնում եք Նրա զավակը:

Եթե ցանկանում եք ընդունել փրկությունը Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

Աստվա՛ծ, որ երկնքում ես, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես հավիտենական դատաստանի եմ արժանի իմ մեղքի պատճառով: Շնորհակալություն, որ չես թողնում ինձ այս վիճակում, որովհետև ես հավատում եմ՝ Դու ուղարկեցիր Քո միածին Որդի Հիսուս Քրիստոսին, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատաստանը Խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը, և այժմ նստած է Քո աջ կողմում՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ, որ անկախ եմ եղել Քեզնից, և կյանքս լիովին հանձնում եմ Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ Քեզ՝ որպես Իմ Տեր և Փրկիչ: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով: Փոխի՛ր ինձ՝ Աստծո զավակ դարձնելով: Ես ուրանում եմ այն ամենը, ինչը կապված է խավարի հետ և ինչին ես մի ժամանակ հարում էի: Այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար, այլ՝ Քո շնորհքով կապրեմ Քեզ համար, քանի որ Դու մահացար, որպեսզի ես կարողանամ հավիտյան ապրել:

Շնորհակալություն, Տե՛ր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերի մեջ է, և համաձայն Քո Խոսքի՝ ես ամոթով չեմ մնա:

Բարի գալո՞ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ՝ պատմել այս հրաշալի լուրը որևէ հավատացյալի: Կարևոր է, որ դուք միանաք տեղական եկեղեցու, որտեղ հավատում են Աստվածաշնչին, և շփվեք այլ մարդկանց հետ, ովքեր կարող են խրախուսել ձեզ հավատքի մեջ: Ազատորեն կապվեք մեր ծառայության հետ, որպեսզի օգնություն ստանաք ձեր շրջանում եկեղեցի գտնելու համար (այցելե՛ք MessengerInternational.org): Մենք աղոթում ենք, որ դուք աճեք Աստծո գիտության և սիրո մեջ ամեն օր:

ՆՇՈՒՄՆԵՐ

Գլուխ 1

1. «Աշխատունակ տարիքի կանայք», Միացյալ Նահանգների Աշխատանքի վարչություն, մուտքը՝ 2014թ. մարտի 14, http://www.dol.gov/wb/stats/recentfacts.htm#age:
2. Այս հատվածը մասամբ մեջբերված է Լիզա Բիվերի *«Կռվել կնոջ պես. կին լինելու զորությունը»* գրքից (Նյու Յորք, «Warner Faith», 2006թ.), էջեր 5-6:
3. «Դեսպան». «Dictionary.com» կայքէջից, մուտքը՝ 2014թ. ապրիլի 19, http://dictionary.reference.com/browse/ambassador?s=t:
4. Կ. Սոանս և Ա. Ստիվենսոն, *«Օքսֆորդի համառոտ անգլերեն բառարան»* (Օքսֆորդ, «Oxford University Press», 2004թ.):
5. «Խոսք 6ա-ն պարզ ցույց է տալիս, որ ստեղծագործության ժամանակ տրված այս պատվիրանն ուժի մեջ է նույնիսկ մարդկային ցեղի անկումից, օրենքի տրվելուց և Հիսուսի գալուստից, այսինքն՝ Արքայության գալուստից հետո: Խոսք 6բ-ն այն տեքստն է, որը հայտնի է դարձել՝ ընթերցվելով հազարավոր ամուսնական արարողությունների ժամանակ. մարդիկ չպետք է խզեն սուրբ ամուսնության միությունը, որը կարգված է Աստծո կողմից: Առանց խոսքեր 4-6ա-ի՝ կարող է թվալ, որ խոսք 6բ-ն նշանակում է, որ որոշ ամուսնություններ կարգված չեն Աստծո կողմից, բայց համատեքստն անպաշտպան է թողնում այս կարծիքը: Ընդհակառակը, հենց այն պատճառով, որ Աստված ցանկանում է, որ բոլոր ամուսնությունները հարատև լինեն, մենք չենք համարձակվում որևէ բան անել՝ դրանք վտանգելու համար»: Քրեյգ Բլումբերգ. *«Նոր ամերիկյան մեկնություն»,* հատոր 22. *«Մատթեոս»* (Նեշվիլ, «Broadman & Holman Publishers», 1992թ.), էջ 290:
6. Սոանս և Ստիվենսոն, *«Օքսֆորդի համառոտ անգլերեն բառարան»:*
7. Լինդա Ջ. Ուեյթ, Դոն Բրաունինգ, Վիլյամ Ջ. Դոհերթի, Մեգի Գալագեր, Յի Լուո և Սքոթ Մ. Սթենլի. *«Արդյո՞ք ամուսնալուծությունը երջանկացնում է մարդկանց»* (Նյու Յորք, «Ամերիկյան արժեքների ինստիտուտ», 2002թ.), էջ 5:
8. Թիմոթի և Քեթի Քելլեր. *«Ամուսնության իմաստը. Դիմակայել դժվարություններին նվիրական հարաբերությունների մեջ՝ Աստծո իմաստությամբ»* (Նյու Յորք, «Riverhead Books», 2011թ.), էջ 64:
9. Գերի Թոմաս. *«Սուրբ ամուսնություն»* (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Zondervan», 2000թ.), էջ 21:
10. Չարլզ Սուինդոլ. *«Ջորանալ կյանքի եղանակներին»* (Փորթլենդ, Օրեգոն, «Multnomah Press», 1983թ.), էջ 13:
11. «Մեջբերումներ ամուսնության մասին Մաքս Լուկադոյից», «Բուռն ամուսնություն», մուտքը՝ 2014թ. մարտի 7, http://fiercemarriage.com/quote-author/max-lucado:
12. Ռիկ Ռեններ. *«Յունարենի գանձերը»* (Տալսա, Օկլահոմա, «Teach All Nations», 2003թ.), էջ 55:

Գլուխ 2

1. Վ. Արնդտ, Ֆ. Վ. Դանկեր և Վ. Բաուեր. «Նոր կտակարանի և այլ վաղ քրիստոնեական գրականության հունարեն-անգլերեն բառարան» (Չիկագո, «University of Chicago Press», 2000թ.):
2. Նույնը:
3. Կ. Ս. Լյուիս. «Հասարակ քրիստոնեություն» (Սան Ֆրանցիսկո, «Harper-SanFrancisco», 2001թ.), էջ 204:
4. Նույնը, էջ 124:
5. Նույնը, էջ 109:
6. Էվերեստ սարը մագլցողների 1.6 տոկոսը մահանում է ճանապարհին, այնինչ առաջին ամուսնությունների 40-50 տոկոսն ավարտվում է ամուսնալուծությամբ: Աղբյուրները. (1) «Մահ՝ Էվերեստ սարի վրա», About.com, մուտքը՝ 2014թ. ապրիլի 19, http://climbing.about.com/od/mountainclimbing/a/Death-On-Mount-Everest.htm, և (2) *«Մեր միությունների վիճակը. Ամուսնությունն Ամերիկայում»* (Շառլոտվիլ, ՎԱ, «Ազգային ամուսնական նախագիծ և Ամերիկյան արժեքների ինստիտուտ», 2012թ.), էջ 1:
7. Բոբ և Օդրի Մեյսներ. *«Լավագույն ընկերներ, լավագույն սիրեկաններ»* (Հանթսվիլ, Ալաբամա, «Milestones International Publishers», 2006թ.), էջ 52:
8. Ֆ. Բ. Մայեր. *«Աբրահամը կամ հավատքի հնազանդությունը»* (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2001թ.), էջեր 70-71:
9. Էնդրյու Մյուրի. *«Խոնարհություն»* (Ֆորտ Վաշինգտոն, Փենսիլվանիա, «CLC Publications», 2006թ.), էջեր 13, 42:
10. Բիլ և Փեմ Ֆարել. *«Տղամարդիկ վաֆլու պես են - կանայք՝ սպագետիի»* (Յուջին, Օրեգոն, «Harvest House Publishers», 2001թ.), էջեր 140, 142-143:
11. Հ. Նորման Ռայթ. *«Տևական ամուսնության գաղտնիքները»* (Վենտուրա, Կալիֆոռնիա, «Regal Books», 1995թ.), էջ 70:

Գլուխ 3

1. «Մաքրել», «Oxford Dictionaries», մուտքը՝ 2014թ. ապրիլի 19, http://www.oxforddictionaries.com/us/definition/american_english/clear:
2. Մայք Մաքքենզի, *«Ծովային զրույց», «Անգլերեն ծովային բառերի բառարան»* («Novia Scotia», 2005թ.), որոնվող բառը՝ «մաքրել տախտակամածը», www.seatalk.info:
3. Լիզա Բիվեր. *«Բարկանալիս մեղք մի՛ գործեք»* (Նեշվիլ, «Thomas Nelson», 2000թ.), էջ 56:
4. Գ. Լ. Բորխերտ. «*Նոր ամերիկյան մեկնություն»*, հատոր 25բ. *«Հովհաննես 12-21»* (Նեշվիլ, «Broadman & Holman Publishers», 2002թ.), էջ 311:
5. Լիզա Բիվեր. *«Կռվի՛ր կնոջ պես»,* էջ 60:
6. Լիզա Բիվեր. *«Ես թողել եմ վերահսկողությունը, և դա ինձ դուր է գալիս»* (Լեյք Մերի, Ֆլորիդա, «Charisma House», 1996թ.), էջեր 106-107:

7. Այս հատվածը մեջբերված է Լիզա Բիվերի *«Համբույրներ, որոնք հետո քեզ կթողնեն արցունքների մեջ. Ինչո՞ւ են կանայք ունենում կորուստներ, երբ չեն պահում իրենց դիրքը»* գրքից (Նեշվիլ, «Thomas Nelson», 2002թ.), էջեր 123-124:
8. *«Որքանո՞վ են տարածված ամուսնալուծությունները և որո՞նք են դրանց պատճառները»,* «Utah Divorce Orientation», մուտքը՝ 2014թ. հունվարի 21, http://www.divorce.usu.edu/files/uploads/Lesson3.pdf:
9. «Մեջբերումներ ներելու և չներելու մասին», «Daily Christian Quote», մուտքը՝ 2014թ. մարտի 22, http://dailychristianquote.com/dcqforgive2.html:
10. Ջոյս Մայեր. *«Միտքը կռվի դաշտն է»* (Նյու Յորք, «Faith Words», 2003թ.), էջ 192:
11. *«Սպասում»,* «Oxford Dictionaries», մուտքը՝ 2014թ. մարտի 25, http://www.oxforddictionaries.com/us/definition/american_english/expectation:
12. Պատրիկ Մ. Մորլի. *«Երկկողմանի ներդաշնակություն»* (Նեշվիլ, «Thomas Nelson», 1994թ.), էջ 138:
13. Նույնը, էջ 139:
14. «Մեջբերումներ ներելու և չներելու մասին», մուտքը՝ 2014թ. մարտի 24:

Գլուխ 4

1. Լիզան գրել է այս մասին *«Կռվի՛ր կնոջ պես»* գրքում: Այստեղ մեջբերված են որոշ հատվածներ գրքի 121-122,128 էջերից:
2. Լիզա Բիվեր, *«Կռվի՛ր կնոջ պես»,* էջ 124:
3. Քելլեր. *«Իմաստը»,* էջ 47:
4. Նույնը:
5. Լիզա Բիվեր, *«Կռվի՛ր կնոջ պես»,* էջ 109:
6. Լիզան պատմել է այս պատմությունը *«Ես թողել եմ վերահսկողությունը, և դա ինձ դուր է գալիս»* գրքում (էջեր 87-93): Այդ պատմության որոշ հատվածներ մեջբվերված են այստեղ:
7. Դոկտոր Հենրի Քլաուդ և Դոկտոր Ջոն Թաունսենդ. *«Սահմաններ ամուսնության մեջ»* (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Zondervan», 1999թ.), էջ 122:
8. Մեջբերված է Նոյ Վեբսթերի *«Անգլերեն լեզվի ամերիկյան բառարան»*-ից, 1828թ. (Սան Ֆրանցիսկո, «Foundation for Americal Christian Education»):
9. Ջիմմի Էվանս. *«Ամուսնություն՝ ժայռի վրա»* (Դալլաս, «Marriage Today», 2012թ), էջ 87:
10. Քլաուդ և Թաունսենդ. *«Սահմաններ»,* էջ 163:

Գլուխ 5

1. Քելլեր. «Իմաստը», էջ 260:
2. «Սեռական հարաբերությունների 10 անսպասելի առողջական օգուտները», «WebMD», մուտքը՝ 2014թ. ապրիլի 12, http://www.webmd.com/sex-relationships/guide/sex-and-health:

3. Լիզա Բիվեր *«Համբույրներ»,* էջ 121:
4. Նույնը, էջեր 178-179:
5. Նույնը, էջեր 121-125:
6. «Ինտերնետային պոռնոգրաֆիայի վիճակագրական տվյալները», «Daily Infographic», մուտքը՝ 2014թ. հունվարի 24, http://dailyinfographic.com/the-stats-on-internet-pornography-infographic:
7. «Քանի՞ կանայք են կախվածության մեջ պոռնոգրաֆիայից. 10 վիճակագրական տվյալներ, որոնք կարող են ցնցել ձեզ», «Covenant Eyes», մուտքը՝ 2014թ. մարտի 27, http://www.covenanteyes.com/2013/08/30/women-addicted-to-porn-stats:
8. «Covenant Eyes», «Վիճակագրություն պոռնոգրաֆիայի մասին, 2013թ. թողարկում», էջ 11, http://www.covenanteyes.com/pornstats/:
9. Նույնը, էջ 18:
10. Յ. Պ. Լուվ և Է.Վ. Նիդա. *«Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան»* (Նյու Յորք, «United Bible Societies», 1996թ.):
11. Կարդացե՛ք Սաղմոս 27.4, Փիլիպեցիների 3.10-14, Ղուկաս 10.39-42:
12. Բոբ Սորջ. *«Ծածուկ վայրի գաղտնիքները»* (Լիս Սամիթ, Միսսուրի, «Oasis House», 2005թ.), էջեր 180, 182:
13. Թոմաս, «Սուրբ ամուսնություն», էջ 205:
14. Մեյսներ, «Լավագույն ընկերներ», էջեր 127-128:

Գլուխ 6

1. Գերի Չեպմեն. *«Սիրո հինգ լեզուների էությունը»* (Չիկագո, «Northfield Publishing», 2007թ.), էջ 72:
2. Լիզա Բիվեր. *«Թրեր կրող կանայք. Ինչպես հերոսաբար կրել ձեր խաչը»* (Կոլորադո Սփրինգս, Կոլորադո, «WaterBrook Press», 2013թ.), էջ 127:
3. Լիզա Բիվեր. «Բարկանալիս մեղք մի՛ գործեք», էջ 120:
4. Այս հատվածը մասամբ մեջբերված է Լիզա Բիվերի *«Կնոջ հոգատարության ուժը. Տալ և ստանալ այն, ինչի կարիքը դուք ունեք՝ ծաղկունք ապրելու համար»* գրքից (Նյու Յորք, «FaithWords», 2008թ.), էջեր 166-168:
5. Լյուիս, *«Հասարակ քրիստոնեություն»,* էջ 131:
6. Էվանս, *«Ամուսնություն՝ ժայռի վրա»,* էջ 213:
7. Գերի Չեպմեն. *«Սիրո հինգ լեզուները»* (Չիկագո, «Northfield Publishing», 1995թ.), էջ 15:
8. Ռայթ. *«Տևական ամուսնության գաղտնիքները»,* էջ 129:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ



Երեք տարի շարունակ աշակերտները Հիսուսի հետ էին: Նրանք քայլում էին Հիսուսի հետ և լսում էին այն ամենը, ինչ Նա ասում էր իրենց: Այնուամենայնիվ, Հիսուսն ասաց Իր ամենամտերիմ ընկերներին, որ Ինքը պետք է թողնի նրանց, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գալ, և որ դա ավելի լավ է նրանց համար (տե՛ս Հովհ. 16.7, 13,14): Եթե սա ճշմարիտ էր աշակերտների համար, ովքեր ամեն օր Հիսուսի հետ էին, որքա՜ն ավելի անհրաժեշտ է մեզ, որ Սուրբ Հոգին գործուն կերպով ներգրավված լինի մեր ամենօրյա կյանքի մեջ: Սուրբ Հոգին հաճախ պատկերվում է տարօրինակ մի բանի պես: Բայց Աստվածաշունչը պարզ ասում է, որ Հոգին Անձ է, Ով խոստացել է երբեք չհեռանալ ձեր կողքից: Այս ինտերակտիվ գրքում Ջոն Բիվերը հրավիրում է ձեզ անձամբ բացահայտելու Եկեղեցում ամենից շատ անտեսված և սխալ հասկացված Անձնավորությանը՝ Սուրբ Հոգուն:

Այս ինտերակտիվ գիրքն ընդգրկում է.

- Ամենօրյա ընթերցանության նյութեր:
- Հարցեր խմբային քննարկման համար:
- Հավելյալ գլուխ, որտեղ պատասխանվում են մի շարք դժվարին հարցեր Սուրբ Հոգու մասին:

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

Ամբողջ աշխարհում կանայք թիրախ են կանխակալ վերաբերմունքի, սեռական թրաֆիքինգի, բռնության և սեռական հողի վրա սպանությունների համար: Հոգևոր թշնամին ձգտում է զինաթափել կանանց բոլոր բնագավառներում: Լիզա Բիվերը բացատրում է, որ Աստծո Խոսքը, որը թուր է, պետք է և՛ ուսումնասիրել, և՛ գործածել: Այսօր կանայք պետք է զինված լինեն ավելի, քան երբևէ:

Ստեղծարար կերպով պատկերելով տարբեր տեսակի թրեր՝ ինչպես Աստծո Խոսքն է և Խաչը, «Թրեր կրող կանայք» գիրքը կսովորեցնի ձեզ.

- Ինչպե՞ս խոսել երկնային լեզվով երկրի վրա:
- Ի՞նչ է նշանակում բարեխոսել:
- Ի՞նչ է նշանակում կրել ձեր խաչը:
- Ի՞նչ է նշանակում լինել զանազանող:
- Ինչպե՞ս զինաթափել թշնամուն:
- Ինչո՞ւ են կանայք թշնամու թիրախը, և ինչո՞ւ է Աստծուն անհրաժեշտ, որ նրանք հերոսուհիներ լինեն:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ջոն Բիվերի այս գիրքը՝ «Պատմություն ամուսնության մասին», ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են DVD սկավառակում, և որոնք կարելի է ներբեռնել CloudLibrary.org կայքից՝ դուք կկարողանաք ամբողջովին ուսումնասիրել այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Ջանասիրաբար ուսումնասիրելու դեպքում, ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք անել ավելին Աստծո համար:

«Պատմություն ամուսնության մասին» ամբողջական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- **«Պատմություն ամուսնության մասին» գիրք**

  Այս դասընթացի միակ տպագրված մասը:
  Գիրքը նույնպես առկա է հավաքածու-սկավառակում՝ PDF ձևաչափով:

- **«Սուրբ Հոգի» հավաքածու-սկավառակ**

  Կցված սկավառակը պարունակում է դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարողանա նվագարկել այս սկավառակը ձեր տնային CD կամ DVD նվագարկիչներով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետների, iPad-ների, համակարգիչների և սմարթֆոնների մեջ:

- **«Պատմություն ամուսնության մասին» աուդիո գիրք**

  «Պատմություն ամուսնության մասին» գրքի վեց գլուխները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:

- **«Պատմություն ամուսնության մասին» վիդեո դասեր**

  Բոլոր 6 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:

- **«Պատմություն ամուսնության մասին» աուդիո դասեր**

  Բոլոր 6 աուդիո դասերը՝ MP3 ձևաչափով:

- **Հավելյալ նյութեր**

  Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է այլ գրքեր և նյութեր՝ ներառյալ «Սուրբ Հոգի» և «Թրեր կրող կանայք» գրքերը:

Այս դասընթացի բոլոր նյութերը նվեր են ձեզ համար

Ազատորեն կրկնօրինակեք այս DVD սկավառակը, պատճենեք դրանում առկա նյութերը, ուղարկեք դրանք էլ. փոստով՝ ձեր ընկերներին, պատճենեք տեքստը և տեղադրեք «Word» ֆայլերի մեջ, տրամադրեք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնեք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել դրանցից: Տարածեք այս նյութերն ամենուր, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

- Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի ֆայլերը սովորական վիդեո նվագարկիչով: Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:
- Դուք կարող եք բեռնել MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը և նվագարկել դրանք ձեր պլանշետով կամ համակարգչով:
- Դուք կարող եք բեռնել MP3 ձևաչափի ֆայլերը ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել PDF ձևաչափի ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ: Դուք կարող եք կարդալ, տպել կամ կրկնօրինակել դրանք: Այս ֆայլերի չափը բավականին փոքր է՝ ձեր ընկերներին էլ. փոստով ուղարկելու համար: Դուք նույնիսկ կարող եք պատճենել հատվածներ տեքստից ձեր ֆայլերի մեջ:
- Հավելյալ ուսմունքային նյութերը բազմաթիվ լեզուներով հասանելի են CloudLibrary.org կայքում:

Ցանկանում եք ավելի՞ն
Տեսածրե՛ք պատկերակը

Այցելե՛ք CloudLibrary.org կայք՝
Զոն և Լիզա Բիվերներից ավելի շատ նյութեր
ներբեռնելու համար:

Այս հավաքածու-սկավառակը անձնական նվեր է Զոն Բիվերից: Այն տրամադրում է մի շարք ազդեցիկ նյութեր, որոնք կօգնեն ձեզ՝ շարունակել այս դինամիկ դասընթացի ուսումնասիրությունը և կիսվել սրանով այլ մարդկանց հետ: Դուք կարող եք ազատորեն տարածել կամ կրկնօրինակել այս դասընթացի ցանկացած մասը: Դուք կարող եք ուղարկել դասընթացի նյութերն այլ մարդկանց էլեկտրոնային փոստով, բաժանել Աստվածաշնչյան դպրոցի ուսանողներին, վերբեռնել ինտերնետային կայքերում կամ բազմացնել: Այս սկավառակը հատկապես պատրաստվել է ամենուր գտնվող քրիստոնյա հավատացյալներին ոգեշնչելու և խրախուսելու համար:

Զոն և Լիզա Բիվերների այս և այլ ուսմունքները հայերենով կարելի է ներբեռնել հետևյալ կայքերից.

www.MessengerInternational.org
www.CloudLibrary.org

Դուք կարող եք ներբեռնել և դիտել այլ նյութեր բազմաթիվ լեզուներով՝ Youtube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերում:

ՄԻ ԺԱՄԱՆԱԿ...

Ամուսնությունը կնքվում էր հավիտյան: Այն ուխտ էր, որը միավորում էր մեկ տղամարդու և մեկ կնոջ: Այս միությունն ավելի ուժեղ և ավելի ազնիվ էր դարձնում երկուսին, և նրանք ավելի վառ կերպով էին արտահայտում այն անհատականությունը, որով ստեղծված էին: Նրանցից յուրաքանչյուրի կյանքը միասին ավելի լավ էր, քան առանձին:

Ամուսնական արարողությունը միայն սկիզբն էր: Այն դուռ էր երջանիկ ապագան կառուցելու համար: Ամեն մի որոշման և գործողության նպատակն էր՝ կառուցել իրենց միությունը: Ամուսինը և կինը գնում էին դեպի անհայտը՝ միավորելով միմյանց ձեռքերը, սրտերը և ձայները, որպեսզի արտահայտեին իրենց Արարչի հանդեպ ունեցած սերը:

Ինչպե՞ս մենք կորցրինք կապն այս սիրո պատմության հետ: «Պատմություն ամուսնության մասին» գրքում Զոն և Լիզա Բիվերները հրավիրում են ձեզ՝ վերագտնելու Աստծո սկզբնական ծրագիրը: Անկախ այն բանից՝ դուք ամուսնացա՞ծ եք, ամուրի՞, թե՞ նշանված, ձեր պատմությունը՝ Նրա պատմության մի մասն է:

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Զոն և Լիզա Բիվերները հանրաճանաչ հեղինակներ են, նաև՝ «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրները: Նրանք երեսուն տարուց ավելի է՝ ամուսնացած են և ցանկանում են, որ իրենց պայքարներն ու հաղթանակները հարստացնեն և պաշտպանեն այլ մարդկանց ամուսնական պատմությունները: Զոնը և Լիզան ապրում են Կոլորադո Սփրինգսում՝ Կոլորադո նահանգում: Նրանք ունեն չորս որդի և երեք թոռնիկ:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը www.CloudLibrary.org կայքում:

Նիմպերտոմի ձեղքուզ
ն վիճիտ ձե ղ ուստիրիզ

Messenger International
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ: